ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7

ԱՐՄԵՆ ԽԱՉԻԿՅԱՆ
ԳԱԳԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԻԿՅԱՆ
ԳԱԳԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 7

Երևան 2023

Խաչիկյան Արմեն, Հովակիմյան Գագիկ
Համաշխարհային պատմություն / դասագիրք հիմնական դպրոցի VII դասարան համար / Ա. Խաչիկյան, Գ. Հովակիմյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2023.- 176 էջ:

© Ա. Խաչիկյան, Գ. Հովակիմյան, 2023

© Էդիթ Պրինտ, 2023

ՍԻՐԵԼԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Անցած հազարամյակների ընթացքում երկրագնդի վրա ապրել են բազմաթիվ ժողովուրդներ: Նրանցից յուրաքանչյուրն իր բաժին ավանդով նպաստել է մարդկության առաջընթացին. մեկը կառուցել է նմանը չունեցող շինություններ, մեկ ուրիշը՝ անցկացրել առ այսօր գործող ջրանցքներ, մյուսը կատարել է տեխնիկական կարևոր գյուտեր: Այդ հայտնագործություններին հետագայում ծանոթացել և այդ գիտելիքներն սկսել են օգտագործել աշխարհի մյուս ժողովուրդները ևս: Դրա համար աշխարհի տարբեր մասերում, տարբեր ժամանակներում ապրած ժողովուրդների պատմությունն անվանում ենք Համաշխարհային պատմություն:

Համաշխարհային քաղաքակրթության պատմության դասընթացը ձեզ կծանոթացնի դարերի ընթացքում աշխարհի տարբեր երկրներում տեղի ունեցած առավել կարևոր իրադարձություններին, որոնք ապահովել են մարդկության զարգացումը: Այդ ամենին հնարավոր չէ ծանոթանալ միանգամից: Ահա, եթե ինչու «Համաշխարհային պատմության» դասընթացը բաժանված է մի քանի մասի, որոնց դուք հաջորդաբար կծանոթանաք 7-9-րդ դասարաններում:

VII դասարանում ուսումնասիրելու եք համաշխարհային պատմության առաջին երկու մասը՝ «Հին աշխարհի պատմություն»-ը (I կիսամյակ) և «Միջնադարի պատմություն»-ը (II կիսամյակ): Դասընթացն ընդգրկում է ավելի քան հինգհազարամյա ժամանակաշրջան՝ քաղաքակրթության սկզբնավորումից մինչև Նոր ժամանակների սկիզբը՝ XVII դարի կեսը: Կծանոթանաք քաղաքակրթության օջախների առաջացմանը Միջագետքում, Եգիպտոսում, Փոքր Ասիայում, Հնդկաստանում և Չինաստանում, քաղաքակրթության տարածմանը Հունաստանում և Իտալիայում, կուսումնասիրեք այդ օջախների միջև տնտեսական և քաղաքական կապերի հաստատման, դրանց հետագա միավորման և միասնականացման փորձերը: Միջնադարի պատմությունն ուսումնասիրելով՝ կիմանաք, թե ինչպես ընդլայնվեց համաշխարհային քաղաքակրթության տարածքը՝ ընդգրկելով Ամերիկա, Աֆրիկա, և Ավստրալիա մայրցամաքները, կբացահայտեք այն վճռորոշ փոփոխությունները, որոնք տեղի ունեցան Արևմտյան Եվրոպայի երկրներում, ինչի շնորհիվ այդ երկրները զարգացմամբ առաջ անցան քաղաքակրթության մյուս օջախների համեմատ:

Տպագիր դասագրքի թույլատրելի ծավալը սահմանափակ է, ուստի շատ փաստաթղթեր, կարևոր իրադարձությունների մանրամասներ դասագրքին կցված են էլեկտրոնային տարբերակով՝ QR կոդերի միջոցով: Ձեր հեռախոսով սքանավորելով տվյալ պարբերության մոտ նկարի կամ քարտեզի վրա նշված QR կոդը՝ դուք կարող եք կարդալ հատվածներ պատմական աղբյուրներից, դիտել թեմային վերաբերող նկարներ, քանդակներ, արվեստի այլ գործեր: QR կոդերի տակ ներառված են նաև գծանկարներ և ավելի մեծ մասշտաբի քարտեզներ՝ որոնք դասի տեքստում տրված են սեղմ չափերով: Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք օգտագործել էլեկտրոնային այլ աղբյուրներ ևս, միայն հիշեք, որ ՏՀՏ բաց կայքերում զետեղված նյութերը ոչ միշտ են հավաստի, երբեմն էլ կեղծ են:

Հաջողություն ձեզ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1	**ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ**	**6–39**
§ 1.	Քաղաքակրթության սկզբնավորումը	6
§ 2.	Հին Եգիպտոսի քաղաքակրթության արշալույսը	11
§ 3.	Եգիպտոսի հզորությունն ու անկումը	14
§ 4.	Հին Եգիպտոսի քաղաքակրթության ազդեցությունը	17
§ 5.	Հին Միջագետքի քաղաքակրթության արշալույսը	20
§ 6.	Բաբելոնի Հին թագավորությունը	23
§ 7.	Ասորեստանի և Բաբելոնի Նոր թագավորությունները	25
§ 8.	Հին Միջագետքի քաղաքակրթության ազդեցությունը	28
§ 9.	Փոքր Ասիայի և Արևելյան Միջերկրականի քաղաքակրթությունները	31
§10.	Հին Հնդկաստանի և Չինաստանի քաղաքակրթությունները	34
§11.	Աքեմենյան Պարսկական տերությունը	37
§12.	***Հետադարձ կապ. թեմատիկ ամփոփում***	**40–41**
Թեմա 2	**ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, ՀԻՆ ՀՌՈՄ**	**42–97**
§13.	Հունական քաղաքակրթության սկզբնավորումը	42
§14.	Հունաստանը արխայիկ ժամանակաշրջանում	45
§15.	Սպարտական պետությունը	48
§16.	Աթենական պետության առաջացումը	51
§17.	Ժողովրդավարության ծաղկումը Աթենքում	54
§18.	Դասական դարաշրջանի Հունաստանի հասարակական կյանքը	57
§19.	Դասական շրջանի հունական մշակույթի ազդեցությունը	60
§20.	Ալեքսանդր Մակեդոնացու տերությունը	63
§21.	Հելլենիստական աշխարհը	66
§22.	***Հետադարձ կապ. թեմատիկ ամփոփում***	**69–70**
§23.	Հռոմեական քաղաքակրթության սկզբնավորումը	71
§24.	Հռոմեական հանրապետության սոցիալական և քաղաքական կարգը	74
§25.	Հռոմեական միջերկրածովյան տերության կազմավորումը	77
§26.	Հանրապետական կարգի ճգնաժամը	80
§27.	Պայքարը Հռոմում մենիշխանության համար	83
§28.	Կայսրության հաստատումը	86
§29.	Հռոմեական կայսրության ոսկեդարը, թուլացումը և անկումը	89
§30.	Հռոմեական կայսրության հասարակական և մշակութային կյանքը	92
§31.	Հռոմեական քաղաքակրթության ազդեցությունը	95
§32.	***Հետադարձ կապ. թեմատիկ ամփոփում***	**98–99**

Թեմա 3	**ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ**	**100–144**
§ 33.	«Ժողովուրդների մեծ գաղթը»: Նոր պետությունների առաջացումը Եվրոպայում	100
§ 34.	Կարլոս Մեծի կայսրությունը	103
§ 35	Արևելահռոմեական կայսրությունը (Բյուզանդիա)	106
§ 36	Արաբական խալիֆայությունը	109
§ 37	Հին Ռուսական պետությունը	112
§ 38	Եվրոպայի ավատատիրական հասարակարգը	115
§ 39	Խաչակրաց արշավանքները և դրանց հետևանքները	118
§ 40	Մոնղոլական արշավանքները և «եվրասիական» տերության ստեղծումը	121
§ 41	Հարյուրամյա պատերազմը	124
§ 42	Օսմանյան կայսրությունը	127
§ 43	Իրանը միջնադարում	130
§ 44	Հնդկաստանը միջնադարում	133
§ 45	Չինական քաղաքակրթությունը միջնադարում	136
§ 46	Ճապոնիան միջնադարում	139
§ 47	Ամերիկայի «մինչկոլումբոսյան» քաղաքակրթությունները	142
§ 48	***Հետադարձ կապ. թեմատիկ ամփոփում***	**145–146**
Թեմա 4	**ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ. ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**147–173**
§ 49	Եվրոպայի ավանդական հասարակության փոխակերպումը	147
§ 50	Աշխարհագրական Մեծ հայտնագործությունները	150
§ 51	Տնտեսական համակարգի փոփոխությունները Եվրոպայում	153
§ 52	Փոփոխություններ հասարակական և մշակութային կյանքում	156
§ 53	Վերածնունդ	159
§ 54	Ռեֆորմացիա	162
§ 55	Աբսոլյուտիզմ	165
§ 56	Նիդեռլանդական հեղափոխությունը	168
§ 57	Քաղաքական փոփոխությունները Եվրոպայում ուշ միջնադարում	171
§ 58	***Հետադարձ կապ. թեմատիկ ամփոփում***	**174–175**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ *–ում ներկայացված է Համաշխարհային պատմության այս ժամանակաշրջաններին վերաբերող գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականության ցանկ՝ լրացուցիչ ընթերցանության համար, ինչը օգտակար կլինի պատմությամբ առավել հետաքրքրվողների համար:*

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՌԱՐԱՆ *–ում տրված է դասագրքում տեղ գտած նոր բառերի և պատմական տերմինների բացատրությունը: Թեև նման բացատրություններ տրված են նաև դասագրքի համապատասխան տեքստերում, որպեսզի սովորողները երկար չփնտրեն: Այդ բառերի և տերմինների/արտահայտությունների բացատրությունը կարող են գտնել բառարանում:*

ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՅԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ԻՆՉ Է ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքակրթությունը (ներկայիս կամ նախկինում գոյություն ունեցած) ***որևէ երկրի*** կամ ***պարածաշրջանի ձեռք բերած հասարակական կյանքի և նյութական բարիքների արտադրության զարգացման մակարդակն է:***

«Քաղաքակրթություն» տերմինը (եվրոպական լեզուներում՝ «civilization») առաջացել է լատիներեն ***civitas*** – «քաղաքացիական, հասարակական, պետական» բառից:

Այս իմաստով հաճախ են հանդիպում հետևյալ արտահայտությունները՝ *եվրոպական քաղաքակրթություն, մայաների քաղաքակրթություն, Հին հունական քաղաքակրթություն, չինական քաղաքակրթություն, հայկական քաղաքակրթություն* և այլն:

Անհրաժեշտ է իրարից տարբերել քաղաքակրթություն և մշակույթ հասկացությունները: ***Մշակույթը որևէ քաղաքակրթության ստեղծած նյութական, հոգևոր և մտավոր արժեքների*** *(կրոնական պատկերացումներ, գիտական գիտելիքներ, գրականություն, արվեստի տարբեր ձյուղեր)* ***ամբողջությունն է:***

Անցումը քաղաքակրթությանը տեղի է ունեցել նախնադարյան հասարակարգի ավարտին:

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Ք.ծ.ա. X–V հազարամյակները գիտնականներն անվանում են Նոր քարի դար՝ ***նեոլիթ***: Սա նախնադարյան հասարակության գոյության վերջին ժամանակահատվածն էր: Երկրագնդի կլիման դարձել էր այնպիսին, ինչպիսին այժմ է: Մարդիկ տարածվել և բնակվում էին գրեթե բոլոր մայրցամաքներում: Նրանք մեծ փորձառություն և գիտելիքներ էին կուտակել, սովորել էին պատրաստել և օգտագործել քարե գործիքներ:

Հավաքչությամբ զբաղվելով՝ մարդիկ ի վերջո ***տիրապետեցին երկրագործությանը,*** սովորեցին հացաբույսեր աճեցնել և բերք ստանալ:

Աստիճանաբար ***ընտելացրին*** մի շարք կենդանիների: Ընտանի կենդանիներից ստանում էին ոչ միայն միս, բուրդ, կաշի, այլև կաթ, որից պատրաստում էին տարբեր տեսակի կաթնամթերք: Այսպես ***նեոլիթում մարդը տիրապետեց նաև անասնապահությանը:***





Հավաքչությամբ զբաղվելով՝ պետք էր լինում հավաքած մթերքը կացարան հասցնել: Մարդիկ նախ՝ սովորեցին ճկուն բույսերից կողովներ ու զամբյուղներ գործել, ապա և ***կավե ամանեղեն պատրաստել:*** Այդ արհեստը գիտնականներն անվանում են ***խեցեգործություն:*** Կրակի մեջ թրծված կավե ամանը դառնում էր քարի պես ամուր: Այն հարմար էր եփած կերակուր պատրաստելու համար: Կավե կարասներում կարելի էր նաև երկար պահպանել հացաբույսերի, բուսայուղի և կաթնամթերքի զգալի պաշար:

Ք.ծ.ա. IV հազարամյակում մարդը հայտնագործեց անիվը, սովորեց անվասայլեր պատրաստել՝ բեռներ տեղափոխելու համար և կենդանիների ուժն օգտագործել՝ հողը վարելու համար:

Երկրագործությունը և անասնապահությունը դարձան մարդկանց հիմնական զբաղմունքը՝ մշտական սնունդ ունենալու հիմնական միջոցը: 1

Այս հայտնագործությունների շնորհիվ ***մարդկանց տնտեսությունը յուրացնողից դարձավ արտադրողական:*** Այս արմատական փոփոխությունը մարդկանց կյանքում անվանում ենք ***«նեոլիթյան հեղափոխություն»:***

Մոտավորապես Ք.ծ.ա. V հազարամյակում մարդը փիրապետեց մետաղներ մշակելու և դրանցից առարկաներ պատրաստելու արհեստին: 2

Ք.ծ.ա IV հազարամյակի վերջին մարդիկ սովորեցին պղնձի և անագի խառնուրդով ստանալ ավելի ամուր մետաղ՝ ***բրոնզ***: Բրոնզե գործիքները վերջնականապես դուրս մղեցին քարե գործիքները: Գիտնականները ***Ք.ծ.ա III–II հազարամյակները անվանում են բրոնզի դար:*** 3

Մետաղյա գործիքների կիրառման շնորհիվ մարդկանց ոչ մեծ խումբը կարողանում էր արդեն ոչ միայն իրեն ապահովել սննդով, այլև արտադրել «***բարիքների ավելցուկ***»՝ որպես պաշար: Տոհմի ներսում սկսում են առանձնանալ ***նահապետական ընտանիքները***: Նման ընտանիքը ղեկավարում էր ***նահապետը***՝ ընտանիքի ամենատարեց տղամարդը: Նրա հետ ապրում էին նրա ամուսնացած որդիները, թոռները, ծոռները՝ մոտ 30–40 մարդ:

4

Իրար ազգակից տոհմերը կազմում էին ***ցեղ***: Տոհմերի առաջնորդներից և ավագներից կազմված ***ցեղի խորհուրդը*** քննարկում և լուծում էր բոլոր տոհմերին վերաբերող ընդհանուր հարցերը:

Երկրագործ ոչ ազգակից ցեղերի միջև ***սովորական են դառնում պատերազմները,*** որոնց նպատակն էր օտարներից խլել նրանց կուտակած բարիքները: Հաճախակի էին նաև քոչվոր ցեղերի հարձակումները երկրագործ ցեղերի վրա: Թշնամիներից պաշտպանվելու համար ազգակից ցեղերը ավելի սերտ էին միավորվում՝ կազմելով ***ցեղային միություններ,*** որոնց բնակչության թիվը հասնում էր մի քանի տասնյակ հազարի: Պատերազմի ժամանակ ցեղային միության խորհուրդն ընտրում էր ռազմական առաջնորդ՝ ***ցեղապետ:***

Հաղթողները պարտվածներից խլում էին նրանց կուտակած բարիքների մեծ մասը և պարտադրում էին ամեն տարի վճարել ***հարկ***՝ արտադրվող բարիքների մի մասը:

Հաճախակի պատերազմների պայմաններում ցեղապետ-զորավարի պաշտոնը դառնում էր մշտական: Պարտվածներից պարբերաբար հարկեր գանձելու և թշնամիներից պաշտպանվելու համար ցեղերը պետք է պահեին ***մշտական զինված ուժ՝ բանակ***: Ցեղապետները, տոհմավագները, քրմերը և զինվորները բարիքների արտադրությանը չէին մասնակցում, այլ զբաղվում էին հասարակությունը կառավարելու գործով: Նրանք վերածվել էին հասարակության վերնախավի և բանակի ուժով սեփական բնակչությանը ևս պարտադրում էին հարկ վճարել իրենց կարիքների համար:

Տնտեսական կարիքներից ելնելով՝ մարդիկ ստեղծեցին ***գրավոր լեզուն:*** Անհրաժեշտ էր լինում հաշվարկել կուտակված մթերքի պաշարները, նշել դրանց ամենօրյա ծախսը, հաշվել, թե եղած պաշարները որքան կարող են բավարարել: Հասարակական աշխատանքները կազմակերպելու համար հարկ էր լինում կազմել ցուցակներ, հաշվարկել աշխատողներին տրվելիք մթերաբաժինները, զինվորներին և պաշտոնյաներին հատկացվող մթերքի չափը և այլն: Այդ բոլոր տեղեկությունները անհրաժեշտ էր պահպանել երկար ժամանակ: Բացի այդ՝ գրավոր լեզվի միջոցով մարդիկ կարող էին իրենց կուտակած գիտելիքներն ու փորձը փոխանցել հետագա սերունդներին: ***Գրավոր լեզվի կիրառումը հասարակության հետագա զարգացման համար***

դարձավ անհրաժեշտություն:

Ունեցվածքային անհավասարության խորացման և մշտական պատերազմների պայմաններում, յուրաքանչյուր ցեղային միության տարածքում սկսում են կառուցվել ***ամրացված բնակավայրեր՝ քաղաքներ:*** 5

Տոհմական բանավոր օրենքներով հնարավոր չէր այլևս կարգավորել մարդկանց միջև ձևավորված նոր՝ անհավասար հարաբերությունները: Դրանք կարգավորելու համար ստեղծվեց ***իրավունքը***՝ գրավոր օրենքները, որոնք պաշտպանում էին ունեցվածքային և սոցիալական անհավասարությունը, մասնավոր սեփականությունը, ուրիշներին շահագործելու իրավունքը: Իրավունքի հետ միաժամանակ առաջացավ պետությունը:

Պետությունը բնակչությունից առանձնացված և հասարակության կառավարման գործով զբաղվող կառույցների ամբողջությունն է՝ վարչական և հարկահավաքման մարմիններ, ոստիկանություն, բանակ, դատարան, բանտ և այլն: 6

Պետության ստեղծումով նախնադարյան համայնական կարգը քայքայվեց: ***Սկսվեց քաղաքակրթության ժամանակաշրջանը***:

ՈՐՏԵՂ ԵՎ ԵՐԲ Է ՍԿԶԲՆԱՎՈՐՎԵԼ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքակրթությունը ծնունդ առավ Ք.ծ.ա. IV հազարամյակում Հին Արևելքում: «Հին Արևելք» գիտնականներն անվանում են ընդարձակ այն տարածաշրջանը, որը ձգվում է Միջերկրական ծովի արևելյան ափից մինչև Հնդկաստան ու Չինաստան և Կովկասյան լեռներից մինչև Արաբական ծով: Այստեղ պայմաններն առավել բարենպաստ էին մարդկանց տնտեսական և սոցիալական կյանքում վերը նշված փոփոխությունների և պետությունների առաջացման համար: Յուրացնողից արտադրողական տնտեսությանն անցումը սկզբնապես կատարվեց այն տարածքում, որը գիտնականները անվանում են ***«բարեբեր կիսալուսին»*** կամ ***«ոսկե եռանկյուն»***: Այստեղ ցեղային միությունները ավելի վաղ, քան երկրագնդի այլ վայրերում, միավորվեցին միասնական կենտրոնների շուրջը՝ կազմավորելով ***քաղաք-պետություններ: Սա պետության պարզագույն ձևն էր***: 7

Աշխարհում առաջին անգամ միասնական պետություններ առաջացել են Հին Եգիպտոսի և Միջագետքի տարածքում, որտեղ կային պարբերաբար հորդացող ջրառատ գետեր, որոնք բնականից ոռոգում և պարարտացնում էին ափամերձ տարածքները՝ հնարավոր դարձնելով այդ հողերի մշակումը անգամ պարզագույն գործիքներով: Պետության ղեկավարությամբ մարդիկ այստեղ միացյալ ուժերով կառուցել են ոռոգման ջրանցքներ, ամբարտակներ, կամուրջներ, պաշտպանական ամրություններ և տաճարներ՝ բարելավելու համար իրենց կյանքի պայմանները:

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՄՅՈՒՍ ՕՋԱԽՆԵՐԸ

Քաղաքակրթության առաջին օջախների հարևանությամբ որոշ ժամանակ անց պետություններ առաջացան և Փոքր Ասիայի, Հայկական լեռնաշխարհի, Իրանի տարածքում, իսկ հետագայում քաղաքակրթության ալիքը տարածվեց դեպի Հունաստան, Իտալիա, Բալկանյան թերակղզու երկրներ, Միջին Ասիա, Հնդկաստան և այլուր:

Մեր երկրագնդի մի շարք այլ վայրերում ևս կան տարածքներ, որտեղ աճում էին մշակման և երկարատև պահպանման համար պիտանի հացաբույսերի տեսակներ (բրինձ, գարի, եգիպտացորեն և այլն), ինչպես նաև կային ընտելացման համար պիտանի որոշ վայրի կենդանիներ (գոմեշ, ուղտ, փիղ, լամա և այլն): Ժամանակի ընթացքում այդ վայրերում ևս քաղաքակրթության օջախներ ծագեցին: ***Ք.ծ.ա. III–II հազարամյակներում*** քաղաքակրթության օջախներ առաջացան Հնդկաստանի Ինդոս գետի հովտում և Չինաստանում՝ Հուանհե գետի հովտում: Այս երկրները քաղաքակրթության սկզբնական օջախների հետ կապ հաստատեցին ***Ք.ծ.ա. I հազարամյակի վերջին և միացան ընդհանուր համաշխարհային քաղաքակրթության հետագա զարգացման գործընթացին:***

Ք.ծ.ա I հազարամյակում քաղաքակրթության ինքնուրույն օջախներ ձևավորվեցին Ամերիկա մայրցամաքում ապրող ժողովուրդների՝ ***մայաների, ացտեկների և ինկերի*** մոտ: Այս քաղաքակրթությունների ինքնուրույն զարգացումը խաթարվեց XV դարում՝ իսպանական նվաճման հետևանքով:

Նոր բառեր և արտահայտություններ. *քաղաքակրթություն, մշակույթ, նեղլիթ, խեցեգործություն, արտադրող տնտեսություն, «նեղլիթյան հեղափոխություն», նահապետական ընտանիք, ցեղային միություն, իրավունք, քաղաք-պետություն:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս մարդիկ տիրապետեցին երկրագործությանը:
2. Ինչպե՞ս առաջացավ անասնապահությունը, և ի՞նչ հետևանքներ ունեցավ այն:
4. Երկրագնդի ո՞ր տարածքում է առաջինը կատարվել անցումը քաղաքակրթությանը:
4. Ինչպե՞ս կատարվեց անցումը յուրացնողից արտադրողական տնտեսությանը:
5. Որտե՞ղ և ե՞րբ են առաջացել առաջին պետությունները:

§ 2. ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Եգիպտոսը գտնվում է Աֆրիկա մայրցամաքի հյուսիս-արևելյան մասում: Եգիպտոսի տարածքի մեծ մասը անապատ և կիսաանապատ է: Տեղումներ գրեթե չեն լինում: Բնակության համար պիտանի էր միայն Նեղոս գետի հովիտը:

Նեղոսը աշխարհի ամենաերկար գետն է՝ մոտ 6700 կմ: Միջերկրական ծով թափվելուց առաջ Նեղոսը ճյուղավորվում է բազուկների և ոռոգում ընդարձակ տարածք: Այս ճյուղավորումը, որը նման է շրջված եռանկյան, անվանում են Նեղոսի ***դելտա***:

Նեղոսի հովիտը և դելտան բարենպաստ պայմաններ էին ապահովում երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու համար: ***Արդեն Ք.ծ.ա. V հազարամյակում Նեղոսի ափերին մշտական բնակություն էին հաստատել բազմաթիվ ցեղեր:***

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ք.ծ.ա. IV հազարամյակում Եգիպտոսի տարածքում ձևավորվեց մոտ ***40 նոմ՝*** քաղաք-պետություն: Նոմը միավորում էր հարևանությամբ ապրող մի շարք գյուղական համայնքներ: Իրենց բնակավայրերը հեղեղումներից պաշտպանելու համար մարդիկ համատեղ ուժերով կառուցում էին ջրապատնեշներ, ամբարտակներ, փորում էին ջրանցքներ, որ Նեղոսի ջրերով ավելի մեծ տարածք ոռոգեն: Ժամանակի ընթացքում նոմերը միավորվեցին՝ կազմելով 2 մրցակից թագավորություն՝ ***Հյուսիսային և Հարավային***:

Ք.ծ.ա. 3100 թ. Հարավայինի տիրակալ ***Մենեսը*** նվաճեց Հյուսիսային թագավորությունը՝ սկիզբ դնելով Եգիպտոսի միասնական պետությանը: Երկրի միավորումը վերջնականապես ավարտվեց ***Ք.ծ.ա. 2800 թ.*** երկու թագավորությունների սահմանագծին հիմնվեց միավորված Եգիպտոսի առաջին մայրաքաղաք ***Մեմֆիսը:*** Եգիպտոսի միասնական պետության գոյության այս առաջին փուլը անվանում ենք ***Հին թագավորություն:*** Այն գոյատևեց մոտ 500 տարի:

Նեղոսի հովիտը

ԲՈՒՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ: ՀԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Հին եգիպտացիները իրենց երկրի տիրակալին անվանում էին ***փարավոն:*** Փարավոնը համարվում էր կենդանի աստված, նրա խոսքը օրենք էր բոլոր հպատակների համար: Փարավոնը երկիրը կառավարում էր ազնվականների և քրմերի միջոցով: Փարավոնները պարբերաբար արշավանքներ էին ձեռնարկում դեպի պղնձի հանքերով հարուստ Սինայի թերակղզի և հարևան երկրներ՝ եգիպտոս բերելով հազարավոր անասուններ և ստրուկներ: Փարավոնի հրամանով եգիպտացիները կառուցում էին պալատներ, տաճարներ և վիթխարի ***բուրգեր:***

Մեծ Սֆինքսը և Քեփրեն փարավոնի բուրգը Գիզեում

Հին թագավորության վերջին շրջանում փարավոնի իշխանությունը թուլացավ, և Ք.ծ.ա. XXIII դարի կեսին Եգիպտոսը տրոհվեց ինքնուրույն նոմերի:

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԻՋԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Եգիպտոսի մասնատվածությունը շարունակվեց 200 տարի: Նոմերի միջև պատերազմների հետևանքով պակասեց բնակչության թվաքանակը, ոռոգման միասնական համակարգը քայքայվեց, կրճատվեց մշակովի հողերի տարածքը, երկրում սով սկսվեց: Երկրի նոր միավորումը անհրաժեշտություն դարձավ:

Թեբե քաղաքի տիրակալը հաղթեց մյուս նոմերին և Ք.ծ.ա. XXI դ. կեսին միավորեց երկիրը, սկիզբ դնելով Եգիպտոսի ***Միջին թագավորությանը***:

Սկսվեց ոռոգման միասնական համակարգի վերականգնումը: ***Ամենեմհեթ III-ի (Ք.ծ.ա. 1850–1800)*** օրոք Նեղոսից ջրանցք անցկացվեց դեպի Ֆայումի օազիսը և կառուցված արհեստական լճի շնորհիվ զգալիորեն ընդլայնվեց ոռոգվող հողերի տարածքը: Տարածում ստացան բրոնզե գործիքները, զարգացան զինագործությունը, ջուլհակությունը, խեցեգործությունը, ապակեգործությունը և այլն: Աշխուժացավ ներքին և արտաքին առևտուրը:

Ամենեմհեթ III-ի արձանը սֆինքսի տեսքով, Ս.Պետերբուրգ

Միջին թագավորության փարավոնները արշավանքներ էին կատարում դեպի Պաղեստին և Փյունիկիա՝ Եգիպտոս բերելով 100000-ավոր անասուններ, գերի ստրուկներ, շինափայտ, անագ և այլ ավար: ***Սենուսերթ III (Ք.ծ.ա. 1887–1850)*** փարավոնը նվաճեց Եգիպտոսից հարավ ընկած Նուբիա երկիրը, որտեղ ոսկու հարուստ հանքեր կային: 4

Ք.ծ.ա. XVIII դ. ընթացքում Եգիպտոսի գրեթե բոլոր շրջաններում տեղի ունեցան չքավորների և ստրուկների մասսայական ելույթներ: Կենտրոնական իշխանությունը թուլացավ, և Եգիպտոսը կրկին տրոհվեց ինքնուրույն իշխանությունների:

Օգտվելով պետության թուլացումից և մասնատումից՝ ***Ք.ծ.ա. XVIII*** դ. կեսերին Ասիայից Եգիպտոս ներխուժեցին ***հիքսոսների*** քոչվոր ցեղերը և գրավեցին երկրի հյուսիսային մասը: Հիքսոսների տիրապետությունը Եգիպտոսում տևեց մոտ 1,5 դար: 5

Նոր բառեր և արտահայտություններ. *Հին Արևելք, դելտա, նոմ, Հին թագավորություն, Միջին թագավորություն, փարավոն, քուրմ, բուրգ, սֆինքս*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է հույն պատմիչը Եգիպտոսն անվանել «Նեղոսի պարգև»:
2. Ո՞ր տիրակալը և ե՞րբ կարողացավ առաջինը միավորել Եգիպտոսը:
3. Ինչ նպատակով են կառուցվել եգիպտական բուրգերը:
4. Ինչո՞ւ էին փարավոնները արշավանքներ կատարում դեպի հարևան երկրներ:
5. Ինչպե՞ս հիքսոսներին հաջողվեց գրավել Եգիպտոսը:

§ 3. ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

ԵԳԻՊՏՈՍԻ ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիքսոսներին չհաջողվեց հպատակեցնել հարավային Եգիպտոսը: ***Ք.ծ.ա. XVI դ. կեսին***, միավորելով հարավային նոմերը, Թեբե նոմի փարավոն ***Յահմոս I-ը*** պայքար սկսեց հիքսոսների դեմ: Նա գրավեց հիքսոսների մայրաքաղաք Ավարիսը Նեղոսի դելտայում և նրանց երկրից վտարեց: Նրա հաջորդ ***Թութմոս I*** փարավոնը ներխուժեց Պաղեստին, գրավեց մի շարք մարզեր ու քաղաքներ և ավարտեց հիքսոսների ջախջախումը: Եգիպտոսը դարձավ ժամանակի հզոր պետությունը:

Եգիպտոսի այս նոր միասնական պետությունը անվանում են ***Նոր թագավորություն***: Այն գոյատևեց ***Ք.ծ.ա 1580–1085 թթ.:***

ՓԱՐԱՎՈՆՆԵՐԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Թութմոս III

Խոշոր նվաճումներ կատարեց ***Թութմոս III (Ք.ծ.ա. 1468–1436)*** փարավոնը: Նրա արշավանքների արդյունքում Եգիպտոսը վերածվեց հսկայական տերության, որի սահմանները հասնում էին հյուսիսում մինչև Եփրատ գետը, իսկ հարավում՝ մինչև ներկայիս Եթովպիա: Փարավոնին հարկ էին վճարում 50-ից ավելի տեղական իշխաններ և տիրակալներ: Արշավանքներից Եգիպտոս բերվեցին 100-հազարներով ընտանի կենդանիներ, հումք, թանկարժեք իրեր, տասնյակ հազարավոր ստրուկներ:

Ավելի քան մեկ դար Եգիպտոսը Հին Արևելքի ամենահզոր տերությունն էր: Հարևան պետությունների արքաները փարավոնին թանկարժեք ընծաներ էին ուղարկում և հայցում նրա բարեհաճությունը:

ԵԳԻՊՏԱ-ԽԵԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ռամզես II

Ներքին երկպառակությունների պատճառով Ք.ծ.ա XIV դ. Եգիպտոսը առժամանակ թուլացավ և կորցրեց նախկինում նվաճված տարածքները: ***Ռամզես II (Ք.ծ.ա.1279–1213)*** փարավոնը նոր արշավանքներ սկսեց դեպի Սիրիա և Պաղեստին՝ դրանք կրկին Եգիպտոսին ենթարկելու համար: Նա երկար պատերազմ մղեց ***Խեթական թագա-***

վորության դեմ, որը ևս ձգտում էր նվաճել այդ հարուստ երկրները:

20 տարի պատերազմելուց հետո կողմերը կնքեցին հաշտության ու բարեկամության պայմանագիր և վիճելի տարածքները բաժանեցին իրար միջև: Հյուսիսային Սիրիան բաժին հասավ խեթերին, իսկ հարավային Սիրիան և Պաղեստինը անցան Եգիպտոսին:

Նվաճված երկրներից ստացվող հարստությունը Ռամզես II-ն օգտագործեց Եգիպտոսում լայն շինարարության վրա, կառուցեց ամրոցներ, նոր տաճարներ և վերանորոգեց հները:

ԵԳԻՊՏՈՍԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Նոր թագավորության ժամանակաշրջանում Եգիպտոսի տնտեսությունը ծաղկում ապրեց: Վերականգնվեց և ընդլայնվեց ոռոգման միասնական համակարգը: Բարձր դաշտերը ջրելու համար, ուր Նեղոսի ջուրը չէր հասնում, սկսեցին կիրառել ***շադուֆը***:



Շադուֆը նման էր ջրհորից ջուր հանող կոունկի, կարճ ծայրին կապվում էր մեծ ծանրություն, իսկ երկար ծայրից կախված էր դույլը: Նեղոսից դույլով ջուր էին բարձրացնում և ջուրը դատարկում բարձրադիր դաշտերը ջրող առվի մեջ:

Հողագործության մեջ լայնորեն օգտագործում էին եզներ լծած արորը: Ավելացավ արտադրվող մթերքի քանակը, աճեց բնակչության թիվը: Նվաճողական արշավանքներից Եգիպտոս բերվող հումքը, ոսկին, հարյուրհազարավոր անասունները և ստրուկները, հպատակ երկրներից ստացվող հարկերը նպաստեցին ներքին առևտրի և արհեստների զարգացմանը: Որպես դրամական միջոց կիրառում էին ոսկյա և բրոնզե ապարանջաններ ու մատանիներ:

Բրոնզե գործիքները վերջնականապես դուրս մղեցին քարե և պղնձե գործիքները: Ռազմական գործում սկսեցին կիրառվել ձիեր և մարտակառքեր, որոնք մինչև հիքսոսների ներխուժումը եգիպտացիներին ծանոթ չէին: Եգիպտական բանակը զինվում և պահվում էր պետության հաշվին: Զինվորները բաժին էին ստանում ռազմական ավարից:

Երկրի բոլոր հողերը պետության սեփականությունն էին: Փարավոնը հողային կալվածքներ էր հատկացնում տաճարներին, բանակի սպաներին և պետական ծառայողներին: Արքայական և տաճարային կալվածքներում ու արհեստանոցներում աշխատում էին ռազմագերի ստրուկները: Դրանցում արտադրված մթերքը և ապրանքները ծառայում էին պետության, տաճարնե-

րի և բանակի կարիքների համար: Սակայն առաջվա պես պետության գլխավոր եկամուտը ստացվում էր բնակչությունից գանձվող հարկերից:

ԵԳԻՊՏՈՍԻ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Եգիպտոսի հզորությունը երկար չշարունակվեց: Ք.ծ.ա. XI դ. վերջին Եգիպտոսը թուլացավ, և միասնական պետությունը տրոհվեց ինքնուրույն մարզերի: Հարևան պետությունները սկսեցին ասպատակել մասնատված Եգիպտոսի տարածքը:

Ք.ծ.ա. X–VII դդ. ընթացքում Եգիպտոսում իշխեցին ծագումով լիբիացի և նուբիացի արքաներ, ապա կարճ ժամանակով Եգիպտոսը գրավեցին Ասորեստանի տիրակալները: Եգիպտոսում, ուր երկաթի հանքեր չկային, միայն այս ժամանակաշրջանում սկսեցին օգտագործել երկաթյա զենքեր և գործիքներ:

Եգիպտոսի անկախությունը Ք.ծ.ա. 655 թ. վերականգնեց Սաիս նոմի կառավարիչ ***Պսամետիքը***, ով կարողացավ երկրից վտարել ասորեստանցիներին և միավորել երկրի մեծ մասը: Սակայն վերականգնել Եգիպտոսի երբեմնի հզորությունը այլևս չհաջողվեց:

Ք.ծ.ա. 525 թ. Եգիպտոսը նվաճվեց Աքեմենյան Պարսկաստանի կողմից և վերջնականապես կորցրեց իր անկախությունը:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *շադուֆ, Նոր թագավորություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս Եգիպտոսում թոթափեցին հիքսոսների տիրապետությունը:
2. Եգիպտոսի ո՞ր փարավոնն է լայն նվաճումներ կատարել:
3. Ո՞ւմ հետ և ինչի՞ համար էր 20 տարի պատերազմում Ռամզես II փարավոնը: Ինչո՞վ ավարտվեց այդ պատերազմը:
4. Ի՞նչ դրամական միջոցներ էին կիրառվում Եգիպտոսում:
5. Ո՞ր կենդանուն էին ընտելացրել եգիպտացիները, որը նրանց պաշարները պաշտպանում էր կրծողներից:
6. Ե՞րբ Եգիպտոսը վերջնականապես կորցրեց անկախությունը և ո՞ւմ կողմից նվաճվեց:

§ 4. ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳԻՐԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1



Պապիրուսի պատրաստումը

Հին եգիպտացիների մեծագույն նվաճումներից մեկը հիերոգլիֆային գրի ստեղծումն էր: ***Հիերո-գլիֆ*** նշանակում է «սրբազան գիր»: Այն այդպես են անվանել հին հույները, քանի որ այդ նշաններով գրել և կարդալ կարողանում էին միայն եգիպտական տաճարների քրմերը: Յուրաքանչյուր հիերոգլիֆ նշանակում էր մի բառ, մի վանկ կամ մի բաղաձայն նշան:

Գրում էին բարակ սրածայր փայտիկով ստվարաթղթի նմանվող թղթի՝ ***պապիրուսի*** վրա: Այն պատրաստում էին Եգիպտոսում աճող հատուկ եղեգներից: Պապիրուսի վրա գրված գրքերը, գլանաձև ոլորված, պահվում էին տաճարական գրադարաններում: Կարևոր արձանագրությունները գրում էին նաև քարի վրա:

2

Մեզ են հասել Եգիպտոսում հայտնաբերված հազարավոր պապիրուսներ: Դրանց վրայի գրվածքները գիտնականները կարողացան վերծանել միայն 19-րդ դարում:

3

Հին եգիպտացիներից մեզ են հասել բազմաթիվ հեքիաթներ, առասպելներ, խրատներ, ճամփորդական պատմություններ և բանաստեղծություններ:

ՀԻՆ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԿՐՈՆԸ

Հին եգիպտացիների առօրյա ապրուստը և կյանքը կախված էին բնության ուժերից, ուստի նրանք աստվածացնում և երկրպագում էին այդ ուժերը մարմնավորող աստվածներին: Գերագույն աստվածը կենսատու արևի աստված ***Ամոն-Ռա***-ն էր, որը համարվում էր աշխարհի, բնության և մարդկանց ստեղծողը:

Հատուկ երկրպագության առարկա էր Նեղոս գետը: Նրա վարարումից էր կախված ամենամյա բերքի առատությունը, նրանում եղած ձկներից՝ մարդկանց սննդի բազմազանությունը: Նեղոսը նաև երկրի մի ծայրից մյուսը հաս-

Օսիրիսի դատաստանը

նելու հիմնական ուղին էր:

Մեռնող ու հարություն առնող բնության աստվածը ***Օսիրիսն*** էր:

Ընդհանրապես, հին Եգիպտոսում պաշտում էին մի քանի տասնյակ աստվածների, որոնց սովորաբար պատկերում էին մարդու մարմնով և որևէ կենդանու կամ թռչնի գլխով: Դա հնում գոյություն ունեցող տոտեմիզմի դրսևորումն էր:

5

ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Հին եգիպտացիները մեծ նվաճումների հասան գիտության տարբեր բնագավառներում: Մեծ էին հաջողությունները ***աստղագիտության*** մեջ: Աստղերի և երկնային լուսատուների դիրքով որոշում էին Նեղոսի հորդանալու ժամանակը, ցանքսը կամ բերքահավաքը սկսելու ժամանակը:

Մաթեմատիկայի բնագավառում եգիպտացիները ստեղծեցին հաշվարկման ***տասնորդական համակարգը***, որը մենք այսօր էլ օգտագործում ենք: Եգիպտացիները կարողանում էին հաշվարկել շրջանի, ուղղանկյան և եռանկյան մակերեսը, π-ի թիվը, բուրգի բարձրությունը, ջրամբարում ջրի ծավալը և այլն: Նման գիտելիքները անհրաժեշտ էին տաճարների, բուրգերի, ոռոգման ցանցի շինարարության համար:



Բժիշկը զննում է հիվանդին

Եգիպտական բժիշկները լավագույնն էին համարվում ողջ Հին Արևելքում: Նրանք քաջ գիտեին մարդու ներքին օրգանների կառուցվածքը, արյան շրջանառությունը, կատարում էին ներքին օրգանների բարդ վիրահատություններ, խիստ հմուտ էին ակնաբուժության մեջ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Առայսօր պահպանվել են եգիպտացի շինարարների՝ մի քանի հազար տարի առաջ կառուցած բազմաթիվ շինություններ: Եգիպտացիների ամենահայտնի շինությունները ***բուրգերն*** են: Դրանք կառուցվել են որպես փարավոնների դամբարաններ:

Իրենց աստվածների պատվին եգիպտացիները կառուցում էին շքեղ տաճարներ: Պահպանվել են Թեբեում Ամոն աստծո համար կառուցված ***Լուքսորի***

և Կառնակի տաճարները: Այդ շինությունները կառուցվել են խոշոր և լավ հղկված քարերով և վկայում են, թե որքան հմուտ էին եգիպտացիները շինարարության բնագավառում:

Ժայռափոր տաճարի փայլուն օրինակ է Ռամզես II-ի տաճարը Աբու-Սիմբելում, որի մուտքը հսկում են փարավոնի չորս վիթխարի արձանները:

Հաճախ փարավոններին պատկերում էին սֆինքսի ձևով՝ փարավոնի գլխով և պառկած առյուծի մարմնով: Ի հիշատակ կարևոր իրադարձությունների՝ կանգնեցվում էին ամբողջական քարից մինչև 30 մ բարձրության հասնող ***օբելիսկներ՝ քարակոթողներ,*** վրան արված արձանագրություններով:



Եգիպտական քարակոթող Փարիզում

Տաճարների և փարավոնների դամբարանների ներսի պատերը զարդարված էին ***բարձրաքանդակներով և նկարներով***: Դրանք սովորաբար պատկերում էին զվարճանքի կամ մարտի տեսարաններ կամ կենցաղային, գյուղատնտեսական և արհեստագործական աշխատանքի գործընթացներ:

Քանդակները պատրաստվում էին տարբեր տեսակի քարերից, կավից, ալեբաստրից: Քանդակում էին թագավորների և մեծատոհմիկների դիմանկարներ, գազանների, թռչունների և առասպելական կենդանիների արձաններ:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *պապիրուս, վերծանություն, քարակոթող, տասնորդական համակարգ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ է առաջինը վերծանել եգիպտական հիերոգլիֆները: Կարո՞ղ եք բացատրել, թե դա ինչպես նրան հաջողվեց:
2. Հին Եգիպտոսի ի՞նչ գրական ստեղծագործություններ գիտեք: Ներկայացրեք դրանց բովանդակությունը:
3. Ինչպիսի՞ն էր հին եգիպտացիների կրոնը: Թվարկեք մի քանի աստվածների և նշեք նրանց հովանավորության բնագավառը:
4. Գիտության ո՞ր ճյուղերն էին զարգացած Եգիպտոսում: Ինչպիսի՞ն էր եգիպտացիների հաշվարկային համակարգը:
5. Հին Եգիպտոսի ճարտարապետության ի՞նչ նշանավոր հուշարձաններ գիտեք, թվարկեք մի քանիսը:

§ 5. ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

ՄԻՋԱԳԵՏՔԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ



Հին հույները ներկայիս Իրաքի տարածքը հնում անվանել են «Մեսոպոտամիա»՝ գետերի միջև ընկած երկիր՝ ***Միջագետք***: Այն քաղաքակրթության մյուս կարևոր օջախն է, որը առաջացել և զարգացել է Եգիպտոսի հետ միաժամանակ: Ի տարբերություն Եգիպտոսի՝ Միջագետքի տարածքը լեռներով և ծովերով պաշտպանված չէ, հաճախակի ենթարկվել է տարբեր ցեղերի ներխուժումների, որոնք, խառնվելով տեղաբնիկների հետ, սկիզբ են դրել նորանոր պետությունների:

Միջագետքով են հոսում Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող ***Եփրատ և Տիգրիս*** գետերը և թափվում Պարսից ծոցը: Երկու գետերն էլ իրենց բնույթով նման էին Նեղոս գետին. ապրիլ–մայիս ամիսներին վարարում էին, ստորին հոսանքի շրջանում բաժանվում ճյուղերի, ոռոգում և պարարտացնում շրջակա տարածքը: Գետերը հարուստ էին ձկներով, ափերին աճում էին արմավենիներ, թզենիներ և այլ պտղատու ծառեր, գետափնյա եղեգնուտներում կային տարատեսակ թռչուններ և վայրի կենդանիներ:

Միջագետքի հյուսիսային մասը բլրաշատ է, կան ոչ բարձր լեռներ և բնական անտառներ: Կլիման խստաշունչ է, բայց տեղումները շատ չեն: Հարավային Միջագետքի կլիման չոր անապատային է, տեղումներ գրեթե չեն լինում, չկան ոչ քար, ոչ անտառներ, ոչ մետաղի հանքավայրեր: Փոխարենը Միջագետքը հարուստ էր ***կավով և բնական ասֆալտով***: Գետամերձ շրջաններից բացի՝ մնացյալ տարածքը բնակության համար պիտանի չէր:

ՇՈՒՄԵՐԻ ՔԱՂԱՔ–ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ք.ծ.ա. V–IV հազարամյակներում Հարավային Միջագետքում մշտական բնակություն հաստատեցին ***շումերական ցեղերը***: Տարածքը ճահճոտ էր, կլիման՝ անառողջ, հաճախ էին ջրհեղեղները: Ք.ծ.ա. IV հազարամյակի ընթացքում շումերները կարողացան զգալիորեն բարեփոխել իրենց բնա-

Եփրատի հովիտը

կության տարածքը: Ջրհեղեղներից պաշտպանվելու համար բնակավայրերը հիմնում էին արհեստական բլուրների վրա, կառուցում էին ամբարտակներ, ճահիճները չորացնելու և դաշտերը ոռոգելու համար փորում էին ջրանցքներ:

Աստիճանաբար նրանց հիմնական զբաղմունքը դարձան երկրագործությունը և անասնապահությունը:

Ք.ծ.ա. III հազարամյակում շումերները արդեն կիրառում էին ***բրոնզե գործիքներ***, ինչը խթանեց տնտեսության հետագա զարգացումը և բնակչության աճը: Շումերում առաջացան մոտ մեկ տասնյակ քաղաք-պետություններ՝ ***Քիշը, Ուրը, Ուրուկը, Լագաշը*** և այլն: Քաղաք-պետության բնակչության թիվը մոտ 40-50 հազար էր: Այն ղեկավարում էր քուրմ-տիրակալը:

Շումերի քաղաք-պետությունների միջև հաճախակի էին պատերազմները: Առանձին քաղաք-պետություններ կարողանում էին որոշ ժամանակով գերիշխանության հասնել՝ ստիպելով հարևան քաղաքներին իրենց հարկ վճարել: Ք.ծ.ա. XXVI դ. գերիշխանության հասավ Ուրը, մեկ դար հետո՝ Լագաշը, իսկ Ք.ծ.ա. XXIV դ.՝ Ումմա քաղաք-պետությունը:

ԱՔՔԱԴԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Միջագետքի այն մասում, ուր Տիգրիսը և Եփրատը առավել են մոտենում իրար, Ք.ծ.ա. III հազարամյակի սկզբում հաստատվել էին շումերներին ոչ ազգակից ***սեմական*** ցեղերը: Նրանց մոտ նույնպես առաջացան քաղաք-պետություններ, որոնք մրցակցում էին շումերների հետ: Դրանցից հզորացավ ***Աքքադ*** քաղաք-պետությունը, որի արքա ***Սարգոնը Ք.ծ.ա. XXIV դ. վերջին*** իրեն ենթարկեց մյուս քաղաք-պետությունները, ապա տևական պատերազմներից հետո գրավեց նաև Շումերը: ***Միջագետքը առաջին անգամ միավորվեց մեկ պետության մեջ:***

Սարգոն Աքքադացի

Սարգոնը սկսեց իրեն անվանել ***«Աքքադի և Շումերի արքա»:*** Արքայի իշխանությունը անսահմանափակ էր: Նա ստեղծեց մշտական բանակ, սահմանեց չափ ու կշռի միասնական միավորներ, բարեկարգեց ճանապարհները: Զարգացան արհեստներն ու առևտուրը: Երկրում կառուցվեց ոռոգման միասնական համակարգ, ընդարձակվեց մշակովի հողերի տարածքը: Թագավորական հսկիչները զբաղվում էին հողերի չափագրմամբ և հարկերի հավաքմամբ:

Նարամ-Սուենի բարձրաքանդակը

Աքքադի պետությունն ընդարձակվեց Սարգոնի թո-

ռան՝ ***Նարամ-Սուենի (Ք.ծ.ա. 2236-2200)*** օրոք: Նա արշավանքներ կատարեց դեպի հյուսիս՝ հասնելով Հայկական լեռնաշխարհի սահմանները, ապա գրավեց ներկայիս Սիրիայի տարածքը: Նարամ-Սուենն ընդունեց ***«աշխարհի չորս կողմերի թագավոր»*** տիտղոսը: Ք.ծ.ա. XXIII դ. վերջին Աքքադի պետությունը թուլացավ և նվաճվեց Հայկական լեռնաշխարհից Միջագետք ներխուժած ***կուտիների ցեղերի*** կողմից:

ՇՈՒՄԵՐԱ-ԱՔՔԱԴԱԿԱՆ ՈՒՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կուտիների տիրապետությունը Միջագետքում տևեց մոտ մեկ դար: Ազատագրական պայքարը սկսվեց Ուրուկ քաղաքից և ավարտվեց ***Ք.ծ.ա. XXII դ. վերջին*** Ուր քաղաքի տիրակալ ***Ուր-Նամուի*** հաղթանակով: Նա միավորեց ողջ Միջագետքը և ընդունեց «Շումերի և Աքքադի արքա» տիտղոսը:

Միջագետքի տնտեսությունը նոր վերելք ապրեց: Ընդլայնվեց ոռոգման ցանցը, տարածում ստացան բրոնզե գործիքները, ավելացավ արտադրվող մթերքի քանակը: Արշավանքներից երկիր էին բերվում հազարավոր մանր և խոշոր եղջերավոր անասուններ, հումք և այլ հարստություն: Զարգացան արհեստներն ու առևտուրը, տարածվեց ստրկությունը:

Արքայի իշխանությունն անսահմանափակ էր: Նրա անձն աստվածացվում էր: Նա էր նշանակում մարզերի կառավարիչներին, դատավորներին և այլ պաշտոնյաների: Ստեղծվեց գրավոր օրենսգիրք՝ «***Ուր-Նամուի օրենքները***»:

Երկրում գործում էին խոշոր արքայական տնտեսություններ և արհեստանոցներ, որոնցում աշխատեցնում էին հազարավոր ստրուկների: Աշխատանքները կազմակերպում և վերահսկում էին մեծ թվով վերակացուներ, գրագիրներ և զինվորներ:

Ուրի թագավորությունը գոյատևեց մեկ դարից քիչ ավելի և կործանվեց Ք.ծ.ա. XX դ. սկզբին հյուսիս-արևմուտքից՝ ամորեական, և արևելքից՝ էլամական ցեղերի ներխուժումներից:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *Մեսոպոտամիա/Միջագետք, շումերներ, աքքադացիներ, էնսի, կուտիներ, արքայական տնտեսություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Կարո՞ղ եք քարտեզի վրա ցույց տալ Եփրատ և Տիգրիս գետերի ակունքները:
2. Ի՞նչ դեր ունեին այդ գետերը Միջագետքի կյանքում:
3. Ովքե՞ր էին Միջագետքի հնագույն բնակիչները, ե՞րբ նրանք հաստատվեցին Միջագետքում:
4. Ո՞վ և ե՞րբ առաջին անգամ միավորեց Միջագետքը մեկ պետության մեջ:
5. Ի՞նչ տիտղոս էր կրում Նարամ - Սուեն արքան, ո՞րն էր դրա իմաստը:
6. Ո՞ր քաղաքն էր Շումերա-աքքադական պետության կենտրոնը, ե՞րբ է գոյություն ունեցել այդ պետությունը:

§ 6. ԲԱԲԵԼՈՆԻ ՀԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԲԵԼՈՆԻ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ

Միջագետքը գրված ամորեական և էլամական ցեղերը ստեղծեցին մի քանի մրցակցող իշխանություններ՝ ***Իսին, Լարսա, Աշշուր, Մարի*** և այլն: Ժամանակի ընթացքում նվաճողները ձուլվեցին տեղական բնակչությանը՝ ընդունելով նրանց լեզուն և բարքերը:

Ք.ծ.ա. XVIII դ. սկզբին վերելք ապրեց ***Բաբելոնի թագավորությունը,*** որը գտնվում էր երկրի կենտրոնական մասում, ուր Եփրատը և Տիգրիսը առավել են իրար մոտենում: Բաբելոնով էին անցնում ցամաքային և գետային առևտրական ուղիները: Բաբելոն անվանումը ծագում է աքքադերեն «Բաբ-Իլու»՝ «աստծո դարպասներ» բառից:

Բաբելոնի թագավորությունը հզորացավ ***Համմուրապի (Ք.ծ.ա. 1792-1750)*** արքայի օրոք, որը հմուտ վարչարար էր, տաղանդավոր զորավար և փայլուն դիվանագետ: Նա նվաճեց մյուս պետությունները և միավորեց ողջ Միջագետքը: Պետության տարածքը Համմուրապին բաժանեց մարզերի, ամենուր նշանակեց հավատարիմ պաշտոնյաների:

Բաբելոն քաղաքը դարձավ Միջագետքի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնը: Բաբելոնի դերն ու ազդեցությունը այնքան մեծացան, որ Միջագետքի կենտրոնական ու հարավային մասը այդուհետ սկսեցին անվանել ***Բաբելոնիա***:

ՀԱՄՄՈՒՐԱՊԻԻ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

1

Երկրի միասնությունը և կարգ ու կանոնը ապահովելու համար Համմուրապին ստեղծեց ընդհանուր օրենքներ: Արքայի հրամանով հավաքվեցին Միջագետքում գործող բոլոր բանավոր և գրավոր օրենքները, վերամշակվեցին և փորագրվեցին 7 քարե սյուների վրա: Դրանք տեղադրվեցին երկրի խոշոր քաղաքներում՝ ի տես ամենքի:

Արքան համարվում էր երկրի գերագույն դատավորը: Նա էր նշանակում տեղական դատավորներին, որոնք պետք է դատ ու դատաստան իրականացնեին՝ ըստ **օրենսգրքի:** Օրենքները վերաբերում էին ընտանեկան հարաբերություններին, տնտեսությանը, առևտրին, պաշտոնյաների պարտականություններին, ազատ մարդկանց իրավունքներին, ստրուկների դրությանը և այլն: Համմուրապիի օրենսգիրքը օրինակ է ծառայել շատ այլ պետությունների օրենսդիրների համար:

ԲԱԲԵԼՈՆԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Բաբելոնիայի տնտեսության հիմքը հողագործությունն էր: Ոռոգման ցանցի ընդլայնման շնորհիվ ընդարձակվեց մշակովի հողերի տարածքը, աճեց բերքատվությունը: Տարածում ստացան այգեգործությունը և բանջարաբուծությունը: Բոլոր մարդիկ պարտավոր էին մաքրել և վերանորոգել իրենց հողերով անցնող ջրանցքները: Հատուկ պաշտոնյաները վերահսկում էին ոռոգման ցանցի կանոնավոր աշխատանքը, պատժում անբարեխիղճներին:

Զարգացավ անասնապահությունը: Պահում էին մանր և խոշոր եղջերավոր անասուններ, ավանակներ, ուղտեր: Բարձր զարգացման հասան արհեստները: Օրենքներում հիշատակվում են շինարարներ, ատաղձագործներ, բրուտներ, կաշեգործներ, դարբիններ: Արհեստավոր էին համարվում բժիշկները, անասնաբույժները, վարսավիրները և այլք: Նրանց վարձատրության չափերը սահմանված էին օրենքներով:

Երկրի միավորումը նպաստեց ներքին առևտրի զարգացմանը: Արտաքին առևտուրը պետության մենաշնորհն էր: Դրանով զբաղվում էին հատուկ պաշտոնյաները՝ ***տամկարները:*** Թույլատրվում էր հողաբաժինների առք ու վաճառքը, վարձակալությունը, գրավ դնելը:

Բաբելոնյան հասարակությունը՝ ըստ ունեցվածքի և իրավունքների, խիստ շերտավորված էր. ***կային լիիրավ և ոչ լիիրավ քաղաքացիներ***: Նույն հանցանքի համար, եթե այն կատարվել էր լիիրավ քաղաքացու նկատմամբ, հանցագործին պատժում էին ավելի խիստ, իսկ ոչ լիիրավ քաղաքացու դեպքում՝ ավելի թեթև: Ընտանեկան հարաբերությունները պաշտպանվում էին օրենքով: Հայրը միայն դատարանի որոշմամբ կարող էր որդուն զրկել ժառանգությունից: Ամուսնալուծությունը ևս կատարվում էր միայն դատարանի որոշմամբ:

2

3

Միջագետքի տարածքում և հարևանությամբ առաջացան այլ պետություններ ևս, որոնք Միջագետքի քաղաքակրթության կարևոր մասն են:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *օրենսգիրք, տամկար, լիիրավ և ոչ լիիրավ քաղաքացի*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ ունակություններ ուներ Համմուրապի արքան:
2. Ո՞րն էր միասնական օրենսգիրք ստեղծելու նրա նպատակը:
3. Ովքե՞ր էին տամկարները, ինչո՞վ էին նրանք զբաղվում:
4. Ինչո՞վ էին լիիրավ քաղաքացիները տարբերվում ոչ լիիրավ քաղաքացիներից:
5. Բաբելոնի թագավորությունից բացի՝ ուրիշ ինչ պետություններ կային Միջագետքում:

§ 7. ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ: ԲԱԲԵԼՈՆԻ ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ

Միջագետքի հյուսիս-արևելյան մասում՝ Տիգրիսի ափին, ***Ք.ծ.ա. III հազարամյակում*** աքքադացի վերաբնակիչները հիմնցին ***Աշշուր քաղաք-պետությունը***, որի անունից այդ տարածքը հետագայում կոչվեց ***Ասորեստան***:

Աշշուրը կարևոր առևտրական կենտրոն էր: Այդտեղով էին անցնում հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք տանող առևտրական ուղիները: Ք.ծ.ա. XVIII դ. Աշշուրը Համուրապիի պետության կազմում էր, իսկ Ք.ծ.ա. XVI–XV դդ. հարկատու էր Միտանիին:

Ք.ծ.ա. XIII–XII դդ. Ասորեստանը կարճատև վերելք ապրեց: Սալմանասար I արքան գրավեց Միտանին, իսկ նրա որդին՝ Թուկուլթի-Նինտուրտե I-ը գրավեց Բաբելոնիան և հաջող արշավանքներ կատարեց Նաիրի երկրների դեմ: ***Ք.ծ.ա. XI դ.*** Ասորեստանը ենթարկվեց Սիրայի տարածքից ***արամեական ցեղերի ներխուժումներին***, առժամանակ թուլացավ և կորցրեց նվաճված տարածքները:

Միջագետք ներխուժած արամեական ցեղերը աստիճանաբար անցան նստակյաց կյանքի, սակայն միասնական պետություն ստեղծել չկարողացան: Միջագետքում ***տարածվեց երկաթե գործիքների և զենքերի կիրառումը***: Ասորեստանի տնտեսությունը արագորեն վերականգնվեց, և ***Ք.ծ.ա. X դ. վերջին*** Ասորեստանը նոր վերելք ապրեց: ***Սալմանասար III (Ք.ծ.ա. 859–824)*** արքան հպատակեցրեց Միջագետքի արամեական իշխանությունները, տևական պատերազմներից հետո նվաճեց հյուսիսային Սիրիան, որը հարուստ էր մետաղահանքերով և շինափայտով: Նրա հաջորդների օրոք Ասորեստանին հարկատու դարձավ Բաբելոնը:

Ասորեստանի արքաները հաճախակի ներխուժում էին Հայկական լեռնաշխարհ, թալանում երկրի բնական հարստությունները, բնակչությանը ստրկության տանում: Երբ ***Ք.ծ.ա. 859 թ. Սալմանասար III-ը*** փորձեց հերթական անգամ ասպատակել երկիրը, հանդիպեց նորաստեղծ ***Վանի թագավորության*** ուժեղ դիմադրությանը: Վանի թագավորությունը, որը ասորեստանցիները անվանում էին ***Ուրարտու***, հաջողությամբ հետ մղեց Ասորեստանի հետագա արշավանքները:

Ք.ծ.ա. VIII դ. Ասորեստանում սկսվեցին ներքին երկպառակություններ, գահակալական պայքար և ապստամբություններ: Օգտվելով Ասորեստանի դժվարություններից՝ ***Արգիշտի I-ը (Ք.ծ.ա. 786–764)*** վերահսկողություն հաստատելով միջազգային առևտրական ուղիների վրա:



Բանակի թվաքանակը հասավ 120000 մարդու: Այն զինվում և պահվում էր պետության հաշվին, զինվորները ստանում էին ռոճիկ և ավարից մասնաբաժին: Ասորեստանյան բանակում կիրառվում էին թեթև և ծանր հետևակ, մարտակառքեր, հեծելազոր, պարսպակործան մեքենաներ, կարողանում էին գետերի վրայով կամուրջներ գցել: Կար նաև հետախուզություն:

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ք.ծ.ա. VIII դ. կեսին Ասորեստանը կրկին հզորացավ: ***Թիգլաթ-պալասար III (745-727)*** արքան վերջ դրեց ներքին երկպառակություններին, անցկացրեց վարչական բարեփոխումներ և վերակազմեց զորքը՝ այն դարձնելով ժամանակի ամենահզոր և կազմակերպված բանակը:

Թիգլաթ-պալասար III-ին հաջողվեց երկու ճակատամարտում պարտության մատնել Սարդուրի II-ին, ավերել Վանի թագավորության կենտրոնական շրջանները և Ասորեստանին վերադարձնել առևտրական ուղիների վերահսկողությունը:

Նախկինում ասորեստանցիների հիմնական զբաղմունքը տարանցիկ առևտուրն էր, իսկ այժմ հիմնական դարձան պատերազմները, հարևան ժողովուրդների նվաճումը և թալանը: ***Սարգոն II-ի (Ք.ծ.ա. 722-705)*** և նրա հաջորդների օրոք Ասորեստանը վերածվեց հզոր, աշխարհակալ տերության, որի կազմում էին Բաբելոնիան, Էլամը, Մարաստանը, Սիրիան, Պաղեստինը, Կիլիկիան, կարճ ժամանակով՝ անգամ Եգիպտոսը:

Ասորեստանի նոր մայրաքաղաք դարձավ ***Նինվեն:*** Նվաճված երկրներից Ասորեստան էին բերվում հարյուրհազարավոր անասուններ, թալանված հարստություն, բնակչությանը կոտորում էին կամ գերության տանում:

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Նվաճված երկրներում Ասորեստանի իշխանությունը ամուր չէր և պահվում էր միայն զենքի ուժով: Իր դաժանությունների շնորհիվ Ասորեստանը հարուցել էր հարևան բոլոր ժողովուրդների ատելությունն ու թշնամանքը: Ք.ծ.ա. VII դարում հաճախակի դարձան նվաճված երկրների ապստամբությունները:

Ք.ծ.ա. 626 թ. Ասորեստանից անկախացավ Բաբելոնը, իսկ մի քանի տարի

անց՝ Մարաստանը: Այս պետությունները Ասորեստանի դեմ դաշինք կազմեցին, որին միացան Ասորեստանին հպատակ այլ երկրներ ևս: Դաշնակիցները նախ գրավեցին ու կործանեցին Ասորեստանի հին մայրաքաղաք Աշշուրը, ապա ***Ք.ծ.ա. 612 թ. գրավեցին ու կործանեցին Նինվեն***: Մի քանի տարի անց Ասորեստան պետությունը վերացավ աշխարհի երեսից:

1

ԲԱԲԵԼՈՆԻ ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ասորեստանից անկախանալով՝ Բաբելոնը արագորեն վերականգնեց իր երբեմնի փառքն ու հզորությունը: Բաբելոնի արքան տիրացավ Ասորեստանի տարածքների մեծ մասին, մնացածը բաժին հասավ դաշնակից Մարաստանին:

Բաբելոնի Նոր թագավորությունը ծաղկում ապրեց ***Նաբուգոդոնոսոր II-ի (Ք.ծ.ա. 605-562)*** օրոք: Նա գրավեց Սիրիան, Պաղեստինը, կործանեց հրեաների մայրաքաղաք Երուսաղեմը և բնակչությանը գերության տարավ Բաբելոն:

Բաբելոնի թագավորությունը դարձավ ընդարձակ և հզոր տերություն, պայմաններ ստեղծվեցին տնտեսության բուռն զարգացման համար: Թույլատրվում էր հողակտորների ազատ առք ու վաճառքը անհատներին՝ որպես մասնավոր սեփականություն:

Բաբելոնիայում խոշոր հողատեր էին տաճարները: Տաճարների հողերը տրվում էին անհատներին վարձակալության կամ մշակվում էին ստրուկների աշխատանքով: Ստրուկների աշխատանքով նորոգվեց ոռոգման միասնական համակարգը: Կառուցվեց ***Մեծ ջրանցքը***, որը հոսում էր Եփրատին զուգահեռ և կարծես մի առանձին գետ լիներ:

2

Նաբուգոդոնոսոր II-ը Բաբելոնը զարդարեց գեղեցիկ տաճարներով և շինություններով: Այն դարձավ իր ժամանակի ամենախոշոր և մարդաշատ քաղաքը, Միջագետքի քաղաքական և մշակութային կենտրոնը: Բաբելոնի նշանավոր շինություններից էին ***Բաբելոնի աշտարակը*** և ***Կախովի այգիները***:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *Մեծ ջրանցք, Բաբելոնի աշտարակ, Կախովի այգիներ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Հյուսիսից հարևան որ պետության հետ էր մրցակցում Ասորեստանը IX-VIII դդ.: Ինչով ավարտվեց այդ մրցակցությունը:
2. Ներկայացրեք Ասորեստանի բանակի կառուցվածքը Թիգլաթ-պալասար III-ի բարեփոխումներից հետո:
3. Ճրբ և հարևան որ երկրները կործանեցին Ասորեստանը:
4. Ճրբ և որ արքայի օրոք հզորացավ Բաբելոնի նոր թագավորությունը:
5. Նկարագրեք Բաբելոն քաղաքը, թվարկեք Բաբելոնի ամենաաչքի ընկնող շինությունները:

§ 8. ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հին Միջագետքի քաղաքակրթությունը այդ տարածքում բնակվող բազմաթիվ ժողովուրդների ստեղծագործ նվաճումների ընդհանուր արդյունքն է:

ԳԻՐԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1

Միջագետքի ժողովուրդների կարևոր նվաճումներից էր յուրահատուկ գրի՝ ***սեպագրի*** ստեղծումը: Սեպագրով են գրել նաև ասորեստանցիները: Նրանցից սեպագիրը փոխ առան և իրենց լեզվին հարմարեցրին խեթերը, էլամցիները, ուրարտացիները, պարսիկները և այլք:

Միջագետքում գիրը ստեղծեցին շումերները: Սկզբնապես շումերական գիրը ***պատկերագիր*** էր: Սակայն կավի վրա պատկեր նկարելը դժվար էր, և այն աստիճանաբար պարզեցվեց, իսկ նշանները սեպի ձև ստացան: Սեպագիրը շումերներից սովորեցին աքքադացիները՝ հարմարեցնելով այն իրենց լեզվին: Սակայն շումերերենը չմոռացվեց, այն համարվում էր սրբազան լեզու և պարտադիր ուսուցանվում էր դպրոցներում:

2

Գրագիտություն սովորում էին միայն ունևոր խավի մարդկանց զավակները: Ուսուցումը վճարովի էր և տևում էր երկար տարիներ: Դպրոցները գործում էին պալատներին և տաճարներին կից: Հետագայում առաջացան նաև մասնավոր դպրոցներ:

Մեզ են հասել Հին Միջագետքի ժողովուրդների ստեղծած գրականության տարբեր նմուշներ՝ պատմվածքներ, հեքիաթներ, առասպելներ ու էպիկական պատմություններ: Հայտնաբերվել են կավե սալիկների վրա գրված առևտրական ու միջազգային ***պայմանագրեր***, արքաների թողած ***գարեգրություններ*** և այլն:

ՄԻՋԱԳԵՏՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՐՈՆԸ

Հին Միջագետքի ժողովուրդները հավատում և պաշտում էին բազմաթիվ աստվածների: Նրանց պատկերում էին մարդկային տեսքով՝ իրենց սրբազան կենդանու վրա կանգնած:

Սկզբնապես ամեն քաղաք-պետություն ուներ իր հովանավոր աստվածությունը, որի պատվին քաղաքի կենտրոնում կառուցում էին նրա սրբավայր տաճարը: Միասնական պետության առաջացումով 6 աստվածությունների պաշտամունքը դարձավ համապետական: Նրանցից յուրաքանչյուրը տնօրինում

էր բնության առավել կարևոր ուժերից որևէ մեկը:

Տաճարներում քրմերը կազմակերպում էին աստվածների պատվին տոնախմբություններ, ցուցադրում ներկայացումներ նրանց կյանքից, հնչում էին աստվածներին փառաբանող երգեր: Տաճարներին նվիրաբերում էին մթերք, հարստություն, զոհաբերում կենդանիներ: Տաճարները ունեին հարուստ հողային կալվածքներ, արհեստանոցներ, զբաղվում էին առևտրով և վաշխառությամբ: Տաճարները նաև գիտական և ուսումնական կենտրոններ էին:

3

Մարդուկ աստվածը

ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Միջագետքում բարձր զարգացման էր հասել ***մաթեմատիկան:*** Բաբելոնյան քրմերը կարողանում էին լուծել երկրաչափական խնդիրներ, հաշվարկել թվի քառակուսին, խորանարդը, արմատ հանել: Մեծ ճշտությամբ հաշվարկել էին π-ի թիվը՝ 3,14: Միջագետքում հաշվարկային համակարգը ոչ թե տասնորդական էր, այլ վաթսունական: ***«6» թիվը*** համարվում էր սրբազան, և նրանից ստացվող բոլոր թվերը՝ նույնպես: Այս հաշվարկային համակարգը այսօր մենք կիրառում ենք ժամացույցի մեջ:

Զարգացած գիտություններից էր ***աստղագիտությունը:*** Բաբելոնյան քրմերը կազմել էին աստղային քարտեզներ, տարբերակում էին աստղերը մոլորակներից, կարողանում էին կանխատեսել արեգակի և լուսնի խավարումները:

Բժշկության մեջ ուժեղ էր կրոնի ազդեցությունը, բուժման համար կիրառում էին աղոթքներ և հմայություններ: Հիվանդությունը բացատրում էին մարդու մարմնի մեջ չար ոգու մտնելով: Կարողանում էին հաջողությամբ բուժել կոտրվածքները, թարախախոցերը, կատարում էին աչքի փառի հեռացում:

4

Միջագետքի ժողովուրդները լավ ծանոթ էին շրջակա երկրների ***աշխարհագրությանը***: Լայնորեն տարածված էր քաղաքների, շրջանների և նվաճված երկրների ցուցակներ կազմելը: Երկրների թվարկումը կատարում էին աջից ձախ: Պեղումներից հայտնաբերվել են Միջագետքում պարբերաբար անցկացվող մարդահամարների ցուցակներ, նաև բնակչությունից գանձվող հարկատեսակների ցանկեր: Մեզ է հասել հին Բաբելոնում կազմված աշխարհի ամենահին քարտեզը, որի վրա նշված է նաև Հայկական լեռնաշխարհը:

Աշխարհի քարտեզը

Միջագետքում բարձր զարգացման էր հասել ***իրավագիտությունը***: Այդ են վկայում Ք.ծ.ա. III–II հազարամյակներում կազմված շումերական, աքքադական և ասորեստանյան դատաստանագրքերը, Ուրի արքա Ուր-նամուի և Բաբելոնի արքա Համուրապիի օրենսգրքերը:

Միջագետքում շատ զարգացած էր ***լեզվաբանությունը:*** Տարածաշրջանում բնակվող բազմալեզու ժողովուրդների միջև աշխույժ առևտրական կապերը պարտադրում էին տիրապետել տարբեր լեզուների, իմանալ տարատեսակ ապրանքների և գործարքների անվանումները տարբեր լեզուներով: Դրա համար Միջագետքում կազմվում էին տարբեր լեզուների համեմատական բառարաններ, կային օտար լեզուներ և թարգմանչություն սովորեցնող հատուկ դպրոցներ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ

Քարից աղքատ Միջագետքում շինությունները հիմնականում կառուցվում էին աղյուսից և կավից: Դրանք 1–2-հարկանի պարզ ոճի շինություններ էին: Արտաքին զարդարման համար օգտագործում էին թրծված գունավոր աղյուսներ: Քարը և փայտը թանկ էին և օգտագործվում էին միայն դռների և տան անկյունաքարերի համար: Աղքատների տները ավելի հասարակ էին. եղեգից հյուսված պատերը և տանիքը ներսից ու դրսից ուղղակի ծեփում էին կավով:

Տաճարները կառուցվում էին քառակուսի հիմքով, 5–6-հարկանի աստիճանաձև աշտարակի տեսքով: Դրանք անվանում էին ***զիկուրատ:*** Տաճար-զիկուրատները համարվում էին երկիրը երկնքին կապող աստիճան: Դրանք նաև հարմար հարթակ էին աստղագիտական դիտարկումների համար:

5

Տաճարների և պալատների պատերը զարդարում էին ***բարձրաքանդակներով:*** Դրանք քանդակներ են, որոնք փորագրվում էին ուղղակի տաճարի կամ պալատի պատերին: Տարածված էին գույնզգույն հախճասալիկներից պատրաստված բարձրաքանդակները: Միջագետքում բարձր զարգացման հասան նաև քարի և փայտի վրա փորագրությունը, ոսկերչությունը, կիսաթանկարժեք քարերից ***կնիքների պատրաստումը***:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *սեպագիր, զիկուրատ, բարձրաքանդակ, «սալիկների տուն», տապան*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է շումերների ստեղծած գրության ձևը կոչվում սեպագիր:
2. Ի՞նչ առարկաներ և ինչպե՞ս էին ուսուցանում Միջագետքի դպրոցներում:
3. Ի՞նչ գիտեք ջրհեղեղի առասպելի մասին:
4. Ինչի՞ մասին է պատմվում Գիլգամեշի մասին էպոսում:
5. Ո՞ր գիտություններն էին առավել զարգացած Միջագետքում:
6. Արդյոք շումերները գիտե՞ին Հայաստան երկրի մասին: Հիմնավորեք ձեր պատասխանը:

§ 9. ՀԻՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԸ

Փոքր Ասիա թերակղզին գտնվում է Հայկական լեռնաշխարհից արևմուտք: Տեղանքը լեռնային է, անտառածածկ: Լեռները հարուստ են օգտակար հանածոներով՝ պղինձ, անագ, երկաթ, ոսկի և արծաթ: Հնում Փոքր Ասիայում բնակվել են տարբեր լեզուներով խոսող բազմաթիվ ժողովուրդներ:

ԽԵԹԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Փոքր Ասիայի կենտրոնական և հարավ-արևելյան մասերում բնակվում էին ***խեթերը***: Ք.ծ.ա. XVIII դ. նրանց մոտ առաջացան քաղաք-պետություններ՝ ***Խաթուսաս***, ***Նեսա, Կանես*** և այլն: Խեթական քաղաքները աշխույժ առևտուր էին կատարում Միջագետքի և Սիրիայի պետությունների հետ:

Խեթական պետությունը

Խեթական միավորված պետության հիմնադիրը ***Լաբարնա*** արքան էր: Նա հպատակեցրեց հարևան ժողովուրդներին: Մայրաքաղաք դարձավ ***Խաթուսասը***:

Խեթական պետությունը հզորացավ ***Մուրսիլիս I*** արքայի օրոք: Նա բազմաթիվ նվաճողական արշավանքներ կատարեց, իսկ ***Ք.ծ.ա. 1595 թ. գրավեց ու կողոպտեց Բաբելոնը:*** Խեթական արքաները հաճախակի ասպատակում էին նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան մարզերը:

Ք.ծ.ա XIV դ. ***Խաթուսիլիս I*** արքան ընդարձակեց Խեթական պետության սահմանները հյուսիսում մինչև Սև ծովը, հարավում՝ մինչև Կիլիկիա և Միջերկրական ծով: Խեթերը գրավեցին Միտաննիի տարածքի մեծ մասը:

Ք.ծ.ա. XIII դ. խեթերի և Եգիպտոսի արքա Ռամզես II-ի միջև Սիրիային և Պաղեստինին տիրելու համար 20-ամյա պատերազմը ավարտվեց կողմերի միջև հաշտության պայմանագրի կնքումով և այդ տարածքները իրար միջև բաժանելով: ***Ք.ծ.ա. 1200 թ. Խեթական միասնական պետությունը կործանվեց:***

ՄԻՏԱՆՆԻ

Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջանում են գտնվում ***Սիրիան և Փյունիկիան:*** Ծովափին զուգահեռ ձգվում են ***Լիբանանի լեռները***, որոնք հնում ծածկված են եղել խիտ անտառներով, ունեցել են հարուստ կենդանական աշխարհ: Լեռներում աճող ***մայրի ծառի*** փայտը արտահանվել է հարևան երկրներ:


Մայրի ծառ



Սիրիան հին հայերն անվանում էին ***Ասորիք***: Ք.ծ.ա III–II հազարամյակներում Սիրիայի տարածքում առաջացան քաղաք–պետություններ: Ք.ծ.ա XVI դ. Սիրիայի հյուսիսային մասում բնակվող խուրիական ցեղերի շրջանում կազմավորվեց ***Միտաննի պետությունը***: Պետության մայրաքաղաքն էր ***Վաշուկանին՝*** Եփրատի Խաբուր վտակի ափին:

Ք.ծ.ա. XV դ. կեսերին Միտաննին հզորացավ, միավորեց Սիրիայի մեծ մասը, իրեն ենթարկեց Ասորեստանը: Միտաննիի տարածքով էին անցնում միջազգային առևտրական ուղիները Փոքր Ասիայից և Միջագետքից դեպի Եգիպտոս: Ք.ծ.ա. XV դ. վերջին Միտաննին բախվեց հզորացած Եգիպտոսի հետ: Թութմոս III փարավոնի զորքերը մի շարք հաղթանակներ տարան, ապա անցնելով Եփրատ գետը՝ կողոպտեցին Միտաննիի մայրաքաղաքը: Ի վերջո Եգիպտոսի և Միտաննիի միջև հաշտության պայմանագիր կնքվեց, հաստատվեցին տևական խաղաղություն և կայուն առևտուր:

Ք.ծ.ա. XIV դ. ընթացքում Միտաննին գնալով թուլացավ: Այն տրոհվեց մանր իշխանությունների, ապա նվաճվեց Ասորեստանի կողմից:



2

Փյունիկյան առևտրանավ

ՓՅՈՒՆԻԿԻԱ

Սիրիայի ծովափնյա շրջանը՝ ներկայիս Լիբանանը, հնում կոչում էին ***Փյունիկիա,*** իսկ տեղի ժողովրդին՝ ***փյունիկեցիներ***: Այստեղ կային հարմար ծովածոցեր, որոնց շուրջը Ք.ծ.ա. II հազարամյակում առաջացան քաղաք–պետություններ՝ ***Բիբլոս, Սիդոն, Տյուրոս*** և այլն:

Փյունիկեցիները հմուտ ծովագնացներ էին: Նրանց հիմնական զբաղմունքը արհեստներն ու առևտուրն էին: Փյունիկյան նավերը առևտրական արշավանքների էին ուղևորվում դեպի հեռավոր երկրներ՝ հասնելով մինչև Ատլանտյան օվկիանոս և Բրիտանական կղզիներ:

Ք.ծ.ա. I հազարամյակի ընթացքում փյունիկեցիները գաղութներ հիմնեցին Աֆրիկայի, Իսպանիայի և Միջերկրածովյան կղզիների ափերին:

ՊԱՂԵՍՏԻՆ

Սիրիայից և Փյունիկիայից հարավ մինչև Եգիպտոս ընկած երկիրը կոչվում է ***Պաղեստին***: Այստեղով է հոսում Լիբանանի լեռներից սկիզբ առնող ***Հորդանան*** գետը:

Պաղեստինում բնակվել են տարբեր ժողովուրդներ: Ք.ծ.ա. XIII դ. վերջին այստեղ ներթափանցեցին ***հրեական ցեղերը***: Մյուս ժողովուրդների դեմ պայ–

քարում հրեական 12 ցեղերը միավորվեցին և ստեղծեցին Հրեական պետությունը:

Հրեական պետությունը հզորացավ ***Դավիթ (Ք.ծ.ա. 1000–965)*** արքայի օրոք, որը տիրեց ողջ Պաղեստինին: Նրա որդու՝ ***Սողոմոն Իմաստունի*** օրոք պետության մայրաքաղաք դարձավ ***Երուսաղեմը:***

Ք.ծ.ա. VIII դ. Պաղեստինն ընկավ Ասորեստանի տիրապետության տակ, իսկ Ք.ծ.ա. 587 թ. Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսոր II-ը գրավեց Երուսաղեմը և հրեաներին ***«բաբելոնյան գերության»*** տարավ: Ք.ծ.ա. VI դ. Արևելյան Միջերկրականի երկրները նվաճվեցին Աքեմենյան Պարսկաստանի կողմից:

ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԵՎ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Այս երկրները կարևոր ներդրում ունեն համաշխարհային քաղաքակրթության մեջ: Փոքր Ասիան և Հայկական լեռնաշխարհը այն տարածքն են, որտեղի ժողովուրդները ***Ք.ծ.ա. II հազարամյակում*** աշխարհում առաջինը հայտնագործեցին ***երկաթի մշակումը***, երկաթյա գործիքների և զենքերի պատրաստումը: Խեթական քաղաքակրթությունից է սկիզբ առել ***հաղթակամարի*** կիրառումը:

3

Միտաննիի տարածքում է կատարվել ***ձիու ընտելացումը***, որտեղից էլ ձիաբուծությունը աստիճանաբար տարածվեց մյուս երկրներում:

Փյունիկեցիները սկիզբ դրեցին ***հեռավոր նավարկություններին:*** Ք.ծ.ա. I հազարամյակում նրանք ստեղծեցին աշխարհում ***առաջին այբուբենը***՝ կազմված 22 նշաններից, որի օրինակով իրենց այբուբենները ստեղծեցին այլ ժողովուրդներ ևս:

Հրեաները առաջինն էին, որ հրաժարվեցին հեթանոսական բազմաստվածությունից և անցան միաստվածության, որից էլ սկիզբ առան ***միաստվածային կրոնները***՝ Քրիստոնեությունը և Իսլամը:

4

Նոր բառեր և արտահայտություններ՝ *բաբելոնյան գերություն, այբուբեն, հաղթակամար, միաստվածային կրոն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Խեթական ո՞ր արքան գրավեց և կողոպտեց Բաբելոն քաղաքը:
2. Ո՞ր տարածքում է ձևավորվել Միտաննի պետությունը, ո՞րն էր նրա մայրաքաղաքը:
3. Ո՞ր ժողովուրդն է աշխարհում առաջինը ստեղծել այբուբեն:
4. Որտե՞ղ ձևավորվեց հրեական պետությունը, ո՞ւմ գիտեք այդ երկրի արքաներից:
5. Որտե՞ղ են հայտնագործել երկաթի մշակումը: Ե՞րբ է դա տեղի ունեցել:

§10. ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԻՐԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի տարածքը հանածոներով հարուստ սարահարթ է, որը արևմուտքում սահմանակից է Միջագետքին և դեպի արևելք ձգվում է մինչև Հնդկաստան: Իրանի բնական պայմանները տարբերվում են Միջագետքից, խոշոր գետեր չկան, հարավ-արևելյան մարզերը տափաստան և կիսաանապատ են:

Հնագույն ժամանակներից Իրանի տարածքում բնակվում էին ***տարբեր ժողովուրդներ: Ք.ծ.ա. II հազարամյակի վերջին*** հյուսիս-արևմուտքից Իրան ներխուժեցին ***արիացիների հնդեվրոպախոս ցեղերը***: Իրանում հաստատված արիական ժողովուրդներն էին ***մարերը և պարսիկները:***

Մարական ցեղերը հաստատվեցին Կասպից ծովից հարավ ընկած շրջանում: Երկիրը նրանց անունով կոչվեց ***Մարաստան***: ***Ք.ծ.ա. VIII դ. վերջին Դեյոկիսը*** միավորեց մարական ցեղերը, կառուցեց մայրաքաղաք ***Էկբատանը*** և սկիզբ դրեց Մարաստան պետությանը:

Մինչև Ք.ծ.ա. VII դ. վերջը Մարաստանը հարկատու էր Ասորեստանին, ապա նրա դաշնակից սկյութական ցեղերին: Մարաստանի արքա ***Կիաքսարին (Ք.ծ.ա. 625-585)*** հաջողվեց վտարել սկյութներին և վերականգնել երկրի անկախությունը: Մարաստանի և Բաբելոնի միջև ամուր դաշինք հաստատվեց ընդհանուր թշնամու՝ Ասորեստանի դեմ: ***Ք.ծ.ա. 605 թ. դաշնակիցները կործանեցին Ասորեստան պետությունը*** և նրա տարածքը բաժանեցին իրար միջև: Մարաստանին հարկատու դարձան Պարսկաստանի, Հայաստանի և արևելյան Փոքր Ասիայի իշխանությունները:

ԿՅՈՒՐՈՍ ՄԵԾԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Պարսկական ցեղերը հաստատվել էին Իրանի հարավում: Այդ տարածքը նրանց անունով կոչվեց ***Պարսկաստան***: Սկզբնապես պարսիկները հպատակ էին մարերին և հարկ էին վճարում Մարաստանի արքային:

Պարսկաստանը հզորացավ ***Կյուրոս II (Ք.ծ.ա. 558-530)*** արքայի օրոք: Կյուրոսը ապստամբեց Մարաստանի դեմ, գրավեց այն և միավորեց ողջ Իրանը իր իշխանության ներքո: Կյուրոսը գրավեց նաև ողջ Փոքր Ասիան: Նրան հպատակ էին Հայոց արքան և այլ երկրների արքաներ: ***Ք.ծ.ա. 538 թ***. Կյուրոսի զորքերը գրավեցին ***Բաբելոնիան:*** Պարսկական տերության սահմանները հասան մինչև Եգիպտոս: Կյուրոսի ստեղծած պետությունը նրա տոհմի անունով կոչվեց ***Աքեմենյան տերություն:***

Ք.ծ.ա. 525 թ. Եգիպտոսը գրավեց և Աքեմենյան տերությանը միացրեց Կյուրոսի որդի ***Կամբյուսեսը:*** Պարսկաստան վերադառնալու ճանապարհին նա դավադրաբար սպանվեց:

1

ԴԱՐԵՀ Ի-Ի ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Պարսից ավագանին գահ բարձրացրեց Կյուրոս Մեծի ազգական ***Դարեհ Ի-ին (Ք.ծ.ա. 522-486):*** Երբ Դարեհը արքա դարձավ, թագավորության բոլոր հպատակ ժողովուրդները ապստամբել էին Պարսկաստանի դեմ: Դարեհը կարողացավ ճնշել ապստամբությունները և պահպանել Աքեմենյան տերության միասնությունը: Իր կատարած գործերի մասին Դարեհը կարգադրեց կազմել հայտնի ***«Բիհիսթունյան արձանագրությունը»***, որտեղ առաջին անգամ հիշատակվում է Հայաստանը «Արմենիա» անվամբ: Պետության միասնությունն ամրապնդելու համար Դարեհ Ի-ը կայսրության տարածքը բաժանեց ***20 սատրապության՝*** փոխարքայության: Յուրաքանչյուր սատրապություն պետք է սահմանված չափի հարկ վճարեր աքեմենյան արքային՝ դրամով և բնամթերքով:

Տնտեսության զարգացումը և առևտուրը խթանելու համար Դարեհ Ի-ը սկսեց իր պատկերով դրամ հատել: Ոսկե դրամ կարող էր հատել միայն արքան, սատրապներին թույլատրվում էր հատել արծաթե և պղնձե դրամներ: Երկրով մեկ կառուցվեցին բարեկարգ ճանապարհներ և իջևանատներ:

Պետության մայրաքաղաք հռչակվեց ***Բաբելոնը:*** Արքայական նստավայրեր էին նաև Էկբատանը, Սուզան և ***Պերսեպոլիսը:***

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Աքեմենյան բազմազգ և բազմալեզու տերությունը՝ Դարեհ Ի-ի ստեղծած սահմաններով, գոյատևեց ավելի քան երկու դար: Հպատակ ժողովուրդները բազմիցս ապստամբել են իրենց ազատության համար, բայց պարսիկներին հաջողվում էր ճնշել ապստամբությունները և պահպանել կայսրության միասնությունը:

Ք.ծ.ա. IV դ. վերջին Աքեմենյան տերությունը խոր ճգնաժամի մեջ էր: Տնտեսությունը և առևտուրը անկում էին ապրում: Սատրապները վերածվել էին ինքնուրույն տիրակալների, հաճախացել էին ապստամբությունները և գահակալական պայքարը:

Ք.ծ.ա. 334 թ. Աքեմենյան տերություն ներխուժեց ***Ալեքսանդր Մակեդոնացու*** բանակը և երեք տարվա ընթացքում գրավեց տերության ողջ տարածքը: Հիասթափված հպատակները սպանեցին աքեմենյան վերջին տիրակալ ***Դարեհ III-ին: Ք.ծ.ա. 330 թ. Աքեմենյան տերությունը կործանվեց: Նրա կործանումով ավարտվեց Հին արևելյան դարաշրջանը:***

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Աքեմենյան տերությունը ավելի քան 200 տարի մեկ պետության մեջ միավորեց Հին Արևելքի քաղաքակրթության գրեթե բոլոր օջախները:

Միավորումը նպաստեց լեզվով, բարքերով և սովորույթներով իրարից խիստ տարբեր ժողովուրդների քաղաքակրթական նվաճումներին մյուսների ծանոթացմանը և յուրացմանը: Կառավարման հմտությունները, տեխնիկական հայտնագործությունները, մշակութային նվաճումները, որոնք կատարվել էին ամեն մի առանձին երկրում, արագորեն տարածվեցին, սկսեցին կիրառվել մյուս երկրներում ևս:

Տարածում ստացան նոր մշակաբույսերի և ապրանքատեսակների արտադրությունը, փոխանակման ընդհանուր միջոցի՝ ***դրամի կիրառումը***, շինարարական տեխնոլոգիաները, հեռավոր նավարկությունները: Առավել կարևոր էր տարբեր ժողովուրդների կուտակած գիտական գիտելիքների և կենսափորձի փոխադարձ յուրացումն ու լայն տարածումը:

Այս ամենի հետևանքով համաշխարհային քաղաքակրթության տարածքն ընդլայնվեց և առաջընթաց զարգացումը զգալի արագացավ:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *հնդեվրոպախոս ցեղեր, արիացիներ, Աքեմենյան տերություն, «Բիհիսթունյան արձանագրություն», Հին արևելյան դարաշրջան, սատրապություն, դրավիդյան ժողովուրդներ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ և ե՞րբ սկիզբ դրեց Մարական պետությանը:
2. Ո՞ր արքայի օրոք Մարաստանը վերականգնեց իր անկախությունը և ինչպե՞ս վերածվեց հզոր տերության:
3. Թվարկե՛ք Կյուրոս Մեծի նվաճած երկրները և ներկայացրեք նվաճումների արդյունքը:
4. Ի՞նչ բարեփոխումներ կատարեց Դարեհ I-ը:
5. Ինչո՞ւ էր Պարսկական պետությունը անվանվում Աքեմենյան տերություն:
6. Բացատրե՛ք՝ որն էր Աքեմենյան տերության 200-ամյա գոյության քաղաքակրթական նշանակությունը:

§ 11. ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԸ

ՀՆԴԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Հնդկաստանը գտնվում է Ասիա մայրցամաքի հարավում՝ համանուն թերակղզու վրա: Այստեղով են հոսում 2 խոշոր գետեր՝ ***Ինդոսը*** և ***Գանգեսը***, որոնք ամռանը վարարում են և ողողում շրջակա տարածքը: Հնագույն ժամանակներում Հնդկաստանը բնակեցված էր դրավիդյան ցեղերով:

Ք.ծ.ա. III հազարամյակում Ինդոս գետի հովտում առաջացան քաղաք-պետություններ: Բնակիչները կիրառում էին բրոնզե գործիքներ, զբաղվում էին արհեստներով, հողագործությամբ և անասնապահությամբ: Ք.ծ.ա. II հազարամյակի սկզբին այս քաղաքները մեզ անհայտ պատճառով կործանվեցին:

Ք.ծ.ա. II հազարամյակի վերջին Իրանական սարահարթից Հնդկաստան ներխուժեցին հնդեվրոպախոս ցեղեր, որոնք իրենց կոչում էին ***արիացիներ***: Արիացիները հաստատվեցին Ինդոս և Գանգես գետերի հովիտներում: Նրանք արդեն կիրառում էին երկաթե զենքեր ու գործիքներ և հեշտությամբ հպատակեցրին տեղական բնակչությանը: Տեղացիների հետ չխառնվելու համար նրանք երկրի ողջ ***բնակչությանը բաժանեցին 4 վարնայի***՝ դասի:

Ք.ծ.ա. I հազարամյակի սկզբին Գանգես գետի հովտում առաջացան նոր քաղաք-պետություններ՝ ***Մագաթխա, Կոշալա*** և այլն:

Հնդկաստանը Աշոկայի օրոք

ՄԱՈՒՐՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Ք.ծ.ա. 327 թ. Հնդկաստան ներխուժեց Ալեքսանդր Մակեդոնացու բանակը և նվաճեց մասնատված Հնդկաստանի արևմտյան մասը: Ազատագրական պայքարը գլխավորեց իշխան ***Չանդրահուպտան***: Նրան հաջողվեց միավորել հյուսիսի իշխանությունները և Հնդկաստանից վտարել մակեդոնացիներին:

Չանդրահուպտայի ստեղծած պետությունը հայտնի է ***Մաուրյան կայսրություն*** անունով: Այն իր հզորությանը հասավ ***Աշոկա (Ք.ծ.ա. 180–145)*** արքայի կառավարման տարիներին: Նա միավորեց Հնդկաստանի գրեթե ողջ տարածքը, զարգացան քաղաքները, արհեստներն ու առևտուրը: Ծովային առևտրական կապեր հաստատվեցին Բաբելոնի և Եգիպտոսի հետ:

2

ՉԻՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Չինաստանը գտնվում է Ասիա մայրցամաքի արևելյան մասում: Չինաստանով են հոսում երկու մեծ գետեր՝ ***Հուանհեն և Յանցզին***: Չինական քաղաքակրթությունը սկիզբ է առել Հուանհեի միջին հոսանքի շրջանում:

Չինաստանի տարածքը բնակեցված էր իրար ազգակից բազմաթիվ ժողովուրդներով: Ք.ծ.ա. II հազարամյակի կեսին այստեղ առաջացան մի շարք քաղաք-պետություններ, տարածվեցին ***բրոնզե գործիքները***:

Ք.ծ.ա. XII դ. քաղաք-պետությունները միավորվեցին՝ կազմելով ***Չժոու*** պետությունը: Կառուցվեց ոռոգման ցանց, աճեց բերքատվությունը, ավելացավ բնակչությունը: Սակայն Ք.ծ.ա. V դ. Չինաստանը տրոհվեց 7 ինքնուրույն իշխանությունների:

ՀԱՄԱՉԻՆԱԿԱՆ ՑԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Պայքարը երկիրը նորից միավորելու համար գլխավորեց ***Ցին իշխանությունը***: Մոտ 20 տարի տևած պատերազմների արդյունքում ***Ցին Շի Հուանդի (Ք.ծ.ա. 246–210)*** արքան վերամիավորեց երկիրը և հռչակվեց ***կայսր:*** Մայրաքաղաք դարձավ ***Սյանան*** քաղաքը: Միավորված երկիրը այդուհետ սկսեցին անվանել ***Ցինաստան / Չինաստան***:

Պետության տարածքն ընդարձակվեց դեպի հարավ՝ մինչև Յանցզի գետը: Տարածում ստացան երկաթե գործիքները: Հյուսիսային սահմանի վրա սկսվեց ***Մեծ պատի*** կառուցումը, որը պետք է երկիրը պաշտպաներ քոչվորների հարձակումից: Մոցվեցին չափ ու կշռի միասնական համակարգ, միասնական դրամ, սահմանվեցին պետական հարկեր: Տարածվեց պարտային ստրկությունը: Ցին Շի Հուանդիի մահից հետո երկրում համաժողովրդական ապստամբություն սկսվեց:



3

Չինական Մեծ պատը

4

Ճնշելով ժողովրդական ապստամբությունը՝ ***Ք.ծ.ա. 202 թ.*** իշխանության եկավ ***Հան դինաստիան:*** Նոր կայսրը ստիպված էր թեթևացնել հարկերը: Վերացվեց պարտային ստրկությունը, հողազուրկ գյուղացիները պետությունից հողաբաժիններ ստացան:

ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հին Հնդկաստանի և Չինաստանի քաղաքակրթությունները Ք.ծ.ա. I հազարամյակի վերջին կապ հաստատեցին Հին Արևելքի քաղաքակրթության ավելի հին օջախների հետ և զգալի ներդրում ունեցան համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում:

Հնդիկները հմուտ շինարարներ, մաթեմատիկոսներ, աստղագետներ էին: Ք.ծ.ա. III դ. նրանք ստեղծեցին իրենց այբուբենը՝ ***բրահմի***, որը կիրառում են առայսօր: Պահպանվել են հին հնդկական մշակույթի բազմաթիվ նմուշներ՝ բազմահարկ շենքի բարձրության գմբեթավոր տաճարներ, արձաններ ու ժայռաքանդակներ:

5

Հնդկական կրոնը՝ ***հինդուիզմը,*** բազմաստվածային էր: Պաշտում էին Բրահմա, Շիվա, Վիշնու և այլ աստվածների: Աշոկա արքայի կառավարման օրոք առաջացավ մի նոր, միաստվածային կրոն՝ ***բուդդայականությունը***: Այն քարոզում էր հեռացում ակտիվ կյանքից, հրաժարում վայելքներից, ցանկությունների և զգացմունքների չափավորում: Այս կերպ մարդը կարող էր հասնել ***նիրվանայի***՝ երանելի կյանքի:

Մոտ 2000 տարի Չինաստանը զարգանում էր քաղաքակրթության մյուս օջախներից մեկուսացած, ինչը չինական քաղաքակրթությանը տվեց շատ յուրօրինակ բնույթ: Չինացիները ինքնուրույն կերպով հայտնագործեցին բրոնզի և երկաթի ստացումը: Ստեղծվեց չինական ***հիերոգլիֆիկ գիրը***, որը կիրառվում է առայսօր: Գրում էին սկզբում ծառի կեղևի, փայտե տախտակների և մետաքսի վրա: Ավելի ուշ հայտնագործեցին ***թղթի պատրաստումը***: Չինացիների այլ կարևոր հայտնագործություններից էին ***մետաքսե կտորեղենը***, ***ճենապակին, կողմնացույցը*** և այլն:

6

Նոր բառեր և արտահայտություններ՝ *արիացիներ, վառնաներ, «Մեծ պատ», «Մետաքսի ճանապարհ», բրահմի, հինդուիզմ, բուդդայականություն, նիրվանա*

Հարցեր և առաջադրանքներ

1. Հնդկաստանից բացի, ուրիշ ո՞ր երկրում էին հաստատվել արիացիների ցեղերը:
2. Ե՞րբ է սկզբնավորվել հնդկական քաղաքակրթությունը:
3. Բացատրեք, թե ինչ էին վառնաները:
4. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Հնդկաստանում Աշոկա արքայի օրոք:
5. Գետերից որի՞ տարածքում է սկզբնավորվել չինական քաղաքակրթությունը:
6. Ի՞նչ բարեփոխումներ է կատարել Ցին Շի Հուանդի կայսրը:
7. Ի՞նչ նպատակով է կառուցվել չինական Մեծ պատը:
8. Ի՞նչն ենք անվանում «Մետաքսի ճանապարհ», ի՞նչ նպատակի էր այն ծառայում:

§ 12. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ / ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍՏ.
ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Երկրագործությունը և անասնապահությունը ե՞րբ դարձան նախնադարյան մարդկանց հիմնական զբաղմունքը.

- *Ք.ծ.ա. V հազարամյակ*
- *Ք.ծ.ա. IV հազարամյակ*
- *Ք.ծ.ա. III հազարամյակ*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

2. Ո՞ր ժամանակաշրջանն ենք անվանում բրոնզի դար.

- *Ք.ծ.ա. IV – III հազարամյակը*
- *Ք.ծ.ա. III – II հազարամյակը*
- *Ք.ծ.ա. IV – II հազարամյակը*
- *Ք.ծ.ա. III – I հազարամյակը*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

3. Ո՞ր տարածքը և ինչո՞ւ են անվանում «Բարեբեր կիսալուսին» / «Ոսկե եռանկյուն».

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

4. Բացատրեք՝ ինչո՞ւ են հնում Եգիպտոսը անվանել «Նեղոսի պարգև».

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

5. Գիտնականներից ո՞վ և ինչպե՞ս վերծանեց եգիպտական հիերոգլիֆները.

.....

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

6. Ո՞ր գետերն են հոսում Միջագետքով և որտեղի՞ց են դրանք սկիզբ առնում.

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

7. Թվարկեք Ուրարտու պետության արքաներին, որոնց դեմ պատերազմել է Ասորեստանը Ք.ծ.ա. IX–VIII դարերում

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

8. Ո՞ր պետության մայրաքաղաքն էր Երուսաղեմը.

- *Խեթական* • *Հրեական* • *Միտանիի* • *Փյունիկիայի*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

9. Թվարկեք Բաբելոն քաղաքի կարևոր շինությունները Ք.ծ.ա. VI դարում.

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

10. Աշխարհում առաջինը այբուբեն ստեղծեցին.

- *խեթերը* • *հրեաները* • *մարերը* • *փյունիկեցիները*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

11. Ո՞ր արքան էր Աքեմենյան տերության հիմնադիրը.

- *Դարեհ I* • *Կամբյուսես* • *Կյուրոս II* • *Քսերքսես*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

12. Ի՞նչ էին վառոնները, քանի՞սն էին դրանք, ինչո՞վ էին իրարից տարբերվում.

.....

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

13. Ի՞նչն ենք անվանում «Մետաքսի ճանապարհ», որտեղի՞ց և ու՞ր էր այն տանում.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

14. Ինքնուրույն քաղաքակրթություն ստեղծած ժողովուրդների անվանումները գծիկներով միացրեք մայրցամաքի անվանմանը, որտեղ բնակվել են.

	ացտեկներ	
	աքքադացիներ	
	ինկեր	
ԱՍԻԱ	*հնդիկներ*	***ԱՄԵՐԻԿԱ***
	մայաներ	
	չինացիներ	
	շումերներ	

Լիարժեք պատասխանները գնահատվում են (0.25+0.25+0.25+0.25+0.25) 1,25 բալ

ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 13. ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ԵՐԿԻՐԸ ԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական Հունաստանն ընդգրկում էր Բալկանյան թերակղզու հարավային մասը և շրջակա հազարից ավելի կղզիները: Կղզիներն իրար բավականին մոտ էին, և մի կղզուց մյուսը կարելի էր լողալ՝ ափը աչքից չկորցնելով: Ափերին շատ էին հարմար ծովածոցերը:

Հունաստանը լեռնային երկիր է: Այն լեռնաշղթաներով բաժանված է ոչ մեծ տարածաշրջանների, որոնք բնականից միմյանցից կտրված էին և մյուս մարզերից մեկուսացած: Ամենաբարձր լեռը ***Օլիմպոսն*** է՝ մոտ 3000 մետր:

Հունաստանի կլիման մեղմ արևադարձային է: Խոշոր լճեր, գետեր և հարթավայրեր չկան: Հունաստանը հարուստ էր պղնձի, երկաթի, արծաթի հանքերով, կավով և մարմարով:

Բալկանյան թերակղզու և կղզիների հնագույն բնակիչներին հույները անվանում էին ***պելասգներ***: Ինչ ծագում ունեին պելասգները և ինչ լեզվով էին խոսում՝ գիտնականները դեռ չեն պարզել:

ԿՐԵՏԵԻ ԾՈՎԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1

Կրետեն հունական կղզիներից ամենամեծն է, ունի մեղմ կլիմա, փարթամ բնություն և հարուստ կենդանական աշխարհ:

Ք.ծ.ա. III հազարամյակում Կրետեում առաջացան քաղաք-պետություններ: Դրանք ի վերջո միավորվեցին մեկ պետության մեջ: Կենտրոն դարձավ **Կնոսոս** քաղաքը՝ կղզու հյուսիսային ափին: Այստեղ՝ ծովամերձ բլրի վրա, կառուցվեց արքայական պալատը:

Ք.ծ.ա. II հազարամյակում կրետացիները արդեն տիրապետում էին ***բրոնզե գործիքներին:*** Պալատական տնտեսության մեջ աշխատում էին մեծ թվով ստրուկներ: Տնտեսական կարիքների համար կրետացիները ստեղծեցին 100 նշաններից բաղկացած ***հիերոգլիֆիկ գրություն***, որոնք դեռ վերծանված չեն:

Կրետական գիր՝ «Ֆեստոսի բոլորակը»

Կրետական պետությունը իր հզորությանը հասավ Ք.ծ.ա. XVI–XV դդ.՝ Մինոս արքայի օրոք: Կնոսոսի պալատը վերակառուցվեց, ընդարձակվեց, դարձավ 2–3-հարկանի և ավելի շքեղ: Ավելացվեցին նոր դահլիճներ, պահեստներ, կառուցվեցին ջրմուղ և կոյուղի:

Կրետացիները մեծ նավատորմ ստեղծեցին և հպատակեցրին Էգեյան ծովի կղզիներն ու առափնյա պետությունները՝ ստիպելով իրենց հարկ վճարել: ***Կրետեն դարձավ հզոր ծովապետություն:*** Այն աշխույժ առևտուր էր անում Եգիպտոսի և Կիպրոսի հետ:

ՄԻԿԵՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ք.ծ.ա. XVIII–XVII դդ. հյուսիսից Բալկանյան թերակղզի ներթափանցեցին ***աքայացիների և հոնիացիների*** հունական ցեղերը: Նախկին բնակչությունը դուրս մղվեց կամ ձուլվեց եկվորներին: Հոնիացիները հաստատվեցին Միջին Հունաստանում, իսկ աքայացիները՝ հարավում՝ ***Պելոպոնես թերակղզում***:

Կրետական քաղաքակրթության ազդեցությամբ աքայացիների մոտ առաջացան քաղաք-պետություններ՝ ***Պիլոս, Միկենք, Արգոս*** և այլն: Բնակչութ-

Միկենք, «Առյուծի դարպասները»

յունը զբաղվում էր հողագործությամբ և անասնապահությամբ, տարածվում էր ստրկությունը:

Ք.ծ.ա. XV դ. կեսին Կրետեից ոչ հեռու հրաբխի հզոր ժայթքում տեղի ունեցավ: Երկրաշարժից և ծովալիքներից ավերվեցին գյուղերն ու քաղաքները, հազարավոր մարդիկ զոհվեցին, միասնական պետությունը տրոհվեց: ***Թուլացած Կրետեն հեշտությամբ գրավեցին աքայացիները:*** Կրետացիներից նրանք սովորեցին հեռավոր ծովագնացությունը և տարբեր արհեստներ: Կրետական գիրը պարզեցնելով՝ այն հարմարեցրին իրենց լեզվին:

«ՀՈՄԵՐՈՍՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ»

Ք.ծ.ա. XII դ. վերջին հյուսիսից Հունաստան ներխուժեցին հունական նոր ցեղեր՝ ***դորիացիները և էոլացիները***: Նրանք թեև ապրում էին տոհմացեղային կարգով, բայց զինված էին երկաթե զենքերով, ուստի հեշտությամբ կործանեցին ***Կրետե-Միկենյան պետությունները:*** Երկաթե զենքերի ու գործիքների կիրառումը տարածվեց ողջ Հունաստանում:

Այս ներխուժման հետևանքով Հունաստանը առժամանակ հետադիմեց: Վերացան քաղաքները, մոռացվեց Կրետե-Միկենյան գիրը: Հունաստանը վերադարձավ տոհմացեղային կարգին: Ցեղային միության գլուխ կանգնած էր ցեղապետը՝ ***բասիլևսը:*** Պատերազմի ժամանակ նա ղեկավարում էր բնակչությունից կազմված զորքը: Կարևոր դեպքերում հրավիրվում էր ***ժողովրդական ժողով***:

Այս ժամանակաշրջանի մարդկանց ապրելակերպի մասին մենք տեղեկանում ենք Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմներից: Ահա ինչու ***Ք.ծ.ա. XI – IX դդ. գիտնականներն անվանում են «Հոմերոսյան դարաշրջան»:***

Նոր բառեր և արտահայտություններ՝ *ծովապետություն, լաբիրինթոս, բասիլևս, ժողովրդական ժողով, «Հոմերոսյան դարաշրջան», տոհմական ավագանի*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս էին անվանում Հունաստանի հնագույն բնակիչներին:
2. Ո՞րն է Հունաստանի ամենաբարձր լեռը:
3. Ո՞ր քաղաքը դարձավ միավորված Կրետեի կենտրոնը:
4. Բացատրեք «ծովապետություն» բառի իմաստը:
5. Ի՞նչ եք հասկանում՝ «լաբիրինթոս» ասելով:
6. Ո՞ր դարերը և ինչո՞ւ են անվանում «Հոմերոսյան դարաշրջան»:

§ 14. ԱՐԽԱՅԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ

ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Հունաստանի տարածքում հաստատված հունական ցեղախմբերը իրար ազգակից էին, խոսում էին միմյանց հասկանալի լեզվով: Ժամանակի ընթացքում նրանց մոտ գերիշխող դարձավ ընդհանուր ծագման և ազգակցության գաղափարը, ***ձևավորվեցին միասնական լեզուն և կրոնը: Կազմավորվեց հույն ժողովուրդը***: Աքայացի, դորիացի կամ հոնիացի կոչվելու փոխարեն սկսեցին իրենց անվանել ***հելլեններ (հույներ)***, իսկ երկիրը՝ ***Հելլադա (Հունաստան)***:

Ք.ծ.ա. VII–VI դդ. երկաթե գործիքների օգտագործմամբ մարդիկ կարողանում էին ավելի շատ մթերք արտադրել: Հողագործն իր արտադրանքի ավելցուկը կարող էր փոխանակել անասնապահի ավելցուկ մթերքի հետ:

Արհեստների և առևտրի զարգացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն զգացվեց ունենալու փոխանակման ընդհանուր արժեք, որը հնարավոր կլիներ փոխանակել ամեն տեսակի ապրանքի հետ: Առաջ եկավ ***փողը: Առաջին դրամները հատվել են Ք.ծ.ա. VII դ.:*** Այս ժամանակաշրջանում ստեղծվեց նաև Հունական այբբենական գիրը:

ԱԶՆՎԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ



Տնտեսության զարգացման արդյունքում ***Ք.ծ.ա. VIII–VII դդ. տոհմական կարգը Հունաստանում կրկին սկսեց քայքայվել***: Բասիլևսի իշխանությունը թուլացել էր, իսկ որոշ տեղերում՝ վերացել: Տոհմի կյանքը այժմ ղեկավարում էր ***տոհմական ավագանին***: Սկզբնապես ավագանու պաշտոնները ընտրովի էին: Տոհմավագները հետևում էին օրենքների կատարմանը, կազմակերպում դատ ու դատաստանը, կատարում էին հողի բաժանումները նահապետական ընտանիքների միջև: Աստիճանաբար տոհմավագների պաշտոնները դառնում էին ժառանգական: Տոհմական ավագանուց ձևավորվում էր ***արիստոկրատիան***՝ ազնվազարմների խավը: Համայնքի մյուս բոլոր ազատ մարդկանց անվանում էին ***դեմոս***՝ ժողովուրդ:

Ք.ծ.ա. VIII–VI դդ. Հունաստանի շատ համայնքներում հաստատվեց կառավարման յուրահատուկ ձև՝ ***օլիգարխիա***՝ արիստոկրատիայի ոչ մեծաթիվ խմբի իշխանությունը:

ՊՈԼԻՍՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Իրենց իշխանությունն օգտագործելով՝ արիստոկրատները գնալով հարստանում էին՝ տիրանալով համայնական սեփականություն հանդիսա-

ցող լավագույն հողաբաժիններին, իսկ դեմոսը գնալով աղքատանում էր:

Դեմոսը՝ գյուղացիները, արհեստավորներն ու առևտրականները, պահանջում էր, որ բանավոր սովորութային օրենքների փոխարեն ստեղծվեն նոր՝ **գրավոր օրենքներ:** Դրանք պետք է պաշտպանեին ոչ թե ընդհանուր տոհմական սեփականությունը, այլ ձևավորվող մասնավոր սեփականությունը:

Ք.ծ.ա. VIII–VI դդ., իշխանության համար արիստոկրատիայի և դեմոսի պայքարի ընթացքում, յուրաքանչյուր մարզում տոհմերն ու ցեղերը ավելի սերտ էին միավորվում: Հունաստանի բոլոր մարզերում կազմավորվեցին ***պոլիսներ՝*** քաղաք–պետություններ: Պոլիսներում կարևոր հարցերն արդեն որոշում էր ոչ թե արիստոկրատիան, այլ ժողովրդական ժողովը: Դեմոսը, այսպիսով, սկսում էր մասնակցել երկրի կառավարմանը:

ՀՈՒՆԱԿԱՆ ՄԵԾ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ

Հին Հունաստանում միշտ զգացվել է հացի պակաս: Ահա ինչու հույներից շատերը լքում էին հայրենիքը և ***գաղութներ*** հիմնում օտար ափերին, հացառատ վայրերում: Արիստոկրատիայի և դեմոսի պայքարի ընթացքում՝ ***Ք.ծ.ա. VIII–VI դդ.*** տեղի ունեցավ ***Մեծ գաղութացումը:***

Եթե իշխանության համար պայքարում հաղթում էր դեմոսը, ***ձևավորվող պոլիսը դառնում էր դեմոկրատական***, այսինքն՝ պետության կառավարումը անցնում էր դեմոսին: Եթե պայքարում հաղթում էր արիստոկրատիան, ***ձևավորվող պոլիսը*** դառնում էր ***օլիգարխիական,*** այսինքն՝ պետության կառավարումը կենտրոնանում էր արիստոկրատիայի ձեռքում:

Թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում պարտված կողմի մարդիկ հեռանում էին Հունաստանից և օտար ափերում բնակության հարմար վայր գտնելով՝ հիմնում էին ***գաղութ:*** Գաղութի բնակիչները զբաղվում էին հողագործությամբ և արհեստներով, առևտուր էին անում տեղական ցեղերի հետ՝ պահպանելով կապը հայրենի պոլիսի հետ:



Ք.ծ.ա. VIII–VI դդ. հույները հարյուրավոր գաղութներ հիմնեցին Միջերկրական և Սև ծովերի ափերին: Այդ գաղութներից շատերը հետագայում դարձան ինքնուրույն ուժեղ պոլիսներ:

ՎԱՂ ՏԻՐԱՆԻԱՆ

Արիստոկրատիայի և դեմոսի պայքարի ընթացքում Հունաստանի շատ պոլիսներում հաստատվեց ***տիրանիա՝*** բռնապետություն: Օլիգարխիային տապալելով՝ դեմոսը հաճախ չէր պատկերացնում, թե հետո ինչ պետք է անել: Հասարակ մարդիկ չգիտեին ինչպես կառավարել պետությունը: Տապալելով օլիգարխիան՝ դեմոսը թույլ էր տալիս, որ իշխանությունը գրավի որևէ անվանի, հեղինակավոր մարդ, որը խոստանում էր բարելավել ժողովրդի վիճակը: Այդպիսի ղեկավարը դառնում էր ***տիրան՝*** բռնակալ: Տիրան դառնում էին օլիմպիական խաղերի չեմպիոնները, անվանի զորավարները և այլք:

Ժամանակի համար տիրանիան առաջադիմական երևույթ էր: Տիրանները արիստոկրատներին թուլացնելու համար նրանցից խլում էին հողերի մի մասը և բաժանում անհող գյուղացիներին: Նրանք վերացնում էին տոհմական օրենքները, սահմանափակում արիստոկրատիայի արտոնությունները, պաշտպանում մասնավոր սեփականությունը:

Ք.ծ.ա. VIII–VI դդ. ընթացքում Հունաստանի գրեթե բոլոր պոլիսներում ժամանակավորապես հաստատվեց տիրանիա: Այն նպաստեց ազնվապետությունից ժողովրդավարությանը անցնելուն: Երբ պետության կազմավորման գործընթացն ավարտվեց, տիրանիան գրեթե ամենուր վերացավ:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *օլիգարխիա, դեմոս, պոլիս, տիրանիա, Մեծ գաղութացում, դեմոկրատական պոլիս, օլիգարխիական պոլիս*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպես էին հին հույները անվանում իրենց և իրենց երկիրը:
2. Երբ է ստեղծվել հունական այբուբենը, և քանի՞ տառից է այն բաղկացած:
3. Երբ են հատվել աշխարհում առաջին դրամները:
4. Հասարակության ո՞ր խավերից էր կազմված դեմոսը:
5. Ի՞նչ են նշանակում «դեմոկրատական պոլիս» և «օլիգարխիական պոլիս» արտահայտությունները:
6. Երբ է տեղի ունեցել «Մեծ գաղութացումը», և որո՞նք էին դրա նպատակները:
7. Ի՞նչ է տիրանիան, ե՞րբ և ինչո՞ւ այն հաստատվեց Հունաստանում:

§ 15. ՍՊԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Պելոպոնես թերակղզու հարավ-արևելքում է գտնվում ***Լակոնիա մարզը:*** Այն բոլոր կողմերից բարձր լեռներով շրջափակված բարեբեր մի դաշտավայր է, որի միջով հոսում է ***Էվրոտաս գետը:*** Կլիման մեղմ է, տարածքը հարմար է հացաբույսերի մշակման համար: Ափերին հարմար նավահանգիստներ չկային, նավագնացությունը զարգացած չէր:

Ք.ծ.ա. II հազարամյակի վերջին Լակոնիայում հաստատվեցին դորիական ցեղերը: Տեղական աքայական բնակչությանը ստրկացրին կամ քշեցին երկրի ծայրամասերը: Եկվորները բնակվեցին Լակոնիայի կենտրոնում՝ հիմնելով ***Սպարտա*** քաղաքը, որի անունով իրենց կոչում էին ***սպարտացիներ***: Նվաճված և ստրկացված բնակչությանը անվանում էին ***հելոտներ***:

Ք.ծ.ա. VII դարի վերջին Լակոնիայում տոհմական կարգը քայքայվեց, ձևավորվեց Սպարտական պոլիսը:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Սպարտական պետությունը պարզունակ էր և պահպանում էր տոհմական կարգի շատ գծեր: Երկիրը կառավարում էր 28 ավագներից կազմված

Ծերակույտը: Այն քննարկում էր բոլոր ընթացիկ հարցերը, օրենքներ ընդունում, պատերազմ հայտարարում և այլն: Ծերակույտի անդամ ընտրվում էին ցմահ և միայն տարեց ազնվականները: Ծերակույտի անդամ էին Սպարտայի ***2 թագավորները:*** Նրանք կառավարում էին պետությունը և բանակի հրամանատարն էին: Պատերազմի ժամանակ թագավորներից մեկը զորքը տանում էր կռվի, իսկ մյուսն անպայման մնում էր Սպարտայում:

Որոշ դեպքերում հրավիրվում էր ***ժողովրդական ժողովը:*** Նրան մասնակցում էին բոլոր չափահաս սպարտացի տղամարդիկ: Ժողովը կարող էր միայն հաստատել կամ մերժել Ծերակույտի որոշումները: Ժողովում հարցը որոշվում էր ոչ թե քվեարկությամբ, այլ մասնակիցների աղաղակների բարձր կամ ցածր լինելով:

Հելոտները երկրի կառավարմանը չէին մասնակցում: ***Սպարտան ամբողջատիրական օլիգարխիական պետություն էր:*** Բնակչության կյանքը և ապրելակերպը ենթարկեցված էին պետության շահերին: Սպարտացին ծնվում, ապրում և մեռնում էր հանուն պետության:

ՍՊԱՐՏԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Սպարտացիներին մթերք մատակարարում էին հելոտները: Նրանք ապրում էին գյուղերում, զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացած բերքի մեծ մասը նրանք պարտավոր էին տալ այն սպարտացուն, որի հողաբաժնում ապրում էին: ***Հելոտները չունեին իրավունքներ, ունեին միայն պարտականություններ:*** Հելոտներին արգելվում էր զենք կրել, գիշերը դրսում լինել և այլն: Սպարտացիները հելոտներին պահում էին մշտական սարսափի մեջ:

Արհեստներով Սպարտայում զբաղվում էին սահմանամերձ շրջանների ազատ բնակիչները՝ ***պերիեկները:*** Նրանք սպարտացիների համար պատրաստում էին հագուստ, խեցեղեն, պողպատե զենքեր և այլն:

Առևտուրը Սպարտայում զարգացած չէր. հելոտների արտադրած մթերքը հազիվ էր բավականացնում սպարտացիներին և իրենց: Օտար վաճառականների մուտքը Սպարտա չէր թույլատրվում, իսկ սպարտացիներին արգելված էր զարդեր և ճոխ հագուստներ կրելը:

Սպարտան Հունաստանի ամենաուժեղ, բայց գնդեսապես ամենահետամնաց պետությունն էր:

ՍՊԱՐՏԱՅԻՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

18–60 տարեկան սպարտացի տղամարդիկ պարտավոր էին ծառայել բանակում: Անգամ խաղաղ ժամանակ նրանք համարվում էին զինվորներ: Օրն անցկացնում էին տնից դուրս. զբաղվում էին որսորդությամբ, սպորտային

մրցումներով կամ զինավարժությամբ: Անգամ ճաշում էին տնից դուրս՝ զինվորական խմբերով:

Սպարտական բանակը կոչվում էր կազմելով **ֆալանգա**՝ ուս ուսի կանգնած զինվորների խիտ շղթա, մի քանի շարք խորությամբ շարված: Առաջին շարքերում երիտասարդներն էին, վերջին շարքում՝ տարեցները: Բանակը միշտ պատրաստ էր պատերազմի, կարգապահ էր և շարժուն: ***Հունաստանում սպարտական բանակը համարվում էր անպարտելի:***

Սպարտացիների հիմնական զբաղմունքը հելոտներին հնազանդ պահելն էր: Հելոտները թվապես ավելի շատ էին, քան սպարտացիները: Դրա համար ***սպարտացիները փոքրուց դաստիարակվում էին որպես զինվորներ:*** Ծնողները նորածին երեխաներին ներկայացնում էին Ծերակույտի քննությանը: Թույլ, ֆիզիկական արատ ունեցող երեխաներին (տղա, թե աղջիկ) վերացնում էին: Պետությանը պետք էին միայն առողջ մարդիկ:

2

Երբ տղաները դառնում էին 7 տարեկան, նրանց ուղարկում էին գիշերօթիկ ռազմական դպրոց: Այստեղ նրանց կոփում էին՝ պատրաստելով ապագա զինվորներ: Դառնալով չափահաս՝ երիտասարդ սպարտացիները պետությունից ստանում էին զրահ, նիզակ, վահան և սուր: Նրանք պատրաստ էին իրենց կյանքը զոհելու Սպարտայի համար:

Աղջիկները դաստիարակվում էին տնային պայմաններում, սովորում էին գրել, կարդալ, երգել ու պարել: Նրանք ևս օրն անցկացնում էին ֆիզիկական մարզանքով՝ վազում էին, լողում, պարում: Նրանց համար կազմակերպվում էին կանանց մրցախաղեր: Նրանք պետք է մայրեր դառնային և առողջ երեխաներ պարգևեին պետությանը:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *հելոտներ, պերիեկներ, ֆալանգա, «սպարտական դաստիարակություն», «լակոնիկ խոսք», ամբողջատիրական պետություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ւմ էին Սպարտայում անվանում հելոտներ:
2. Ինչպե՞ս էր կառավարվում Սպարտական պետությունը:
3. Ո՞րն էր սպարտացիների հիմնական զբաղմունքը:
4. Ինչպիսի՞ն էր «սպարտական դաստիարակությունը»:
5. Ի՞նչ է նշանակում «լակոնիկ խոսք»:
6. Ինչպե՞ս էին դաստիարակում աղջիկներին Սպարտայում:

§ 16. ԱԹԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱԶՆՎԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Ակտիկա մարզը Միջին Հունաստանում է: Այն եռանկյունաձև ժայռոտ թերակղզի է, ափերը կազմում են հարմար ծովածոցեր, մոտակայքում կան բազմաթիվ կղզիներ: Կային արծաթի, մարմարի, բնական կավի հարուստ պաշարներ: Կլիման մեղմ է: Բլրաշատ տեղանքը հարմար էր անասնապահության, խաղողի և ձիթենու մշակության համար: Ծովի մոտիկությունը նպաստում էր ձկնորսության և ծովագնացության զարգացմանը:

Ատտիկայի կենտրոնը ***Աթենքն*** էր, որը ծովից հեռու է 9 կմ: Աթենքի կենտրոնում է գտնվում ***Ակրոպոլիսը՝*** դժվարամատչելի սեղանաձև մի ժայռ, որտեղ բնակչությունը հաճախ պատսպարվում էր հարձակումներից:

Ք.ծ.ա. VIII–VII դդ. Աթենքում հաստատվել էր օլիգարխիա: Պետությունը կառավարում էր ***Արեոպագոսը՝ 9 արքոնտներից՝*** կառավարիչներից կազմված խորհուրդը: Արքոնտներն ընտրվում էին մեկ տարի ժամկետով, միայն արիստոկրատներից: Դեմոսը երկրի կառավարմանը չէր մասնակցում: Ժողովրդական ժողով հրավիրվում էր հազվադեպ:

Արիստոկրատները տիրացել էին ընդարձակ հողամասերի, իսկ գյուղացիների ոչ մեծ հողակտորները նրանց ապրուստը չէին ապահովում: Սակավահող գյուղացիները գոյատևելու համար արիստոկրատներից պարտք էին վերցնում: Նրանց հողամասերում դրվում էին ***պարտքաքարեր՝*** վրան գրված պարտքի չափը և մարելու ժամկետը: Եթե պարտքը չէր մարվում, գյուղացին կորցնում էր հողը, եթե դա բավարար չէր ***պարտքը մարելու,*** մարդուն ***ստրկացնում էին***: Քաղաքային դեմոսը՝ արհեստավորներն ու առևտրականները, նույնպես իրավազուրկ էր: Դեմոսը պայքարում էր ***պարտային ստրկությանը վերջ տալու և իր վիճակը բարելավելու համար:***

Ք.ծ.ա. 621 թ. դեմոսի պահանջով արքոնտ ***Դրակոնը*** կազմեց գրավոր օրենքներ, որոնք արիստոկրատները այլևս չէին կարող ուզածին պես մեկնաբանել: Սակայն դեմոսի դրությունը դրանով չբարելավվեց. պարտային ստրկությունը պահպանվեց: Իշխանությունը մնաց արիստոկրատիայի ձեռքում, դեմոսը շարունակեց պայքարը իր իրավունքների համար:

1

ՍՈԼՈՆԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Դեմոսի պահանջով ***Ք.ծ.ա. 594 թ.*** արքոնտ ընտրվեց հեղինակավոր գործիչ ***Սոլոնը:*** Նրան իրավունք տվեցին պետական բարեփոխումներ կատարել: Սոլոնը ***չեղյալ հայտարարեց եղած պարտքերը և վերացրեց պարտային ստրկությունը: Արգելվեց աթենացուն պարտքի դիմաց ստրկացնելը:***

Թույլատրվեց, որ ամեն մարդ իր ***սեփականությունն ազատ տնօրինի՝*** կտակի, վաճառի, նվիրի, ում որ ցանկանա: Արգելվեց հացից աղքատ Ատտիկայից ցորենի արտահանումը, փոխարենը պետությունը սկսեց խրախուսել ձիթենու և խաղողի մշակությունը:

Ատտիկայի բոլոր բնակիչներին Սոլոնը բաժանեց ***4 դասակարգի՝*** ըստ իրենց ունեցվածքի և եկամուտների: Բոլորն էլ համարվում էին քաղաքացի, ունեին պաշտոնի ընտրվելու և ընտրելու իրավունք, պարտավոր էին մասնակցել պետության կառավարմանը և ծառայել բանակում: Սակայն բարձր պաշտոններ կարող էին զբաղեցնել միայն առաջին երկու դասակարգերի հարուստ մարդիկ, քանի որ պաշտոն վարելը անվճար էր և մեծ ծախսեր էր պահանջում:

Սոլոնը ստեղծեց պետության կառավարման նոր մարմիններ: Ատտիկայի 4 ցեղերից յուրաքանչյուրն ընտրում էր 100-ական պատգամավոր մեկ տարով: Այդ 400 հոգուց կազմված ***Ծերակույտը*** նախապես քննում էր բոլոր պետական հարցերը և իր որոշումը ներկայացնում ժողովրդական ժողովի հաստատմանը: ***Ժողովրդական ժողովը կառավարման բարձրագույն մարմին էր,*** ընդունում էր օրենքներ, որոշումներ, ընտրում էր դատարանի անդամների:

Առևտուրը հեշտացնելու համար Աթենական պետությունը սկսեց ***արծաթե և պղնձե դրամներ հատել***: Սոլոնի բարեփոխումների արդյունքում ***արիստոկրատիայի իշխանությունը թուլացավ, բայց չվերացավ:***

2

ՊԻՍԻՍՏՐԱՏԻ ՏԻՐԱՆԻԱՆ

Սոլոնի բարեփոխումներից դժգոհ մնացին թե՛ դեմոսը, թե՛ արիստոկրատները: Պայքարը նրանց միջև շարունակվեց: Օգտագործելով դեմոսի դժգոհությունը՝ իշխանությունը գրավեց և ***Ք.ծ.ա. 560 թ. տիրան դարձավ Պիսիստրատը:*** Նա արիստոկրատներից շատերին Աթենքից արտաքսեց, ունեցվածքը խլեց, իսկ հողերը բաժանեց հողազուրկ գյուղացիներին: Դեմոսը պաշտպանում էր Պիսիստրատի իշխանությունը:

Կարգ ու կանոնը պահպանելու համար Պիսիստրատը կազմակերպեց ***ոստ-***

փիկանություն: Կազմվեցին ***շրջիկ դատարաններ***, որոնք, մարզերով շրջելով, տեղում արդարադատություն էին իրականացնում: Գյուղացին այլևս կարիք չուներ գալու Աթենք արդարություն որոնելու: Բնակչությունից սկսեց գանձվել պետական հարկ՝ ***տասանորդ:*** Այդ գումարներով Ակրոպոլիսում կառուցվեցին տաճարներ և ամուր պարիսպներ, Աթենքը զարդարվեց հասարակական շինություններով:

ԿԼԻՍԹԵՆԵՍԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ: ՕՍՏՐԱԿԻԶՄԻ ԴԱՏԱՐԱՆԸ

Ք.ծ.ա. 509–502 դեմոսի առաջնորդ ***Կլիսթենեսը*** նոր բարեփոխումներ իրականացրեց: ***Աթենքում տիրանիան վերացվեց:*** Ատտիկայի տարածքը բաժանվեց ***10 շրջանի***: Ամեն շրջան ընտրում էր 50 պատգամավոր 1 տարի ժամկետով: Ծերակույտը այժմ կազմված էր 500 հոգուց: Ամեն շրջան ընտրում էր ***1 ստրատեգ***՝ կառավարիչ: ***10 ստրատեգներից կազմված խորհուրդը Աթենական պետության կառավարությունն էր:*** Արեոպագոսը նշանակությունը կորցրեց:

Իշխանության բարձրագույն մարմինը ***ժողովրդական ժողովն*** էր: Այն հրավիրվում էր ամիսը 1–2 անգամ: Նա էր օրենքներ ընդունում և որոշումներ հաստատում: Իշխանությունը Աթենքում վերջնականապես անցավ դեմոսին: ***Աթենական պետությունը վերածվեց դեմոկրատական պոլիսի:***

*Որպեսզի արիստոկրատները երբևէ չփորձեն Աթենքում վերացնել դեմոկրատիան, Կլիսթենեսը ստեղծեց **օստրակիզմի դատարանը**: Ամեն տարի գարնանը ժողովրդական ժողովում ստրատեգները դեմոսին հարցնում էին, թե կա՞ն արդյոք քաղաքացիներ, ովքեր վտանգ են ներկայացնում պետության հանգստության համար: Ժողովի մասնակիցները գրում էին իրենց կարծիքով նման «վտանգավոր» մարդկանց անունները: Այն մարդը, ում անունը գրում էր մասնակիցների կեսը, 10 տարով Աթենքից վտարվում էր: **Այսպես դեմոկրատիան պաշտպանում էր ինքն իրեն:***

Նոր բառեր և արտահայտություններ՝ *արքոնտ, Ակրոպոլիս, Արեոպագոս, պարտքաքար, պարտային ստրկություն, ստրատեգ, «օստրակիզմ»*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ մարմին էր Արեոպագոսը և ումից էր կազմված:
2. Ինչպիսի՞ն էին Դրակոնի օրենքները, հիմնավորեք ձեր պատասխանը:
3. Ո՞րն էր կառավարման բարձրագույն մարմինը Աթենքում:
4. Ինչ բարեփոխումներ կատարեց տիրան Պիսիստրատը:
5. Ինչպե՞ս էր կազմվում Աթենքի Ծերակույտը Կլիսթենեսի բարեփոխումներից հետո:
6. Ինչի՞ համար ստեղծվեց օստրակիզմի դատարանը:

§ 17. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՂԿՈՒՄԸ ԱԹԵՆՔՈՒՄ

ՀՈՒՅՆ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ (Ք.ծ.ա. 500 – 449 թթ.)

Այն ժամանակ, երբ Հունաստանում դեռ նոր էին ձևավորվում պոլիսները, Առաջավոր Ասիայում կազմավորվեց պարսկական ***Աքեմենյան տերությունը: Դարեհ I արքան,*** գրավելով Փոքր Ասիայի հունական պոլիսները, որոշեց հպատակեցնել նաև բուն Հունաստանը:

1 ***Ք.ծ.ա. 490 թ. Դարեհ I-ի նավատորմը ներխուժեց Հունաստան:*** Գրավելով Էգեյան ծովի մի շարք կղզիներ՝ պարսիկների 20000-անոց բանակն ափ իջավ Ատտիկայում: Աթենական բանակը ***Միլթիադեսի*** ղեկավարությամբ ***Մարաթոնի դաշտում*** փայլուն հաղթանակ տարավ:

2 ***Ք.ծ.ա. 480 թ.*** պարսից նոր արքա ***Քսերքսեսի*** մեծաթիվ բանակը և նավատորմը ***կրկին ներխուժեցին Հունաստան:*** Աթենքը և Սպարտան պայմանավորվեցին թշնամու դեմ գործել համատեղ: Պարսիկները գրավեցին Աթենքը, ավերեցին Ակրոպոլիսի սրբավայրերը: Աթենացիները բնակչությանը տեղափոխեցին Սալամին կղզին:

3 ***Ք.ծ.ա. 480 թ. Սալամինի ծովամարտում*** հունական փոքրաթիվ նավատորմը փայլուն հաղթանակ տարավ մեծաթիվ թշնամու դեմ:

Հաջորդ տարի հունական պոլիսները, միավորելով ուժերը, ջախջախեցին պարսիկներին և վտարեցին Հունաստանից: Ծովափնյա պոլիսները Աթենքի գլխավորությամբ ստեղծեցին ***ծովային միություն՝*** պայքարը շարունակելու համար: Ի վերջո հույները պարսիկներից ազատագրեցին Էգեյան ծովի կղզիները և Փոքր Ասիայի հունական պոլիսները:

Ք.ծ.ա. 449 թ. հույն–պարսկական պատերազմներն ավարտվեցին: Հույն ժողովուրդը կարողացավ հաղթել Աքեմենյան տերությանը:

ԱԹԵՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Աթենական դեմոկրատիան իր ծաղկմանը հասավ Ք.ծ.ա. V դարի կեսին՝ հույն–պարսկական պատերազմների ավարտից հետո: Աթենքի 10 ստրատեգոսներից կազմված կառավարությունը լուծում էր ընթացիկ հարցերը, ղեկավարում բանակը և նավատորմը:

Աթենքում կանոնավորապես հավաքվում էր Ժողովրդական ժողովը: Այն ընդունում էր պետության համար կարևոր բոլոր որոշումները: Նախապես Ծերակույտը քննում էր հարցերը և ժողովին ներկայացնում կշռադատված, հիմնավորված առաջարկ: Կանոնավոր գործում էր Ժողովրդական դատարանը: Բոլոր պետական պաշտոնները ընտրովի էին 1 տարի ժամկետով, և

ամեն աթենացի կյանքում առնվազն մեկ անգամ կարող էր ընտրվել որևէ պետական պաշտոնում: Պաշտոն վարելու համար պետությունը սկսեց վճարել աշխատավարձ:

4

ՊԵՐԻԿԼԵՍՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Դեմոկրատիայի ծաղկման ժամանակաշրջանում 15 տարի անընդմեջ Աթենքի կառավարության ղեկավար էր ընտրվում ***Պերիկլեսը (Ք.ծ.ա. 444–429):*** Նա փայլուն հռետոր էր, լավ կառավարիչ և տաղանդավոր զորավար: Ժողովրդական ժողովում իր ելույթներով Պերիկլեսը կարողանում էր ոգևորել դեմոսին, իսկ երբ պետք էր՝ խոհեմության կոչել:

Ք.ծ.ա. V դ. կեսին Աթենական ծովային միությունը վերածվել էր հզոր ուժի և միավորում էր Հունաստանի պոլիսների կեսը: Աթենքի քաղաքացի լինելը մեծ պատիվ էր: Աթենքը, Պիրեյ նավահանգիստը և նրանց միացնող ճանապարհը պատվեցին 2 շարք ամուր պարիսպներով: Դրանք կոչվեցին ***Երկար պարիսպներ***: Եթե անգամ թշնամին շրջապատեր Աթենքը, չէր կարող կտրել նրա կապը ծովի հետ:

Աթենքը դարձավ Հունաստանի ամենագեղեցիկ և հարուստ քաղաքը, Հունաստանի մշակութային կենտրոնը:

5



ՊՈԼԻՍԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԱՆԿՈՒՄԸ

Ք.ծ.ա. 431 թ. Հունաստանի երկու ամենաուժեղ պոլիսների՝ Սպարտայի և Աթենքի միջև սկսվեց ***Պելոպոնեսյան պատերազմը:*** Այն ընդհատումներով շարունակվեց մինչև ***Ք.ծ.ա. 404 թ.*** և ավարտվեց Աթենքի պարտությամբ: Աթենական ծովային միությունը լուծարվեց:

Սպարտայի ռազմական հաղթանակը Հունաստանին օգուտ չբերեց: Տնտեսապես թույլ զարգացած Սպարտան ի վիճակի չեղավ մեկ պետության մեջ իր շուրջը միավորելու Հունաստանի պոլիսները: Սպարտայի հաղթանակը առաջին հերթին վնասեց հենց իրեն՝ Սպարտային: Խախտվեց Սպարտայի արհեստական մեկուսացումը, հարստությունն ու շքեղությունը ներթափանցեցին Սպարտա: Սպարտան շատ արագ թուլացավ, կորցրեց իր ռազմական առաջատար դերը՝ վերածվելով հունական շարքային պոլիսի:

Չմիավորված Հունաստանում Ք.ծ.ա. IV դ. ընթացքում պատերազմները դարձան մշտական երևույթ: Պոլիսները իրար դեմ պատերազմում էին առաջնության, հարստության և տարածքների համար: Գյուղացիները չէին կարողանում տնտեսություն վարել, տուժում էին արհեստներն ու առևտուրը: Պատերազմների հետևանքով աճեց ռազմագերի ստրուկների թիվը: Ստրուկների էժան աշխատանքը սկսեց լայնորեն կիրառվել գյուղատնտեսության մեջ: Ստրուկների աշխատանքով գործող խոշոր արհեստանոցները արտադրում էին էժան ապրանքներ: ***Ստրուկների էժան աշխատանքի լայն կիրառումը անանկացնում էր գյուղացիներին և արհեստավորներին:***

Անընդհատ պատերազմները պահանջում էին մշտական զինվորական ուժ: Աղքատացող քաղաքացիները ցանկություն չունեին ծառայելու պետությանը, որը չէր կարողանում իրենց մասին հոգալ և պաշտպանել: Պոլիսները ստիպված էին պատերազմի ժամանակ վարձու ջոկատներ պահել: Հունաստանում առաջացան ***վարձկան զինվորների շուկաներ***: Մարդիկ պատրաստ էին վարձի դիմաց ծառայելու ում պատահի: ***Վարձկանությունը դարձավ մասնագիտություն և աշխատանքի մի առանձին տեսակ:***

6

Հացով աղքատ, քայքայված տնտեսությամբ Հունաստանից ***արտագաղթը հսկայական չափերի հասավ:*** Մարդիկ գերադասում էին բնակության մեկնել հին ու նոր գաղութներ: ***Պոլիսային կարգը հայտնվեց խոր ճգնաժամի մեջ:*** Վերանում էր քաղաքացիների միջին խավը, բնակչության մեծամասնությունը դարձել էր չքավոր: Պոլիսի քաղաքացիները աստիճանաբար ***դեմոսից վերածվում էին օխլոսի՝ ամբոխի:*** Պոլիսներից շատերում կրկին հաստատվեց տիրանիա:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *«Մարաթոնյան վազք», «Թերմոպիլի կիրճ», ծովամարտ, երկար պարիսպներ, վարձկան զինվոր, օխլոս:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ են տեղի ունեցել հույն-պարսկական պատերազմները, և ո՞րն էր դրանց նպատակը:
2. Ի՞նչ սպորտաձև է առաջացել կապված Մարաթոնի ճակատամարտի հետ:
3. Ներկայացրեք Թերմոպիլի ճակատամարտի ընթացքը:
4. Ինչպե՞ս կարողացավ ավելի փոքրաթիվ հունական նավատորմը հաղթել Սալամինի ծովամարտում:
5. Ո՞ւմ հաղթանակով և ե՞րբ ավարտվեցին հույն-պարսկական պատերազմները:
6. Ինչպիսի՞ն էր Աթենական պետության կառավարման կարգը Ք.ծ.ա. V դարի կեսին: Կառավարման ի՞նչ մարմիններ կային:
7. Կարո՞ղ եք նկարագրել Աթենքի շինությունները Պերիկլեսյան դարաշրջանում:
8. Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աթենքին հաղթելուց հետո, Սպարտան չկարողացավ միավորել Հունաստանը մեկ պետության մեջ:
9. Ի՞նչ պատճառներով Ք.ծ.ա. IV դարում պոլիսային կարգը Հունաստանում հայտնվեց տնտեսական ճգնաժամի մեջ:
10. Փորձեք բացատրել, թե ինչով են իրարից տարբերվում դեմոսը և օխլոսը:

§ 18. ԴԱՍԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

«Դասական դարաշրջան» ընդունված է անվանել հույն-պարսկական պատերազմներին հաջորդած ավելի քան մեկդարյա ժամանակաշրջանը (***Ք.ծ.ա. V–IV դդ.***), երբ հունական պոլիսները հասան տնտեսական, քաղաքական և մշակութային աննախադեպ նվաճումների:

ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հույն-պարսկական պատերազմների հետևանքով Հունաստանում աճեց ռազմագերի ստրուկների թիվը: Ստրուկների աշխատանքը սկսեցին կիրառել և՛ գյուղատնտեսության մեջ, և՛ արհեստներում: ***Արհեստավորները, մանր առևտրականները և գյուղացիները կազմում էին պոլիսների բնակչության հիմնական միջին խավը:*** Շատ պոլիսներում առաջացան արհեստավորների փողոցներ և նույնիսկ թաղամասեր՝ բրուտների, ատաղձագործների, կաշեգործների, դարբինների և այլն: Արհեստավորի հետ աշխատում էին նրա մի քանի ստրուկները, որոնք կատարում էին ոչ բարդ, բայց ծանր աշխատանքները: Ստրուկներին լայնորեն օգտագործում էին հանքագործության մեջ և նավերի վրա որպես թիավարների:

Առևտրա-արհեստագործական խոշոր կենտրոններ դարձան ***Կորնթոսը, Աթենքը, Միլեթը, Մեգարան*** և այլն: Առևտրական նավերը Հունաստանի պոլիսների արհեստագործական ապրանքները, գինին և ձիթայուղը վաճառքի էին տանում հեռավոր գաղութներ և այլ երկրներ: Հունաստան էին բերում հացահատիկ, աղ, բուրդ, ստրուկներ և այլն: Շատ պոլիսներում կային ստրկավաճառական շուկաներ, ուր կարելի էր գնել ուզածդ տարիքի, սեռի և ազգության ստրուկների:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Պոլիսների միջին խավի քաղաքացիները հասարակական ակտիվ կյանք էին վարում: Ստրուկների աշխատանքի շահագործման շնորհիվ նրանք բավարար ժամանակ և միջոցներ ունեին տոնախմբություններին, հասարակական միջոցառումներին և ժողովրդական ժողովներին մասնակցելու համար:

Լիարժեք քաղաքացի համարվում էին միայն տղամարդիկ: Կանանց իրավունքները սահմանափակ էին: Նրանք իրավունք չունեին մասնակցելու ժողովրդական ժողովներին, ընտրելու և ընտրվելու, զբաղվում էին բացառապես տնային գործերով, չպետք է միայնակ տնից դուրս գային, շփվեին տուն եկած հյուրերի հետ և այլն:

Ազատ քաղաքացիները իրենց ժամանակի մեծ մասն անցկացնում էին հա-

սարակական վայրերում՝ գբոսայգիներում, ճեմասրահներում և այլն: Քննարկում էին նորությունները, դիտում էին քանդակագործների և նկարիչների ներկայացրած ստեղծագործությունները, լսում գրական երկերի հեղինակային ընթերցումներ, հաճախում թատրոն, զբաղվում սպորտով և այլն: Պոլիսները զգալի միջոցներ էին ծախսում հասարակական շինություններն ու զբոսավայրերը բարեկարգ և գեղեցիկ դարձնելու վրա:

ԴՊՐՈՑԸ ԵՎ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հունական պոլիսներից շատերում երեխաները ***կրթություն էին ստանում պետության հաշվին***: Քաղաքացիների մեծ մասը գրագետ էր: Տղաները հաճախում էին դպրոց, իսկ աղջիկները կրթություն էին ստանում տանը, կրթված ստրուկի՝ ***պեդագոգի*** օգնությամբ:

Դպրոցում անհրաժեշտ գիտելիքներ էին ստանում լիարժեք քաղաքացի դառնալու համար: Սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել, գեղեցիկ խոսել: Երեխաները անգիր էին անում հատվածներ գրողների ստեղծագործություններից, սովորում էին երգեցողություն: Մեծ տեղ էր հատկացվում ***մարմնակրթությանը***. տղաներին սովորեցնում էին լողալ, ըմբշամարտել, նիզակ և սկավառակ նետել, բռնցքամարտել, թռչել, վազել և այլն: Չափահաս քաղաքացի դառնալով՝ նրանք պետք է ծառայեին բանակում, պաշտպանեին իրենց պոլիսը: Դպրոցները կոչվում էին ***գիմնազիոն՝ մարմնակրթարան***:

Գրում էին մոմով պատած անհատական գրատախտակների վրա, հատուկ մետաղյա ձողիկով՝ ***ստիլ***: Նոր բան գրելու համար ստիլով մոմը հարթում էին և նորից գրում: Գրքերը գրում էին Եգիպտոսից բերվող պապիրուսների վրա: Օրենքները գրվում էին քարե կամ փայտե տախտակների վրա և դրվում հանրային վայրերում: Հայտարարությունները գրում էին պատերի վրա:

1

Ավելի խոր գիտելիքներ ստանալու համար ունևոր ընտանիքների երիտասարդները վճարով սովորում էին մասնավոր ուսուցչի մոտ: Նման ուսուցիչներին անվանում էին ***փիլիսոփա՝*** բոլոր գիտություններին տեղյակ գիտնական: Սովորում էին հռետորություն, ճարտասանություն, բնագիտություն, ռազմավարություն և այլն: Այդ ամենը պետք էր գալու պետական բարձր պաշտոններ զբաղեցնելու համար:

ՀԱՄԱՀՈՒՆԱԿԱՆ ՄՐՑԱԽԱՂԵՐԸ

Թեև միասնական պետություն Հունաստանում չստեղծվեց, բայց բոլոր ***հույներին միավորում էին ընդհանուր լեզուն, կրոնը, ծեսերն ու տոնակատարությունները:*** Իրենց աստվածներին նվիրված տոնակատարությունների ժամանակ կազմակերպվում էին մրցումներ և ներկայացումներ: Դարերի

ընթացքում այդ տոնակատարություններից առանձնացան ***սպորտային խաղերը, արվեստի մրցությունները և թատրոնը:***

Սպորտային ամենից հայտնի մրցումները ***Օլիմպիական խաղերն*** էին: Օլիմպիադաներն անցկացվում էին Պելոպոնեսի Օլիմպիա քաղաքում 4 տարին մեկ անգամ, ի փառս Օլիմպիական աստվածների: **2**

Համահունական նշանակություն ունեին նաև ***Դելֆյան մրցումները***: Դրանք ևս տեղի էին ունենում 4 տարին մեկ անգամ՝ Օլիմպիական խաղերից երկու տարի անց:

Համահունական խաղերից և մրցումներից բացի՝ շատ պոլիսներում անցկացվում էին նաև տեղական նշանակության խաղեր, մրցումներ և հանդիսություններ: **3**

Նոր բառեր և արտահայտություններ՝ *«դասական դարաշրջան», լիիրավ քաղաքացի, գիմնազիոն, ստիլ, փիլիսոփա, դափնեպսակ, օլիմպիոնիկ, Օլիմպիական խաղեր, Դելֆյան մրցումներ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր ժամանակաշրջանն են անվանում «Դասական դարաշրջան»:
2. Ովքե՞ր էին համարվում պոլիսի լիարժեք քաղաքացի և ինչո՞ւ:
3. Բացատրեք, թե ինչ էր գիմնազիոնը:
4. Ի՞նչ է նշանակում «սևով սպիտակի վրա գրել»-ը:
5. Ո՞ւմ էին անվանում օլիմպիոնիկ:
6. Համեմատեք, թե ինչով էին պարգևատրում Օլիմպիական խաղերի հաղթողներին, և ինչով՝ Դելֆյան մրցումների հաղթողներին:
7. Ի՞նչ մարզաձևերում էին մրցում այդ երկու խաղերի մասնակիցները:

§ 19. ԴԱՍԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Դասական ժամանակաշրջանում Հունաստանի մշակույթն աննախադեպ ծաղկում ապրեց: Ո՛չ դրանից առաջ, ո՛չ էլ հետո հույները չստեղծեցին արվեստի այդքան հմայիչ և մնայուն գործեր:

Հին հույները գեղեցիկ էին համարում այն մարդուն, որը ֆիզիկապես զարգացած էր, առողջ և հոգեպես հարուստ էր, ուներ խելք և բարոյական արժեքներ: Հին հունական այս թևավոր խոսքը ծանոթ է շատերիդ. «Եկեք աղոթենք աստվածներին, որպեսզի ***առողջ մարմնում*** լինի նաև ***առողջ հոգի***»:

Այս գաղափարն էին արտահայտում հին հունական արվեստի գործերը՝ արձանները, նկարները, գրական երկերը, որոնք օժտված են ոչ միայն արտաքին գեղեցկությամբ, այլև հագեցած են ներքին բովանդակությամբ: Ահա ինչու հին հույների կերտած արվեստի գործերը գեղեցիկ են նաև մեզ համար:

ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԿՐՈՆԸ ԵՎ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Հին հույները բնության երևույթները վերագրում էին ամենազոր աստվածներին: Աստվածներին պատկերացնում էին մարդկային տեսքով, բայց մեծ, ամենազոր և անմահ: Հունական աստվածները մարդկանց նման սիրահարվում էին, վիճում, զվարճանում: Նրանք բարի էին, մեծահոգի, բայց զայրանալիս լինում էին դաժան ու հիշաչար: Հաճախ էին մարդկային կերպարանք ընդունելով՝ խառնվում մարդկանց գործերին:

1



Հույների համոզմամբ՝ նրանք ապրում էին ամպերով ծածկված Օլիմպոս լեռան գագաթին, դրա համար էլ կոչեցին ***Օլիմպիական աստվածներ***:

Հունական կրոնում կարևոր դեր ունեին ***գուշակությունները***: Հույների համոզմամբ՝ աստվածները միշտ հետևում էին մարդկանց գործերին և անհրաժեշտության դեպքում նրանց հայտնում էին իրենց ***պատգամները***: Հաճախ մարդիկ իրենք էին դիմում ***պատգամախոսին***՝ աստվածների կամքը և կարծիքը իմանալու որևէ կարևոր հարցում:

2

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Աթենքում հայտնի փիլիսոփա էր **Սոկրատեսը:** Նա հաճախ էր զրույցի կամ վեճի բռնվում մարդկանց հետ՝ այդ կերպ օգնելով հասկանալ լավն ու վատը, զանազանել ճշմարիտն ու սուտը: Սոկրատեսը սիրում էր կրկնել. ***«Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»:*** Նա բազմաթիվ աշակերտներ ուներ: Սոկրատեսի մտքերը գրի է առել նրա աշակերտ Պլատոնը: ***Պլատոնն*** ինքը հետագայում դարձավ հայտնի փիլիսոփա և ունեցավ բազմաթիվ աշակերտներ: Պլատոնի ստեղծած փիլիսոփայական դպրոցը կոչվում էր ***Ակադեմիա:***


Սոկրատես


Պլատոն


Արիստոտել

Պլատոնի ամենահայտնի աշակերտը ***Արիստոտելն*** էր, ով հաճախ համաձայն չէր լինում իր ուսուցչի մտքերին: Արիստոտելը բացեց իր դպրոցը, որը կոչվում էր ***Լիկեոն:*** Նա գրքեր է գրել մաթեմատիկայի, բնագիտության, ֆիզիկայի, պատմության և այլնի մասին: Նա ևս ունեցել է բազում աշակերտներ, որոնցից ամենահայտնին Ալեքսանդր Մակեդոնացին էր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՏՐՈՆԸ

Երբ ստեղծվեց հունական նոր գիրը, սկսեցին գրի առնել բանավոր փոխանցվող ասքերն ու առասպելները: Առաջ եկավ ***գրականությունը***: Դրա լավագույն նմուշները Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմներն են: Հետագայում գրականության մեջ առաջացան տարբեր ուղղություններ՝ ***պոեզիան*** (բանաստեղծություն) և ***արձակը***:

Գինեգործության աստված Դիոնիսոսին նվիրված տոնակատարություններից առաջացավ հունական ***թատրոնը:*** Տոների ժամանակ կազմակերպում էին շքերթներ, գինի խմում, երգում, պարում, ուրախանում: Ներկայացնում էին տեսարաններ Դիոնիսոսի մասին առասպելներից: Հետագայում սկսեցին տեսարաններ ներկայացնել և այլ աստվածների ու հերոսների մասին առասպելներից:

Ներկայացումների համար կառուցում էին հատուկ կիսաշրջանաձև շինություն՝ ***թատրոն,*** որի կենտրոնում կլոր բեմն էր, իսկ նստատեղերը հովհարաձև էին բարձրանում մինչև 20–30 շարք: Առաջացան ներկայացումների 2 տեսակ՝ ***տրագեդիա՝*** ողբերգություն, և ***կոմեդիա՝*** կատակերգություն: Հանդես եկան ներկայացումներ գրող հատուկ մարդիկ՝ ***թատերագիրներ:*** Ներկայացումներ էին գրում առասպելների, պատմական դեպքերի, նաև առօրյա կյանքի մասին: Թատրոն հաճախելը առավել տարածում ստացավ Աթենքում:

3

ԱՐՎԵՍՏԸ

Աստվածների պատվին հույները կառուցում էին ***տաճարներ:*** Տաճարը կառուցվում էր քարե հարթակի վրա և նման էր բոլոր կողմերից սյունազարդ ձգված ուղղանկյան: Սյուներից ներս փակ պատերով սենյակն էր, ուր դրվում էին աստծո արձանը և զոհասեղանը: Տաճարի տանիքը դիմացից նման էր սյուների վրա դրված հավասարակողմ եռանկյան: Այդ եռանկյունաձև ճակատը զարդարում էին նախշերով և արձաններով: Նախշերով զարդարում էին նաև սյուները:

Կառուցում էին նաև ծածկված տանիքով, բայց առանց պատերի ***սյունազարդ ճեմասրահներ:*** Ամռան շոգին այստեղ միջանցիկ քամի էր խաղում, զով էր, և մարդիկ հավաքվում էին զրուցելու ու ժամանակ անցկացնելու համար:

4

Հասարակական վայրերում հույները կանգնեցնում էին աստվածների, հերոսների, օլիմպիական չեմպիոնների արձաններ: Դասական ժամանակաշրջանի ամենահայտնի քանդակագործը և ճարտարապետը ***Ֆիդիասն*** էր: Նրա ղեկավարությամբ ճարտարապետներ ***Իկտինը և Կալիկրատը*** կառուցել են ***Ակրոպոլիսի*** հիասքանչ տաճարները: Նա է կերտել Աթենաս աստվածուհու արձանը, որը դրված էր Պարթենոն տաճարի ներսում: Աթենասի՝ Ֆիդիասի կերտած մեկ այլ քարե արձան դրված էր Ակրոպոլիսի կենտրոնում՝ բաց երկնքի տակ: Այն տեսանելի էր անգամ Պիրեյի նավահանգիստ մտնող նավերից: Սակայն Ֆիդիասի ամենից նշանավոր գործը Օլիմպիայի տաճարում գտնվող ***Զևսի արձանն*** էր:

5

Հունական նկարչության մասին պատկերացում ենք կազմում խեցեղենի վրա արված նկարներից: Պեղումներից հայտնաբերվել են գեղեցիկ նկարներով կավե թասեր, սափորներ, գավաթներ և այլն, որոնց վրա կարմիր կամ սև գույնով պատկերված են առասպելական հերոսների արկածները կամ կենցաղային տեսարաններ:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *«առողջ մարմնում – առողջ հոգի», Օլիմպիական աստվածներ, արգոնավորդներ, «ոսկե գեղմ», պատգամախոս, Ակադեմիա, Լիկեոն, թատրոն, թատերագիր, տաճար, ճեմարան*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էին հին հույները իրենց աստվածներին կոչում «Օլիմպիական», քանի՞սն էին դրանք:
2. Արվեստի ո՞ր գործերն էին հին հույները համարում գեղեցիկ:
3. Ո՞ւմ էին հին հույները անվանում պատգամախոս, ո՞րն էր դրա իմաստը:
4. Ի՞նչ հաստատություններ էին Ակադեմիան և Լիկեոնը:
5. Ինչպիսի՞ շինություն է թատրոնը:
6. Ի՞նչ է ճեմասրահը:
7. Ո՞վ էր հին Հունաստանի ամենահայտնի քանդակագործը, նրա կերտած ի՞նչ գործեր գիտեք:

§ 20. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Մակեդոնիան գտնվում է Բալկանյան թերակղզում՝ Հունաստանից դեպի հյուսիս: Մակեդոնացիները հույներին ազգակից էին և խոսում էին նրանց համար հասկանալի լեզվով: ***Ք.ծ.ա. IV դ., մինչ Հունաստանի պոլիսները ապրիճանաբար դեպի անկում էին գնում, Մակեդոնիան սկսեց վերելք ապրել:***

Մակեդոնիան հզորացավ արքա ***Ֆիլիպ II-ի (359-336)*** օրոք: Նա հնազանդեցրեց մակեդոնական ավագանուն և միավորեց պետությունը: Ֆիլիպը II-ը ստեղծեց կարգապահ բանակ, վարժեցրեց կռվել հունական ձևով: Նա Մակեդոնիային միացրեց ծովափնյա շրջանները, կառուցեց նավատորմ, սկսեց ոսկե դրամ հատել:

1

Օգտվելով հույների երկպառակություններից՝ Ֆիլիպ II-ը հպատակեցրեց հյուսիսային Հունաստանի պոլիսները: Նվաճման վտանգի առաջ մնացյալ պոլիսները միավորեցին իրենց ուժերը, սակայն ***Ք.ծ.ա. 338 թ. Քերոնեայի*** ճակատամարտում Ֆիլիպ II-ը ջախջախեց հույներին: Պոլիսները ստիպված էին հպատակվել Մակեդոնիային՝ պահպանելով ձևական անկախությունը: Հունաստանում տխուր կատակում էին՝ ասելով, որ ***«Քերոնեայի մոտ ընկածների հետ թաղվեց նաև Հունաստանի ազատությունը»:***

Ք.ծ.ա. 337 թ. Կորնթոսում Ֆիլիպ II-ը հրավիրեց ***հունական պետությունների համաժողով:*** Պոլիսների միջև հռչակվեց ***«հավերժ խաղաղություն»:*** Որոշվեց միացյալ ուժերով պատերազմել Պարսկաստանի դեմ՝ վրեժ լուծելու Դարեհի և Քսերքսեսի կողմից հունական սրբավայրերը ավերելու համար: Արշավանքի նախօրեին Ֆիլիպ II-ը դավադրաբար սպանվեց:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Մակեդոնիայի արքա դարձավ Ֆիլիպ II-ի 20-ամյա որդի ***Ալեքսանդրը (336-323): Ք.ծ.ա. 334 թ.*** Ալեքսանդրը սկսեց հոր ծրագրած արշավանքը Աքեմենյան տերության դեմ: Նրա բանակը կազմված էր 30000 հետևակից և 5000 զրահակիր հեծյալներից: Եվս 5000 հեծյալ տրամադրեցին դաշնակից հունական պոլիսները:



Ալեքսանդրի բանակը անցավ Փոքր Ասիա և ջախջախեց պարսկական սատրապների բանակը: Ք.ծ.ա. 333 թ. Կիլիկիայի Իսոս քաղաքի մոտ մարտի բռնվեցին Դարեհ III-ի և Ալեքսանդրի բանակները: Ճակատամարտի վճռական պահին Դարեհը մարտադաշտից փախավ: Ալեքսանդրը հաղթանակ տարավ՝ ավարտելով Փոքր Ասիայի նվաճումը:

Ալեքսանդրը անարգել ***գրավեց Սիրիան և Փյունիկիան:*** Եգիպտոսում մակեդոնացիներին դիմավորեցին որպես ազատարարների, իսկ Ալեքսանդրին քրմերը հռչակեցին փարավոն: Եգիպտոսում Ալեքսանդրը հիմնադրեց իր անունով առաջին քաղաքը՝ ***Ալեքսանդրիան,*** որը հիմա էլ այդպես է կոչվում: Հանգիստ առնելով և համալրվելով՝ նրա բանակը Եգիպտոսից շարժվեց դեպի հյուսիս՝ Դարեհին ընդառաջ:

2

Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ ***Ք.ծ.ա. 331 թ.*** Հյուսիսային Միջագետքի ***Գավգամելա*** դաշտավայրում: Դարեհ III-ը հպատակ ժողովուրդներից հավաքել էր մոտ 80-հազարանոց բանակ: Ալեքսանդրի բանակը կիսով չափ պակաս էր: Ալեքսանդրի հեծելազորը հարձակվեց թշնամու բանակի կենտրոնի վրա, ուր գտնվում էր Դարեհ III-ը: Սարսափած Դարեհը դարձյալ փախավ մարտադաշտից: Պարսկական բանակում խուճապ սկսվեց: Ճակատամարտն ավարտվեց Ալեքսանդրի հաղթանակով:

Ալեքսանդրը գրավեց ***Միջագետքը, Էլամը և բուն Պարսկաստանը:*** Նրա ձեռքն ընկան պարսից արքաների կուտակած հարստությունները: Ալեքսանդրը կազմակերպում էր խնջույքներ, իր զինվորներին ամուսնացնում էր պարսկուհիների հետ, բոլորին հարուստ ընծաներ էր տալիս: Պերսեպոլիսում խնջույքի մասնակիցները հրկիզեցին Քսերքսեսի պալատը: Այրվեց և ավերվեց ողջ ***Պերսեպոլիսը՝*** որպես վրեժ պարսիկների կողմից Աթենքի հրկիզման: Ալեքսանդրն ուզում էր ցույց տալ, որ ինքը մարտնչում է հանուն բոլոր հույների:

Ալեքսանդրի բանակը առաջ շարժվեց՝ գրավելով Մարաստանը, Պարթևստանը, Բակտրիան: Դարեհ III-ն ավելի ու ավելի հեռու էր փախչում՝ չկարողանալով նոր բանակ հավաքել: Ի վերջո, հիասթափված զինակիցները նրան սպանեցին, որ գերի չընկնի Ալեքսանդրին:

Սոդդիանա
Ալեքսանդրիա
Սամարդանդ
Ալեքսանդրիա
Ահորն
Բակտրիա
Բակտրիա
Ալեքսանդրիա
Ալեքսանդրիա
Ալեքսանդ

Հետապնդելով Դարեհին սպանողներին՝ Ալեքսանդրի բանակը ներխուժեց Միջին Ասիա: Երեք տարվա պատերազմներից հետո նա հպատակեցրեց Միջին Ասիան: Այստեղից Ալեքսանդրի բանակը, գրավելով Աֆղանստանը, ներխուժեց ***Հնդկաստան:*** Ալեքսանդրը հաղթանակներ տարավ և հպատակեցրեց Ինդոս գետի հովտի պետությունները:

Նա մտադիր էր գրավել ողջ Հնդկաստանը, բայց բանակը հրաժարվեց արշավանքը շարունակել: Զինվորները 10 տարի թափառել էին աշխարհով մեկ և երազում էին տուն վերադառնալ: Ալեքսանդրը ստիպված էր տեղի տալ: Նրա բանակը Ինդոս գետի ափով հասավ մինչև ***Հնդկական օվկիանոս***: Կառուցվեցին նավեր, և զորքի մի մասը ուղևորվեց Միջագետք ծովով, մյուս մասը Ալեքսանդրի ղեկավարությամբ շարժվեց ցամաքով: ***Արշավանքն ավարտվեց Ք.ծ.ա. 324 թ. Բաբելոնում:***

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ալեքսանդրի ստեղծած հսկայածավալ կայսրությունը ձգվում էր Միջերկրական ծովից մինչև Հնդկական օվկիանոս: Նրա կազմի մեջ էին մտնում հին քաղաքակրթություն և հարուստ մշակույթ ունեցող բազում ժողովուրդներ:

Ալեքսանդրը կայսրությունը բաժանեց խոշոր մարզերի՝ կառավարիչներ նշանակելով իր հույն և մակեդոնացի զորավարներին: Որոշ մարզերում նշանակում էր նաև տեղացի կամ պարսիկ կառավարիչների: ***Կայսրության պաշտոնական լեզուն դարձավ հունարենը, մայրաքաղաք հռչակվեց Բաբելոնը:***

Իր նվաճած երկրներում Ալեքսանդրը հիմնադրել էր բազմաթիվ ***պոլիսներ***: Դրանցում բնակեցրել էր զորացրված մակեդոնացի և հույն զինվորներին՝ նշանակելով թոշակ և ամուսնացնելով տեղացի կանանց հետ: Այդ պոլիսները նրա տիրապետության հենարանն էին նվաճված տարածքներում:

Կայսրության գործերը կարգավորելիս Ալեքսանդրն անսպասելիորեն ծանր հիվանդացավ: ***Ք.ծ.ա. 323 թ. նա վախճանվեց Բաբելոնի Կախովի այգիներում՝ ապրելով կարճատև, բայց իրադարձություններով հարուստ ու հետաքրքիր կյանք:***

Նոր բառեր և արտահայտություններ՝ *համաժողով, «հավերժ խաղաղություն», ֆալանգ, Ալեքսանդրիա*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ միջոցառումներով Ֆիլիպ II-ը կարողացավ հզորացնել Մակեդոնիան:
2. Ինչպես Ֆիլիպ II-ին հաջողվեց միավորել հունական պոլիսները իր ծրագրի շուրջը:
3. Ներկայացրեք Ալեքսանդրի տարած հաղթանակները Դարեհ III-ի դեմ:
4. Որտեղ և ինչպես ավարտվեց Ալեքսանդրի արշավանքը:

§ 21. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Ք.ծ.ա. IV դարի վերջին Ալեքսանդրի կայսրությունը տրոհվեց մոտ մեկ տասնյակ մեծ ու փոքր պետությունների: Այդ պետություններում կային հունական տիպի պոլիսներ և զգալի թվով հունա-մակեդոնական բնակչություն:

Մի քանի դար շարունակ հունարենը միջազգային հաղորդակցման հիմնական լեզուն էր: Հունարեն խոսող մարդկանց կարելի էր հանդիպել Եգիպտոսից մինչև Հնդկաստան և Կովկասյան լեռներից մինչև Պարսից ծոցն ընկած երկրներում:



Հունական և արևելյան ժողովուրդների մշակույթների, կրոնական հավատալիքների, բարքերի ու սովորույթների միախառնումից ժամանակի ընթացքում ձևավորվեց յուրօրինակ ***հելլենիստական մշակույթը:*** Այն երկրները, որտեղ հելլենիստական մշակույթը տարածում ստացավ, անվանում ենք ***հելլենիստական պետություններ:***

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԵԳԻՊՏՈՍԸ

Ալեքսանդրի կայսրությունից առաջինն անջատվեց Եգիպտոսը: Եգիպտոսի կառավարիչ զորավար ***Պտղոմեոսը*** Ալեքսանդրի մահից հետո իրեն Եգիպտոսի արքա հռչակեց, հույներից և մակեդոնացիներից կազմեց հզոր բանակ և կառուցեց մեծ նավատորմ:

Երկրի բոլոր հողերը արքայի սեփականությունն էին: Բնակչությունը հարկեր էր վճարում պետությանը և կատարում տարբեր պարհակներ: Հույն և եգիպտացի պաշտոնյաներին թագավորը ծառայության դիմաց խոշոր կալվածքներ էր տրամադրում: Այդ կալվածքներում ապրող գյուղացիները հարկը վճարում էին հողատիրոջը: Տաճարները և քրմությունը հարկերից ազատված էին:

Եգիպտոսի արքաները նորանոր հելլենիստական պոլիսներ էին հիմնում, որոնք նրանց իշխանության հենարանն էին: Երկրի պաշտոնական լեզուն հունարենն էր, սակայն տեղացի բնակչությունը շարունակում էր խոսել եգիպտերեն:

ՍԵԼԵՎԿՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հելլենիստական պետություններից ամենաընդարձակը ***Սելևկյան տերութ-***

յունն էր: Նրա կազմի մեջ մտնում էին Սիրիան և Միջագետքը, Մարաստանը, Պարսկաստանը և Միջին Ասիան: Այն բաժին էր հասել Ալեքսանդրի զորավար ***Սելևկոսին,*** ում անվամբ էլ կոչվեց պետությունը: Առևտրական ուղիների վրա Սելևկյան արքաները հիմնում էին հելլենիստական նորանոր պոլիսներ կոչելով իրենց անվամբ՝ Սելևկիա, Անտիոք և այլն: Դրանցում բնակեցնում էին նոր վերաբնակիչների Մակեդոնիայից և Հունաստանից:

Սելևկյան տերության կենտրոնական տարածքը Սիրիան էր: Այստեղ էր գտնվում պետության մայրաքաղաք ***Անտիոքը:*** Սելևկյան արքաները ստեղծել էին հզոր բանակ, որի կազմում անգամ փղեր կային: Սելևկյան տերությունը մշտական պատերազմների մեջ էր հելլենիստական մյուս պետությունների հետ: Պատերազմներից բերված գերիներին ստրկացնում էին և աշխատեցնում արքայական տնտեսություններում կամ ավագանու կալվածքներում: Արքունիքում, հույներից և մակեդոնացիներից բացի, ծառայում էին և տեղական ավագանու ներկայացուցիչներ՝ պարսիկներ, մարեր, հայեր, բաբելացիներ:

ՄԱԿԵԴՈՆԻԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ

Ալեքսանդրի մահից հետո Մակեդոնիայի գահին հաստատվեց զորավար ***Անտիգոնեսը***: Հունական պոլիսները մնում էին Մակեդոնիայի գերիշխանության տակ: Արքաները շարունակում էին խառնվել հունական պոլիսների գործերին, դրանցում կայազորներ պահել:

Մակեդոնիայի և Հունաստանի տնտեսությունը շարունակում էր հետադիմել: Տնտեսության բոլոր ճյուղերում կիրառվում էր ստրուկների էժան աշխատանքը: Հույներն արդեն խորշում էին զբաղվել ֆիզիկական աշխատանքով: Ազատ մարդուն վայել զբաղմունք համարում էին միայն մտավոր աշխատանքը և ռազմական գործը: Շատերը արտագաղթում էին արևելքի հելլենիստական պետություններ: ***Հելլենիզմի դարաշրջանում միակ հարստությունը, որն արտահանվում էր Հունաստանից և Մակեդոնիայից հարևան երկրներ, մշակույթի արժեքներն էին և մարդկային ռեսուրսները:***

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Թվարկված խոշոր տերություններից բացի՝ հելլենիստական աշխարհի մաս էին կազմում մոտ մեկ տասնյակ ոչ մեծ պետություններ ևս, որոնք ձևավորվեցին Փոքր Ասիա թերակղզում և Հարավային Կովկասում՝ Պերգամի, Պաֆլագոնիայի, Փռուգիայի, Կապադովկիայի, Բութանիայի, Պոնտոսի, Փոքր Հայքի, Մեծ Հայքի, Կոլխիդայի թագավորությունները: Այս երկրները նույնպես որոշակի ներդրում են ունեցել հելլենիստական մշակույթի ստեղծման, զարգացման, տարածման ու պահպանման գործում:

Հելլենիստական մշակույթի խոշորագույն կենտրոնը Եգիպտոսի մայրա-

1

քաղաք ***Ալեքսանդրիան*** էր: Այն ուներ մոտ 100000 բնակչություն: Պտղոմեոս արքան այստեղ կառուցել էր նշանավոր ***Մուսեյոնը***, որտեղ արքայի ծախսերով ապրում, աշխատում և ուսուցանում էին հայտնի գիտնականներ, բանաստեղծներ, փիլիսոփաներ: Մուսեյոնին կից էր հարուստ ***Գրադարանը,*** որտեղ հավաքված էին պապիրուսի վրա գրված հարյուրհազարավոր գրքեր: Սակայն Ալեքսանդրիայի զարդը նշանավոր ***փարոսն*** էր:

Հելլենիստական մշակույթի մյուս խոշոր կենտրոնը Սելևկյան տերության մայրաքաղաք ***Անտիոքն*** էր: Քաղաքը հիմնադրել էր Սելևկոս Ի-ը Ք.ծ.ա. 300 թ. Օրոնտես գետի ափին, ուր հատվում էին միջազգային առևտրական ուղիները: Սելևկյան արքաներն Անտիոքը զարդարել էին գեղեցիկ, շքեղ շինություններով: Քաղաքի սալարկված փողոցները գիշերները լուսավորվում էին: Անտիոքի Դաֆնե թաղամասը հայտնի էր իր ճոխ առանձնատներով, փարթամ այգիներով և շատրվաններով: Անտիոքում կառուցված էր իր ***Մուսեյոնը***, ուր Սելևկյան արքաների հովանավորությամբ ապրում և աշխատում էին Հունաստանից և տերության տարբեր ծայրերից եկած գիտնականներ ու արվեստագետներ:

2

Հելլենիստական մշակույթի մեկ այլ կարևոր կենտրոն էր Փոքր Ասիայի ***Պերգամոն*** քաղաքը: Համանուն թագավորության մայրաքաղաքն ուներ սալարկված լայն փողոցներ, երեք գիմնազիոն: Այն նաև դրամահատության խոշոր կենտրոն էր: Պերգամոնի ***Գրադարանն*** իր գրքերի քանակությամբ աշխարհում երկրորդն էր Ալեքսանդրիայի գրադարանից հետո: Գրելու համար այստեղ առավելապես օգտագործում էին ***պերգամենտ՝ մագաղաթ***:

Պերգամոնում ապրել և ստեղծագործել են հելլենիզմի ժամանակաշրջանի անվանի ճարտարապետներ, քանդակագործներ, գիտնականներ: Պերգամոն քաղաքի զարդն էր գալատների դեմ տարած հաղթանակի պատվին կառուցված ***Զևսի զոհարան-տաճարը***, որը շքեղորեն զարդարված էր բարձրաքանդակներով և զարդանախշերով:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *հելլենիստական մշակույթ, Մուսեյոն, փարոս, պերգամենտ/մագաղաթ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է սկսվել և որքա՞ն է շարունակվել հելլենիզմի դարաշրջանը:
2. Ի՞նչ է իրենից ներկայացնում հելլենիստական մշակույթը:
3. Հելլենիստական ի՞նչ պետություններ կարող եք թվարկել:
4. Հելլենիստական պետություններից ո՞րն էր տարածքով ամենաընդարձակը:
5. Ո՞ր քաղաքներն էին հելլենիստական մշակույթի խոշոր կենտրոնները:
6. Ի՞նչ էր իրենից ներկայացնում պերգամենտը, ինչի՞ց էին այն պատրաստում, ի՞նչ է դրա հայերեն անվանումը:
7. Արդյոք Հայաստանը կարելի՞ է համարել հելլենիստական պետություն: Հիմնավորեք ձեր պատասխանը:

§ 22. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ / ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍՏ.
ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Հունաստանի հնագույն բնակիչներին անվանում էին՝

- *աքայացիներ* • *դորիացիներ* • *կրետացիներ* • *պելասգներ*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

2. Ո՞րն էին անվանում «դեմոկրատական պոլիս» և ո՞րը՝ «արիստոկրատական պոլիս».

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25+0.25) 1,25 բալ

3. Բացատրեք, թե ո՞ր պետությունն ենք անվանում «ամբողջատիրական».

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

4. Ինչպե՞ս էին Սպարտայում դաստիարակում աղջիկներին.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

5. Բացատրեք՝ ի՞նչ է նշանակում «լակոնիկ խոսք» արտահայտությունը.

.....

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

6. Ինչո՞ւ էին ասում, որ «Դրակոնի օրենքները գրված են ոչ թե թանաքով, այլ արյունով»

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

7. Բացատրեք՝ որքա՞ն է «մարաթոնյան վազքը», ինչպե՞ս է այն առաջացել.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

8. Հունաստանի պատմության ո՞ր հատվածն ենք անվանում «դասական դարաշրջան».

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

9. Ո՞ր դարերում և ո՞ր արքայի օրոք Կրետեն դարձավ հզոր ծովապետություն.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

11. Ե՞րբ է հին Հունաստանում տեղի ունեցել առաջին Օլիմպիադան.

- *Ք.ծ.ա. 776 թ.*
- *Ք.ծ.ա. 490 թ.*
- *Ք.ծ.ա. 336 թ.*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

12. Ու՞մ էին հին Հունաստանում անվանում օլիմպիոնիկներ.

- *մարզիկներին*
- *մարզիչներին*
- *մասնակիցներին*
- *հաղթողներին*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

13. Բացատրե՛ք «առողջ մարմնում առողջ հոգի» հունական թևավոր խոսքի իմաստը.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

14. Ո՞ր տեսակ շինություններն էին հին Հունաստանում անվանում ճեմասրահ.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

15. Բացատրե՛ք, թե ինչ հետևանքներ ունեցավ Գավգամելայում Ալեքսանդրի տարած հաղթանակը Հայաստանի համար.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

16. Բացատրե՛ք՝ թե ինչն ենք անվանում հելլենիստական մշակույթ.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

17. Որտեղ են հայտնագործել «պերգամենտը», ինչից էին պատրաստում, ինչ ենք այն անվանում հայերեն.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՌՈՄ

§ 23. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ԻՏԱԼԻԱՅԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպայի հարավում է գտնվում ***Ապենինյան թերակղզին,*** որը դեռ հնում հույներն անվանել են ***Իտալիա***: Ափերը ողողում են Միջերկրական ծովի ջրերը, հյուսիսում դժվար անցանելի ***Ալպյան լեռներն*** այն անջատում են մնացյալ Եվրոպայից: Թերակղզու երկարությամբ ձգվում են ոչ բարձր ***Ապենինյան լեռները:*** Հարավում Իտալիային հարում է ***Սիցիլիա*** կղզին, իսկ արևմուտքից՝ Կորսիկա և Սարդինիա կղզիները: Իտալիայի կլիման մեղմ է, ձյուն տեղում է միայն հյուսիսում: Գետերից ամենախոշորը ***Պո*** գետն է՝ երկրի հյուսիսում, իսկ կենտրոնական Իտալիայում՝ ***Տիբր*** գետը:

Իտալիան բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: Միջին Իտալիայում բնակվում էին ***լատինները,*** նրանցից հյուսիս՝ ***էտրուսկները,*** դեպի հարավ՝ ***սամնիտները*** և ուրիշ այլ ցեղեր: Այդ բոլոր ցեղերին միասին անվանում էին ***իտալիկներ:*** Հարավային Իտալիայում և Սիցիլիայում բազմաթիվ գաղութներ էին հիմնել հին հույները և փյունիկեցիները:

ՀՌՈՄԸ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Հռոմ քաղաքը հիմնադրվել է Իտալիայի միջին մասում ***Ք.Ծ.ա. 753 թ.,*** Տիբր գետի աջ ափին՝ 7 բլուրների վրա: Բլուրներից առավել բնակեցված էին Ավենտինը, Պալատինը և Կապիտոլիումը: Կապիտոլիումի վրա կառուցվեց Հռոմի միջնաբերդը: Բլուրների միջև ընկած ճահճոտ տեղանքը մարդիկ չորացրին, և այդտեղ ձևավորվեց շուկայական հրապարակը՝ ***ֆորումը:***

Հռոմի սկզբնական բնակչությունը կազմված էր 3 ցեղերից, 30 տոհմից

1

և 300 ***ֆամիլիայից***՝ նահապետական ընտանիքներից: Պետությունը ղեկավարում էր ***300 նահապետներից կազմված Սենատը՝ Ծերակույտը***: Սենատը քննում էր պետական բոլոր կարևոր հարցերը, ապա դրանք ներկայացնում ***Ժողովրդական Ժողովի*** հաստատմանը: Սենատն ընտրում էր ցմահ ***թագավորի***, որը նախագահում էր Սենատի նիստերը, հետևում կարգ ու կանոնին և ղեկավարում բանակը:

17–60 տարեկան հռոմեացի բոլոր տղամարդիկ համարվում էին զինվորներ: Հարևան ցեղերի դեմ պատերազմելով՝ հռոմեացիները զավթում էին նրանց տարածքների մի մասը: Դրանք հայտարարվում էին ***«հասարակական հող»***, և դրանից հողաբաժիններ էին ստանում երիտասարդ հռոմեացիները: Յուրաքանչյուր ընտանիք ստանում էր նույն չափի հողաբաժին: Պարտքի դիմաց իր հողաբաժինը կորցնողը զրկվում էր նաև քաղաքացու իրավունքներից: Հռոմում կար պարտային ստրկություն:

ՍԵՐՎԻՈՍ ՏՈՒԼԻՈՍԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ

Հռոմի՝ 30 տոհմերից որևէ մեկին պատկանող քաղաքացիներն իրենց անվանում էին ***պատրիկ***՝ ազնվազարմ: Պատրիկները Հռոմի արիստոկրատիան էին: Միայն նրանք իրավունք ունեին սեփական հողաբաժին ունենալ և նոր հողաբաժին ստանալ «հասարակական հողերից», պետական պաշտոններ զբաղեցնել և մասնակցել Ժողովրդական ժողովին:

Նվաճված մարզերի ազատ բնակչությանը հռոմեացիները ստիպում էին տեղափոխվել Հռոմ: Բացի դրանից՝ Հռոմ էին գալիս կամավոր վերաբնակիչներ այլ քաղաքներից: Նրանց բոլորին անվանում էին ***պլեբեյներ***՝ եկվորներ: ***Նրանք տոհմերի անդամ չէին դառնում, Հռոմի լիիրավ քաղաքացի չէին համարվում և սեփական հողաբաժին չէին ստանում:*** Պլեբեյները զբաղվում էին արհեստներով, առևտրով, հող էին վարձակալում պատրիկներից: Նրանց մեջ կային և հարուստ մարդիկ:

Ք.ծ.ա. VI դարի կեսին նախավերջին թագավոր ***Սերվիոս Տուլիոսը*** կարևոր բարեփոխում իրականացրեց: ***Նա Հռոմի բնակչությունը բաժանեց 6 դասի՝ ըստ ունեցվածքի,*** և սահմանեց նրանց իրավունքներն ու պարտականությունները**:** Այսուհետ մարդու հասարակական դիրքը պետք է որոշվեր ոչ թե ըստ ծագման, այլ նրա ունեցվածքով:

Այսուհետ պլեբեյները նույնպես պարտավոր էին ծառայել բանակում: Ամենահարուստ դասերը պարտավոր էին ծառայել հեծելազորում, պակաս ունևորները՝ ծանրազեն հետևակում, աղքատները՝ որպես թեթևազեններ:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Հռոմի վերջին թագավոր Տարքվինիոս Գոռոզը պետությունը կառավարում էր միանձնյա, սահմանափակել էր պատրիկների իրավունքները, խախտում էր օրենքները և սովորույթները: Հռոմի բնակչությունն ապստամբեց նրա անօրինականությունների դեմ և ***Ք.ծ.ա. 510 թ. Տարքվինիոսին Հռոմից վտարեց: Հռոմը դարձավ ռեսպուբլիկա***՝ հանրապետություն:

Ռես պուբլիկա – *լատիներեն բառը նշանակում է «հանրային գործ»: Այդպես անվանում ենք այն պետությունը, որը կառավարում են ընտրովի պաշտոնյաները:*

Պետությունը կառավարելու համար սկսեցին պատրիկներից ***ընտրել 2 կոնսուլ***: Նրանք հետևում էին կարգ ու կանոնին, օրենքների կատարմանը, հերթով ղեկավարում էին բանակը: Սենատը քննում էր պետական բոլոր հարցերը, ընդունում անհրաժեշտ որոշումներ, որոնք իրականացնում էին կոնսուլները: Ժողովրդական ժողովն իրավունք ուներ միայն մերժել կամ հաստատել Սենատի որոշումները: ***Հռոմը դարձավ արիստոկրատական հանրապետություն:***

Նոր բառեր և հասկացություններ՝ *Կապիտոլիում, Պալատին, ֆորում, «հասարակական հող», պատրիկ, պլեբեյ, ռեսպուբլիկա, կոնսուլ, արիստոկրատական հանրապետություն:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Քարտեզի վրա ցույց տվեք Ապենինյան թերակղզին: Ովքեր են բնակվել Իտալիայում: Նկարագրեք Իտալիայի բնությունը: Ինչով է այն տարբերվում Հունաստանի բնությունից: Ձեր կարծիքով բնական պայմանները որտեղ էին ավելի նպաստավոր մարդկանց կյանքի համար՝ Իտալիայում, թե Հունաստանում:
2. Երբ և որտեղ հիմնադրվեց Հռոմ քաղաքը: Երբ է հիմնադրվել Էրեբունի- Երևանը, և քանի տարի է անցել այդ թվականից մինչև Հռոմի հիմնադրումը:
3. Ո՞վ էր Հռոմի նախավերջին արքան: Ինչ բարեփոխումներ նա անցկացրեց: Ձեր կարծիքով ինչով էին պայմանավորված այդ բարեփոխումները և ում շահերին էին հակասում:
4. Ինչու վտարվեց Տարքվինիոսը: Ինչպիսի կարգ հաստատվեց Հռոմում: Ձեզ համար ո՞ր կարգն է ընդունելի՝ միապետական, թե հանրապետական: Հիմնավորեք Ձեր տեսակետը:
5. Փորձեք նկարագրել հանրապետական Հռոմի կառավարման մարմինները: Ինչով էին դրանք տարբերվում թագավորության շրջանի պետական կառուցվածքից:

Թեստ. Ովքեր էին համարվում Հռոմի քաղաքացիներ.

ա) պլեբեյները գ) էտրուսկները
բ) պատրիկները դ) իտալիկները

§ 24. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ՊԱՏՐԻԿՆԵՐԻ ԵՎ ՊԼԵԲԵՅՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

Ք.ծ.ա. V դ. սկզբին Հռոմի բնակչության մեծամասնությունը կազմում էին պլեբեյները, սակայն պետության կառավարմանը մասնակցում էին միայն պատրիկները: ***Պլեբեյները նրանց պես ծառայում էին բանակում և կատարում այլ պարտականություններ, բայց չունեին իրավունքներ:*** Նրանք ստիպված էին պայքարել իրենց իրավունքների համար:

1

Պատրիկների և պլեբեյների պայքարը, որոշ ընդմիջումներով, շարունակվեց ավելի քան 200 տարի և ավարտվեց Ք.ծ.ա. III դարի կեսին: ***Պլեբեյների և պատրիկների իրավունքները հավասարեցվեցին:***

Կազմվեցին մասնավոր սեփականությունը պաշտպանող գրավոր օրենքներ: Պարտային ստրկությունը վերացվեց: Այդուհետ պլեբեյները ևս կարող էին հողաբաժիններ ստանալ «հասարակական հողից»: Թույլատրվեց ամուսնությունը պատրիկների և պլեբեյների միջև: Պլեբեյներն իրավունք ստացան ամեն տարի ընտրելու ***2 ժողովրդական տրիբուն***, որոնք կարող էին արգելք դնել կոնսուլների և Սենատի որոշումների վրա, եթե դրանք վնասում էին պլեբեյներին: Պլեբեյներին թույլատրվեց ընտրվել Սենատի անդամ և այլ պաշտոններում:



Պատրիկների ու պլեբեյների միախառնվելով՝ կազմավորվեց հռոմեական ժողովուրդը: Ամենահարուստ պատրիկներից և պլեբեյներից ձևավորվեց իշխող վերնախավը՝ ***նոբիլիտետը*** (երևելիներ): Միջին ունեցվածքի տեր առևտրականները, վաշխառուները և նավատերերը կազմեցին ***հեծյալների դասը***: Ոչ ունևոր կամ չքավոր ազատ քաղաքացիները, անկախ ծագումից, կազմում էին ստորին դասը: Նրանց սկսեցին անվանել ***պլեբս՝ ժողովուրդ:*** Բոլոր 3 դասերի քաղաքացիները ունեին հավասար իրավունքներ ու պարտականություններ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՏԱԼԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Պատրիկների և պլեբեյների պայքարը մերթընդմերթ ընդմիջվում էր Հռոմի վարած մշտական պատերազմների պատճառով: Հռոմի բնակչությունը անընդհատ աճում էր, և հռոմեացիները հաճախ էին պատերազմում

հարևան ***էտրուսկների, լատինների, սամնիտների ցեղերի*** դեմ՝ նրանց տարածքները գրավելու համար: Պարտվածներից հռոմեացիները խլում էին նրանց վարելահողերի և արոտավայրերի կեսից ավելին և այն հայտարարում ***«հասարակական հող»:*** Դրանից հողաբաժիններ էին ստանում սակավահող հռոմեացիները և նորաստեղծ ընտանիքները: Այդ նվաճումները ձեռնտու էին Հռոմի և՛ պատրիկներին, և՛ պլեբեյներին, ուստի նրանց միջև պայքարը հաճախ ընդմիջվում էր:

Սակայն Հռոմը շուտով ծանր հարձակման ենթարկվեց: Հյուսիսից Իտալիա ներխուժեցին ***գալլերի ցեղերը***: ***Ք.ծ.ա. 390 թ.*** գալլերը գրավեցին և թալանեցին Հռոմը: Հռոմեացիները ամրացան Կապիտոլիում բլրի միջնաբերդում, որը գալլերը գրավել չկարողացան, և հեռացան միայն մեծ փրկագին ստանալուց հետո:

2

Որոշ ժամանակ անց, ուժերը վերականգնելով և դաշինք կնքելով լատինական ցեղերի հետ, Հռոմը գալլերին հետ մղեց հյուսիսային Իտալիա և հպատակեցրեց: Ք.ծ.ա. IV դ. վերջին, հպատակեցնելով նախկին դաշնակից լատիններին, Հռոմը տիրացավ և Միջին Իտալիային:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Պատրիկների և պլեբեյների պայքարի արդյունքում ձևավորվեց Հռոմեական պետության կառավարման յուրահատուկ կարգը, որը ***համապատասխանում էր կառավարման արիստոկրատական և դեմոկրատական ձևերը:***

Պետության բարձրագույն մարմինը ***Ժողովրդական ժողովն*** էր: Ժողովին մասնակցում էին բոլոր չափահաս քաղաքացիները: Ժողովն էր ընտրում բոլոր պետական պաշտոնյաներին: Այն հրավիրվում էր ըստ անհրաժեշտության, բայց առնվազն ամիսը 1–2 անգամ:

Մշտապես գործող պետական մարմինը ***300 հոգուց բաղկացած Սենատն*** էր: Նրա անդամ կարող էին ընտրվել միայն ***նոբիլները՝*** ամենահարուստ քաղաքացիները, որոնք մինչ այդ պետական պաշտոն էին վարել: Սենատը նախապես քննում էր բոլոր կարևոր հարցերը, կայացնում որոշում, ապա այն ներկայացնում Ժողովրդական ժողովին, որը կարող էր այդ որոշումը միայն մերժել կամ հաստատել: Սենատը դեսպանություններ էր ուղարկում և ընդունում, տնօրինում էր պետական գանձարանը, հավաքագրում էր բանակը, ***պատերազմ էր հայտարարում և հաշտություն կնքում:*** Արտակարգ դեպքերում, երբ պետությանը լուրջ վտանգ էր սպառնում, Սենատը նշանակում էր ***դիկտատոր՝ 6 ամիս ժամկետով:*** Այդ ընթացքում բոլոր պաշտոնյաները պարտավոր էին ենթարկվել դիկտատորի հրամաններին:

Բոլոր պետական ***պաշտոնները զույգ էին, ընտրվում էին 1 տարով:*** Պաշտոնյաներից ավագը ***կոնսուլներն*** էին, նրանք կառավարում էին պե-

տությունը և բանակը, հրավիրում էին Սենատի նիստ և Ժողովրդական ժողով: ***Պրեպորները*** վարում էին դատական գործերը, անհրաժեշտության դեպքում փոխարինում էին կոնսուլներին: ***Քվեսպորները*** (գանձապահները) հետևում էին հարկերի և մաքսերի հավաքմանը, վարում էին պետական ծախսերը: ***Էդիլները*** հետևում էին քաղաքում կարգ ու կանոնին, ձերբակալում և պատժում հանցագործներին: ***Ժողովրդական տրիբունները*** պաշտպանում էին պլեբսի իրավունքները:

Հռոմում պետական պաշտոն վարելն անվճար էր և մեծ ծախսեր էր պահանջում: Յուրաքանչյուր պաշտոնյայի ենթակայության տակ աշխատում էին գրագիրներ, թիկնապահներ, այլ ծառայողներ, որոնց նա պետք է ոռճիկ վճարեր սեփական միջոցներից:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Հռոմեացիների հաջողությունները պայմանավորված էին նրանց ստեղծած կարգապահ, մարտունակ բանակով: Բանակում պարտավոր էին ծառայել 17–60 տարեկան բոլոր տղամարդիկ: Հռոմի բանակը կազմված էր մի քանի ***լեգեոններից:*** Լեգեոնում կար **4500 զինվոր:** Լեգեոներները հատուկ ռազմական վարժանք էին անցնում, ենթարկվում էին խիստ կարգապահության: Լեգեոները կրում էր կաշվե զրահ, սաղավարտ, զինված էր կարճ սրով և դաշույնով, ուղղանկյուն վահանով և նետելու նիզակով:

3

Նոր բառեր և հասկացություններ՝ *«հասարակական դաշտ», ժողովրդական տրիբուն, նոբիլիտետ, պլեբս, պրեպոր, քվեսպոր, էդիլ, լեգեոն, դիկտատոր:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին պատրիկների և պլեբեյների պայքարի պատճառները:
2. Ե՞րբ ավարտվեց պատրիկների և պլեբեյների պայքարը: Որո՞նք էին այդ պայքարի արդյունքները: Ձեր կարծիքով կարելի՞ է արդյոք բավարար համարել այն, ինչի հասան պլեբեյները: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
3. Բնութագրե՛ք Հռոմեական հանրապետության կառավարման կարգը: Նշե՛ք հանրապետության կարևոր պետական մարմինները և պաշտոնները:
4. Նկարագրե՛ք Հռոմեական բանակը: Ի՞նչ կարող եք ասել նրա մարտունակության մասին: Ձեր կարծիքով ի՞նչ նմանություն և տարբերություն կար մակեդոնական ֆալանգի և հռոմեական լեգեոնի միջև: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը

Թեստ. Մշտապես գործող պետական կարևորագույն մարմինը Հռոմում կոչվում էր.

ա) Արքունիք
բ) Սենատ
գ) Ժողովրդական ժողով
դ) Տրիբունալ

§ 25. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ԻՏԱԼԻԱՅԻ ՀՊԱՏԱԿԵՑՈՒՄԸ

1

Հիմնադրման պահից սկսած՝ Հռոմը մշտապես պատերազմներ է վարել իր հարևանների տարածքները զավթելու համար: Արդեն ***Ք.ծ.ա. IV դարի վերջին հաղթական պատերազմների արդյունքում Հռոմը փիրացավ կենտրոնական և հյուսիսային Իտալիային,*** հպատակեցրեց գալլերին, էտրուսկներին, լատիններին և իտալիկյան այլ ցեղերի: Դրանից հետո Հռոմը ձեռնամուխ եղավ Հարավային Իտալիայի հունական պոլիսների նվաճմանը:

Իտալիայի հունական պոլիսները օգնություն խնդրեցին հունական ***Էպիրոսի թագավոր Պյուռոսից: Ք.ծ.ա. 280 թ***. Պյուռոսը սկզբում մի քանի հաղթանակ տարավ հռոմեացիների դեմ, բայց ի վերջո հռոմեացիների հետ հաշտություն կնքեց և հեռացավ Իտալիայից:

Ք.ծ.ա. III դարի կեսին Հռոմը հպատակեցրեց նաև հարավային Իտալիան: Շարքային քաղաք-պետությունից այն դարձավ Միջերկրածովյան ուժեղ պետություններից մեկը:

Իտալիայի նվաճումը չբերեց միասնական պետության ստեղծմանը: Իտալիայում ձևավորվեց ***կոնֆեդերացիա՝ համադաշնություն,*** Հռոմի գլխավորությամբ**:** Նվաճված քաղաքները և ցեղերը գտնվում էին Հռոմից տարբեր աստիճանի կախվածության մեջ, ունեին տարբեր իրավունքներ: Դա համադաշնության անդամների միջև առաջ էր բերում նախանձ, անվստահություն, թշնամանք և խանգարում էր ընդդեմ Հռոմի միավորվելուն:

ՊՈՒՆԻԿՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

2

Ք.ծ.ա. III դ. կեսերին Հռոմը պատերազմներ վարեց Կարթագենի դեմ հացառատ Սիցիլիա կղզուն տիրելու համար: Հռոմեացիները կարթագենացիներին անվանում էին ***պուններ***, ուստի նրանց միջև սկսված բախումը կոչվեց ***պունիկյան պատերազմ:***

Պունիկյան I պատերազմը տևեց 20 տարուց ավելի: Կարթագենը պարտվեց, կորցրեց Սիցիլիան և ստիպված եղավ Հռոմին մեծ ռազմատուգանք վճարել:

Որոշ ժամանակ անց Կարթագենը վերականգնեց տնտեսությունը, կառուցեց նոր նավատորմ: Կարթագենացիները գրավեցին Իսպանիան**,** տեղական ցեղե-

3

ից կազմեցին ուժեղ բանակ, որի հրամանատարը դարձավ տաղանդավոր զորավար ***Հաննիբալը:***

Ք.ծ.ա. 218 – 201 տեղի ունեցավ ***Պունիկյան II պատերազմը: Պունիկյան II պատերազմն ավարտվեց Կարթագենի պարտությամբ:*** Այն դարձավ Հռոմից կախյալ պետություն: Հռոմեացիների ձեռքը չընկնելու համար Հաննիբալը ստիպված էր Կարթագենից հեռանալ:

ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Ք.ծ.ա. 200 թ. Հռոմը պատերազմ հայտարարեց Մակեդոնիային: Հունաստանի պոլիսները Մակեդոնիայի տիրապետությունից ազատագրելու պատրվակով հռոմեական զորքերը ափ իջան Բալկանյան թերակղզում: Մակեդոնիան պարտություն կրեց:

Հույները շուտով զգացին Հռոմի բերած «ազատության» արժեքը: Հռոմը սկսեց միջամտել պոլիսների ներքին գործերին: Այդժամ Հունաստանի պոլիսները օգնություն խնդրեցին Սելևկյան արքա ***Անտիոքոս III-ից,*** որը մեծ բանակով մտավ Հունաստան:

4

Անտիոքոսի դեմ ուղարկվեց հռոմեական բանակ զորավար ***Սցիպիոնի*** ղեկավարությամբ: Հռոմեացիներին օգնում էին հելլենիստական պետություններ Հռոդոսը և Պերգամը: Մակեդոնիան, հռոմեական դիվանագիտության ջանքերով մնաց չեզոք: ***Ք.ծ.ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում*** հռոմեացիները ջախջախեցին Անտիոքոս III-ի բանակը:

Հռոմեացիները անխնա թալանեցին պարտված երկրների հարստությունները: Ավարի հիմնական մասը բաժին էր հասնում Հռոմեական պետությանը: Մեծ հարստության էին տիրանում զորավարները, ավարից բաժին էին ստանում և զինվորները: Ռազմագերիներին վաճառում էին ստրկության:

ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Հռոմը կարողացավ մրցակիցներին հաղթել իր քաղաքացիների համախմբվածության, ուժեղ, կարգապահ բանակի և ճկուն դիվանագիտության շնորհիվ: Դիվանագիտության սկզբունքն էր՝ ***«Բաժանիր և տիրիր»:*** Հռոմը ամեն կերպ իր մրցակիցներին իրար հետ թշնամացնում էր, կռվեցնում, ապա դաշնակցում էր և օգնում թույլ կողմին: Հակառակորդին համատեղ հաղթելուց հետո Հռոմը, ի վերջո, իրեն էր ենթարկում և նախկին դաշնակիցներին:

Իտալիայից դուրս բոլոր նվաճված մարզերը վերածվեցին Հռոմի գաղութների: Հռոմեացիները դրանք անվանում էին ***պրովինցիա՝*** «պարտված երկիր»: Բնակչության վրա դրվում էին ծանր հարկեր: Պրովինցիաների կառավարումը 1 տարով հանձնարարվում էր պաշտոնավարման ժամկետը լրացած կոնսուլներին և պրետորներին:

Մինչև Ք.ծ.ա. II դարի վերջը Հռոմը նորանոր պրովինցիաներ նվաճեց Իսպանիայում և Աֆրիկայում: Ապա հռոմեացիները սկսեցին պրովինցիաների վերածել նաև նախկին դաշնակից երկրները: ***Ք.ծ.ա. 133 թ.*** Պերգամի թագավորությունը վերածվեց պրովինցիայի՝ ***Ասիա*** անունով: Պրովինցիայի վերածվեց և ***Կիլիկիայի արևմտյան*** մասը:

Ք.ծ.ա. II դարի վերջին Հռոմը դարձավ միջերկրածովյան ամենահզոր պետությունը: Հռոմի ազդեցության տակ էին Եգիպտոսը և Սելևկյան պետությունը, Հռոդոսը, Բութանիան, Պաֆլագոնիան, Կապադովկիան և այլն:

Նոր բառեր և հասկացություններ՝ *կոնֆեդերացիա/համադաշնություն, պուններ, պունիկյան պատերազմ, պրովինցիա, դիկտատոր, «Պյուռոսյան հաղթանակ»:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին Պունիկյան պատերազմների պատճառները: Ինչ նպատակներ էին հետապնդում Կարթագենը և Հռոմը այդ պատերազմներում:
2. Ինչ էին դարձնում հռոմեացիները Իտալիայից դուրս նվաճած ընդարձակ տարածքները և երկրները: Ինչպես էին կառավարվում այդ երկրները: Նկարագրեք նվաճված երկրների դրությունը: Ինչ հետևություններ կարող եք անել:
3. Թվարկեք Ք.ծ.ա. 2-րդ դարում Հռոմի նվաճած երկրները: Նկարագրեք Մագնեսիայի ճակատամարտի նշանակությունը Հայաստանի համար:

§ 26. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՈՒՆԵԶՐԿՈՒՄԸ

Հռոմեական նոբիլները, տիրելով Իտալիայի լավագույն հողերին, ստեղծել էին խոշոր կալվածքներ՝ ***վիլլաներ,*** որտեղ ստրուկների աշխատանքով արտադրվում էին էժան հացահատիկ և կաթնամթերք: Քաղաքներում հարուստ ***հեծյալները*** ստեղծել էին խոշոր արհեստանոցներ, որոնցում ստրուկների էժան աշխատանքով արտադրվում էին մեծ քանակով ամանեղեն, կտորեղեն, կոշկեղեն և այլ ապրանքներ: Այդ էժան ապրանքների հետ հռոմեացի գյուղացու և արհեստավորի արտադրանքը չէր կարողանում մրցակցել:

Բանակում ծառայելը հող կամ այլ սեփականություն ունեցող յուրաքանչյուր հռոմեացու պարտականությունն էր: Պատերազմի զորակոչվելով՝ հռոմեացի գյուղացիները և արհեստավորները կտրվում էին իրենց գործից, պարտքերի տակ ընկնում, ստիպված էին լինում պարտքի դիմաց վաճառել իրենց հողակտորը կամ արհեստանոցը: Հողազրկված գյուղացիները, ապրուստ որոնելով, զանգվածաբար կենտրոնանում էին քաղաքներում, հատկապես՝ Հռոմում: Աճում էր քաղաքային պլեբսի թիվը: Ունեզրկված քաղաքացիները պետությունից պահանջում էին իրենց համար ապրուստ ապահովել:

Իտալիայում աստիճանաբար վերանում էր ***մանր սեփականատերերի խավը***, պակասում էր զինակոչի ենթակա մարդկանց թիվը: Դրա հետևանքով թուլանում էր բանակը՝ Հռոմի ռազմական հզորության հիմքը: ***Ք.ծ.ա. II դ. վերջին Հռոմեական պետությունը հայտնվեց ճգնաժամային իրավիճակում:***

ԳՐԱԿՔՈՄՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Ստեղծված ճգնաժամից ելք որոնելով՝ պետական որոշ գործիչներ առաջարկում էին վերականգնել ազատ գյուղացիությունը՝ հողազրկված գյուղացիներին պետության հաշվին հատկացնելով նոր հողաբաժիններ՝ առանց դրանք վաճառելու իրավունքի:

Ք.ծ.ա. II դ. վերջին Տիբերիոս և Գայոս Գրակքոս եղբայրները, մեկ տասնամյակի տարբերությամբ ընտրվելով ժողովրդական տրիբուն, քայլեր ձեռնարկեցին հողազուրկ գյուղացիներին Իտալիայում և պրովինցիաներում պետության կողմից հողաբաժիններ հատկացնելու ուղղությամբ: ***«Անգամ վայրի գազաններն Իտալիայում իրենց որջն ունեն, իսկ դուք, որ կռվում և մեռնում եք Իտալիայի համար, չունեք ո՛չ տուն, ո՛չ էլ ապրուստ»,***– ասում էր ժողովրդին Տիբերիոսը: Գայոսի հեղինակած

օրենքով պետությունը սկսեց Հռոմի աղքատ քաղաքացիներին պարբերաբար ***անվճար հաց բաշխել:***

Հռոմեական նոբիլները և հեծյալները ամեն կերպ խանգարեցին Գրակքոսների փորձերը՝ սահմանափակելու խոշոր հողատիրության և արհեստագործության աճը: Հռոմում հրահրված անկարգությունների ժամանակ սպանվեց Տիբերիոս Գրակքոսը, իսկ 10 տարի անց սպանեցին նաև Գայոսին՝ մեղադրելով միանձնյա իշխանության ձգտելու մեջ:

Գրակքոսների բարեփոխումները նպատակին չհասան. ***Իտալիայում վերականգնել մանր հողատիրությունը հնարավոր չէր:*** Պետությունից ստացած հողաբաժինները մարդիկ, ի վերջո, վաճառում էին և գերադասում ձրի հաց ստանալով՝ ապրել պետության հաշվին:

ԲԱՆԱԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ

Ք.ծ.ա. II դարի վերջին Հռոմը սկսեց ռազմական պարտություններ կրել: Կտրուկ նվազեց Իտալիա բերվող ռազմագերի ստրուկների քանակը, պակասեցին ստրկատեր վերնախավի եկամուտները:

1

Բանակը ուժեղացնելու համար ***Ք.ծ.ա. 107 թ. կոնսուլ Գայոս Մարիուսի նախաձեռնությամբ իրականացվեց բանակի բարեփոխում:*** Բանակում թույլատրվեց ծառայել սեփականություն չունեցող հռոմեացիներին, ինչպես նաև իտալիկներին: Փոփոխվեցին լեգեոնի կառուցվածքը և մարտավարությունը: ***Ք.ծ.ա. 90 թ. դաշնակիցների ճնշմամբ Սենատը բոլոր իտալիկներին ճանաչեց հռոմեական քաղաքացիներ:*** Սա ևս կարևոր քայլ էր բանակը ուժեղացնելու ուղղությամբ:

ՍՈՒԼԼԱՅԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

2

Մինչ Հռոմը զբաղված էր ներքին խնդիրներով, Ք.ծ.ա. I դ. սկզբին ***Պոնտոսի արքա Միհրդատ VI Եվպատորը,*** կազմելով ուժեղ բանակ և նավատորմ, գրավեց Փոքր Ասիայի հռոմեական պրովինցիաները և դաշնակից երկրները, Հունաստանը, Էգեյան ծովի կղզիները և Մակեդոնիան: Թիկունքն ապահովելու համար Միհրդատը դաշինք էր կնքել և խնամիացել Հայոց արքա Տիգրան II-ի հետ:

Միհրդատի դեմ Հռոմը ուժեղ բանակ ուղարկեց՝ զորավար ***Կոռնելիոս Սուլլայի*** ղեկավարությամբ: Միհրդատը պարտվեց և ստիպված էր հաշտություն կնքել ու վճարել ռազմատուգանք:

3

Սուլլան պատերազմի ավարից և ռազմատուգանքից լավ վարձատրեց իր բանակի զինվորներին և իր հաղթական բանակով վերադարձավ Իտալիա: Սենատը Սուլլային զրկեց հրամանատարի պաշտոնից, բայց նա օրենքին չենթարկվեց: ***Ք.ծ.ա. 82 թ. նրա բանակը գրավեց Հռոմը և թալանեց ինչպես մի թշնամական քաղաք: Զինվորներով շրջա-***

պատված սարսափահար սենատորները, խախտելով օրենքը, Սուլլային հռչակեցին ցմահ դիկտատոր: Մի քանի տարի անց Սուլլան, հիվանդ լինելով, հրաժարվեց դիկտատորի պաշտոնից և շուտով մահացավ: Սուլլայի մենիշխանության հաստատումը ևս մի փորձ էր՝ հաղթահարելու Հռոմում ստեղծված ճգնաժամային իրավիճակը:



Կոռնելիոս Սուլլա

ՍՊԱՐՏԱԿԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմի յուրաքանչյուր հաղթական պատերազմից հետո Իտալիայում ավելանում էր ռազմագերի ստրուկների թիվը: Ք.ծ.ա. I դարում ստրուկների թվաքանակը արդեն մի քանի անգամ գերազանցում էր Իտալիայի ազատ բնակչության թիվը:

Ստրուկներին աշխատեցնում էին հանքերում, արհեստների և գյուղատնտեսության մեջ: Ճարպիկ և ուժեղ ստրուկներին հատուկ դպրոցներում վարժեցնում էին իրար դեմ կռվելու համար, դարձնում ***գլադիատորներ:*** Գլադիատորական մարտերը հռոմեացիների սիրած զվարճություններից էին: Իտալիայում նման շատ դպրոցներ կային:

Ստրուկները հաճախ էին ապստամբում՝ ձգտելով ազատություն ստանալ: Ստրուկների ամենահզոր ապստամբությունը տեղի ունեցավ ***Ք.ծ.ա. 74–71 թթ. Իտալիայում՝ Սպարտակի ղեկավարությամբ:*** Հռոմը ***Մարկոս Կրասոսի*** ղեկավարությամբ մեծ բանակ հանեց Սպարտակի դեմ: Վճռական մարտում ապստամբները պարտվեցին, Սպարտակը զոհվեց: Ողջ մնացած ստրուկներին խաչեցին Հռոմ տանող ճանապարհի երկարությամբ:

4

Սպարտակի ապստամբությունը ևս մեկ ապացույց էր, որ Հռոմեական հանրապետության ճգնաժամը գնալով խորանում էր:

Նոր բառեր և հասկացություններ՝ *վիլլա, գյուղացիության ունեզրկում, հողային բարեփոխում, ռազմական բարեփոխում, դիկտատուրա, գլադիատոր, գլադիատորական դպրոց:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էր քայքայվում գյուղացիությունը Իտալիայում: Ինչո՞ւ քայքայված և ունեզրկված գյուղացիության համար դժվար էր քաղաքում աշխատանք գտնելը:
2. Ինչո՞ւ Հռոմում առաջացավ հողային բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը: Ո՞վ հանդես եկավ հողային օրենք ընդունելու նախաձեռնությամբ:
3. Ո՞վ է Գայոս Մարիուսը, ի՞նչ բարեփոխում անցկացրեց նա, ո՞րն էր դրա էությունը:
4. Ո՞վ էր Սուլլան, ինչպե՞ս նա դարձավ դիկտատոր: Ի՞նչ փոփոխություններ նա մտցրեց Հռոմեական հանրապետության կառավարման կարգի մեջ:
5. Ե՞րբ է տեղի ունեցել ստրուկների ապստամբությունը Սպարտակի գլխավորությամբ:

§ 27. ՊԱՅՔԱՐԸ ՀՌՈՄՈՒՄ ՄԵՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ԵՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ք.ծ.ա. I դարի կեսին Հռոմը վերածվել էր հսկայածավալ կայսրության: Պետության սահմանները ձգվում էին Իսպանիայից մինչև Հայաստան: Ընդարձակ տերությունը կառավարելու, կարգ ու կանոն ապահովելու համար զգացվում էր միանձնյա, ուժեղ իշխանություն ունենալու անհրաժեշտություն: Սուլլայի դիկտատուրան օրինակ դարձավ իշխանատենչ այլ մարդկանց համար:

Հռոմում իշխանության համար պայքարում էին 3 նշանավոր գործիչներ՝ անվանի զորավար ***Գնեոս Պոմպեոսը,*** Հռոմի ամենահարուստ մարդը՝ ***Մարկոս Կրասոսը,*** Հռոմի ամենաժողովրդական մարդը, պլեբսի սիրելին՝ ***Հուլիոս Կեսարը:*** Երեքն էլ ձգտում էին միանձնյա իշխանության, բայց յուրաքանչյուրին ինչ-որ բան պակասում էր: Կրասոսը երազում էր զորավարի փառք ձեռք բերել, Պոմպեոսը՝ պլեբսի սիրելին լինել, իսկ Կեսարն ուզում էր և՛ հարուստ լինել, և՛ իրեն նվիրված բանակ ունենալ:

Ք.ծ.ա. 60 թ. Կեսարը, Պոմպեոսը և Կրասոսը կնքեցին գաղտնի դաշինք իրար չխանգարելու, իրենց նպատակներին հասնելու համար: Այսուհետև Հռոմում բոլոր կարևոր հարցերը որոշում էին այս երեքը: Սա 3 մարդու իշխանություն էր՝ ***եռապետություն:*** Սենատում և Ժողովրդական ժողովում նրանք իրենց կողմնակիցների օգնությամբ ընդունել էին տալիս իրենց հարմար որոշումներ: Կեսարին օգնեցին ընտրվելու կոնսուլ, իսկ նա օգնեց, որ պետությունը Պոմպեոսի վետերաններին հողաբաժիններ տա Իտալիայում: Հաջորդ տարի 3-ի ջանքերով Կրասոսը և Պոմպեոսը կոնսուլներ ընտրվեցին, իսկ Կեսարը նշանակվեց Գալլիա պրովինցիայի կառավարիչ: Կեսարը իրավունք ստացավ զորք հավաքելու և մի քանի տարի պատերազմելով՝ նվաճեց ողջ Գալլիան: Հռոմը ձեռք բերեց երեք նոր պրովինցիաներ, իսկ Կեսարը տիրացավ մեծ հարստության, զորավարի փառք ձեռք բերեց և ստեղծեց կոփված ու հավատարիմ բանակ:

Մարկոս Կրասոս

Եռապետների միացյալ ջանքերով Պոմպեոսը նշանակվեց Իսպանիա պրովինցիայի, իսկ Կրասոսը՝ Սիրիա պրովինցիայի կառավարիչ: Իրավունք ստանալով պատերազմ վարելու՝ նա մեծ բանակով ներխուժեց Պարթևստան: Սակայն Ք.ծ.ա. 53 թ. հռոմեական բանակը պարտվեց, Կրասոսն էլ սպանվեց:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿԵՍԱՐԻ ԵՎ ՊՈՄՊԵՈՍԻ ՄԻՋԵՎ

Կրասոսի մահից հետո Կեսարի և Պոմպեոսի միջև իշխանության համար պայքարը սրվեց: Սենատը պատրաստվում էր դիկտատոր հռչակելու Պոմպեոսին: Կեսարը որոշեց դիմել զենքի: ***Ք.ծ.ա. 49 թ. իր բանակով անցնելով Իտալիայի սահման Ռուբիկոն գետը՝*** Կեսարը շարժվեց դեպի Հռոմ: Պոմպեոսը փախավ: Զինվորներով շրջապատված Սենատը ստիպված էր Հուլիոս Կեսարին հռչակել դիկտատոր:

Կեսարը Հռոմում պետական պաշտոնների նշանակեց իրեն հավատարիմ մարդկանց և մեծ բանակով շարժվեց Պոմպեոսի դեմ: ***Ք.ծ.ա. 47 թ. Հունաստանում Կեսարը փայլուն հաղթանակ տարավ:*** Պարտված Պոմպեոսը փախավ Եգիպտոս, որտեղ էլ սպանվեց: Կեսարը անցավ Փոքր Ասիա, կարգավորեց այստեղ հռոմեական պրովինցիաների գործերը: Նա հաղթեց Փառնակ թագավորին և այս մասին շատ կարճ նամակ գրեց Սենատին՝ ***«Եկա, տեսա, հաղթեցի»:***

Կեսարը ստիպված էր դեռ մի քանի տարի պատերազմել Պոմպեոսի կողմնակիցների դեմ Աֆրիկայում և Իսպանիայում: Բոլոր թշնամիներին հաղթելուց հետո միայն Կեսարը վերադարձավ Հռոմ:

ԿԵՍԱՐԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Ք.ծ.ա. 46 թ. Սենատը Կեսարին հռչակեց ցմահ դիկտատոր: Կեսարը փաստորեն դարձավ Հռոմի չթագադրված թագավորը: Նա ղեկավարում էր Սենատի նիստերը և հռոմեական բանակի հրամանատարն էր, նշանակում էր պետական պաշտոնյաներին և պրովինցիաների կառավարիչներին: Իր բանակի վետերաններին նա հողաբաժիններ հատկացրեց Իտալիայում, պետական պաշտոններում նշանակում էր իր զինակիցներին: ***Հռոմում հաստատվել էր փաստացի մենիշխանություն:***



Նոբիլիտետը դժգոհ էր մենիշխանության հաստատումից: Նախկինում նոբիլներն իրենք էին ընտրվում բարձրագույն պաշտոններում, իրենք էին կառավարում պետությունը: Այժմ արդեն պետական պաշտոնյաներին նշանակում էր դիկտատորը՝ իր մտերիմներից: Նոբիլները Բրուտոսի գլխավորությամբ Կեսարի դեմ դավադրություն կազմակերպեցին: ***Ք.ծ.ա. 44 թ. Սենատի նիստի ժամանակ դավադիրները սպանեցին Կեսարին:*** Հռոմում մենիշխանություն հաստատելու առաջին փորձը հաջողություն չունեցավ:

ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Դավադիրները կարծում էին, որ Հռոմում բոլորն ուրախ կլինեն հանրապետությունը վերականգնելու համար: Սակայն հռոմեական պլեբսը նրանց չպաշտպանեց: Հասարակ քաղաքացիների համար միևնույն էր, թե ով կղեկավարի պետությունը՝ մեկ մարդ, թե մի խումբ ընտրովի նոբիլներ: Իսկ Կեսարի կողմնակիցները Կեսարի վետերաններից բանակ հավաքեցին և պայքար սկսեցին հանրապետականների դեմ:

Կեսարականներին ղեկավարում էին նրա զինակիցներ ***Անտոնիոսը, Լեպիդոսը*** և Կեսարի քրոջ թոռը՝ ***Օկտավիանոսը,*** ում Կեսարը որդեգրել էր և հայտարարել իր ժառանգը: Կեսարին թաղեցին արքայավայել: Դավադիրները Հռոմից փախան:

Կեսարականների զորքերը գրավեցին Հռոմը, ապա և ողջ Իտալիան: Նրանք կազմեցին ***«Սև ցուցակներ»***՝ ընդգրկելով իրենց թշնամիների անունները: Նման մարդկանց սպանում էին, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավում: Կեսարականների զորքերը ջախջախեցին հանրապետականների բանակը: Դավադիրները ինքնասպան եղան:

Ք.ծ.ա. 43 թ. Անտոնիոսը, Լեպիդոսը և Օկտավիանոսը կազմեցին Երկրորդ եռապետությունը և իրար միջև բաժանեցին հռոմեական պետության կառավարումը: Անտոնիոսը կառավարում էր արևելյան, Օկտավիանոսը՝ արևմտյան, իսկ Լեպիդոսը՝ աֆրիկյան պրովինցիաները:

Նոր բառեր և հասկացություններ՝ *եռապետություն, մենիշխանություն, «անցնել Ռուբիկոնը», «Եվ դու, Բրուտոս», «Եկա, տեսա, հաղթեցի»:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ձեր կարծիքով ինչո՞ւ Հռոմում միանձյա ուժեղ իշխանության անհրաժեշտություն առաջացավ: Ովքե՞ր էին Ք.ա. 1-ին դարի կեսին պայքարում իշխանության համար, ի՞նչը ստիպեց նրանց գաղտնի դաշինք կնքել և ստեղծել առաջին եռապետությունը:
2. Ի՞նչ ընթացք ունեցավ Կրասոսի արշավանքը Պարթևստանի դեմ: Ինչո՞վ վերջացավ քաղաքացիական պատերազմը Հուլիոս Կեսարի և Պոմպեոսի միջև:
3. Ձեր կարծիքով ինչո՞վ էր տարբերվում դիկտատոր Կեսարի իշխանությունը կոնսուլների իշխանությունից:
4. Ովքե՞ր և ինչո՞ւ էին դժգոհ Կեսարի մենիշխանությունից: Ինչպե՞ս սպանվեց Կեսարը: Ի՞նչ իրադարձություններ տեղի ունեցան Կեսարի սպանությունից հետո:

Թեստ. Հուլիոս Կեսարը Սենատի կողմից ցմահ դիկտատոր հռչակվեց.

ա) Ք.ծ.ա. 60 թ. գ) Ք.ծ.ա. 44 թ.
բ) Ք.ծ.ա. 46 թ. դ) Ք.ծ.ա. 31 թ.

§ 28. ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀՌՈՄՈՒՄ

ԱՆՏՈՆԻՈՍԻ ԵՎ ՕԿՏԱՎԻԱՆՈՍԻ ՄՐՑԱՊԱՅՔԱՐԸ

Եռապետներից ամեն մեկը երազում էր դառնալ Հռոմեական պետության միանձնյա տիրակալը: Մենիշխանության համար պայքարը նրանց միջև շարունակվեց: Հանրապետականներին հաղթելուց մի քանի տարի անց Օկտավիանոսը հաղթեց Լեպիդոսին և նրան զրկեց իշխանությունից: Իսկ Անտոնիոսը և Օկտավիանոսը երկար տարիներ առերևույթ հաշտություն էին պահպանում, սակայն ուժեր էին կուտակում վճռական պայքարի համար:



Պայքարը մենիշխանության համար, ի վերջո, վերածվեց քաղաքացիական պատերազմի Անտոնիոսի և Օկտավիանոսի միջև: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ ***Հունաստանում՝ Ակցիում հրվանդանի մոտ Ք.ծ.ա. 30 թ.:*** Ծովամարտում Անտոնիոսի նավատորմը պարտվեց, ինքը փախավ Եգիպտոս: Նրա բանակն անցավ Օկտավիանոսի կողմը: Եգիպտոսը առանց կռվի հանձնվեց հաղթողին, իսկ Անտոնիոսն ինքնասպան եղավ:

Օկտավիանոսը այսպիսով դարձավ Հռոմի միանձնյա տիրակալը:

ՕԳՈՍՏՈՍԻ ՊՐԻՆՑԻՊԱՏԸ

Զգուշավոր և հեռատես Օկտավիանոսը իր հաղթանակը տոնելուց հետո հայտարարեց, որ հրաժարվում է միանձնյա իշխանությունից և վերականգնում

է հանրապետությունը Հռոմում: Իրականում Օկտավիանոսը բնավ մտադիր չէր իշխանությունից հրաժարվել, բայց հիշելով Կեսարի ճակատագիրը՝ ցանկանում էր, որ պետական իշխանությունը իրեն տրվի օրինական կարգով: Հռոմեական Սենատը ստիպված էր «խնդրել» Օկտավիանոսին չլքել պետությունը դժվարին պահին և շարունակել այն կառավարել:

Հանրապետությունը Հռոմում ձևականորեն պահպանվեց: Առաջվա պես ամեն տարի «ընտրվում» էին պետական պաշտոնյաներ, ընդ որում՝ դրանց կեսը Օգոստոսի կողմից առաջադրվող թեկնածուներն էին: Սահմանամերձ, կարևոր պրովինցիաների կառավարիչներին նշանակում էր Օգոստոսը, մյուսներինը՝ Սենատը: Պրովինցիաներից ստացված հարկերի կեսը տնօրինում էր Սենատը, մյուս կեսը՝ Օգոստոսը: Օգոստոսի ստեղծած կառավարման այս նոր կարգն անվանում ենք ***պրինցիպատ: Իրականում պրինցիպատը հանրապետության տեսքով քողարկված միապետություն էր:***

ՕԳՈՍՏՈՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսը դարձավ Հռոմի առաջին կայսրը: Նա կառավարեց Ք.ծ.ա. 30 թվականից մինչև Ք.ծ.հ. 14 թվականը: Նրա կառավարման ընթացքում Հռոմեական տերությունը նոր տարածքներ նվաճեց: Կայսրության սահմաններն այժմ արդեն ներառում էին ողջ հյուսիսային Աֆրիկան, անցնում Ատլանտյան օվկիանոսով, Հռենոս և Դանուբ գետերով, արևելքում՝ Եփրատ գետով:

Միակ պետությունը Մերձավոր Արևելքում, որը Հռոմը նվաճել չկարողացավ, Պարթևստանն էր: Բացի դրանից, Արտաշես II-ը՝ Արտավազդ II-ի որդին, Ք.ծ.ա. 30 թ. Պարթևստանի օգնությամբ վերականգնել էր Հայաստանի անկախությունը: Հայաստանի և Պարթևստանի դաշինքը ուղղակի սպառնալիք էր Հռոմի արևելյան պրովինցիաների համար: Վտանգը վերացնելու նպատակով, Ք.ծ.ա. 20 թ. Օգոստոս կայսրը մեծ բանակով եկավ Սիրիա: Պատերազմի սպառնալիքը ստիպեց Պարթևստանին Հռոմի հետ հաշտություն կնքել և հրաժարվել Հայաստանի հետ դաշինքից: Արտաշես II-ի դավադրական սպանությունից հետո Հռոմը Հայոց գահին հաստատեց նրա եղբորը՝ ***Տիգրան III-ին***, որը մինչ այդ պատանդ էր Հռոմում: Այսպիսով՝ ***Հայաստանը հայտնվեց Հռոմի ազդեցության ոլորտում*** և այլևս վտանգ չէր ներկայացնում:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Կայսերական իշխանության հաստատումը ամրապնդեց պետության կայունությունը և միասնությունը, ինչը ձեռնտու էր Հռոմի և պրովինցիաների ստրկատերերին:

Օգոստոսի հաստատած կառավարման միապետական կարգը պահպանվեց և նրա մահվանից հետո: ***Կայսրերը իշխանությունը ստանում էին ժառանգաբար, կամ գրավում էին զորքի օգնությամբ:*** Կայսերական ուժեղ իշխանությունը ապահովում էր Հռոմեական տերության սահմանների պաշտպանությունը, ստրկատիրական տնտեսության կայուն զարգացումը: Նոր ստրուկներ ձեռք բերելու համար կայսրերը երբեմն պատերազմներ էին վարում և տարածքներ նվաճում: I դարի վերջին հռոմեացիները նվաճեցին և պրովինցիայի վերածեցին Բրիտանիան, իսկ II դարի սկզբին ***Տրայանոս*** կայսրը տևական պատերազմից հետո պրովինցիայի վերածեց Դակիան (ներկայիս Ռումինիայի տարածքը):

3

Ստրկատիրական տնտեսությունների մրցակցությանը չդիմանալով՝ գյուղացիները և արհեստավորները շարունակաբար ունեզրկվում էին: Նրանց մի մասը ծառայության էր անցնում բանակում, շատերը հաստատվում էին Հռոմում և այլ քաղաքներում, ապրում էին պետության հաշվին, բավարարվում պատահական աշխատանքով: Պլեբսի հուզումները կանխելու համար կայսրերը աղքատներին ձրի հաց էին բաժանում, հաճախակի գլադիատորական խաղեր և այլ զվարճություններ կազմակերպում:

Հռոմեական պլեբսը իր իրավունքները պաշտպանող գիտակից քաղաքացիներից վերածվել էր չքավորների ամբոխի և կայսերական իշխանության համար լուրջ վտանգ չէր ներկայացնում:

Նոր բառեր և հասկացություններ՝ *պրինցեպս, պրինցիպատ, կայսր, քողարկված միապետություն:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր էին II եռապետության մասնակիցները, ո՞ր տարածքներն էին նրանք կառավարում:
2. Ինչո՞վ ավարտվեց Անտոնիոսի պարթևական արշավանքը և ի՞նչ հետևանքներ ունեցավ այն Հայաստանի համար:
3. Ե՞րբ և որտե՞ղ է տեղի ունեցել Ակցիումի ճակատամարտը, ով հաղթանակ տարավ:
4. Ի՞նչ տիտղոսներ էր կրում Օգոստոս-Օկտավիանոսը:
5. Ինչպե՞ս ենք անվանում Օգոստոսի ստեղծած կառավարման համակարգը:
6. Ինչպիսի՞ քաղաքականություն վարեց Օգոստոսը Հայաստանի նկատմամբ:

§ 29. ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ, ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ «ՈՍԿԵԴԱՐԸ»

Ք.ծ.ա. I դարի վերջից մինչև Ք.ծ.հ. II դարի վերջը Հռոմեական կայսրությունում հապարտվեց ներքին և արտաքին խաղաղության ու բարգավաճման տևական մի ժամանակաշրջան: Հռենոս, Դանուբ և Եփրատ գետերի ափերով կառուցված ամրությունները և սահմաններին տեղակայված կայազորները պաշտպանում էին կայսրությունը բարբարոս ցեղերի ներխուժումներից:

Պետության կառավարումը ավելի ու ավելի էր կենտրոնանում կայսեր և նրա պաշտոնյաների ձեռքում. Սենատի և ընտրովի պաշտոնների նշանակությունը գնալով ընկնում էր: Հասարակ քաղաքացիները ապրում էին պետության հաշվին՝ ձրի հաց ստանալով կամ էլ պատահական աշխատանքով:

Պլեբսին սիրաշահելու համար կայսրերը պարբերաբար կազմակերպում էին տոնակատարություններ, գլադիատորական խաղեր, անվճար հյուրասիրություններ և այլ զվարճություններ: Կայսրության բոլոր քաղաքներում, և հատկապես Հռոմում, կառուցվեցին գեղեցիկ տաճարներ, կրկեսներ, ջրմուղներ, հասարակական բաղնիքներ, այգիներ և շատրվաններ: Պետության տարածքը պատվեց բարեկարգ ճանապարհների խիտ ցանցով: Լայն շինարարությունը աշխատանքով էր ապահովում հասարակ մարդկանց:

Զարգանում էին գյուղատնտեսությունը և արհեստները: Աշխույժ առևտուր էր ընթանում կայսրության տարբեր մարզերի միջև: Մի տեղում արտադրված ապրանքները կարելի էր գնել ամենահեռավոր մարզերում անգամ: Կայուն առևտուր էր կատարվում հեռավոր Հնդկաստանի ու Չինաստանի հետ:

212 թ. հռոմեական քաղաքացի համարվելու իրավունք ստացան կայսրության բոլոր պրովինցիաների ազատ մարդիկ:

ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԳՆԱԺԱՄԸ

II դարի վերջից ստրկատիրության վրա հիմնված Հռոմեական կայսրության տնտեսությունը սկսեց թուլանալ: Ստրուկների աշխատանքը գրեթե ամբողջովին դուրս էր մղել ազատ մարդկանց աշխատանքը: Ծանր ֆիզիկական աշխատանք կատարելը ազատ մարդիկ համարում էին իրենց համար անպատվաբեր: Սակայն թուլացող կայսրությունն այլևս ի վիճակի չէր հաղթական պատերազմներ վարել և նորանոր ստրուկներ ձեռք բերել:

Աստիճանաբար կրճատվում էր մթերքների արտադրությունը: Անկում էր ապրում արհեստը: Ազատ գյուղացիների և արհեստավորների խավը աստիճանաբար վերանում էր: Պետության հաշվին անաշխատ կյանքով ապրող չքավոր մարդիկ ոչ կարիք ունեին, ոչ էլ միջոցներ ապրանքներ գնելու համար: Կրճատվում էր առևտուրը, պակասում էին և առևտրից գանձվող տուրքերն

ու մաքսային վճարները: Պետության եկամուտները գնալով նվազում էին:

Արտադրության կրճատման և առևտրի անկման հետևանքով սկսվեց սպրկատիրական տնտեսության ճգնաժամը: Իրենց վիճակից դժգոհ էին կայսրության բոլոր խավերը՝ գյուղացիները, արհեստավորները, նոբիլիտետը: Մարդկանց թվում էր, թե իրենց դրության վատթարացման մեղավորը վատ կայսրերն են, որոնք չեն կարողանում լավ կառավարել պետությունը:

Հռոմեական կայսրությունը III դարի ընթացքում հայտնվեց խոր ճգնաժամի մեջ, որն ընդգրկել էր տնտեսության և հասարակական կյանքի բոլոր ոլորտները:

ԴԻՈԿՂԵՏԻԱՆՈՍԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Ճգնաժամը հաղթահարելու համար ***Դիոկղետիանոս (284 –305)*** կայսրը Հռոմեական կայսրությունում հաստատեց կառավարման նոր կարգ՝ ***դոմինատ***: Կայսրն իր բոլոր հպատակների տերն էր՝ ***դոմինուսը***, նրա իշխանությունը դարձավ բացարձակ, նրա խոսքն այսուհետև օրենք էր: Կայսրին աստվածային պատիվներ էին մատուցվում, նրա առաջ բոլորը ծնկի էին գալիս: Պետական ոչ մի պաշտոն այլևս ընտրովի չէր, բոլորին՝ նաև Սենատի անդամներին, նշանակում էր կայսրը: Հռոմեական կայսրության դրությունը առժամանակ կայունացավ:

Բանակն ուժեղացնելու համար Դիոկղետիանոսը սահմանեց պարտադիր զինակոչային ծառայություն: Թույլատրվեց բանակում ծառայության վերցնել նաև բարբարոսներին: Մասնագիտությունները հայտարարվեցին ժառանգական՝ կոշկակարի որդին պետք է լիներ կոշկակար, հացթուխի որդին՝ հացթուխ, հողագործի որդին՝ հողագործ: Թույլատրվեց պետական հարկերն ու տուրքերը վճարել բնամթերքով:

Դիոկղետիանոսի բարեփոխումները փորձ էին հաղթահարելու ճգնաժամը՝ սպրկատիրական տնտեսությունը հարմարեցնելու նոր իրավիճակին:

Հռոմը վաղուց այլևս կայսրության տնտեսական և քաղաքական կենտրոնը չէր: Կայսրերը գերադասում էին բնակվել որևէ այլ քաղաքում: Ահա ինչու ***Կոնստանդին (305–337) կայսրը 330 թ. Բոսֆորի նեղուցի ափին հիմնադրեց նոր մայրաքաղաք՝ Կոստանդնուպոլիսը:*** Այսուհետև Հռոմեական կայսրությունն ունեցավ 2 մայրաքաղաք՝ Հռոմը և Կոստանդնուպոլիսը: Միցակցող կայսրերը հաճախ 2 մասի էին բաժանում կայսրությունը:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

2

395 թ. Հռոմեական կայսրությունը վերջնականապես բաժանվեց Արևելյան և Արևմտյան մասերի:

Թուլացած կայսրության տարածք առաջինը ներխուժեցին վեստգոթերը: Թալանելով Բալկանյան թերակղզու պրովինցիաները, ավերելով քաղաքները և ազատելով ստրուկներին՝ նրանք արշավեցին Իտալիա: ***410 թ. վեստգոթերը, Ալարիխի գլխավորությամբ, գրավեցին և թալանեցին Հռոմը:*** Այս լուրը տարածվեց աշխարհով մեկ և ոգևորեց բարբարոսական այլ ցեղերի ևս ներխուժելու Հռոմեական կայսրության տարածքները: ***455 թ. Հռոմը գրավեցին, հրկիզեցին և ավերեցին վանդալները:***

Արևմտահռոմեական կայսրությունը ձևականորեն պահպանվեց մինչև ***476 թ., երբ բարբարոս առաջնորդ Օդոակրը գահընկեց արեց վերջին կայսր Հռոմուլոս-Ավգուստուլոսին:*** Արևմտյան Հռոմեական կայսրության նախկին տարածքում առաջացան բարբարոսական թագավորություններ:

Արևելահռոմեական կայսրությունը կարողացավ դիմակայել բարբարոս ցեղերի ներխուժումներին: ***Բյուզանդական կայսրություն*** անունով այն գոյատևեց մեկ հազարամյակ ևս:

Նոր բառեր և հասկացություններ՝ *փողի արժեզրկում, դրամի կեղծում, դոմինուս, վեստգոթեր, վանդալներ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Հիշեք՝ ո՞վ հիմք դրեց հռոմեական կայսրությանը: Պլեբսին սիրաշահելու համար ի՞նչ գործունեություն ծավալեցին կայսրերը:
2. Փորձեք ապացուցել, որ կայսրության շրջանում ստրկատիրությունը Հռոմում ավելի տարածվեց ու զարգացավ: Ձեր կարծիքով որո՞նք էին դրա պատճառները: Ինչո՞վ կարելի էր բացատրել ստրուկի աշխատանքի լայն կիրառությունը տնտեսության մեջ:
3. Ձեր կարծիքով ի՞նչ փոփոխություններ կատարվեցին հռոմեական բանակում երկրորդ դարի վերջին: Ի՞նչ եք կարծում՝ Հռոմի և Իտալիայի բնակչությունը ի՞նչու էր խուսափում բանակում ծառայելուց, մի՞թե նրանք չէին սիրում իրենց հայրենիքը:
4. Փորձեք ապացուցել, որ երրորդ դարում Հռոմեական կայսրությունը ճգնաժամ էր ապրում, որո՞նք էին դրա պատճառները:
5. Ո՞վ էր Դիոկղետիանոսը: Ի՞նչ բարեփոխումներ կատարեց:
6. Ինչո՞վ էր Դիոկղետիանոսի կառավարման ձևը տարբերվում Օկտավիանոսի հաստատած պրինցիպատի համակարգից:
7. Ձեր կարծիքով որո՞նք էին Արևմտյան հռոմեական կայսրության կործանման հիմնական պատճառները: Հիմնավորեք Ձեր պատասխանը: Քանի՞ տարի գոյություն ունեցավ կայսրությունը Հռոմում:

Թեստ. Հռոմեական կայսրության նոր մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը հիմնադրվել է.
ա) 284 թ., բ) 330 թ., գ) 395 թ., դ) 410 թ.:

§ 30. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Կայսրության հաստատումով տերության ողջ տարածքում և սահմանների վրա հաստատվեց տևական խաղաղություն, ինչը նպաստեց տեխնիկական նվաճումների տարածմանը, տնտեսության ու առևտրի զարգացմանը, հասարակական ու մշակութային կյանքի ընդհանուր վերելքին:

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՈՆԸ

Հին հռոմեացիները երկրագործ ժողովուրդ էին, և նրանց կրոնական հավատալիքները կապված էին բնության ուժերի պաշտամունքի հետ: Աստվածների պատվին կառուցում էին տաճարներ, կանգնեցնում նրանց արձանները:

Հռոմեական գլխավոր աստվածների տաճարները կառուցված էին Կապիտոլիում բլրի վրա, ահա ինչու հռոմեական աստվածներին կոչում էին ***Կապիտոլիական աստվածներ***:

Հռոմեացիների համար կարևոր նշանակություն ուներ նաև իրենց ***տոհմի հովանավոր նախնիների պաշտամունքը***: Տարածված էին ***զոհաբերություններն ու գուշակությունները***:

Երբ Հռոմը տիրացավ Հունաստանի պոլիսներին, հռոմեական աստվածներին սկսեցին նմանեցնել հունական աստվածների պաշտամունքին:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2

Հռոմեացիները մեծ նշանակություն էին տալիս կրթությանը: Վերցնելով էտրուսկների գիրը՝ նրանք այն հարմարեցրին իրենց լեզվին՝ ստեղծելով ***24 տառից բաղկացած լատինական այբուբենը:*** Լատինական տառերով այսօր գրում են աշխարհի շատ ժողովուրդներ:

Ի տարբերություն հույների՝ ***հռոմեացիները զբաղվում էին միայն գործնական գիտություններով,*** նրանով՝ ինչն անհրաժեշտ էր առօրյա կյանքում: Ահա ինչու հռոմեացի գիտնականների գրած աշխատությունները ավելի նման էին կոնկրետ գիտությունների վերաբերյալ դասագրքերի:

Հռոմեական գրականությունը ծաղկում ապրեց Օգոստոս կայսեր օրոք:

Կայսեր մտերիմներից մեծահարուստ ***Մեկենասը,*** իր շուրջը հավաքեց ժամանակի լավագույն գրողներին ու արվեստագետներին: Մեկենասը նրանց հովանավորում էր, օգնում էր նյութապես, պատվիրում քանդակել, նկարել, գրել գործեր, որոնք համահունչ լինեին Օգոստոսի վարած քաղաքականությանը և հաճելի լինեին կայսրին:


Մեկենաս

Այս ժամանակաշրջանի անվանի բանաստեղծներն էին ***Հորացիոսը, Օվիդիոսը և Վերգիլիոսը:***

Մեկենասի պատվերով Վերգիլիոսը գրեց ***«Էնեական»*** պոեմը: Այն կարծես Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմների շարունակությունը լիներ: «Էնեականը» Տրոյացի Էնեասի թափառումների և արկածների մասին էր: Էնեասը, ի վերջո, հաստատվեց Իտալիայում և համարվում էր հռոմեացիների նախահայրը:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

3 Հռոմեացիները մեծ նվաճումների հասան ճարտարապետության և շինարարության ոլորտներում: Լեռնային աղբյուրների ջուրը Հռոմ հասցնելու համար նրանք կառուցում էին ***աքվեդուկներ՝*** ջրատար առուներ:

4 Դեռևս Ք.ծ.ա. IV դարում սալարկվեցին Հռոմի փողոցները: Հետագայում հռոմեացիներն սկսեցին կառուցել նաև ***սալարկված ճանապարհներ:*** Այդ ճանապարհների որոշ հատվածներ առանձին երկրներում այսօր էլ դեռ պահպանվել են:

5 Հռոմում և այլ քաղաքներում կառուցվում էին նաև ***թատրոններ ու ամֆիթատրոններ:*** Ամֆիթատրոններում անցկացվում էին գլադիատորական մենամարտեր, մարտեր գազանների հետ, մարտակառքերի մրցումներ: Հռոմեացիները այդ բոլորը թատրոնից գերադասում էին:

6 ***Հռոմեացիները հայտնագործել և կիրառում էին բետոնը***: Դրա օգտագործումը հեշտացնում էր շինարարությունը, իսկ կառույցները ավելի ամուր էին ստացվում: Կառուցում էին ***հաղթակամարներ, հուշակոթողներ, հրապարակներ, բաղնիքներ:***

7 Աստվածների պատվին կառուցվում էին ուղղանկյուն և շրջանաձև սյունազարդ տաճարներ: Գմբեթավոր շրջանաձև ամենախոշոր շինությունը ***Պանթեոնն*** էր՝ բոլոր աստվածների տաճարը: Այն կանգուն է մինչ օրս: ***Պալատին*** բլրի վրա կառուցված էին կայսերական շքեղ ապարանքները: Այստեղից էլ ծագել է ***պալատ*** բառը:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ ԵՎ ԹԱՏՐՈՆԸ

8

Գրավելով Հունաստանը և Մակեդոնիան՝ հռոմեացիներն Իտալիա բերեցին բազմաթիվ հունական քանդակներ: Հռոմեացի վարպետները զանգվածաբար ընդօրինակում էին հույն քանդակագործների արձանները: Հռոմեացի նոբիլները սիրում էին իրենց տունը, բակը, այգին զարդարել հունական հայտնի արձանների կրկնօրինակներով:

Սակայն, ի տարբերություն հույների, հռոմեացիները գերադասում էին վերացական հերոսների փոխարեն պատկերել կոնկրետ կենդանի մարդկանց՝ իրենց նախնիներին, ծնողներին, կոնսուլների, հռետորների, զորավարների, կայսրերի: Նրանց համար կարևորը ոչ թե քանդակի գաղափարական բովանդակությունն էր, այլ այն, որ քանդակը իսկապես նման լինի տվյալ մարդուն: ***Հռոմեական քանդակներն իրական մարդկանց դիմանկարներ են:***

Հարուստ տներում, պալատներում, բաղնիքներում հատակը ծածկում էին գեղեցիկ խճանկարներով՝ ***մոզաիկայով:*** Պատերը զարդարում էին տարբեր տեսարաններ պատկերող գունավոր նկարներով: Նկարներն ու խճանկարները և՛ դիցաբանական, և՛ պատմական թեմաներով էին:

Հռոմեացիները հաճախում էին թատրոն, բայց կատակերգություններ ու ողբերգություններ չէին սիրում: Գերադասում էին դիտել ***սատիրաներ՝*** ծաղրական հումորով ներկայացումներ: Սատիրան պատկերում էր սովորական մարդկանց ամենօրյա կենցաղից ծիծաղելի դեպքեր և տեսարաններ:

Ի տարբերություն հույների՝ հռոմեացիները երաժշտություն, երգ ու պար չէին սիրում: Դրանք համարվում էին ստրուկների զբաղմունք և ազատ մարդկանց համար ոչ վայել:

Հռոմեական մշակույթը՝ հունական մշակույթի հետ միասին, հանդիսանում է ներկայիս եվրոպական քաղաքակրթության հիմքը:

Նոր բառեր և հասկացություններ՝ *աքվեդուկ, ամֆիթատրոն, հուշակոթող, պանթեոն, հռետորություն, հաղթակամար, սատիրա, նախնիների պաշտամունք, կապիտոլիական ապտվածներ, լատինական այբուբեն, քերականական դպրոց:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ աստվածների էին պաշտում հռոմեացիները, որտեղ էին գտնվում գլխավոր աստվածների տաճարները:
2. Ինչու՞ էին հռոմեացիները մեծ նշանակություն տալիս տղաների կրթությանը:
3. Ո՞վ էր այն մեծահարուստը, որ հովանավորում էր գրողներին ու արվեստագետներին:
4. Նշեք Օգոստոսի ժամանակաշրջանի հռոմեացի անվանի բանաստեղծներին, ինչ կարող եք ասել նրանց մասին:
5. Հռոմի նշանավոր ճարտարապետական ինչ կոթողներ կարող եք հիշատակել, թվարկեք մի քանիսը:
6. Քրիստոնեությունը ե՞րբ դարձավ Հռոմեական կայսրության պետական կրոն:

§ 31. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմեական պետությունը մոտ 500 տարի միասնական կայսրության մեջ միավորել էր արևմտյան և հարավային Եվրոպայի, Առաջավոր Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի շատ ժողովուրդների: Հռոմեական քաղաքակրթությունը զգալի ազդեցություն է թողել այդ երկրների ու ժողովուրդների հետագա զարգացման վրա:

ԼԱՏԻՆԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ

Հռոմեական քաղաքակրթության կարևորագույն ժառանգությունը ***լատիներենն*** է: Այն պաշտոնական լեզու էր և գործածվում էր կայսրության ողջ տարածքում: Ավելի ուշ՝ միջնադարյան Եվրոպայում լատիներենը միակ գրավոր լեզուն էր, կիրառվում էր թե՛ եկեղեցական ծիսակարգում, թե՛ կրթական գործում: Եվրոպական ներկայիս բոլոր գրավոր լեզուները ձևավորվել են լատիներենի այբուբենի հիման վրա: Այսօր էլ լատիներենը կիրառվում է բժշկության, բնագիտության, իրավագիտության մեջ և գիտության շատ այլ ճյուղերում:

Հռոմեական ծագում ունեցող շատ տերմիններ ու անվանումներ լայնորեն կիրառվում են ժամանակակից լեզուներում և մեր առօրյա կենցաղում: Հիշեք թեկուզ մեր Արեգակնային համակարգի մոլորակների անվանումները, որոնք բոլորը կրում են հռոմեական հեթանոս աստվածների անունները: Հռոմեական ծագում ունեն նաև տարվա ամիսների անվանումները:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմեական քաղաքակրթության ազդեցությունը զգալի է իրավագիտության ոլորտում: Հռոմեական դատարաններում կիրառվում էր մեղադրող և պաշտպանող կողմերի ապացույցներ և հիմնավորումներ ներկայացնելու մրցակցային ձևը, որը կիրառվում է և ներկայիս դատարաններում: Հռոմեական օրենսդրությունը հիմք է ծառայել ժամանակակից շատ երկրների օրենսդրության ստեղծման համար, իսկ հռոմեական իրավաբանների պաշտպանական ելույթների կառուցվածքը և ապացուցման տրամաբանությունը կիրառում են ժամանակակից փաստաբանները:

Իրավաբանական շատ տերմիններ այսօր էլ կիրառելի են, լայնորեն օգտագործվում են ժամանակակից լեզուներում: Օրինակ՝ ***ալիբի*** (անհերքելի ապացույց)***, ֆակտ*** (փաստ)***, կազուս*** (դեպք, հանգամանք) և այլն:

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմեական դիվանագիտության մշակած կանոնները և սկզբունքները այսօր էլ կիրառվում են ներկայիս պետությունների կողմից միջազգային քա-

ղաքական հարաբերություններում:

1

Այլ պետությունների հետ հարաբերվելիս Հռոմը դեսպանություններ էր ուղարկում և ընդունում: Դեսպաններին ընդունում էին պատվով, որոշակի արարողակարգով: Նրանց համար առանձնացնում էին հատուկ կացարան, թարգմանիչներ և սպասավորներ: Դեսպանի անձը համարվում էր անձեռնմխելի:

Հռոմեական դիվանագիտության սկզբունքները կիրառվում են առայսօր, իսկ շատ արտահայտություններ իրենց իմաստը չեն կորցրել նաև մեր օրերում: Օրինակ. ***«Խաղաղություն ես ուզում, (ուրեմն) պատրաստվիր պատերազմի»:***

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարբեր առիթներով հանդիսությունների անցկացումը Հռոմում սովորական երևույթ էր: Աստվածների պատվին անցկացվող տոնակատարություններից բացի, Հռոմում նշում էին Հանրապետության հռչակման տոնը, հաղթական պատերազմների ավարտը, իսկ կայսրության դարաշրջանում՝ նաև կայսեր ծննդյան տոնը և այլն: Հանդիսությունների ընթացքում անցկացվում էին մրցումներ, գլադիատորական մենամարտեր, թատերական ներկայացումներ: Հանդիսություններն ուղեկցվում էին հասարակական հյուրասիրությամբ:

Հատուկ հանդիսավորությամբ էին անցկացվում ***տրիումֆները՝ հաղթահանդեսները:*** Տրիումֆի արժանանում էր այն զորավարը, որը կարողացել էր հաղթել և նվաճել Հռոմի համար առանձնապես վտանգավոր թշնամուն:

2

Հետագա դարերում ևս կայսրերը, պլեբսին սիրաշահելու համար, հանդիսություններ էին կազմակերպում ամենատարբեր առիթներով: Օրինակ, ***66 թ. Հռոմում հանդիսություններ անցկացվեցին Տրդատ I-ին Արշակունուն Ներոն կայսեր կողմից Հայոց արքա թագադրելու կապակցությամբ***:

Նման հանդիսություններ անցկացնելու սովորույթը Հին Հռոմից փոխանցվել է մեր օրեր: Ներկայումս աշխարհի գրեթե բոլոր պետություններում անցկացվում են զորահանդեսներ և այլ տոնակատարություններ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՑԱՂԸ

Հռոմեական քաղաքները կառուցվում էին որոշակի չափանիշներին համապատասխան: Քաղաքը ուներ լայնությամբ և երկարությամբ խաչաձև իրար հատվող 2 գլխավոր փողոց: Մնացած փողոցները կառուցվում էին դրանց զուգահեռ: Գլխավոր փողոցների հատման մասում գտնվում էր ***Ֆորումը՝ քաղաքային հրապարակը***: Խոշոր քաղաքները ունենում էին մեկից ավելի հրապարակներ: Ֆորումը քաղաքի հասարակական կյանքի կենտրոնն էր. այդտեղ էին գտնվում գլխավոր աստվածների տաճարները, քաղաքային խորհրդի,

դատարանի և մագիստրատների շենքերը: Ֆորումը և շրջակա շինությունները նաև քաղաքի առևտրական կենտրոնն էին:

Հռոմի Ֆորումի ավերակները

Քաղաքի տարբեր մասերում լեռնային աղբյուրներից բերված ջուրը ցայտում էր շատրվանների ձևով, իսկ ոչ մեծ փողոցների հատման տեղերում կառուցված էին փոքր ջրավազանով ծորակներ, որտեղ մարդիկ կարող էին լվացվել և ջուր խմել: Հանդիսությունների համար քաղաքի ծայրամասերում կառուցված էին թատրոններ և ամֆիթատրոններ:

Կայսրության բոլոր քաղաքներում գործում էին ***թերմաներ՝ հասարակական բաղնիքներ:*** Ամեն կայսր ձգտում էր իր կառուցած բաղնիքի մեծությամբ ու շքեղությամբ գերազանցել նախորդներին: Քաղաքացիներից շատերն օրն անցկացնում էին բաղնիքում, նրանց մուտքն անվճար էր: ***Բաղնիքը քաղաքացիների համար հասարակական ակումբի դեր էր կատարում:***

3

Հռոմի և այլ քաղաքների ունևոր քաղաքացիները բնակվում էին կենտրոնին մոտ կառուցված սեփական տներում, որոնք անվանում էին ***դոմուս:*** Դոմուսը միահարկ էր, ուներ բազմաթիվ սենյակներ, պարտեզով ներքին բակ, բաղնիք, խոհանոց և այլն: Տունը սպասարկում էին տասնյակից ավելի ստրուկներ: Նոբիլները և հեծյալները ունեին նաև գյուղական տներ՝ ***վիլլաներ:***

Հարուստ ձեռներեցները քաղաքի ծայրամասերում կառուցում էին 4–9-հարկանի բազմաբնակարան շենք-հանրակացարաններ՝ ընդհանուր կոմունալ հարմարություններով, և սենյակները ցածր գնով վարձով տալիս նման աղքատներին: Այդ էժանագին տները հաճախ էին փլուզվում կամ հրդեհի ճարակ դառնում: Ոմանք գիշերում էին փողոցում, կամ կամուրջների տակ:

Ունեզուրկ այս քաղաքացիների բազմությունը հանգիստ պահելու նպատակով կայսրերը ստիպված էին նրանց համար ապահովել ***«Հաց և զվարճություններ»՝*** անվճար հաց էին բաժանում, հանդիսություններ և հյուրասիրություն կազմակերպում:

Նոր բառեր և հասկացություններ՝ *լատիներեն, ալիբի, ֆակտ, կազուս, տրիումֆ, Ֆորում, թերմա, վիլլա, «Հաց և զվարճություններ»*

Հարցեր և առաջադրանքներ

1. Նշեք, թե ներկայումս գիտության որ ճյուղերում ենք կիրառում լատիներենը:
2. Բացատրեք՝ ինչպես էր կատարվում դատավարությունը Հին Հռոմում:
3. Հռոմեական դիվանագիտության մշակած ո՞ր կանոններն են կիրառվում ներկայումս:
4. Բացատրեք՝ ինչ էր «տրիումֆը», ինչպես էին այն տոնում Հին Հռոմում:
5. Ի՞նչ էր «թերման», ինչո՞ւ էին հռոմեացիները այնտեղ շատ ժամանակ անցկացնում:

§ 32. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ / ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍՏ
ՀԻՆ ՀՌՈՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞րն է Ապենինյան թերակղզու ամենախոշոր գետը.

- *Առնո*
- *Տիբր*
- *Պո*
- *Ռոնա*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

2. Հռոմ քաղաքի բնակիչներից միայն ովքեր էին համարվում Հռոմի քաղաքացի.

- *էպրոսակները*
- *պատրիկները*
- *պլեբեյները*
- *սաբինները*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

3. Որո՞նք էին պատրիկների և պլեբեյների պայքարի պատճառները: Հռոմեական ժողովրդի ի՞նչ երեք նոր դասեր ձևավորվեցին այդ պայքարի արդյունքում.

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

4. Բացատրեք «Սագերը փրկեցին Հռոմը» թևավոր խոսքի իմաստը.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

5. Բացատրեք «Պյուռոսյան հաղթանակ» թևավոր խոսքի իմաստը.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

6. Նկարագրեք Հռոմի դեմ կարթագենացի զորավար Հաննիբալի վարած պատերազմը: Կարո՞ղ եք փաստերով հիմնավորել այն պնդումը, որ Հաննիբալը եղել է Հայաստանում:

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25+0.25+0.25) 1,5 բալ

7. Բացատրեք «Բաժանիր և տիրիր» հռոմեական դիվանագիտության իմաստը.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

8. Ու՞մ էին անվանում գլադիատոր, ինչի համար և ինչպես էին նրանց վարժեցնում.

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

9. Ե՞րբ է Հռոմում կազմվել Առաջին եռապետությունը, ո՞վքեր էին մասնակիցները, և ո՞րն էր նրանց նպատակը.

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

10. Ո՞վ էր «Եկա, տեսա, հաղթեցի» նամակի հեղինակը, ինչի՞ մասին էր այդ նամակը

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

11. Բացատրեք «Եվ դու՝ Բրուտոս» թևավոր խոսքի ծագումը և իմաստը

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

12. Բացատրեք՝ պետության կառավարման ինչ ձև էր Օգոստոսի պրինցիպատը.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

13. Նշեք՝ ե՞րբ և ո՞վ է հիմնադրել կայսրության նոր մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը.

- *284 թ.*
- *330 թ.*
- *395 թ.*
- *Դիոկղետիանոսը*
- *Թեոդոսիոսը*
- *Կոստանդինը*

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

14. Ինչպիսի՞ կառույց էր ամֆիթատրոնը, ինչ միջոցառումներ էին այնտեղ անցկացվում.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

15. Ո՞վ էր հռոմեացի Մեկենասը, ու՞մ ենք մեր օրերում անվանում «մեկենաս».

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 33. «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԳԱՂԹԸ»: ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԲԱՐՈՄՆԵՐԸ

Արևմտյան Եվրոպայում մինչև IV դարի վերջը կար միայն մեկ պետություն՝ ***Հռոմեական կայսրությունը***: Կայսրության հարևանությամբ՝ Հռենոս և Դանուբ գետերից հյուսիս-արևելք, ապրում էին ***գերմանական ցեղերը,*** իսկ գերմաններից արևելք՝ ***սլավոնական*** ցեղերը: Արևելյան Եվրոպայի անծայրածիր տափաստաններում, որոնք ձգվում են մինչև Ասիայի խորքերը, իրենց հոտերի հետ տեղաշարժվում էին բազմաթիվ ***վաչկատուն ցեղեր***:

Նրանց բոլորին հռոմեացիներն անվանում էին ***«բարբարոսներ»:*** Այդ ժողովուրդներից շատերի մոտ արդեն սկսվել էր պետության կազմավորման գործընթացը:

IV–VII դարերի ընթացքում Եվրոպայի բարբարոս ժողովուրդները սկսեցին

ներխուժել Հռոմեական կայսրության տարածքները: Այդ զանգվածային տեղաշարժերն ընդունված է անվանել ***«Ժողովուրդների մեծ գաղթ»:***

Ժողովուրդների մեծ գաղթի սկիզբ համարվում է 375 թվականը, երբ Արևելքից Եվրոպա ներխուժեցին հոների քոչվոր ցեղերը: Նստակյաց հողագործ բնակչությանը նրանք ոչնչացնում էին կամ ստրկացնում: Հոների ճնշման տակ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի նստակյաց ժողովուրդները տեղահան եղան և սկսեցին զանգվածաբար վերաբնակվել Հռոմեական կայսրության տարածքում: ***«Ժողովուրդների մեծ գաղթը» շարունակվեց մինչև VII դ. վերջը:***

Արևմտյան Եվրոպայի երբեմնի բարգավաճ տարածքները դարձան անմարդաբնակ: Բնակչությունը սպանվել էր կամ փրկվել փախչելով: Քաղաքներն ու գյուղերը վերածվել էին ավերակների: Անկում էին ապրում արհեստներն ու գյուղատնտեսությունը: Անխնա ոչնչացվել էին մշակութային արժեքները՝ տաճարներ, գրադարաններ, արվեստի շատ ու շատ գործեր: Բարբարոսների համար անգրագետ լինելը նույնիսկ հպարտության չափանիշ էր:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

395 թ. Թեոդոսիոս կայսեր մահից հետո ***Հռոմեական կայսրությունը բաժանվեց նրա որդիների միջև՝ Արևմտահռոմեական կայսրությունը***՝ Հռոմ մայրաքաղաքով և ***Արևելահռոմեական կայսրությունը***՝ Կոստանդնուպոլիս մայրաքաղաքով:

Արևմտահռոմեական կայսրության վիճակը առավել ծանր էր: Տնտեսությունը քայքայվել էր, առևտուրը կանգ էր առել, հռոմեական բանակը հազիվ էր դիմակայում բարբարոսների ներխուժումներին և ստրուկների ելույթներին: ***410 թ. վեստգոթերը, Ալարիխի գլխավորությամբ, գրավեցին և թալանեցին Հռոմը:*** Հեռանալով ավերված Իտալիայից՝ վեստգոթերը հաստատվեցին Հարավային Գալլիայում:

Հավերժական քաղաք համարվող Հռոմի գրավման լուրն արագորեն տարածվեց ողջ աշխարհում: Արևմտահռոմեական կայսրության վարկանիշը խիստ ընկավ: Պարզ դարձավ, թե որքան է թուլացել Հռոմեական կայսրությունը, եթե չի կարողանում բարբարոսներից պաշտպանել անգամ իր մայրաքաղաքը: Նորանոր բարբարոս ցեղեր սկսեցին ներխուժել Արևմտահռոմեական կայսրության տարածք:

Վեստգոթերից հետո Իտալիա ներխուժեցին ***հոները՝ առաջնորդ Աթիլլայի*** գլխավորությամբ, և պաշարեցին Հռոմը: Միայն Աթիլլայի անսպասելի մահը փրկեց քաղաքը հերթական թալանից և ավերումից: ***455 թ. Հռոմը գրավեցին վանդալները:*** Վանդալներն ավերում և հրկիզում էին շենքերն ու շինությունները, կոտրում, փչացնում արվեստի գործերը, երաժշտական գործիքները, այրում գրքերը, մի խոսքով՝ ոչնչացնում էին այն ամենը, ինչն իրենց անհասկանալի էր: Պատահական չէ, որ մշակույթի գործերի նման

անիմաստ ոչնչացումը անվանում ենք ***վանդալիզմ:***

V դ. վերջին Արևմտյան Հռոմեական կայսրությունը հոգևարք էր ապրում: Կայսրության գոյությունը դարձել էր ձևական, պետության գործերը տնօրինում էին բարբարոս զորավարները: Ի վերջո, գերմանացի վարձկանների հրամանատար Օդոակրը տապալեց Արևմտահռոմեական կայսրության վերջին կայսրին և ինքն սկսեց կառավարել Իտալիան:

476 թ. Արևմտյան Հռոմեական կայսրությունը դադարեց գոյություն ունենալ: Կայսրության տարածքներում տեր ու տնօրեն դարձան բարբարոսները:

ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Արևմտյան հռոմեական կայսրության գոյության վերջին տասնամյակներում նրա տարածքում արդեն կազմավորվել էին բարբարոսական մի քանի պետություններ՝ ***վանդալների*** թագավորությունը՝ Հյուսիսային Աֆրիկայում, ***վեստգոթերինը***՝ Հարավային Գալլիայում, ***բուրգունդներինը***՝ Շվեյցարիայում:

Բարբարոսական նոր պետություններ շարունակեցին առաջանալ նաև կայսրության անկումից հետո: Իտալիային տիրացան օստգոթերի ցեղերը: Նրանց առաջնորդ ***Թեոդորիխը*** հռչակվեց արքա և սկիզբ դրեց ***Օստրոգոթերի թագավորությանը:*** V դ. վերջին ***ֆրանկների*** գերմանական ցեղերը նվաճեցին և իրենց թագավորությունը ստեղծեցին Հյուսիսային Գալլիայում: Բրիտանիայում մի քանի թագավորություններ ստեղծեցին ***անգլերի և սաքսերի*** գերմանական ցեղերը: 568 թվականին հյուսիսից Իտալիա ներխուժեցին գերմանական նոր ցեղեր, որոնց անվանում էին ***լանգոբարդներ***՝ երկարամորուքներ: Նրանք հաստատվեցին Հյուսիսային ու Միջին Իտալիայում և ստեղծեցին ***Լանգոբարդների թագավորությունը***: Այն գոյատևեց մինչև VIII դ. վերջերը:

Ժամանակի ընթացքում եկվոր բարբարոս ցեղերը միախառնվեցին նախկին Հռոմեական կայսրության տեղական բնակչությանը, ինչի արդյունքում ***հետագայում ձևավորվեցին ներկայիս եվրոպական ազգերը:***

Նոր բառեր և հասկացություններ՝ *ժողովուրդների մեծ գաղթ, հոներ, գոթեր, լանգոբարդներ, բուրգունդներ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է սկսվել ժողովուրդների մեծ գաղթը և մինչև ե՞րբ է շարունակվել:
2. Ե՞րբ է Հռոմեական կայսրությունը բաժանվել երկու մասի: Ինչպե՞ս էին կոչվում այդ պետությունների մայրաքաղաքները:
3. Ո՞ր թվականին գերմանացի վարձկանների հրամանատար Օդոակրը դարձավ Արևմտյան Հռոմեական կայսրության թագավոր:
4. Ի՞նչ բարբարոսական թագավորություններ առաջացան Արևմտյան Հռոմեական կայսրության տարածքում:

§ 34. ԿԱՌԼՈՍ ՄԵԾԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

ՖՐԱՆԿՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ

V դ. սկզբին ֆրանկների գերմանական ցեղերը բնակվում էին Հռենոս գետի ստորին հոսանքի շրջանում: Ֆրանկներին վաղուց հրապուրում էին հարևան հռոմեական Գալլիա պրովինցիայի արգավանդ դաշտավայրերը: V դ. վերջին ֆրանկների ցեղերը միավորվեցին: ***Թագավոր հռչակվեց Քլոդվիգը՝*** Մերովեի տոհմից: Ահա ինչու, ֆրանկների թագավորության առաջին արքայատոհմն անվանում են ***Մերովինգների հարստություն***:

Քլոդվիգի գլխավորությամբ ֆրանկները ներխուժեցին Գալլիա: ***486 թ. Սուասոն քաղաքի մոտ ջախջախելով Գալլիայի փոխարքայի զորքը՝ ֆրանկները տիրեցին Հյուսիսային Գալլիային:***

Նվաճված երկրում ֆրանկները բնակվեցին տեղական բնակչությունից առանձնացած, ոչ մեծ գյուղերով: Ֆրանկների այս նոր բնակավայրերում ձևավորվում էին հարևանային համայնքներ: Քլոդվիգը տիրացավ նախկինում հռոմեական կայսրին պատկանող ընդարձակ հողային տիրույթներին:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Գալլիայի նվաճումից հետո տեղական հռոմեացի հողատերերից շատերը ճանաչեցին ֆրանկների թագավորի իշխանությունը և պահպանեցին իրենց տիրույթները, ինչպես նաև ստրուկներին ու կախյալ գյուղացիներին: Հռոմեացի հողատերերը մերձեցան ֆրանկների բարձր դասի հետ և օգնում էին Քլոդվիգին կառավարել նվաճված երկրի բնակչությանը:

Թագավորի իշխանության ամրապնդմանն օժանդակեց նաև քրիստոնեական եկեղեցին: ***496 թ. Քլոդվիգը մկրտվեց և թագավոր օծվեց քրիստոնեական ծեսով:*** Նրա օրինակով քրիստոնեություն ընդունեցին մյուս ֆրանկները ևս: Գնահատելով եկեղեցու աջակցությունը՝ Քլոդվիգը և նրա հաջորդները հողեր ու հարստություն էին նվիրաբերում եկեղեցուն, հիմնում էին նոր վանքեր ու եկեղեցիներ:

Կազմվեց գրավոր օրենքների ժողովածու՝ ***«Սալիական դատաստանագիրքը»:*** Դրանում ներառվեցին և՛ ֆրանկների տոհմական սովորույթները, և՛ թագավորի սահմանած նոր օրենքները, որոնք պաշտպանում էին մասնավոր սեփականությունը:

Քլոդվիգի հաջորդները իրենց մերձավորներին, ավագանուն և զինվորականներին կալվածքներ էին բաժանում՝ որպես սեփականություն: Ֆրանկ ավագանին վերածվում էր խոշոր կալվածատերերի: Նրա տիրույթներում աշխատում էին հռոմեացի ստրուկներն ու կոլոնները: Խոշոր հողատերերն իրենց պատկանող հողը կարող էին նվիրաբերել, ժառանգաբար թողնել

1

իրենց հաջորդներին, ոչ մեծ կալվածքների ձևով օգտագործման տալ՝ ծառայություն կատարելու դիմաց: ***Ֆրանկների մոտ աստիճանաբար ձևավորվում էին հասարակական նոր հարաբերություններ:***

ԿԱՐՈԼԻՆԳՆԵՐԻ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Քլոդվիգի հաջորդների օրոք թագավորական իշխանությունը թուլացավ: Մերովինգների արքայատոհմի վերջին թագավորները կրում էին թագավորի տիտղոսը, բայց իշխանություն չունեին: Նրանց հաճախ անվանում էին «ծույլ թագավորներ»: ***Պետությունն իրականում կառավարում էր մայորդոմը՝ արքունապետը:***

Մայորդոմ Պիպին Կարճահասակը, համաձայնության գալով Հռոմի պապի հետ, գահընկեց արեց Մերովինգների տոհմի արքային: ***751 թ. Պիպինն ինքը թագադրվեց ֆրանկների պետության արքա՝ սկիզբ դնելով Կարոլինգների հարստությանը:*** Ի հատուցում ցուցաբերած աջակցության, Պիպինը արշավանք կատարեց Իտալիա, լանգոբարդներից գրավեց Հռոմի մարզը և այն նվիրեց Հռոմի պապին:

ԿԱՌԼՈՍ ՄԵԾԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանկների պետությունը խիստ ընդարձակվեց ***Կառլոս Մեծի (768–814)*** օրոք: Այն դարձավ Արևմտյան Եվրոպայի ամենաընդարձակ և ամենահզոր տերությունը:

Կառլոս Մեծը բազմաթիվ պատերազմներ վարեց հարևան երկրների և ժողովուրդների դեմ: Անցնելով Ալպյան լեռները՝ նրա զորքերը ներխուժեցին Իտալիա և գրավեցին այդ երկրի մեծ մասը: Նա արշավեց նաև Իսպանիա և արաբներից գրավեց Պիրենեյան լեռներից հարավ ընկած երկրամասը՝ Բարսելոն քաղաքով:

Կառլոս Մեծի նվաճումների արդյունքում ֆրանկների թագավորությունն իր տարածքով մոտենում էր նախկին Արևմտյան Հռոմեական կայսրության չափերին: Կառլոս Մեծի իշխանությունը տարածվում էր բազմաթիվ երկրների և ժողովուրդների վրա: Նրա հովանավորությունն էր փնտրում անգամ Հռոմի պապը:

800 թ. Հռոմի Սբ. Պետրոսի տաճարում Հռոմի պապը Կառլոս Մեծին օծեց կայսերական ոսկե թագով: Կառլոս Մեծն ընդունեց ***հռոմեական կայսր տիտղոսը***: Նրա տիտղոսը ճանաչեցին և Բյուզանդական կայսրը և Բաղդադի խալիֆը:

2

Սակայն ***Կառլոս Մեծի ստեղծած կայսրությունն ամուր չէր:*** Տերության մեջ մտնող երկրամասերը միավորվել էին զենքի ուժով: Նվաճված ցեղերն ու ժողովուրդները տնտեսական զարգացման տարբեր

մակարդակ ունեին, տարբեր սովորույթներ և խոսում էին տարբեր լեզուներով: Այսպիսի տերությունը չէր կարող ամուր լինել և երկար գոյատևել:

ՎԵՐԴԵՆԻ ԲԱԺԱՆՔԸ

Կառլոս Մեծի կայսրությունը գոյատևեց կես դարից էլ քիչ: Կառլոսի որդու՝ Լյուդովիկոս Բարեպաշտի մահից հետո նրա 3 որդիները պատերազմ սկսեցին իրար դեմ՝ կայսրությանը տիրանալու համար: Նրանցից ոչ մեկը հաղթել չկարողացավ: Ի վերջո, ***843 թ. Վերդեն քաղաքում Կառլոս Մեծի թոռները համաձայնության եկան և տերությունը բաժանեցին իրենց միջև:*** Միասնական կայսրության փոխարեն Արևմտյան Եվրոպայում ի հայտ եկան ***Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի թագավորությունները:***

3

«ԿԱՐՈԼԻՆԳՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ»

«Ժողովուրդների մեծ գաղթի» հետևանքով մշակութային կյանքը Արևմտյան Եվրոպայում գրեթե կանգ էր առել, մշակութային շատ արժեքներ ոչնչացվել էին: Կառլոս Մեծի ժամանակ նկատվեց մշակութային կյանքի դանդաղ վերա–կանգնում: ***Կայսրությունը կառավարելու համար անհրաժեշտ էին գրագետ և գիտուն մարդիկ:*** Կայսեր հրամանով ***վանքերին կից բացվեցին դպրոցներ***, որտեղ սովորում էին հոգևորականների և աշխարհիկ մարդկանց երեխաները:

Տերության մայրաքաղաք ***Ասխեն*** քաղաքում բացվեց ***պալատական ակադեմիա:*** Կայսրը արքունիք էր հրավիրում գիտուն մարդկանց, որ կրթեն կայսեր և պալատականների զավակներին: Տերության բոլոր մարզերում կառուցվեցին նոր վանքեր ու եկեղեցիներ: Կայսեր հրամանով վանքերում արտագրում և բազմացնում էին քրիստոնեությանը նվիրված գրքեր, ինչպես նաև անտիկ գրողների ու գիտնականների աշխատությունները:

Կառլոս Մեծի օրոք սկսված այս մշակութային զարթոնքը ընդունված է անվանել «կարոլինգյան վերածնունդ»:

Նոր բառեր և հասկացություններ՝ *Սալիական դատաստանագիրք, Վերդենի բաժանք, հարևանային համայնք, մայորդոմ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է կազմավորվել ֆրանկների թագավորությունը, և ո՞վ է նրա հիմնադիրը:
2. Ինչո՞ւ էին վերջին Մերովինգներին անվանում «ծույլ թագավորներ»:
3. Ո՞վ է Կարոլինգյան արքայատոհմի հիմնադիրը, ի՞նչ գիտեք նրա մասին:
4. Ո՞ր թվականին կնքվեց Վերդենի բաժանքը, և ի՞նչ պետություններ ձևավորվեցին դրա արդյունքում:
5. Ի՞նչ ենք հասկանում «Կարոլինգյան վերածնունդ» ասելով:

§ 35. ԱՐԵՎԵԼԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Արևելահռոմեական կայսրությունը դիմակայեց բարբարոս ցեղերի հարձակումներին և կարողացավ գոյատևել: Քանի որ կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը կառուցվել էր հին հունական Բյուզանդիոն քաղաքի տեղում, հաճախ ***Արևելահռոմեական կայսրությունն անվանում են Բյուզանդական կայսրություն*** կամ ***Բյուզանդիա:***

Բյուզանդիան հզորացավ ***Հուստինիանոս I (527– 565)*** կայսեր օրոք: Նա եռանդուն պետական գործիչ էր, արտասովոր խելքի ու կամքի տեր մարդ: Միևնույն ժամանակ նա խիստ փառասեր էր, նենգ ու դաժան, սիրում էր, որ իրեն շողոքորթեն:

Հուստինիանոսը բազմաթիվ բարեփոխումներ իրականացրեց: Նրա հրամանով կազմվեց ***Քաղաքացիական իրավունքի օրենքների ժողովածուն,*** որի մեջ ամփոփվեցին հռոմեական բոլոր նախորդ կայսրերի և իր հրապարակած օրենքները: Այն այսօր էլ օրինակ է աշխարհի շատ պետությունների օրենսդրության համար:

Կոստանդնուպոլիսը Հուստինիանոսի օրոք զարդարվեց բազում շքեղ շինություններով:

1

ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Հուստինիանոսը երազում էր գրավել Արևմտյան կայսրության տարածքում առաջացած բարբարոսական թագավորությունները և վերականգնել Հռոմեական կայսրության նախկին սահմանները:

Բյուզանդական զորքերի հարվածներից առաջինն ընկավ ***Վանդալների թագավորությունը՝*** Հյուսիսային Աֆրիկայում: 20 տարի պահանջվեց գրավելու Իտալիան և վերացնելու ***Օստգոթերի թագավորությունը:*** Հուստինիանոսը միաժամանակ պատերազմ էր վարում ***Վեստգոթական թագավորության*** դեմ Իսպանիայում, որտեղ բյուզանդական զորքերը կարողացան գրավել հարավային մի քանի շրջաններ: Հուստինիանոսի երազանքը կարծես իրականացավ: Հաղթական պատերազմների արդյունքում Բյուզանդիայի տիրապետության տակ անցան Միջերկրական ծովի առափնյա գրեթե բոլոր տարածքները:

Սասանյան Պարսկաստանը, օգտվելով արևմուտքում բյուզանդական զորքերի զբաղված լինելուց, պատերազմ սկսեց Բյուզանդիայի դեմ: Հուստինիանոսը ստիպված էր Բյուզանդիային անցած Հայաստանի տարածքից որոշ շրջաններ զիջել Պարսկաստանին և վճարել ռազմատուգանք:

Սլավոնական ցեղերը հաճախակի ներխուժում էին կայսրության տարածք


Հուստինիանոս I
ԳԱԼԻԱՅԻ ԹԱԳ.
ՖՐԱՆԿՈՍ
ՊՐՈՒՍԻԱՆԵՐ
Շցեցին
Գնեզնո
ԼԵՀԱՍԱՆ ԹԱԳ.
ՍԼԱՎՅԱՆ ԹԱԳ.
Պրագա
ԳԵՐՄԱՆԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
Մայնց
ՍԱՔՍՈՆՆԵՐ
ՀՈՒՆԱՍՏԱՆ
ՀՈՒՆԵՐ
ՍԼԱՎՈՆՆԵՐ
ՊԵէՈՒՍԻԱՆԵՐ
ՍԼԱՎՈՆՆԵՐ
Կիև
Բելայա Վեժա
ՍՊԱՆԻԱ
ՀՈՒՆԱՍՏԱՆ
ՍՊԱՆԻԱ
ՍՊԱՆԻԱ
ԼՅՈՒԹԵՐԳՈՒՄ
ՀՈՒՆԴԱՐՆԵՐԻ ԹԱԳ.
ԱՎԱՐՆԵՐ
ՎԱԼԱԽՆԵՐ
Պավիա
Ֆրանկներ
Ֆրանկներ
Ֆրանկներ

ությանը հսկայական եկամուտ էր ապահովում:

Բյուզանդական կայսրությունը կրկին հզորացավ և ծաղկում ապրեց IX–XI դդ. ***Մակեդոնական (Հայկական) հարստության օրոք:*** Նոր արքայատոհմի հիմնադիրը ***Վասիլ (Բարսեղ) I-ն (867–886) էր***: Նա ծնվել էր Մակեդոնիայում, հայ վերաբնակիչների ընտանիքում: Կայսր դառնալով՝ Վասիլ I-ը ուժեղացրեց կենտրոնական իշխանությունը և ամրապնդեց սահմանների պաշտպանությունը: Նրա հաջորդներից ***Վասիլ II-ի օրոք (976–1025)*** նվաճողական նոր պատերազմների արդյունքում կայսրության տարածքը զգալիորեն ընդարձակվեց: Բյուզանդական զորքերը դուրս մղեցին արաբներին Փոքր Ասիայից, գրավեցին Կիլիկիան, Սիրիայի մեծ մասը, Կրետե և Կիպրոս կղզիները:

2

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ

XI դ. կեսերին Արևելքից Առաջավոր Ասիա ներխուժեցին սելջուկ-թյուրքերը: ***1071 թ. Մանազկերտի*** ճակատամարտում նրանք ջախջախեցին բյուզանդական բանակը, կայսրը գերի ընկավ: Սելջուկ-թյուրքերը գրավեցին Հայաստանն ու Փոքր Ասիայի մեծ մասը: Այդ նույն ժամանակ նորմանները Բյուզանդիայից խլեցին նրա վերջին հենակետերը Հարավային Իտալիայում:

Բյուզանդական կայսրության վիճակը փոքր-ինչ բարելավվեց, երբ սկսվեցին ***խաչակրաց արշավանքները***: Խաչակիրները ծանր պարտության մատնեցին սելջուկ-թյուրքերին, ինչից հետո Բյուզանդիան կարողացավ հետ գրավել զգալի տարածքներ Փոքր Ասիայում:

Սակայն ***Խաչակրաց IV արշավանքը*** Բյուզանդական կայսրության համար ուղղակի աղետ դարձավ: ***1204 թ. խաչակիրները գրավեցին Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը: 1261 թ. հույներին հաջողվեց հետ նվաճել Կոստանդնուպոլիսը և վերականգնել Բյուզանդական կայսրությունը:*** Սակայն այն երբեմնի հզոր կայսրության ընդամենը ստվերն էր:

3

Նոր բառեր և հասկացություններ՝ *Բյուզանդիոն, Սուրբ Սոֆիայի տաճար, խաչակրաց արշավանքներ, Յարմուկ գետ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է ծնունդ առել Արևելահռոմեական կայսրությունը:
2. Ի՞նչ գիտեք Հուստինիանոսի արտաքին և ներքին քաղաքականության մասին:
3. Ո՞վ էր հայկական կամ մակեդոնական արքայատոհմի հիմնադիրը, և որքա՞ն ժամանակ է կառավարել այդ արքայատոհմը:
4. Ի՞նչ հաջողություններ գրանցեց Բյուզանդական կայսրությունը հայկական արքայատոհմի օրոք:
5. Ի՞նչ գիտեք բյուզանդա-արաբական կռիվների մասին:
6. Որո՞նք էին Բյուզանդիայի թուլացման և անկման գլխավոր պատճառները:

§ 36. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻՆՉՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԱՐԱԲԻԱՆ: ԻՍԼԱՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

1

Արաբների հայրենիքը Ասիայի հարավ-արևմուտքում գտնվող ***Արաբական թերակղզին*** է: Արաբիայում կլիման չորային է ու շոգ, անձրևները հազվադեպ են: Տարածքի մեծ մասը ջրազուրկ տափաստաններ ու կիսաանապատներ են, հանդիպում են ***օազիսներ***:

Թերակղզու հարավում կան լեռներ և գետակներ, տարածվում էին մշակովի դաշտերը, մրգատու այգիները, խաղողի վազերը: Այդտեղ ապրում էին նստակյաց արաբները: Կարմիր ծովի ափով ձգվում էր առևտրական հնագույն ճանապարհը՝ Պաղեստինից դեպի Եթովպիա: Այդ ճանապարհին գտնվող օազիսներում առաջացել էին քաղաք-պետություններ: Դրանցից նշանավորը ***Մեքքա քաղաքն*** էր:

Արաբական ցեղերի միավորմանը նպաստեց նոր կրոնը՝ ***իսլամը:*** Կրոնի հիմնադիրը մեքքացի վաճառական ***Մուհամմեդն էր***: Նա պնդում էր, թե ամենակարող միակ աստծուց՝ ***Ալլահից*** բացի, այլ աստվածներ չկան, իսկ ***իրեն անվանում էր մարգարե՝ «ասպծու պատգամախոսը»:*** Արաբներին կոչ էր անում ընդունել նոր հավատը և միավորվել: Մուհամմեդը շատ հետևորդներ ունեցավ: Նրանք, ովքեր ընդունեցին նոր կրոնը, իրենց անվանում էին ***մուսլիմներ՝ «իսլամին հնազանդներ»:*** Իսլամը հավատացյալներից պահանջում էր հնազանդություն: Մուսուլմանների Սուրբ գիրք ***Ղուրանը*** «սրբազան պատերազմի» կոչ էր անում ընդդեմ «անհավատների»: Ղուրանում ասվում էր, որ հանուն իսլամի զոհված մուսուլմաններն անմիջապես ընկնում են դրախտ:

Մոտ ***630 թ.*** արաբական ցեղերի մեծ մասն ընդունեց իսլամը և ճանաչեց Մուհամմեդի իշխանությունը: ***Մեքքան դարձավ մուսուլմանական կրոնի կենտրոնը՝ «սրբազան քաղաքը»:***

ԱՐԱԲԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

632 թ. Մուհամմեդի մահից հետո ցեղապետերի համաժողովը նրա զինակիցներից ***Աբու Բաքրին*** ընտրեց ***խալիֆա՝ մարգարեի փեղապահ***: Նա ավարտեց Արաբական թերակղզու ցեղերի միավորման գործը: Հաջորդ՝ ***Օմար խալիֆի*** օրոք սկսվեցին արաբական նվաճումները:

Արաբները հարձակվեցին Բյուզանդիայի և Իրանի վրա, որոնք խիստ թուլացել էին իրար դեմ մղած երկարատև պատերազմներից: Արաբներին հաջողվեց 10-15 տարվա ընթացքում գրավել և ոչնչացնել Պարսկական տերությունը, Բյուզանդիայից զավթել Սիրիան և Եգիպտոսը: Երկու անգամ արաբները պաշարեցին Կոստանդնուպոլիսը, բայց գրավել այն չկարողացան:

Արաբները հպատակեցրին ողջ Հյուսիսային Աֆրիկան: ***711 թ.*** նրանք

ներխուժեցին Պիրենեյան թերակղզի և ***նվաճեցին գրեթե ամբողջ Իսպանիան***: Այնուհետև անցնելով Պիրենեյան լեռները՝ ներխուժեցին Ֆրանկների թագավորություն: Սակայն Պուատյեի ճակատամարտում ***հաղթեցին ֆրանկները և փրկեցին Եվրոպան արաբական նվաճումից:***

VIII դ. սկզբին արաբները հպատակեցրին Հարավային Կովկասի երկրները, նվաճեցին Միջին Ասիան, Աֆղանստանը, Արևմտյան Հնդկաստանը, հասան Չինաստանի սահմաններին:

ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Արաբական նվաճումների արդյունքում ստեղծվեց միջնադարի հզոր տերություններից մեկը՝ ***Արաբական խալիֆայությունը***: Այն ձգվում էր Ատլանտյան օվկիանոսի ափերից մինչև Հնդկաստանի և Չինաստանի սահմանները և չափերով ավելի մեծ էր, քան Հռոմեական կայսրությունը ծաղկման շրջանում: Խալիֆայության մայրաքաղաք դարձավ ***Դամասկոս*** քաղաքը Սիրիայում:

Խալիֆայության գրեթե ողջ կարածքում ասպիճանաբար կարածվեց իսլամը: Հրեաներին և քրիստոնյաներին թույլատրում էին դավանել իրենց կրոնը: Հյուսիսային Աֆրիկայում, Սիրիայում, Իրանում, Միջին Ասիայում, Աֆղանստանում և Հնդկաստանում բնակչությանը մահմեդականացրին: Նվաճված երկրներից դեպի Դամասկոս էին ձգվում բարիքներ և հազարավոր գերի ստրուկներ բերող անհամար քարավանները:

Սկզբնական շրջանում խալիֆայության բոլոր հողերը համարվում էին խալիֆի սեփականությունը: Իր ազգականներին ու մերձավորներին խալիֆը նվաճված երկրներում ***էմիրներ՝*** փոխարքաներ էր կարգում: Նրանք ծառայության դիմաց կալվածքներ էին ստանում: Ժամանակի ընթացքում այդ հողերի մեծ մասը դարձավ մեծատոհմիկների ժառանգական սեփականությունը: ***Արաբների մոտ ապրիճանաբար ձևավորվում էին հասարակական նոր հարաբերություններ***:

Խալիֆայությունում դեռ կիրառվում էր նաև ստրուկների աշխատանքը: Սակայն աշխատավորության հիմնական մասը կախյալ գյուղացիներն էին: Հարյուրհազարավոր գյուղացիներ հարկեր էին վճարում, կառուցում էին ամբարտակներ և ոռոգման համակարգեր:

ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ, ՏՐՈՀՈՒՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

IX դ. Խալիֆայությունը, նվաճված ժողովուրդների ապստամբությունների հետևանքով, զգալի թուլացավ: Ուժեղացած տեղական խոշոր ավատատերերը ձգտում էին անկախանալ խալիֆի իշխանությունից: Առանձին երկրամասերի էմիրները իրենց պաշտոնը և ենթակա տարածքները ժառանգաբար փոխանցում էին իրենց որդիներին: Հենվելով սեփական ռազմական ուժի վրա՝ նրանք հրաժարվում էին խալիֆներին ենթարկվելուց և դառնում էին անկախ տիրակալներ:

762 թ. Արաբական խալիֆայության ***նոր մայրաքաղաք*** դարձավ Տիգրիս գետի ափին կառուցված ***Բաղդադը:*** X դ. Բաղդադի խալիֆայությունից անջատվեցին Եգիպտոսը, Միջին Ասիան, Իրանը և Աֆղանստանը: XI դ. կեսին, խալիֆայության տարածքի մեծ մասը նվաճեցին Կենտրոնական Ասիայից եկած սելջուկ-թուրքերը: Բաղդադի խալիֆի իշխանության տակ մնաց միայն Միջագետքը: 1258 թ. մոնղոլները գրավեցին Բաղդադը և սպանեցին վերջին խալիֆին:

Արաբական խալիֆայության ավելի քան 500-ամյա գոյության ընթացքում նրա կազմի մեջ մտնող ժողովուրդները զգալի նվաճումների հասան և մեծապես նպաստեցին համաշխարհային քաղաքակրթության առաջընթացին:

3

Նոր բառեր և հասկացություններ՝ *բեդվին, Մեքքա, իսլամ, Ալլահ, մարգարե, մուսուլման, խալիֆա, Ղուրան, էմիր*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ էին բնակվում արաբները և ինչով էին զբաղվում իսլամի ընդունումից առաջ:
2. Ո՞վ էր իսլամի հիմնադիրը, և ե՞րբ արաբները ընդունեցին այդ կրոնը:
3. Ո՞ր պետություններին պարտության մատնեցին արաբները և ինչ երկրներ նվաճեցին:
4. Բացատրե՛ք արաբների ռազմական հաջողությունների պատճառները:
5. Ի՞նչ երկրներ էին մտնում Խալիֆայություն կազմի մեջ:
6. Որո՞նք էին Խալիֆայության թուլացման և տրոհման պատճառները:
7. Մշակույթի ո՞ր բնագավառները զարգացան Խալիֆայության երկրներում:

§ 37. ՀԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԼԱՎՈՆՆԵՐԸ

VI դ. ***Դնեպր*** գետի և նրա վտակների ափերին բնակվում էին ***արևելյան սլավոնների ցեղերը***՝ պոլյաններ, դրևլյաններ, դրեգովիչներ, վյատիչներ և այլք: Արևելյան սլավոններն ապրում էին տոհմացեղային կարգով: Ցեղը ղեկավարում էր ռազմական առաջնորդը՝ ***կնյազը,*** ավագանու հետ միասին: Կարևոր հարցերը լուծելու համար հրավիրվում էր ***վեչե***՝ ժողովրդական ժողով: Սլավոնների հիմնական զբաղմունքը հողագործությունն էր: Արևելյան սլավոնների երկիրը անվանում էին ***Ռուսիա,*** իսկ բնակիչներին կոչում էին ***ռուսիչներ*** կամ ***ռուսներ***:

Ռուսիայից հարավ՝ մերձսևծովյան տափաստաններում, իրենց հոտերով քոչում էին տարբեր վաչկատուն ցեղեր՝ ***պեչենեգները, պոլովցիները*** և այլն: Քոչվորների մշտական հարձակումներից պաշտպանվելու համար սլավոնները հիմնում էին պարսպապատ ամրացված բնակավայրեր՝ ***գորոդներ***, միավորվում էին նման կենտրոնների շուրջը՝ կազմելով ցեղային միություններ: Նման կենտրոններից էր Դնեպրի միջին հոսանքի շրջանում գտնվող ***Կիևը***: Այդտեղով էին անցնում հյուսիս–հարավ և արևելք–արևմուտք առևտրական ուղիները: Երկրի հյուսիսում միավորման նման կենտրոն դարձավ ***Նովգորոդը***՝ Վոլխով գետի ափին:

IX դ. սկզբին հյուսիսից Ռուսիա սկսեցին ներխուժել նոր թշնամիներ՝ վիկինգները, որոնց սլավոններն անվանում էին ***վարյագներ***: Ռուսիայի գետերով վարյագների նավերը հասնում էին երկրի խորքերը, անգամ մինչև Սև ծով և Բյուզանդական կայսրություն: Այս ներխուժումները ավելի արագացրին Ռուսական պետության կազմավորման գործընթացը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ցեղերի միավորման և պետության ստեղծման գործում կարևոր դեր ունեցան ***Կիև և Նովգորոդ*** քաղաքները: Ըստ ավանդության, վարյագ առաջնորդ ***Ռյուրիկը 860 թ.*** գրավեց Նովգորոդը և սկիզբ դրեց միավորման գործին: Նրան հաջորդած իշխան ***Օլեգը 882 թ. գրավեց Կիևը և միավորեց արևել-***

յան սլավոնների ցեղերի մեծ մասին: Կիևը դարձավ նորաստեղծ Ռուսական պետության մայրաքաղաքը: Այդ պատճառով Հին Ռուսական պետությունը հաճախ անվանում են ***Կիևյան Ռուսիա:*** Արևելյան սլավոններին մեկ պետության մեջ միավորելու գործը ավարտին հասցրեց Ռյուրիկի որդին՝ ***իշխան Իգորը (911–945):***

Կիևյան Ռուսիայի տարածքը զգալի ընդարձակվեց իշխան ***Սվյատոսլավի (964–972)*** հաղթական արշավանքների արդյունքում: Արևելքում Ռուսիայի սահմանները հասան մինչև Վոլգա գետը, հարավում՝ Սև ծովի ափերը:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

IX–X դդ. ընթացքում Կիևյան իշխաններ Օլեգը, Իգորը, Սվյատոսլավը քանիցս ավարառուական արշավանքներ կատարեցին դեպի Բյուզանդիա՝ հասնելով մինչև Կոստանդնուպոլիս, և առևտրական պայմանագրեր կնքեցին: Դրանց շնորհիվ Ռուսիայի կապերը հարևան Բյուզանդիայի հետ ընդլայնվեցին, ինչը նպաստեց Ռուսիայում քրիստոնեության տարածմանը:

988 թ. իշխան Վլադիմիրը իր թիկնազորի հետ մկրտություն ընդունեց: Վլադիմիրի հրամանով Կիևի բնակիչներին մկրտեցին Դնեպր գետում: ***Քրիստոնեությունը հայտարարվեց Ռուսիայի պետական կրոն:*** Սակայն երկար տարիներ պահանջվեցին հեթանոսությունը լրիվ արմատախիլ անելու և քրիստոնեությունը Ռուսիայում տարածելու համար:

Քրիստոնեության ընդունումը նպաստեց Ռուսիայի հոգևոր զարգացմանը: Հունական այբուբենի հիման վրա մշակվեց ռուսական այբուբենը, ստեղծվեց ռուսալեզու գրականություն: Ռուսիայում սկսեցին կառուցել վանքեր ու եկեղեցիներ, զարդարել դրանք որմնանկարներով և խճանկարներով: Եկեղեցուն և վանքերին իշխանները ընդարձակ հողային տիրույթներ էին նվիրում: Բնակչությունը վճարում էր ***պասանորդ:***

«ՌՈՒՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»-Ն

Հին Ռուսական պետությունը իր հզորությանը հասավ իշխան ***Յարոսլավ Իմաստունի (1019–1054)*** օրոք: Յարոսլավն ընդարձակեց և ամրապնդեց Ռուսական պետությունը, ջախջախեց և վերջ դրեց պեչենեգների ներխուժումներին, հիմնադրեց նոր քաղաքներ: Դրանցից մեկը այսօր էլ նրա անունով կոչվում է Յարոսլավլ: Իսկ «Իմաստուն» մականունը նրան տվեցին արդարամտության և խոր գիտելիքների համար:

Յարոսլավը խնամիական կապեր հաստատեց եվրոպական երկրների արքայատոհմերի հետ՝ կնության տալով իր դուստրերին: Իր որդիներին նա նշանակում էր տարբեր երկրամասերի ու քաղաքների կառավարիչներ: Նրանք կառավարում էին՝ հենվելով իրենց թիկնազորի և տեղական ազնվատոհմիկների՝ ***բոյարների*** վրա:



Կիևի «Ոսկե դարպասները»

Ռուսիայում ձևավորվում էին հասարակական նոր հարաբերությունները, առաջացել ու ամրապնդվում էր մասնավոր սեփականությունը: Տոհմական հին օրենքներին զուգահեռ վաղուց արդեն կիրառվում էին նոր օրենքներ: Իշխան Յարոսլավի հրամանով և՛ հին սովորութային օրենքները, և՛ նոր սահմանված օրենքները գրի առնվեցին մի ժողովածուի մեջ, որն անվանեցին ***«Ռուսկայա պրավդա»:*** Յարոսլավի որդիների կառավարման ժամանակաշրջանում ժողովածուն խմբագրվեց և լրացվեց նոր օրենքներով:

«Ռուսկայա պրավդայով» դրվեց արևելյան սլավոնների գրավոր օրենսդրության սկիզբը:

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Յարոսլավ Իմաստունը Հին Ռուսական պետության վերջին հզոր իշխանն էր: Նրա մահից հետո միասնական պետությունը թուլացավ: ***XII դ. Կիևյան Ռուսիան թևակոխեց մասնատվածության շրջանը:*** Միասնական պետությունը մասնատվեց ինքնուրույն իշխանությունների: Խոշոր իշխանություններ էին ***Չեռնիգովի, Կիևի, Սմոլենսկի, Վլադիմիր-Սուզդալյան, Գալիցո-Վոլինյան իշխանությունները և Նովգորոդի Հանրապետությունը:***

Իշխանությունները մշտական պայքարի մեջ էին իրենց տարածքն ընդարձակելու և գերիշխանության հասնելու համար: Հաճախ այդ պայքարի ընթացքում դիմում էին հարևան օտար պետությունների օգնությանը, ինչը նրանց հնարավորություն էր տալիս միջամտելու Ռուսիայի ներքին գործերին: ***Երկրի մասնատվածության պատճառով XIII դ. կեսին Ռուսիան հեշտությամբ նվաճեցին մոնղոլ-թաթարները:***

Նոր բառեր և հասկացություններ՝ *կնյազ, վեչե, բոյար, գորոդ, վարյագ, դրուժինա, պոլյուդյե, «Ռուսկայա պրավդա»*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ էին բնակվում արևելյան սլավոնները:
2. Երբ է կազմավորվել Հին ռուսական պետությունը և ում կողմից:
3. Երբ է ընդունվել քրիստոնեությունը Հին Ռուսիայում:
4. Ո՞ւմ օրոք և երբ ընդունվեց «Ռուսկայա պրավդան»:
5. Երբ մասնատվեց Հին Ռուսական պետությունը, և ինչ խոշոր իշխանություններ հանդես եկան:

§ 38. ԵՎՐՈՊԱՅԻ ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

VIII–IX դդ. Արևմտյան Եվրոպայի երկրներում վերացան ստրկատիրական և տոհմական կարգի մնացորդները, հաստատվեց ***ավատատիրական (ֆեոդալական) կարգը***:

Թագավորը, նրա մերձավորները, ավագանին նվաճումների ընթացքում տիրացան ընդարձակ հողային կալվածքների, որոնք ժառանգաբար փոխանցում էին սերնդեսերունդ: Ժառանգաբար անցնող հողային տիրույթը կոչվում էր ***ֆեոդ՝ ավատ,*** իսկ ավատի տերը՝ ***ֆեոդալ՝ ավատատեր***: Ժամանակի ընթացքում ավատի էին վերածվում նաև պայմանական հողային տիրույթները, որոնք թագավորները տրամադրում էին պետական պաշտոն կամ ռազմական ծառայություն կատարելու դիմաց:

Թագավորներն ավատատերերին լայն իրավունքներ էին տալիս իրենց ավատի տարածքում ապրող գյուղացիների նկատմամբ: ***Իր տիրույթներում ամեն ավատատեր լրիվ ինքնիշխան էր:*** Նա բնակչությունից հավաքում էր հարկերը, դատ ու դատաստան իրականացնում: Որքան ամրապնդվում էին ավատատերերի իրավունքները բնակչության նկատմամբ, այնքան ավատատերերը սկսում էին ավելի քիչ ենթարկվել թագավորին:

ԱՎԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳԸ

Ավատատերերի միջև հաստատվում էին հատուկ փոխհարաբերություններ, որոնց անվանում ենք ***ավատական աստիճանակարգ:*** Մանր ավատատերը կախվածության մեջ էր ավելի խոշոր ավատատիրոջից և համարվում էր նրա ***վասալը***՝ զինվորական ծառան: Խոշոր ավատատերն իր վասալի համար ***սենյոր էր***՝ տեր: Ամեն ավատատեր կարող էր միաժամանակ լինել մեկի համար սենյոր, իսկ մեկ ուրիշի համար՝ վասալ: ***Վասալը ենթարկվում էր միայն իր անմիջական սենյորին:*** Գործում էր հետևյալ սկզբունքը. ***«Իմ վասալի վասալը իմ վասալը չէ»:***

Ավատատերերի հիմնական զբաղմունքը ռազմական գործն էր: Պատերազմի դեպքում թագավորն արշավանքի էր կանչում իր վասալներ կոմսերին և դուքսերին, սրանք իրենց հերթին կանչում էին բարոններին: Բոլորը պետք է ներկայանային իրենց զինված ջոկատներով: Սակայն վասալները ոչ միշտ էին ենթարկվում իրենց սենյորների



Ավատատիրական աստիճանակարգը

հրամաններին: Նման դեպքերում սենյորը կարող էր ուժով վասալից խլել իր տված ավատը:

ՃՈՐՏ ԵՎ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ

X դ. Արևմտյան Եվրոպայում ազատ գյուղացիներ գրեթե չէին մնացել: Ավատական կարգի ժամանակաշրջանում գյուղացիները գտնվում էին ավատատերերից տարբեր աստիճանի կախվածության մեջ: Գյուղացիները բաժանվում էին երկու խավի՝ ***համայնական և ճորտ գյուղացիների:***

Ճորտերի վերածվել էին նախկին ստրուկները, գերիները, նվաճված տարածքների բնակչությունը: ***Ճորտը ավատատիրոջից անձնական կախման մեջ գտնվող գյուղացին էր:*** Նա համարվում էր տիրոջ սեփականությունը՝ գրեթե ստրուկը, կարող էր ամուսնանալ միայն տիրոջ թույլտվությամբ: ***Ճորտի երեխան համարվում էր ճորտ:*** Տերը ճորտին իրավունք ուներ դատելու, պատժելու, անգամ՝ վաճառելու, շահագործելու ցանկացած ձևով՝ որպես տնային ծառա, արհեստավոր, զինվոր: Երբեմն տերը ճորտին հողաբաժին էր հատկացնում՝ բերքի կեսը վճարելու և տարբեր աշխատանքներ կատարելու պայմանով:

Գյուղացիության հիմնական մասը համայնական գյուղացիներն էին: Կամավոր կամ բռնությամբ գյուղական համայնքները ավատատերերից կախման մեջ էին ընկել: ***Համայնքի անդամ գյուղացիներն անձնապես ազատ էին:*** Ավատատերը նրանց վաճառելու իրավունք չուներ: Սակայն ***նրանք ավատատիրոջից հողային և դատական կախման մեջ էին***, քանի որ ապրում և աշխատում էին ավատատիրոջ տիրույթներում:

2

Ավատատիրական կարգի ձևավորման և հաստատման ժամանակաշրջանում գերիշխում էր ***բնատնտեսությունը:*** Բնատնտեսությունը տնտեսություն վարելու այն ձևն է, երբ ամեն ինչ արտադրվում է սեփական կարիքների համար, արտադրած մթերքը վաճառքի չի հանվում, հազիվ է իրենց բավականացնում: Գյուղացիներն իրենք էին պատրաստում իրենց անհրաժեշտ բոլոր իրերն ու գործիքները:

Բնամթերային տնտեսության պայմաններում ամեն ավատական տիրույթ դառնում էր ինքնաբավ: Դադարում էին առևտրա-տնտեսական կապերը երկրի մարզերի միջև:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Վաղ միջնադարում արհեստները դեռևս անջատված չէին գյուղատնտեսությունից: Ժամանակի ընթացքում գործիքները կատարելագործվում էին, և գնալով բարդանում էր դրանց պատրաստման եղանակը: Գյուղացիներից սկսում են առանձնանալ մարդիկ, որոնք տիրապետում էին տարբեր տեսակի իրեր պատրաստելու գիտելիքներին և հմտություններին:

Նման մարդկանց անվանում էին ***արհեստավորներ***: ***Աստիճանաբար արհեստն անջատվեց գյուղատնտեսությունից և դարձավ միջնադարյան քաղաքների առաջացման գլխավոր նախապայմանը:***

Քաղաքների առաջացման մյուս կարևոր պայմանը ***գյուղատնտեսական տեխնիկայի հետագա զարգացումն էր***: Երկաթյա գործիքների ավելի լայն կիրառումը նպաստեց ցանքատարածությունների ընդարձակմանը, ավելացավ անասունների գլխաքանակը:

Բերքատվության աճի շնորհիվ առաջացավ ***մթերքի ավելցուկ***, որը կարելի էր փոխանակել արհեստավորների պատրաստած որակյալ իրերի հետ: Այսպես գյուղացիների և արհեստավորների միջև սկիզբ էր առնում ապրանքափոխանակությունը:

Ժամանակի ընթացքում արհեստավորները սկսեցին հաստատվել այնպիսի վայրերում, որտեղ հեշտ էր հումք ձեռք բերել, արտադրել և վաճառել իրենց պատրաստած ապրանքները:***Արհեստավորների բնակավայրերից առաջացան միջնադարյան քաղաքները:***

3

Միջնադարյան քաղաքի կյանքը հիմնված էր արհեստի ու առևտրի վրա: Համքարությունների մեջ միավորված արհեստավորներն ավելի ու ավելի շատ ապրանքներ էին արտադրում վաճառքի համար: Նրանք հումքի, հացի և այլ սննդամթերքի կարիք ունեին: Տնտեսության բարելավման շնորհիվ գյուղացիների մոտ մնում էր մթերքի որոշ ավելցուկ, որը նրանք տանում էին քաղաք՝ վաճառելու: Ավատատերերը ևս սկսեցին իրենց մթերքը վաճառքի տանել քաղաքներ: Նրանց գրավում էին հմուտ վարպետների պատրաստած որակյալ կահույքը, հագուստը, ոսկերչական իրերը, զենքը: ***Քաղաքը դառնում էր շրջակա բնակավայրերի համար առևտրական կենտրոն:***

4

Նոր բառեր և հասկացություններ՝ *ֆեոդ, ֆեոդալ, կոռ, բահրա, գիլդիա, սենյոր, վասալ, ձորտ գյուղացի, բնատնտեսություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպես ձևավորվեց ավատատիրական հասարակարգը:
2. Ինչ է ավատը՝ ֆեոդը:
3. Բացատրեք ավատատիրական աստիճանակարգությունը:
4. Ավատատիրոջը ինչ հարկեր էին վճարում, ինչ հարկատեսակներ գիտեք:
5. Ինչ է համքարությունը, ում էր այն միավորում:
6. Ինչպես էին կոչվում առևտրականների միավորումները:
7. Ինչ է բնատնտեսությունը:

§ 39. ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1095 թ. Ֆրանսիայի Կլերմոն քաղաքի մերձակայքում հավաքված ժողովրդի առաջ ելույթ ունեցավ ***Հռոմի պապը և կոչ արեց հավաքվածներին շարժվել դեպի Պաղեստին՝ ազատելու Տիրոջ գերեզմանը մահմեդականների ձեռքից:*** Ըստ քրիստոնեական ավանդության՝ Պաղեստինի Երուսաղեմ քաղաքում է գտնվում Քրիստոսի գերեզմանը:

«Այդ երկրում հոսում են կաթ ու մեղր: Թող այժմ ռազմիկներ դառնան նրանք, ովքեր առաջ եղել են թալանչի, կռվել են իրենց եղբայրների ու ցեղակիցների դեմ: Ովքեր այստեղ վշտահար են ու աղքատ, այնտեղ կդառնան հարուստ»: Պապը խոստացավ թողություն տալ արշավանքի մասնակիցների բոլոր մեղքերին: Հենց տեղում մասնակիցներից շատերն իրենց հագուստի վրա կարմիր կտորից խաչեր կարեցին՝ ի նշան արշավանքին մասնակցելու ցանկության: Ահա ինչու դեպի Արևելք արշավանքի մասնակիցներին սկսեցին անվանել ***խաչակիրներ,*** իսկ սկսված արշավանքները՝ ***խաչակրաց արշավանքներ:***

1

ԽԱՉԱԿՐԱՑ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Առաջինը դեպի սուրբ վայրեր արշավանքի ելան գյուղացիները: ***1096 թ. գարնանը*** արևմտաեվրոպական տարբեր երկրներից գյուղացիների անկանոն ջոկատները Դանուբի հոսանքն ի վար շարժվեցին դեպի Կոստանդնուպոլիս: Գրեթե անզեն ու առանց պաշարի՝ գյուղացիները ճանապարհին զբաղվում էին թալանով ու կողոպուտով: Հունգարիայի և Բուլղարիայի բնակչությունը հակահարված էր տալիս նրանց: Մեծ կորուստներ կրելով ճանապարհին՝ գյուղացիների ջոկատներն ի վերջո հասան Կոստանդնուպոլիս: Բյուզանդիայի կայսրը կարգադրեց գյուղացիական ջոկատները նավերով փոխադրել Փոքր Ասիա: Սելջուկ թուրքերի հետ առաջին իսկ կռվում նրանց մեծ մասը կոտորվեց:

1096 թ. աշնանը Ֆրանսիայից, Գերմանիայից և Իտալիայից, խոշոր ավատատերերի ղեկավարությամբ, դեպի Արևելք շարժվեցին ասպետների լավ զինված ջոկատները: Կոստանդնուպոլսում միավորվելով՝ խաչակիրներն անցան Փոքր Ասիա: Ասպետներին հաջողվեց պարտության մատնել սելջուկ թուրքերին և առաջ շարժվել: Արշավանքը շարունակվեց գրեթե 3 տարի, և խաչակիրների հազիվ 1/5 մասը հասավ Երուսաղեմ:

1099 թ. հուլիսի 15-ին՝ մեկամսյա պաշարումից հետո, խաչակիրները գրավեցին Երուսաղեմը: Քաղաքում մահմեդական բնակչության ահավոր կոտորած եղավ: Տեղական քրիստոնյա բնակչության վրա ծանր հարկեր դրվեցին: Բացի դրանից՝ նրանք պետք է նաև տասանորդ վճարեին կաթոլիկ եկեղեցուն:

ԽԱՉԱԿՐԱՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սիրիայի և Պաղեստինի ծովամերձ մարզերում կազմվեցին խաչակիր պետություններ: Խաչակիր ասպետները նվաճված տարածքներում տեր դարձան ընդարձակ տիրույթների: ***Խաչակրաց պետություններում հաստատվեց ավատատիրական կարգը՝*** եվրոպական երկրների նմանությամբ: Երկիրը ծածկվեց ավատատերերի ամրոցներով:

Խաչակրաց պետությունները մշտական կռիվների մեջ էին հարևան մահմեդական պետությունների հետ: Դա էր պատճառը, որ խաչակրաց պետություններում ասպետները մշտապես զինվորական ծառայության մեջ էին: Նրանք կազմել էին ***օրդեններ՝ ռազմա-վանական միաբանություններ***, և ապրում էին յուրատեսակ ռազմական ճամբարներին բնորոշ կյանքով:

2

ԽԱՉԱԿՐԱՑ ՇԱՐԺՄԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Խաչակրաց արշավանքները շարունակվեցին գրեթե 200 տարի՝ XI դ. վերջից մինչև XIII դ. վերջը: Առաջին արշավանքից հետո մահմեդական իշխանությունները համախմբվեցին և 1144 թ. հետ գրավեցին Եդեսիան: Խաչակիրների դրությունը ծանրացավ, երբ Եգիպտոսում իշխանության եկավ սուլթան ***Սալահ ադ Դինը: 1187թ. նա խաչակիրներից հետ գրավեց Երուսաղեմը***:

Երուսաղեմի կորուստը զայրույթի մեծ ալիք բարձրացրեց Եվրոպայում: Հռոմի պապի կոչով ***1189 թ. խաչակրաց III արշավանքը գլխավորեցին Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ I Բարբարոսան, Անգլիայի թագավոր Ռիչարդ I Առյուծասիրտը և Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ II-ը:*** Երեք արքաների արշավանքը հենց սկզբից անհաջող ընթացավ: Կիլիկիայի գետերից մեկում խեղդվեց Ֆրիդրիխ I-ը: Ակրա քաղաքը գրավելուց հետո Ֆիլիպ II-ը վերադարձավ Ֆրանսիա: Միայնակ մնացած Ռիչարդ I-ը հարկադրված Եգիպտոսի սուլթանի հետ հաշտության պայմանագիր կնքեց, որով Երուսաղեմը մնաց մահմեդականներին, բայց քրիստոնյաներին թույլատրվեց անարգել այցելել սուրբ վայրերը:

3

Խաչակրաց շարժմանը մեծ վնաս հասցրեց ***IV արշավանքը:*** Խաչակրաց հաջորդ (V–VIII) արշավանքներն ավարտվեցին անարդյունք: Խաչակիրները կորցրին բոլոր տիրույթները Արևելքում, քրիստոնեական սրբավայրերը մնացին մահմեդականների ձեռքում:

4

Խաչակրաց շարժումը մեծ աղետներ և մարդկային կորուստներ պատճառեց Արևելքի ժողովուրդներին: Եվրոպացիները ևս մեծաթիվ զոհեր տվեցին: Չնայած դրան, խաչակրաց արշավանքների նշանակությունը Արևմտյան Եվրոպայի համար շատ մեծ էր:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *Հոսպիտալյերների օրդեն, Տամպլիերների օրդեն, Տևտոնյան օրդեն, Անտիոքի իշխանություն, Տրիպոլիի դքսություն, Եդեսիայի կոմսություն, Երուսաղեմի թագավորություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին խաչակրաց արշավանքների պատճառները:
2. Ե՞րբ տեղի ունեցավ խաչակրաց առաջին արշավանքը, ե՞րբ արշավանքի ելան գյուղացիները, ե՞րբ ասպետները:
3. Ի՞նչ խաչակրաց պետություններ հիմնվեցին Արևելքում:
4. Ովքե՞ր գլխավորեցին խաչակրաց երրորդ արշավանքը, և ե՞րբ այն տեղի ունեցավ:
5. Ե՞րբ տեղի ունեցավ խաչակրաց չորրորդ արշավանքը և ի՞նչ աղետալի հետևանք ունեցավ Բյուզանդական կայսրության համար:
6. Որո՞նք են խաչակրաց արշավանքների հետևանքները:

§ 40. ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ» ՏԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1

Ներկայիս Մոնղոլիայի և Արևելյան Սիբիրի հարավային մասում ապրող ընդհանուր ծագում ունեցող ցեղերը իրենց անվանում էին ***մոնղոլներ,*** հարևան թյուրքերը նրանց կոչում էին ***թաթարներ***: Մոնղոլները զբաղվում էին քոչվոր անասնապահությամբ:

2

Մոնղոլական ցեղերի միավորումը և պետության ստեղծումը իրականացրեց նոյոն ***Թեմուչինը,*** ով դաժան պայքարում կարողացավ իրեն ենթարկել մի շարք ցեղերի: Նրա ռազմական սխրանքների համբավը արագ տարածվեց բոլոր մոնղոլների շրջանում: ***1206 թ. մոնղոլական ցեղերի կուրուլթայը՝*** համաժողովը, ***Թեմուչինին ընտրեց մոնղոլների մեծ խան:*** Չինական կայսրերի օրինակով ***Թեմուչինը (1155–1227) ընդունեց Չինգիզ խան*** (ծովի տիրակալ) անունը, որով և մտավ պատմության մեջ:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Չինգիզ խանը համախմբեց մոնղոլական ցեղերը, մտցրեց կենտրոնացված կառավարում, սահմանեց ընդհանուր օրենքներ, անցկացրեց ռազմական և վարչական բարեփոխումներ: Հպատակեցնելով հարևան քոչվոր այլ ցեղերի ևս, նա ձեռնամուխ եղավ Չինաստանի նվաճմանը: 1215 թ. մոնղոլները գրավեցին Պեկինը և մի քանի տարում հպատակեցրին Հյուսիսային Չինաստանը: 1218–1221 թթ. Չինգիզ խանի բանակները գրավեցին ***Խորեզմը, Բուխարան, Աֆղանստանը և Արևելյան Իրանը***:

3

Չինգիզ խանի արշավանքների արդյունքում ստեղծվեց հսկայածավալ մի տերություն, որի մեջ մտնում էին Մոնղոլիան, Հարավային Սիբիրը, Հյուսիսային Չինաստանը և Միջին Ասիան: Մեծ խանի նստավայրն էր ***Կորակորումը՝*** Արևմտյան Մոնղոլիայում:

Մոնղոլական նվաճումները շարունակվեցին նաև Չինգիզ խանի մահից հետո: Նրա թոռը՝ ***Բաթու խանը, 1236 թ.*** արշավանքի ելավ իրականացնելու իր պապի նվաճողական ծրագիրը՝ ***«տարածելու մոնղոլների տիրապետությունը մինչև վերջին ծովը»:***

Մոնղոլական զորքերը ներխուժեցին Ռուսիայի տարածք: Մասնատված ռուսական իշխանությունները ի վիճակի չեղան կանգնեցնելու թշնամուն:

Մոնղոլները 1237–38 թթ. գրավեցին, թալանեցին և ավերեցին հյուսիսարևելյան Ռուսիայի քաղաքներն ու գյուղերը: Հաջորդ տարի նրանք նվաճեցին հարավարևմտյան Ռուսիայի իշխանությունները, իսկ ***1240 թ. պաշարեցին ու գրավեցին «համառուսական մայրաքաղաք» Կիևը:*** Միայն Նովգորոդի երկիրը զերծ մնաց ներխուժումից ու ավերածությունից, բայց ստիպված էր ճանաչել մոնղոլների գերիշխանությունը և նրանց հարկ վճարել:



Այնուհետև մոնղոլները ներխուժեցին Լեհաստան, 1241 թ. Լիգնիցայի ճակատամարտում ջախջախեցին լեհական և գերմանական զորքերին, ապա թալանեցին ու ավերեցին Չեխիան: Մոնղոլների հիմնական ուժերը Բաթու խանի գլխավորությամբ պարտության մատնեցին հունգարներին և դուրս եկան Ադրիատիկ ծովի ափերը: Բաթու խանը հայտարարեց, որ կատարել են Չինգիզ խանի ծրագիրը, և որ սա է վերջին ծովը: Դրանից հետո մոնղոլական զորքերը հարուստ ավարով հետ դարձան մերձվոլգյան տափաստանները: ***Մոնղոլական զորքերի ցանկացած անհաջողություն կարող էր ի չիք դարձնել նախորդող նվաճումների արդյունքը:***

ՄՈՆՂՈԼՆԵՐԻ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ» ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Չինգիզ խանի և նրա հաջորդների նվաճումների արդյունքում ***ստեղծվեց «Եվրասիական» հսկայածավալ մի տերություն, որի սահմանները ձգվում էին Խաղաղ օվկիանոսից մինչև Դանուբի գետաբերանը***, Պարսից ծոցից մինչև սիբիրյան տայգան: Այդ հսկայածավալ տերությունը բաժանվեց ժառանգական *5* ***ուլուսի***՝ փոխարքայության, որոնք կառավարում էին Չինգիզ խանի որդիներն ու թոռները:

Մոնղոլական տիրապետությունը մեծագույն դժբախտություն էր հպատակ ժողովուրդների համար: Երբեմնի ծաղկուն բնակավայրերը վերածվեցին արոտավայրերի, բնակչությունը կոտորվեց կամ ստրկության տարվեց: Մոնղոլներին պետք էին անմարդաբնակ արոտավայրեր իրենց անասուններն արածեցնելու համար:

Սակայն մոնղոլական տերության ստեղծումը նաև նոր հնարավորություններ բացեց Արևմուտք–Արևելք կապերի ընդլայնման համար: Մոնղոլներից առևտրի արտոնություն ստացած Կիլիկիայի հայ վաճառականների միջոցով չինական յուրահատուկ և մեծ պահանջարկ վայելող ապրանքները վաճառքի էին տարվում Արևմտյան Եվրոպայի երկրներ: Իսկ որ ավելի կարևոր էր, չինացիների շատ հայտնագործություններ՝ վառոդի օգտագործումը, թղթի պատրաստումը, գրատպությունը և այլն, հասանելի դարձան մյուս ժողովուրդներին և սկսեցին լայնորեն կիրառվել Եվրոպայում:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Քաղաքակրթական մակարդակով մոնղոլները անհամեմատ ցածր էին հպատակեցված ժողովուրդներից: Նրանց տիրապետությունը պահվում էր բացառապես ռազմական ուժով: Հպատակ ժողովուրդները մոնղոլներին խորապես ատում էին և ձգտում էին թոթափել նրանց տիրապետությունը:

Չինաստանում մոնղոլական տիրապետությունը տևեց մեկ դար, Մերձավոր Արևելքի երկրներում՝ 1,5 դար, Ռուսիայում՝ մոտ 2,5 դար: Արդեն XV դարի կեսից մոնղոլական «Եվրասիական» տերությունը ֆեոդալական մասնատվածության հետևանքով թուլացավ և տրոհվեց մի շարք ինքնուրույն խանությունների: Մոնղոլները աստիճանաբար ձուլվեցին նվաճված երկրների զարգացած հասարակություններին և ներկայումս ամփոփ բնակվում են միայն բուն Մոնղոլիայի սահմաններում:

Մոնղոլ նվաճողներից կրած կորուստների ու տանջանքների, նրանց դեմ իրենց մղած անխոնջ պայքարի գնով, նվաճված ժողովուրդները պատմեշ հանդիսացան և փրկեցին Արևմտյան Եվրոպան մոնղոլական տիրապետության սարսափներից:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *յուրտ, նուքեր, նոյոն, թումեն, ուլուս*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ էին ապրում մոնղոլները և ինչ անունով էին հայտնի եվրոպացիներին:
2. Ո՞վ և երբ մոնղոլներին միավորեց մեկ պետության մեջ:
3. Ինչ գիտեք մոնղոլական ռազմական ուժի կառուցվածքի մասին:
4. Թվարկեք Չինգիզ խանի նվաճած երկրները:
5. Ինչ տարածքներ նվաճեցին Չինգիզ խանի հաջորդները:
6. Մինչև ո՞ւր էին ձգվում «Եվրասիական տերության» սահմանները:

§ 41. ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՍԿԻԶԲԸ

XIV դ. Անգլիայի և Ֆրանսիայի միջև երկարատև ու ծանր պատերազմ սկսվեց: Ընդմիջումներով այն շարունակվեց ավելի քան հարյուր տարի և պատմության մեջ մտավ ***Հարյուրամյա պատերազմ (1337–1453)*** անվանմամբ:

Անգլո-ֆրանսիական տարածքային վեճերն առաջացել էին դեռևս XI դ., երբ ***Ֆրանսիայի հյուսիսային Նորմանդիա մարզի դուքս Վիլհելմը 1066 թ. գրավեց և հռչակվեց Անգլիայի թագավոր:*** Հետագայում Անգլիային անցան նաև ***Անժու, Աքվիտանիա, Գիյեն*** և ֆրանսիական այլ մարզեր: Այնպես որ, ***XIV դ. Անգլիայի թագավորը ավելի շատ ֆրանսիական տարածքների էր տիրում, քան Ֆրանսիայի թագավորը:***

Ֆիլիպ IV-ի որդիների մահից հետո գահի ուղղակի ժառանգներ չկային և Ֆրանսիայում արքա ընտրեցին նրա ազգական ***Ֆիլիպ VI Վալուային***: Քանի որ Անգլիայի թագավոր ***Էդուարդ III-ը*** մոր կողմից Ֆիլիպ IV թագավորի թոռն էր, նա իրեն հայտարարեց Անգլիայի և Ֆրանսիայի թագավոր և իր իրավունքները որոշեց հաստատել զենքի ուժով: Այսպես ***1337 թ. սկսվեց Հարյուրամյա պատերազմը:***

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԸ XIV ԴԱՐՈՒՄ

ԱՆԳԼԻԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ 1337-1453 թթ.
Անգլիայի տիրությունները Ֆրանսիայում պատերազմի նախօրեին
Ռոքերի տեղաշարժերը XIV դ.
Անգլիայի տիրությունը 1360թ.
Անգլիայի նվաճումների հարավային սահմանագիծը 1429թ.
Օռլեանի պաշարումի անգլիացիների կողմից 1428-1429թ.
Անգլիացիների դեմ պարտիզանական պայքարի շրջանները
Ֆրանս. զորքերի գործողությունները Ժաննա Դ'Արկի գլխավորությամբ
Պատերազմի ավարտից հետո Անգլիացիներին մնացած տարածքներ
Կարևորագույն ճակատամարտերի տարեթիվը և վայրը
Գրաղգիական ապատամբությունները
Ֆրանսիայում 1358թ. (Ժակերիա)
Անգլիայում 1381թ. Ուոտ Թայլերի գլխավորությամբ
ՍԵՎԵՐՆ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՊԵՐԹ
Նյուքասլ
Յորք
ԱՆԳԼԻԱՅԻ ԹԱԳ.
Թեմզ
Գեմբրիջ
ԼՈՆԴՈՆ
Վինչեստեր
Ֆրանսիա
Գասկոնիա
Գասկ
Գիեն
Գիեն
Գասկ
Գասկ
Գասկ

պարտության մատնեցին ֆրանսիական զորքերին: Դրանից հետո անգլիացիները հարձակում սկսեցին հարավում՝ Աքվիտանիայից: ***1356 թ. Պուատիե քաղաքի մոտ ճակատամարտում*** ֆրանսիական զորքերը կրկին ծանր պարտություն կրեցին, Ֆրանսիայի թագավորը գերի ընկավ: Անգլիացիները տեր ու տնօրեն դարձան Ֆրանսիայի և՛ հյուսիսում, և՛ հարավում:

Պուատիեի ճակատամարտում կրած պարտությունից մի քանի տարի անց Անգլիայի և Ֆրանսիայի միջև հաշտություն կնքվեց: Ֆրանսիայի նոր թագավոր Կառլ V-ը, օգտագործելով դադարը, ավելացրեց վարձկանների ջոկատները, կառուցեց նոր նավատորմ, ստեղծեց ուժեղ հրետանի: Վերսկսելով պատերազմը՝ ֆրանսիացիները ***1380*** թվականին հետ գրավեցին կորսված տարածքների մեծ մասը:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

XV դ. սկզբին Ֆրանսիայում վերսկսվեցին ֆեոդալական երկպառակությունները, գյուղերի և քաղաքների ավերումն ու թալանը: Հաճախացան ծանր հարկերից ու անվերջ կռիվներից դժգոհ գյուղացիական ելույթները:

Օգտվելով Ֆրանսիայում տիրող անկայուն վիճակից՝ Անգլիան վերսկսեց պատերազմը: ***1415 թ. Ազենկուր*** քաղաքի մոտ ճակատամարտում անգլիական զորքերը նոր ծանր պարտության մատնեցին ֆրանսիացիներին: Անգլիացիների ձեռքն անցան երկրի ամբողջ հյուսիսը և մայրաքաղաք Փարիզը: ***Անգլիայի Հենրիխ V թագավորը հռչակվեց նաև Ֆրանսիայի թագավոր:*** Անգլիացիներին դաշնակցեց Բուրգունդիայի դուքսը: Անգլիական զորքը պաշարեց Օռլեան քաղաքը: Օռլեանի անկումը անգլիացիներին հնարավորություն կտար միավորելու հյուսիսում և հարավում իրենց նվաճած տարածքները: ***Օռլեանի մոտ վճռվում էր Ֆրանսիայի ճակատագիրը:***

Անգլիացիների դաժանությունները և երկրի անկախությունը կորցնելու վտանգը համաժողովրդական ազատագրական պայքարի հանեց ֆրանսիացիներին: Այդ պայքարը գլխավորեց գեղջկուհի ***Ժաննա դ'Արկը:***

1

Օռլեանի մոտ անգլիացիների դեմ վճռական ռազմական գործողություններ սկսվեցին: Ժաննայի հաղթանակի հավատը և խիզախությունը ոգևորեց ֆրանսիացի զինվորներին: ***1429 թ. Օռլեանը ազատագրվեց:*** Դա բեկում մտցրեց պատերազմի ընթացքի մեջ: Ժաննայի մասնակցությամբ ֆրանսիական ուրիշ տարածքներ ևս ազատագրվեցին: Ժաննան թագաժառանգ Կառլին ուղեկցեց Ռեյմս՝ այն քաղաքը, որտեղ հնուց ի վեր թագադրվում էին ֆրանսիական թագավորները: ***Կառլի թագադրվելը Ֆրանսիայի թագավոր նշանակում էր Ֆրանսիայի անկախության վերականգնում:***

1430 թ. Ժաննան գերի ընկավ: Անգլիացիները նրան մեղադրեցին հերետիկոսության և կախարդության մեջ և հանձնեցին ինկվիզիցիայի դա-

տարանին: 19-ամյա Ժաննային այրեցին խարույկի վրա: Դարեր անց եկեղեցին Ժաննային արդարացրեց, իսկ ֆրանսիացի ժողովուրդը նրան համարում է ազգային հերոսուհի՝ ***«Օռլեանի կույս»:***

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԸ: ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Ժաննա դ՚Արկի մահից հետո ազատագրական պատերազմը շարունակվեց նոր թափով: Ֆրանսիայի թագավորի կողմն անցավ Բուրգունդիայի դուքսը: Փարիզում անգլիացիների դեմ ապստամբություն սկսվեց: Ֆրանսիայի մայրաքաղաքն ազատագրվեց: Ֆրանսիական զորքերին հաջողվեց անգլիացիներին երկրից դուրս քշել: ***1453 թ. կնքվեց հաշտության պայմանագիր, 100-ամյա պատերազմն ավարտվեց:*** Ֆրանսիայում անգլիացիների ձեռքին մնաց միայն Կալե նավահանգիստը:

Պատերազմում տարած հաղթանակը բարենպաստ պայմաններ ստեղծեց Ֆրանսիայի միավորումն ավարտելու համար: Այդ խնդիրը հաջողությամբ լուծեց ***Լյուդովիկոս XI-ը:*** Նրա գլխավոր հակառակորդը ***Բուրգունդիայի դուքս Կարլ Խիզախն*** էր, որը ձգտում էր Ֆրանսիայից անկախ իր պետությունը ստեղծել: Պայքարը նրանց միջև շարունակվեց 12 տարի: Շվեյցարացիների դեմ պատերազմում բուրգունդացիները պարտություն կրեցին, իսկ դուքսն էլ սպանվեց: Բուրգունդիայի դքսի տիրույթների մեծ մասին տիրացավ Լյուդովիկոս XI-ը: Թագավորը Ֆրանսիային միացրեց նաև երկրի հարավային մարզերը՝ Մարսել քաղաքով:

Ֆրանսիան դարձավ Եվրոպայի տարածքով ամենամեծ ազգային պետությունը:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *Անժու, Աքվիտանիա, Գիյեն, Կրեսիի, Պուատիե, Ազենկուր, «Օռլեանի կույս»*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին պատերազմի պատճառները:
2. Բացատրե՛ք պատերազմի պատճառների և առիթի տարբերությունը:
3. Որո՞նք են պատերազմի սկզբնական շրջանում ֆրանսիացիների պարտության պատճառները:
4. Ո՞վ էր Ժաննա դ՚Արկը, ինչի՞ համար էր նա պայքարում:
5. Ե՞րբ ավարտվեց Հարյուրամյա պատերազմը, ո՞ւմ հաղթանակով:
6. Ե՞րբ հանդես եկավ ֆրանսիական ազգային միասնական պետությունը:

§ 42. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում, թուրք-սելջուկների անկում ապրող պետության տարածքում, ***1299 թ. Օսման բեյի*** ղեկավարությամբ կազմավորվեց ավատատիրական ռազմատենչ մի նոր իշխանություն: Այդ իշխանության կազմում գտնվող թուրքական ցեղերին, մյուսներից տարբերելու համար, սկսեցին անվանել ***օսման թուրքեր***:

Օսմանյան իշխանությունը, թուլացող Բյուզանդական կայսրությունից տարածքներ գրավելով, XIV դ. զգալիորեն ընդարձակվեց, ամրապնդվեց և անկախացավ սելջուկներից: Հաջորդ իշխաններից ***Մուրադ I-ը 1362 թ. արդեն իսկ ընդունեց սուլթան՝*** «տիրակալ» տիտղոսը:

Սուլթանի իշխանությունը անսահմանափակ էր: Նա իր ցանկացած հպատակի կարող էր զրկել պաշտոնից և մահապատժի ենթարկել: Մահմեդական հոգևորականները հավատացյալներին ներշնչում էին, որ սուլթանը «աստծո ստվերն է երկրի վրա»: Թուրք-օսմանները մեծաքանակ զինական ուժ կազմավորեցին, որը գերազանցում էր եվրոպական բանակներին:

Օսմանյան բանակի հարվածային ուժը մեծաթիվ հեծելազորն էր: Այն կազմված էր ծառայության դիմաց սուլթանից հողային կալվածքներ ստացող զինվորականներից: Հպատակեցված քրիստոնյա երկրներում թուրքերը ծնողներից խլում էին 6-7 տարեկան տղա երեխաներին, մուսուլմանական հավատի փոխում, ռազմական կրթության էին տալիս՝ դարձնելով արհեստավարժ զինվոր: Նման զինվորականներից էր կազմված օսմանյան բանակի ամենամարտունակ զորամասը՝ ***ենիչերիների կորպուսը***: Պատերազմում ենիչերիները աչքի էին ընկնում իրենց քաջությամբ և դաժանությամբ: Ենիչերի զինվորականները խիզախություն և նվիրվածություն դրսևորելով՝ սուլթանից պարգևներ էին ստանում և, իրենց տիրակալին հավատարիմ ծառայելով, բարձր պետական պաշտոնների էին հասնում:

Թուլացած Բյուզանդիան, որը հազիվ էր պաշտպանվում Սերբիայի և Բուլղարիայի հարձակումներից, հաճախակի դիմում էր օսման-թուրքերի ռազմական օգնությանը: Անցնելով Եվրոպա, թուրք-օսմանները սկզբում ասպատակում էին Բալկանյան երկրները, ապա անցան

1

նվաճումների: ***XIV դ. վերջին Բուլղարիան և Սերբիան ընկան օսման-թուրքերի տիրապետության տակ:***

Կենտրոնական Եվրոպայի երկրների վրա կախվեց թուրք-օսմանների կող-մից նվաճման սպառնալիքը: Հռոմի պապի կոչով նրանց դեմ Լեհաստանի և Հունգարիայի թագավորները մի քանի խաչակրաց արշավանքներ կազ-մակերպեցին, ցավոք, դրանք ավարտվեցին խաչակիրների պարտությամբ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ԱՆԿՈՒՄԸ

Թուրք-օսմանները վաղուց էին երազում տիրանալ Կոստանդնուպոլիսին: Երբեմնի հզոր Բյուզանդական կայսրությունից մնացել էին միայն մայրա-քաղաքը և շրջակա ոչ մեծ տարածքը: ***Սուլթան Մեհմեդ II-ը 100000-անոց բանակով ցամաքից և ծովից շրջապատեց Կոստանդնուպոլիսը:*** Օսմանները, հրավիրված եվրոպացի մասնագետների օգնությամբ, մեծաթիվ նավատորմ կառուցեցին և հզոր թնդանոթներ ձուլեցին:

Պաշարման 53-րդ օրը՝ ***1453 թվականի մայիսի 29-ին,*** Կոս-տանդնուպոլիսը գրավվեց: ***Բյուզանդական կայսրությունը դադա-րեց գոյություն ունենալ:*** Կոստանդնուպոլիսը թուրքերը կոչեցին ***Իսլամբուլ և հռչակեցին Օսմանյան տերության մայրաքաղաք:***

2

Սբ. Սոֆիայի տաճարը

Սուլթանը երեք օրով քաղաքը հանձնեց իր զորքերի թալանին ու կողոպուտին: Քաղաքի պաշտ-պանների մի մասը կոտորվեց, բնակչության մեծ մասը (60000) վաճառվեց ստրկության: Սուրբ Սոֆիայի տաճարի գմբեթից իջեցվեց խաչը և բարձրացվեց կիսալուսինը:

Այսուհետև, մահմեդական-ությունը դարձավ Եվրոպայի քաղաքական կյանքի կարևոր գործոններից մեկը:

ՕՍՄԱՆՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

XV դարի երկրորդ կեսին օսմանները գրավեցին ողջ ***Հունաստանը, Մակեդոնիան և Ալբանիան***, ապա իրենց ենթարկեցին ***Ղրիմի խանությունը***: Համառ կռիվներից հետո իրենց սուլթանի վասալը ճանաչեցին ***Մոլդավիան և Վալախիան:*** Ասիայում օսմանների տիրապետության տակ անցան Միջագետքը, Հայաստանը և Վրաստանը, Սիրիան և Արաբիան՝ ***Մեքքա***


ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XV-XVII ԴԴ.
Սերբիայի, Բուլղարիայի, Վալախիայի և Մոլդովիայի տարածքը XIV դ. կեսին
Բյուզանդական կայսրության սահմանները XIV դ. կեսին
Օսման-թուրքական տիրույթները XIV դ. կեսին
1444 Ճակատամարտի տարեթիվը և վայրը
1453 Կոստանդնուպոլսի անկումը 1453 թ.
Օսման թուրքերի նվաճած տարածքները մինչև 1683 թ.
Օսմանյան կայսրությունից վասալական կախում ունեցող տարածքներ
Ժողովրդական-ազատագրական ապստամբությունները XVI-XVII դդ.
Ռեչ Պոսպոլիտա
Վիեննա
ԱՎՍՏՐԻԱ
Բուդա
Պեշտ
ՀՈՒՆԳԱՐԻԱ
Ցրամ
Ստամբուլի նեղուց
Ստամբուլ
Ցասսի
Ռուսական պետություն
Օրիմի խանություն
Բախչիսարայ
Սև ծով
Վալախիայի իշխան
Բուխարեստ
Սերբիա
Տրոսվոյ 1389
Տիռնովա 1444
Բուլղարիա
Վառնա
1453
Վասիլիոս (Կոստանդնուպոլիս)
Անկարա
ՎՐԱՍՏԱՆ
Կասպից ծով
ՀԱՅԱՍՏԱՆ
ՔՐԴԵՐ
Տիգրիս
Եփրատ
ԻՐԱՔ
Թավրիզ
Թեհրան
Սպահան
Բաղդատ
Ուրմիա
Ուրարտու
Ասորիներ
Ասորիստան
Ասորիներ
Երուսաղեմ
Ուրարտու
Ալեքսանդրիա
Կահիրե
Ալեքսանդրիա
Ալեքսանդրիա
Ալեքսանդրիա

§ 43. ԻՐԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ

226 թ. Պարս նահանգի կառավարիչ ***Արտաշիրը,*** տապալելով իշխող Պարթև Արշակունի արքայատոհմը, սկիզբ դրեց Իրանում պարսկական ***Սասանյան արքայատոհմին:***

Արտաշիր Ի-ը (226-241) հռչակվեց ***շահնշահ՝*** արքայից արքա, տեղական արքայիկները վերածվեցին մարզերի կառավարիչների: Շահնշահի իշխանությունը հենվում էր բանակի վրա, որը կազմվում էր զինապարտության սկզբունքով: Վարչական կառավարումը իրականացնում էր շահնշահի կողմից նշանակվող ***Մեծ վազուրգը***, ում իրավասության մեջ էին մտնում հարկերի հավաքումը, ամրոցների, ճանապարհների և կամուրջների շինարարությունը: Հռոմեական կայսրության դեմ ***Շապուհ Ի-ի (241-272)*** հաղթական պատերազմի արդյունքում Սասանյան տերությանը միացվեցին Հյուսիսային Միջագետքը, Սիրիան և Հայաստանը:

1

III-IV դդ. Իրանում ձևավորվում էին ավատատիրական հարաբերություններ: Մանր ավատատերերը կոչվում էին ***ազատներ:*** Խոշոր հողատարածքներ էին կենտրոնանում իշխող արքայատոհմի ազգականների և մերձավորների ձեռքում: Գյուղացիները միավորված էին համայնքներում, որոնք հողային կախման մեջ էին պետությունից կամ ավատատերերից: Սասանյանները հովանավորում էին ***Զրադաշտական կրոնը*** և, տերության միասնականությունը ամրապնդելու համար, փորձում էին այն պարտադրել հպատակ ժողովուրդներին:

2

3

Սասանյան Պարսկաստանը իր հզորության բարձրակետին հասավ ***Խոսրով Ի-ի (531-579)*** օրոք: Նա բարեփոխեց պետության կառավարման համակարգը, սահմանափակեց քրմության ազդեցությունը, կարգավորեց հարկերը, ուժեղացրեց բանակը: Խոսրով Ի-ը ընդարձակեց տերության սահմանները դեպի արևելք, իսկ արևմուտքում դրանք հասցրեց մինչև Միջերկրական ծով, հարավում՝ մինչև Եմեն:

ԻՐԱՆԸ ՕՏԱՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

VII դ. կեսերին Սասանյան Պարսկաստանը նվաճվեց արաբների կողմից: Իրանի տարածքը ներառվեց Արաբական Խալիֆայության մեջ, բնակչությունը բռնությամբ իսլամացվեց: VII-VIII դդ. ավատատիրական կարգը Իրանում

զարգացավ և ամրապնդվեց: Արդեն IX դ. վերջին, օգտվելով խալիֆի իշխանության թուլացումից, որոշ էմիրություններ Իրանում վերածվեցին ժառանգական ինքնուրույն իշխանությունների:

XI դ. կեսին սելջուկ թուրքերը գրավեցին Բաղդադը և խալիֆայությանը ենթակա Իրանի ողջ տարածքը: XIII դ. կեսին Իրանը նվաճեցին մոնղոլ-թաթարները և վերջ դրեցին Արաբական խալիֆայությանը: Մոնղոլների տիրապետությունը Իրանում շարունակվեց մինչև XIV դ. կեսերը:

4

XIV դ. վերջին Իրանը կարճ ժամանակով մտավ ***Լենկ Թեմուրի*** տերության կազմի մեջ, ում մահից հետո XV դ. սկզբին Իրանի տարածքում ձևավորվեցին թուրքմենական, քրդական, աֆղանական վաչկատուն ցեղերի մի շարք իշխանություններ:

ԻՐԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ. ՍԵՖՅԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԸ

Շիա մահմեդականների հոգևոր առաջնորդ ***Սեֆի Էդ Դինի*** սերունդները XIV դ. սկսած իշխում էին Ատրպատականի Արդաբիլ քաղաքում: Ատրպատականում և Հայաստանում հաստատված թրքալեզու վաչկատուն ցեղերը, ի նշան շեյխ Սեֆիին իրենց հավատարմության, կրում էին կարմիր գլխարկներ, ինչի համար կոչվեցին «***ղըզլբաշներ»՝ կարմրագլուխներ:***

Սեֆիի սերնդից ***Իսմայիլը 1502 թ***. սկիզբ դրեց Իրանում ***Սեֆյան հարստությանը,*** որն իշխեց մինչև XVIII դ. սկիզբը: Նա ղըզլբաշներից ստեղծեց մարտունակ բանակ և իր գերիշխանությունը հաստատեց Իրանի մեծ մասում, Հարավային Կովկասում և Միջագետքում:

Իրանի միավորումից անհանգստացած օսմանյան սուլթան Սելիմ I-ը մեծ բանակով շարժվեց դեպի Իրան: ***1514 թ. Չալդրանի ճակատամարտում*** շահ Իսմայիլի բանակը ջախջախվեց, մայրաքաղաք Թավրիզը գրավվեց և կողոպտվեց: Թուրքերին անցան ողջ Հարավային Կովկասը, Միջագետքը և Իրանի հյուսիսարևմտյան մարզերը:

ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Նոր բանակ կազմելով, Շահ Իսմայիլը մի քանի տարի անց հետ գրավեց Թավրիզը, Միջագետքը և Հարավային Կովկասը: Թուրք-պարսկական պատերազմը փոփոխակի հաջողությամբ շարունակվեց մոտ 30 տարի: ***1555 թ. Ամասիայի*** հաշտության պայմանագրով Իրաքը մնաց Օսմանյան տերությանը, Ատրպատականը մնաց Իրանին, իսկ Հարավային Կովկասի տարածքը գրեթե հավասար բաժանվեց կողմերի միջև:

1587 թ. պարսիկ ավագանու պահանջով գահ բարձրացավ երիտասարդ շահ ***Աբաս I-ը (1587-1629):*** Նա ստիպված էր ***1590 թ.*** Օսմանյան տերության հետ կնքել Իրանի համար ծանր հաշտության պայմանագիր՝ զիջել ողջ Հարավային Կովկասը և Ատրպատականի մեծ մասը:

5

Հենվելով պարսիկ ավագանու և խոշոր վաճառականների վրա, շահ Աբասը սահմանափակեց վաչկատուն ցեղերի ավագանու ազդեցությունը, ամրապնդեց կենտրոնական իշխանությունը, իրականացրեց երկրում վարչական ու ռազմական բարեփոխումներ:

6

1603 թ. իրանական բանակը հարձակման անցավ, գրավեց Թավրիզի, Նախիջևանի, Երևանի բերդերը և հետ գրավեց Օսմանյան տերությանը նախկինում զիջած տարածքները: Օսմանյան տերությունը մեծ բանակ ուղարկեց պարսկական զորքերի դեմ:

Թուրք-պարսկական պատերազմն ավարտվեց ***1639 թ. Կասրե Շիրինի*** հաշտության պայմանագրով: Հայաստանի արևելյան մասը մնաց Իրանի, իսկ արևմտյան մասը՝ Օսմանյան իշխանության տակ, սահմանն անցնում էր Արաքս և Ախուրյան գետերով, Կոտուրի լեռներով:

Շահ Աբասի գահակալության տարիները Սեֆյան Իրանի տնտեսական, քաղաքական և մշակութային բարգավաճման ժամանակաշրջանն էին: Նոր Ջուղայում հաստատված հայ վաճառականներին լայն արտոնություններ տալով՝ Իրանը մեծ շահույթ էր ստանում միջազգային առևտրից: Շահ Աբասը դիվանագիտական և առևտրական կապեր հաստատեց Եվրոպայի, Ռուսաստանի և Հնդկաստանի հետ, հետաքրքրվում էր այդ երկրների տեխնիկական և մշակութային նվաճումներով, անգամ երիտասարդ նկարիչների սովորելու էր ուղարկել Իտալիա:

7

Իրանի միջնադարյան քաղաքակրթությունը աշխարհի առաջատար քաղաքակրթություններից մեկն է, զգալի ներդրում է կատարել և արժանի տեղ է գրավում համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *Ջրաղաշտականություն, Մեծ վազուրգ, շահնշահ, ղզլբաշ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Իրանում ե՞րբ տապալվեց Արշակունիների արքայատոհմը, և ի՞նչ արքայատոհմ հաստատվեց:
2. Ո՞ւմ օրոք Սասանյան տերությունը հասավ իր հզորության գագաթնակետին:
3. Ի՞նչ օտար նվաճողներ տիրեցին Իրանին VII–XIV դարերում:
4. Ե՞րբ Իրանում հաստատվեց Սեֆյան արքայատոհմը և մինչև ե՞րբ կառավարեց:
5. Ի՞նչ բարեփոխումներ է կատարել շահ Աբաս 1-ինը:
6. Ի՞նչ պայմանագրերով են ավարտվել թուրք-պարսկական պատերազմները:

§ 44. ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՄԻԱՁՆԱԴԱՐՈՒՄ

ՀՈՒՊՏԱՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

I–III դարերում Հնդկաստանը տրոհված էր մրցակցող ինքնուրույն իշխանությունների, որոնց տիրակալները կրում էին ***ռաջա՝ իշխան*** տիտղոսը:

IV դարի սկզբին Հյուսիսային Հնդկաստանի ռաջաներից ***Չանդրա Հուպտա I-ը (320– 340)***, նվաճելով հարևան իշխանությունները, սկիզբ դրեց ***Հուպտաների պետությանը,*** որը գոյատևեց մինչև VI դ. սկիզբը: Մայրաքաղաքը ***Պատալիպուտրան*** էր՝ Գանգես գետի հովտում: Պետության տարածքն ընդարձակվեց և ընդգրկեց Հնդկաստանի մեծ մասը:

Հուպտաների դարաշրջանում Հնդկաստանում պահպանվում էր ***վառնայական կարգը: Ամուսնությունը տարբեր վառնաների միջև արգելվում էր:***

1

ԴԵԼԻԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ

VIII դ. սկզբին Հնդկաստան ներխուժեցին արաբները և գրավեցին Ինդոս գետի շրջակա երկրամասերը: ***Ժամանակի ընթացքում իսլամը դարձավ արևմտյան Հնդկաստանի բնակչության հիմնական կրոնը:*** X–XII դդ. Ինդոս գետի հովտում կազմավորվեցին մի շարք մահմեդական պետություններ, որոնց հաջողվում էր կարճատև միավորել Արևմտյան Հնդկաստանը: Հնդկաստանը հաճախակի ենթարկվում էր հարևան մահմեդական պետությունների տիրակալների ավարառուական արշավանքներին: Կողոպտվում էին գյուղերն ու քաղաքները, բնակիչները քշվում էին ստրկության:

1206 թ. հյուսիսային Հնդկաստան ներխուժեցին թյուրք-իրանական ծագումով մահմեդական նվաճողներ և հպատակեցրին հնդկական իշխանությունները: ***Կազմավորվեց Դելիի սուլթանությունը՝ համանուն մայրաքաղաքով:*** Քիչ անց սկսված մոնղոլական արշավանքները ստիպեցին նվաճողներին և հնդիկ իշխաններին համախմբել ուժերը մոնղոլական նվաճումից խուսափելու համար:



2

Դելիի սուլթանությունը իր հզորությանը հասավ ***Ալա ուդ Դին (1296–1316)*** սուլթանի օրոք: Սուլթանի իշխանությունը տարածվեց Հնդկաստանի մեծ մասի վրա: ***Դելիի սուլթանությունը ավատատիրական***

պետություն էր: Իշխող վերնախավը կազմված էր մահմեդական ավագանուց, իսլամ ընդունած մոնղոլ ավագանուց և հնդիկ ավատատերերից: ***Նրանք սուլթանից կալվածքներ էին ստանում որպես պայմանական սեփականություն՝ պետական կամ ռազմական ծառայություն կատարելու դիմաց:***

XIV դ. Դելիի սուլթանությունը աստիճանաբար թուլացավ: Անկախացան կենտրոնական և արևելյան Հնդկաստանի երկրամասերը: Պայմանական սեփականության կալվածքները վերածում էին ժառանգական սեփականության: Ավատատերերի երկպառակչական պատերազմները ավելի էին թուլացնում պետությունը:

Դելիի սուլթանությանը ծանր հարված հասցրեց ***1498 թ. Լենկ Թեմուրի*** ավերիչ արշավանքը: Մայրաքաղաք Դելին գրավվեց և թալանվեց: Սուլթանի իշխանությունը դարձավ լրիվ ձևական:

ՄԵԾ ՄՈՂՈԼՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

1526 թ. Հնդկաստան ներխուժեց և Դելին գրավեց Լենկ Թեմուրի թոռը՝ Քաբուլի տիրակալ ***Բաբուրը:*** Հնդկաստանի հյուսիսում առաջացավ պետություն, որին եվրոպացիներն անվանեցին ***Մեծ մողոլների կայսրություն,*** քանի որ Բաբուրը համարվում էր Չինգիզ խանի սերնդից:

Մեծ մողոլների կայսրությունն իր հզորությանը հասավ Բաբուրի թոռան՝ ***Աքբարի (1556–1605)*** օրոք: Նա հպատակեցրեց գրեթե ողջ Հնդկաստանը: Դադարեցին երկպառակչական պատերազմները, ծաղկում ապրեցին արհեստներն ու առևտուրը: Փոքր ինչ պակասեցվեցին գյուղացիներից գանձվող հարկերը, ***բնամթերքով վճարվող բահրան փոխարինվեց դրամական վճարով: Վերացվեց ոչ մահմեդականներից գանձվող գլխահարկը՝ ջիզիեն:***

Գյուղացիները ջրանցքներ էին փորում, ոռոգում չորային հողերը և տարին երկու–երեք անգամ բերք էին հավաքում: Աճեցնում էին ***բրինձ, բամբակ, դդում, ձմերուկ, սեխ, շաքարեղեգ, նարինջ, համեմունքներ:*** Այդ կուլտուրաների մշակումը հետագայում փոխ առան աշխարհի այլ ժողովուրդներ:

3

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Հուպտաների դարաշրջանում տիրապետող կրոնը ***հինդուիզմն էր՝*** Բրահմա, Վիշնա, Շիվա գլխավոր աստվածների պաշտամունքով: ***Բուդդայականությունը*** թեև առաջացել էր Հնդկաստանում, սակայն երբևէ տիրապետող կրոն չդարձավ և լայն տարածում չստացավ: Հուպտաների դարաշրջանում բարձր զարգացման հասավ ***ճարտարապետությունը:*** Շինարարական մեծ հմտության և վարպետության մասին են վկայում ***Էլլուրի և Աջանտայի ժայռափոր տաճարները***: Դրանք ներսից զարդարված են հիասքանչ քանդակներով՝ հինդուիստական և բուդդայական առասպելաբանության թեմաներով:

XIII դարից սկսած հնդկական մշակույթը իր վրա կրեց մուսուլմանական մշակույթի ազդեցությունը, ինչը արտահայտվեց հատկապես ճարտարապետության բնագավառում: Համաշխարհային հռչակ է վայելում ***«Հնդկաստանի մարգարիտը»՝ Թաջ-Մահալ դամբարանը*** Ագրա քաղաքում:

Բրահմա աստվածը

Հնդկաստանում հատկապես զարգացած էին ***աստղագիտությունը և բժշկությունը***: Գրեթե բոլոր խոշոր քաղաքներում կային աստղադիտարաններ: Հնդիկ աստղագետներից ոմանք նույնիսկ պնդում էին, որ Երկիրը գնդաձև է և պտտվում է իր առանցքի շուրջը: Հնդիկ բժիշկները հռչակված էին Արևելքի բոլոր երկրներում: Նրանք կարողանում էին բարդ վիրահատություններ կատարել՝ օգտագործելով տարատեսակ վիրահատական գործիքներ ու ցավազրկման միջոցներ: Բժշկական գրքերում մանրամասն նկարագրված էր մարդու մարմնի և ներքին մարմինների կառուցվածքը:

Մեծ նվաճումների հասավ ***մաթեմատիկան:*** Հնդիկները կիրառում էին ***թվանշաններ,*** որոնք արաբների միջոցով տարածվեցին ամբողջ աշխարհում: Հնդիկ մաթեմատիկոսները օգտագործում էին կոտորակներ, կարողանում էին հաշվարկել մարմինների մակերեսն ու ծավալը:

Ծաղկում ապրեց հնդկական ***մանրանկարչությունը:*** Գունագեղ մանրանկարներով զարդարում էին հնագույն ավանդապատումների մասին գրքերը և պատմական ստեղծագործությունները:

Հնդկաստանի մշակույթը արտացոլում է այդ երկրում բնակվող բազմաթիվ ժողովուրդների մշակութային նվաճումները:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *ռաջա, բրահման, քշատրի, վայշի, շուդրա, հինդուիզմ, բուդդայականություն, վառնա*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք վառնայական կարգը Հնդկաստանում:
2. Հնդկաստանում ե՞րբ տարածվեց իսլամը:
3. Ու՞մ կողմից և ե՞րբ հիմնադրվեց Դելիի սուլթանությունը:
4. Ե՞րբ է հանդես եկել Մեծ Մողոլների կայսրությունը:
5. Ներկայացրեք հնդիկների մշակութային ձեռքբերումները:

§ 45. ՉԻՆԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ՍՈՒՅ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

III դ. սկզբին, ***Հան կայսրության*** անկումից օգտվեցին հարևան վաչկատուն ցեղերը: Մի քանի դար շարունակ քոչվորները կողոպտում էին հյուսիսային Չինաստանը: Տնտեսությունը անկում ապրեց, շատ քաղաքներ կործանվեցին, քայքայվեց ոռոգման համակարգը: Պատերազմների, ջրհեղեղների, սովի և համաճարակների հետևանքով ***բնակչության թվաքանակը 50 միլիոնից նվազեց 17 միլիոնի:***

Ժամանակի ընթացքում նվաճողները յուրացրին լեզուն, բարքերն ու սովորույթները և ձուլվեցին չինացիներին, իսկ նվաճողների և չինական ավագանու ներկայացուցիչները վերածվեցին խոշոր հողատերերի: ***V–VI դդ. Չինաստանում ընթանում էր ավատատիրական կարգի ձևավորումը:***

Զորավար ***Յան Յզյունը,*** ավատատերերի աջակցությամբ, վերամիավորեց Չինաստանը, հիմնելով ***Սույ կայսրությունը (581–618):*** Երկրում վերականգնվեցին քաղաքները, անցկացվեց մարդահամար, աշխուժացավ առևտուրը: Ամեն գյուղական ընտանիքի հատկացվում էր մոտ 1000 հա հողաբաժին, որից նա պետք է հարկ վճարեր պետությանը կամ ավատատիրոջը՝ ում հողի վրա ապրում էր:

1

Վերականգնվեցին պետության կառավարման չինական ավանդույթները:

ՏԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույ կայսրությանը հաջորդեց համաչինական ***Տան կայսրությունը (618–907):*** Կայսրը նվազեցրեց հարկերը, մտցրեց կառավարման կենտրոնացված համակարգ, երկիրը բաժանեց ***նահանգների, շրջանների և գավառների:*** Կազմվեց օրենքների միասնական ժողովածու, ստեղծվեց պրոֆեսիոնալ վարձու բանակ: Բացվեցին պետական ծառայողներ պատրաստող դպրոցներ ու վարժարաններ, որտեղ կարող էին սովորել բոլոր խավերի ներկայացուցիչները: Պետական պաշտոն զբաղեցնելու համար պետք էր ծառայողի

2

Կայսր Լի Յուանը

աստիճան ստանալու քննություն հանձնել: ***Այդ համակարգը կոչվում էր ընտրություն ըստ արժանիքի:*** Պաշտոնի բարձրացման համար պետք էր նոր քննություն հանձնել:

Տան կայսրության օրոք հասարակությունը բաժանված էր ***աստիճանակարգերի:*** Ամեն աստիճանի մարդիկ պարտավոր էին հատուկ հագուստ հագնել, վարքագծի որոշակի կանոններ պահպանել: Պետական ծառայողները ևս աստիճանակարգին համապատասխան հագուստ էին հագնում և ծառայողական հողաբաժին ստանում՝ վրան ապրող գյուղացիներով: Անգամ ավատատեր ազնվականները ենթակա էին այս կարգին:

Կայսրության տարբեր մասերի միջև կապերն ամրապնդելու նպատակով մեծ ուշադրություն էր դարձվում ճանապարհների և հաղորդակցության ջրային ուղիների կառուցմանը: Գլխավոր ճանապարհների վրա բացվեցին ***փոստակայաններ և իջևանատներ:*** Առևտրի զարգացման համար պետությունը հատում էր ***կլոր անցքով պղնձյա դրամներ: Առաջին թղթադրամները նույնպես թողարկվեցին Չինաստանում:***

ՄԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

XIII դ. Չինաստանը նվաճեցին մոնղոլները: ***1279 թ. Խուբիլայ խանը*** սկիզբ դրեց մոնղոլական ***Յուան կայսրությանը:*** Մայրաքաղաք դարձավ ***Պեկինը:*** Մոնղոլական տիրապետությունը ծանր հետևանքներ ունեցավ Չինաստանի համար: Ընդհատվեց երկրի տնտեսական և հասարակական զարգացումը, քաղաքները հրի մատնվեցին, շատ տարածքներ դարձան անմարդաբնակ: Յուան կայսրությունը գոյատևեց մոտ մեկ դար:

XIV դ. մոնղոլական տիրապետության դեմ ժողովրդական ապստամբություն սկսվեց: Ապստամբները գրավեցին մայրաքաղաք Պեկինը և երկրից վտարեցին մոնղոլներին: Սկիզբ դրվեց ***Մին կայսրությանը (1368–1644):***

Չինաստանում վերականգնվեց պետական ծառայության քննությունների համակարգը, վերանորոգվեց ոռոգման ցանցը, ամրացվեց Մեծ Պատը: ***Վերացվեց ստրկությունը,*** ավելացվեցին հարուստներից գանձվող հարկերը: Վերականգնվեց պետական հողատիրությունը, սակայն պահպանվեց նաև մասնավոր հողային սեփականությունը: Կայսրը անձամբ էր վերահսկում պաշտոնյաների աշխատանքը: Ստեղծվեց գաղտնի ոստիկանություն՝ պաշտոնյաներին լրտեսելու համար: ***Նահանգների կառավարումը բաժանվեց 3 մասի՝ վարչական, ֆինանսական, ռազմական,*** յուրաքանչյուրը ղեկավարում էր առանձին պաշտոնյա: Ընդլայնվեցին արտաքին առևտրական կապերը հեռու-մոտիկ երկրների հետ:

Մայրաքաղաք Պեկինում կառուցվեց կայսերական նոր ապարանք, որը անվանեցին ***«Արգելված քաղաք»:*** Այն պարսպատված էր 12 մետր բարձրությամբ պարիսպներով, հասարակ մարդկանց մուտքն արգելված էր:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան Չինաստանում կատարված հայտնագործություններից առավել նշանավորը ***տպագրությունն*** էր: Փայտյա տախտակների վրա փորագրում էին տեքստը, ապա տախտակին թանաք քսելով՝ այն սեղմում էին թղթի վրա: Դա տպագրության ամենավաղ ձևն էր: Հետագայում հայտնագործ-վեց թրծված կավից պատրաստված տառերով տեքստ հավաքելու և էջեր կազմելու եղանակը:

Մյուս կարևոր հայտնագործությունը IX դ. կատարված ***վառոդի գյուտն*** էր: Սկզբում այն օգտագործում էին հրավառություն կազմակերպելու համար, իսկ հետագայում չինացիները հնարեցին ***թնդանոթը***: X դ. սկսած Չինաս-տանում կիրառում էին ***կողմնացույցը,*** կենցաղում լայնորեն օգտագործվում էր ***լուցկին***: Չինացիները հատուկ տեսակի կավից ***ճենապակյա նախ-շազարդ*** բաժակներ, ափսեներ, սափորներ արձանիկներ էին պատրաստում, որոնք բարձր էին գնահատվում և մեծ պահանջարկ էին վայելում Եվրոպայում:

«Ճենապակի» նշանակում է չինական ապակի: Իրականում դրանք պատրաստվում էին կաոլինից՝ հատուկ նուրբ տեսակի կավից:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *Սույ կայսրություն, Չանան, Տան կայսրություն, Լի Յուան, Մին կայսրություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ հիմնադրեց Սույ կայսրությունը և ինչ փոփոխություններ կատարեց:
2. Ո՞վ հիմնադրեց Տան կայսրությունը և ինչ վերափոխումներ կատարեց:
3. Ո՞վ հիմնադրեց Մին կայսրությունը և ինչը վերականգնեց Չինաստանում:
4. Ինչ կարևոր հայտնագործություններ են կատարվել Չինաստանում:
5. Ինչը խթանեց առևտրի զարգացմանը Չինաստանում:
6. Ինչ հետևանքներ ունեցավ մոնղոլական տիրապետությունը Չինաստանում:

§ 46. ՃԱՊՈՆԻԱՆ ՄԻԱՁՆԱԴԱՐՈՒՄ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Ճապոնիան բաղկացած է 4 խոշոր՝ ***Հոկայդո, Հոնսյու, Շիկոկու, Կյուսյու*** և 4000-ից ավելի մանր կղզիներից: Հարևան Կորեայից և Չինաստանից նրան բաժանում են ***Ճապոնական և Արևելաչինական ծովերը:*** Ճապոնիայում հաճախակի են երկրաշարժերը և ***ցունամիները***՝ ավերիչ ծովալիքները:

Մեր թվարկության սկզբին Կորեական թերակղզու վրայով այստեղ թափանցեցին ***ճապոնական ցեղերը*** և, ստրկացնելով տեղաբնիկներին, հաստատվեցին կղզիներում: Ճապոնական ցեղերը տիրապետում էին երկաթյա գործիքներին, զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: Տոհմը ղեկավարում էր ***կոհմապետը:*** Նա տոհմի զորապետն էր, դատավորը և քուրմը: Ճապոնացիները աստվածացնում էին բնության ուժերը, պաշտում էին իրենց նախնիներին: Ճապոնացիների կրոնը կոչվում է ***սինտոիզմ:***

III–IV դդ. ձևավորվեցին մրցակցող ցեղային միություններ: IV դ. կեսին ***Յամատո*** ցեղապետությունը, միավորելով մյուս ցեղերին, ***սկիզբ դրեց ճապոնական պետությանը***: Յամատոյի ցեղապետը ***հռչակվեց կայսր:*** Մյուս ցեղապետերը համարվում էին կայսեր ներկայացուցիչները մարզերում:

VI դ. կեսերին առևտրական կապեր հաստատվեցին Կորեայի և Չինաստանի հետ: Այդ երկրներից Ճապոնիա ներթափանցեցին բուդդայական կրոնը և չինական գիրը: ***Բուդդայականությունը հարմար կրոն էր ֆեոդալականացող ճապոնական հասարակության համար:***

«ՏԱՅԿԱ» ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

645-654 թթ. կայսր Կոտոկուն երկրում արմատական բարեփոխումներ իրականացրեց, որոնք հայտնի են «Տայկա»՝ «Մեծ վերափոխում» անունով: Ստեղծվեց կառավարման կենտրոնացված համակարգ: Ճապոնիան բաժանվեց մարզերի և շրջանների, ղեկավարներին նշանակում էր կայսրը: Բոլոր հողերը հայտարարվեցին կայսեր սեփականությունը: Յուրաքանչյուր գյուղական ընտանիք ստանում էր հողաբաժին, որոնք պարբերաբար վերաբաժանվում էին: Գյուղացիները պարտավոր էին պետությանը որպես հարկ վճարել հացահատիկ, տնայնագործական արտադրանք, նաև տարեկան 100 օր կոռային աշխատանք կատարել:

1

ՍՅՈԳՈՒՆՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

794 թ. արքունիքը փոխադրվեց նորակառույց մայրաքաղաք՝ ներկայիս Կիոտո: Ավատատիրական կարգի զարգացման արդյունքում կայսեր իշխանությունը գնալով թուլանում էր: ***Կայսրերը իշխում էին, բայց չէին կառավարում:***

Մարզերի և շրջանների կառավարիչները դառնում էին ավելի ու ավելի ինքնուրույն, նրանց տիրույթները վերածվում էին ժառանգական ավատների: Իրենց իշխանությունը պաշտպանելու և նոր տիրույթներ զավթելու համար նրանք պահում էին մշտական զինված ջոկատներ, որոնք կազմված էին արհեստավարժ ռազմիկներից՝ ***սամուրայներից:***

2

Մրցակիցներին հաղթելով՝ ***1192 թ. Երիտոմո Մինամոտոն հռչակվեց սյոգուն՝ զորապետ: Սյոգունը դարձավ ճապոնիայի փաստացի տիրակալը և կառավարում էր երկիրը կայսեր անունից:***

Սյոգունի իշխանությունը հենվում էր ռազմական ուժի վրա: Խոշոր ավատատերերը ստիպված էին նրան հավատարմության երդում տալ: Միջին և մանր ավատատերերը պաշտպանում էին սյոգունի իշխանությունը, որն ապահովում էր գյուղացիների հնազանդությունը և շահագործումը: Երկրում իրավիճակը կայունացավ, ընդլայնվեց առևտուրը Չինաստանի և Կորեայի հետ:

XIII դ. վերջին ճապոնիայի համար սպառնալիք դարձան Չինաստանը գրաված մոնղոլները: Հաղթանակը մոնղոլների դեմ ձեռք բերվեց ուժերի գերագույն լարումով և տնտեսապես թուլացրեց ճապոնիան: Ավելացան բնակչությունից գանձվող հարկերը, սկսվեցին գյուղացիական ապստամբություններ, ուժեղացան երկպառակչական կռիվները: Մինամոտո տոհմի թուլացած իշխանությունը տապալվեց: ***Ճապոնիան թևակոխեց ավատատիրական մասնատվածության ժամանակաշրջանը:***

3

Երկրի վերամիավորումը տնտեսական և սոցիալական անհրաժեշտություն դարձավ:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

XVI դ. կեսերին ճապոնիա մուտք գործեցին պորտուգալացի և իսպանացի վաճառականները: Կաթոլիկ քարոզիչները սկսեցին քրիստոնեություն տարածել և շատ հետևորդներ ունեցան: Եվրոպական ներխուժման վտանգը արագացրեց ճապոնիայի միավորման գործընթացը:

4

Միավորման գործը իրականացվեց տաղանդավոր զորավար ***Տոյետոմի Խիդեէսին (1536–1592):*** Ավարտելով ճապոնիայի միավորումը, ***Խիդեէսին*** դարձավ երկրի միանձնյա կառավարողը: Նստավայրը ***Օսակա*** ամրոցն էր: Նա երկրում կարգ ու կանոն հաստատեց, վերականգնեց գյուղացիների ճորտական կախվածությունը, արգելեց նրանց զենք կրել: Խոշոր ավատատերերի ***զինված ջոկատների թվաքանակը սահմանափակեց և պատանդներ տալու կարգ***

սահմանեց: Մեծաթիվ, անհանգիստ սամուրայությունը երկրից դուրս բերելու համար Խիդեէսին նվաճողական պատերազմ սկսեց Կորեայում:

5

Տոյեպոմի Խիդեէսի
«Խելացի զորավարը պատերազմել չի սիրում,
Հմուտ ռազմիկը սպանել չի սիրում,
Հաղթել կարողացողը առաջինը չի հարձակվի,
Մարդկանց կառավարել իմացողը նրանց չի ստորացնի»

ՏՈԿՈՒԳԱՎԱ ՍՅՈԳՈՒՆԱՏԸ

Խիդեէսիի մահից հետո նրա զինակիցների միջև պայքար սկսվեց իշխանության համար: ***Տոկուգավա Իեյասուն մրցակիցներին հաղթելով՝ 1603 թ.*** դարձավ երկրի միանձնյա տիրակալը: Նա ընդունեց սյոգունի տիտղոսը, նստավայր դարձրեց ***Էդո՝*** ներկայիս Տոկիո քաղաքը: Տոկուգավա տոհմի սյոգունատը դարձավ ժառանգական: Երկրում հաստատվեց կայունության ժամանակաշրջան:

6

Հանձինս եվրոպացի վաճառականների և կաթոլիկ քարոզիչների՝ սյոգունը ճապոնիայի համար լուրջ վտանգ էր տեսնում: Քրիստոնեության տարածումն արգելվեց: ***Ճապոնիան երկար ժամանակով «փակվեց» օտարերկրացիների համար:*** Նագասակի նավահանգիստ մուտք գործել թույլատրվեց միայն չինացի և հոլանդացի վաճառականներին:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *ցունամի, սինտոիզմ, Յամատո, սամուրայ, սյոգուն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Քանի՞ խոշոր և մանր կղզիներից է կազմված ճապոնիան:
2. Ե՞րբ և որտեղի՞ց ճապոնական ցեղերը հաստատվեցին կղզիներում:
3. Ե՞րբ Յամատոն միավորեց ճապոնիան մեկ պետության մեջ:
4. Ի՞նչ գիտեք «Տայկա» բարեփոխումների մասին:
5. Ե՞րբ սկսվեց Սյոգունների դարաշրջանը, և ի՞նչ գիտեք դրա մասին:
6. Ո՞վ և ե՞րբ կարողացավ միավորել ճապոնիան:
7. Ե՞րբ է հաստատվել Տոկուգավա սյոգունատը:

§ 47. ԱՄԵՐԻԿՅԱՆ «ՄԻՆՉԿՈԼՈՒՄԲՈՍՅԱՆ» ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամերիկա մայրցամաքում հնագույն ժամանակներից բնակվում էին բազմաթիվ ցեղեր ու ժողովուրդներ: Նրանց մեծ մասը ապրում էր նախնադարյան համայնական կարգով: ***Որոշ ժողովուրդներ արդեն ծանոթ էին երկրագործությանը:*** Աճեցնում էին Եվրոպայում դեռևս անհայտ բույսեր՝ ***կարտոֆիլ, արևածաղիկ, լոլիկ, կակաո, եգիպտացորեն, ծխախոտ: Մայրցամաքի բնակիչների մեծ մասը ծանոթ չէր անասնապահությանը***, քանի որ ընտելացնելու համար համապատասխան կենդանիներ գրեթե չկային: Միայն հյուսիսում ընտելացրել էին շների, իսկ Հարավային Ամերիկայում ***լամաների՝*** ուղտի նման, չափերով փոքր, կենդանի: Ընտելացրել էին նաև ***հնդկահավեր*** ու բադեր:

Ամերիկայում բնակվող բազմաթիվ ժողովուրդներից քաղաքակրթության մակարդակի հասել էին միայն մայաները, ացտեկները և ինկերը:

ՄԱՅԱՆԵՐԻ ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

Մայա ժողովուրդը բնակվում էր Կենտրոնական Ամերիկայի խիտ ջունգլիներով ծածկված ***Յուկատան թերակղզում***: ***Ք.ծ.ա I հազարամյակի վերջին*** մայաների շրջանում արդեն առաջացել էին ***քաղաք-պետություններ:*** Յուրաքանչյուր քաղաք-պետություն ղեկավարում էր «Մեծ մարդը»՝ կառավարիչը, որի պաշտոնը ժառանգական էր:

Մայաների հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր: Մաքրելով ջունգլիները՝ աճեցնում էին եգիպտացորեն, պտուղներ և բանջարեղեն: Հողը պատկանում էր պետությանը, որը ամեն ընտանիքի հողակտոր էր հատկացնում: Բերքի մի մասը բնակչությունը հանձնում էր պետությանը որպես հարկ: Շարքային քաղաքացիները գտնվում էին ավագանու և քրմերի

իշխանության ներքո: Ավագանին ապրում էր քաղաքի կենտրոնում կառուցված պալատներում, իսկ գյուղացիներն ու արհեստավորները բնակվում էին քաղաքի ծայրամասերում:

2

Մեր թվարկության սկզբներին մայաները ստեղծեցին իրենց գիրը: Այն պատկերագիր էր, նման եգիպտական հիերոգլիֆներին: Այդպիսի գրերը անվանում ենք ***մեհենագիր***, քանի որ դրան տիրապետում և գործածում էին միայն քրմերը մեհյաններում՝ տաճարներում: Մեհենագրով են գրված մայաների՝ մեզ հասած մի քանի ձեռագրերը, նաև տաճարների պատերին և քարե սյուների վրա փորագրված արձանագրությունները:

ԱՑՏԵԿՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեքսիկայի կենտրոնական բարձրավանդակի բարեբեր հովտում ***XIII դ.*** հաստատվեցին ***ացտեկները:***

Ացտեկները ռազմատենչ ժողովուրդ էին: Տևական պատերազմների արդյունքում նրանք նվաճեցին Մեքսիկայի ողջ տարածքը և շրջակա գրեթե բոլոր ցեղերին իրենց հարկատու դարձրին: Ացտեկները տնտեսական գործունեությամբ չէին զբաղվում, ապրում էին հպատակներից ստացվող հարկերի հաշվին: Պատերազմներում գերված ստրուկների աշխատանքով կառուցում էին ճանապարհներ, պալատներ և տաճարներ:

3

Տենոչտիտլանում կային դպրոցներ, որտեղ սովորում էին ացտեկների երեխաները: Սովորական աշակերտներին ուսուցանում էին երկրագործություն, արհեստներ, կրոն և ռազմական գործ: Դաստիարակում էին ուժեղ ռազմիկներ, ներշնչելով, որ պատերազմում զոհվածները գնում են աստվածների հետ ապրելու երկնքում: Ահա ինչու ացտեկ ռազմիկները կռվում էին խիզախությամբ և մեծ եռանդով: Ավագանու երեխաներին, այդ ամենից բացի, դպրոցում սովորեցնում էին նաև գրել, կարդալ, պատմություն և արվեստ: Պատերազմների ժամանակ ացտեկներից կազմվում էր բազմամարդ բանակ:

4

ԻՆԿԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարավային Ամերիկայի արևմուտքով ձգվող ***Անդյան լեռներում*** տարածվում էր ***ինկերի երկիրը՝ Պերուն: Ինկերի պետությունը ձևավորվեց XII դ.:***

XIII–XIV դդ. ընթացքում ինկերը աստիճանաբար նվաճեցին հարևան երկրները և հպատակեցրին այնտեղ բնակվող ցեղերին: ***XV դ. սկզբին կազմավորվեց Ինկերի լայնածավալ կայսրությունը:*** Մայրաքաղաք դարձավ ***Կուսկո քաղաքը***:

Երկրի բնակչությունը կազմված էր հպատակեցված տարբեր երկրագործ ցեղերից: Այդ մարդիկ ապրում էին նահապետական ընտանիքներից կազմված

համայնքներով: Լեռների լանջերին երկրագործները պատրաստում էին աստիճանաձև հողահարթակներ, ոռոգման համար ժայռերում փորում էին ջրանցքներ: Ստացված բերքը մուտք էր արվում բոլոր մարզերում կառուցված պետական ամբարները: Բերքի մի մասը պետության բաժինն էր, մյուս մասը՝ քրմերինն ու ավագանունը, երրորդ մասը մնում էր համայնականներին: Բնակչությունը պարտավոր էր մասնակցել նաև ճանապարհների, ջրանցքների, ամրոցների, տաճարների շինարարությանը, աշխատել մետաղահանքերում: Ինկերը հմուտ էին ***խեցեգործության և մետաղաձուլության*** մեջ: Պատրաստում էին գեղեցիկ զարդանախշ սափորներ, ոսկյա, արծաթյա և բրոնզե զարդեր:

5

Ինկերը ***ընտելացրել էին լամաներին,*** *որոնց օգտագործում էին ոչ ծանր բեռներ տեղափոխելու համար և որպես մսացու: Լամայի բուրդը օգտագործում էին ջուլհակության մեջ: Սակայն լաման թույլ էր որպես լծկան կամ հեծնելու կենդանի օգտագործելու համար:*

Իսպանացի նվաճողները անողոքաբար ոչնչացրին Ամերիկայի քաղաքակրթությունները, իսկ բնիկ ժողովուրդներին բռնությամբ պարտադրեցին կաթոլիկություն ընդունել: 6

Նոր բառեր և արտահայտություններ՝ *մայաներ, ինկեր, ացտեկներ, Յուկատան թերակղզի, Տենոչտիտլան, Կուսկո, Մոնթեսումա, Ատահուալպա*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին Ամերկայի բնիկների զբաղմունքները:
2. Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ կային մայաների, ացտեկների, ինկերի հասարակություններում:
3. Ինչո՞ւ Ամերիկայի տեղաբնիկներից ոչ բոլորի մոտ էր պետություն առաջացել:
4. Ովքե՞ր նվաճեցին Ամերիկայի հնագույն քաղաքակրթությունները և ինչպե՞ս վարվեցին տեղաբնիկների հետ:

§ 48. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ / ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍԹ

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

1. Ե՞րբ է սկսվել «Ժողովուրդների մեծ գաղթը», ո՞ր ժողովուրդներն են մասնակցել.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 0,75 բալ

2. Ո՞ր թվականին է կնքվել Վերդենի բաժանքը և ի՞նչ թագավորություններ առաջացան դրա արդյունքում.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (025+0,25+0,25+0,25) 1 բալ

3. Բացատրեք ի՞նչու էին Արևելահռոմեական կայսրությունը անվանում Բյուզանդիա.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

4. Ե՞րբ, ու՞մ միջև է տեղի ունեցել Մանազկերտի ճակատամարտը: Բացատրեք, ի՞նչ հետևանքներ այն ունեցավ.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

5. Ինչպե՞ս էր կոչվում արաբների կրոնը, ե՞րբ, որ քաղաքում, ո՞վ է այն ստեղծվել.

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

6. Ո՞ր իշխանի օրոք և ե՞րբ քրիստոնությունը հաստատվեց Ռուսիայի պետական կրոն.

- Յարոսլավ
- Սվյատոսլավ
- Վլադիմիր
- *788 թ.*
- *888 թ.*
- *988 թ.*

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

7. Բացատրեք, տնտեսավարման որ ձևը ենք անվանում բնատնտեսություն.

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 0,75 բալ

8. Ներկայացրեք խաչակրաց արշավանքների ներքին և արտաքին պատճառները.

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

9. Թվարկեք Պաղեստինում ձևավորված 3 խաչակիր օրդենների անվանումները և դրանց տարբերանշանները.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 0,75 բալ

10. Ե՞րբ, ո"ւմ ղեկավարությամբ և ինչպե՞ս օսման–թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը.

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

11. Պարսից որ բանաստեղծն է «Երգեր Հայաստանի» ոտանավորների շարքի հեղինակը.

• Նիզամի • Խայամ • Խաքանի • Ֆիրդուսի

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 բալ

12. Ո՞ր ժողովուրդն է կատարել վառոդի, կողմնացույցի, թղթի և գրատպության գյուտերը.

• արաբ • հնդիկ • չինացի • ճապոնացի

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 բալ

13. Ի՞նչ էր սյոգունի պաշտոնը ճապոնիայում, իրականում ինչ իշխանություն նա ուներ.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

14. Նշեք քաղաքակրթության մակարդակի հասած Ամերիկա մայրցամաքի 3 ժողովուրդները.

• ատաբասկներ	• ացտեկներ	• ինկեր	• կեչուաներ
• մայաներ	• սապոտեկներ	• սեմինոլներ	• տոլտեկներ

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 0,75 բալ

ԹԵՄԱ 4 ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 49. ԵՎՐՈՊԱՅԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

ԲՆԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

XIV դ. Եվրոպայի բնակչությունը համաճարակների, սովի և պատերազմների հետևանքով պակասեց գրեթե 1/3-ով՝ մահացավ մոտ 15 միլիոն մարդ: Գյուղական բնակչության պակասելու պատճառով կրճատվել էր հացամթերքի արտադրությունը: Վարելահողերի մեծ մասը լքվել էր, վերածվել արոտավայրի և խոտհարքի: Որոշ չափով պահպանվել էր անասնապահությունը, հատկապես ոչխարաբուծությունը, ինչը ապահովում էր բնակչությանը կաթնամթերքով, մսով, կաշվով ու բրդով:

Ավատատերերի տերունական տնտեսությունը, աշխատող ձեռքերի պակասի պատճառով, ևս անկում էր ապրում, պակասել էր ավատատերերի եկամուտը: Մինչդեռ գյուղացիական տնտեսությունները, եռադաշտի անցնելու, հողի պարարտացում և կատարելագործված գործիքներ կիրառելու շնորհիվ դարձել էին եկամտաբեր: Ավատատերերը տերունական հողերը ևս սկսեցին վարձակալության հանձնել գյուղացիներին: Արևմտյան Եվրոպայի երկրներում XIV–XV դդ. ***գյուղացիությունը ձևավորվեց որպես առանձին դաս***:

Այս փոփոխությունների արդյունքում փոխվեցին նաև գյուղացիության պայքարի ձևերը իր իրավունքների համար: Եթե նախկինում գյուղացիների դժգոհությունն արտահայտվում էր առանձին ավատատերերի դեմ ապստամբություններով, ապա այժմ գյուղացիական ելույթները դարձան ավելի կազմակերպված և մասսայական՝ ընդգրկելով ամբողջական մարզեր և ուղղված էին արդեն ոչ միայն կոնկրետ ավատատիրոջ, այլև ավատական կարգի՝ ավատական դատարանի և հարկային մարմինների դեմ: ***XIV դ. ողջ ընթացքում Արևմտյան Եվրոպան ցնցվում էր գյուղացիական ապստամբություններից:*** 1

Թեև գյուղացիական ապստամբությունները պարտություն կրեցին, սակայն անհետևանք չմնացին: Նոր ապստամբություններից վախենալով՝ ավատատերերը չէին համարձակվում ավելացնել հարկերը և տուրքերը, արագացնում էին գյուղացիների ճորտությունից ազատումը: ***XV դ. Արևմտյան Եվրոպայի երկրներում ճորտ գյուղացի գրեթե չմնաց:*** 2

ԴՐԱՄԱԿԱՆ ՌԵՆՏԱՅԻ ԵՎ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Խաչակրաց արշավանքներից հետո տարածում էին ստացել ապրանք-դրամական հարաբերությունները, և ավատատերերը ***ռենտան՝ հողավարձը,*** դրամով էին պահանջում: Գյուղացին հարկադրված էր իր արտադրած գյուղմթերքը քաղաքում վաճառել, որպեսզի դրամ ունենա ռենտան վճարելու: ***Գյուղի և քաղաքի միջև առևտուրն ընդլայնվում էր, ձևավորվում էր առևտրի ներքին շուկան:***

Գյուղացիությունը գնալով շերտավորվում էր: Գյուղացիների մի մասը քրտնաջան աշխատանքով հաջողության էր հասնում, նրանց տնտեսությունը բարգավաճում էր: Գյուղացիներից շատերն էլ անհաջողության էին մատնվում, ընկնում էին պարտքերի տակ և ունեզրկվում: Ունեզրկվածների որոշ մասը մնում էր գյուղում և վերածվում ***բատրակների՝*** վարձու աշխատանք կատարելով հաջողակ հարևանների և ավատատիրոջ տնտեսությունում, մի մասն էլ տեղափոխվում էր քաղաքներ և վերածվում ***վարձու բանվորների:***

Վարձու աշխատանքը ապրիճանաբար տարածվում էր և՛ գյուղում և՛ քաղաքում:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտյան Եվրոպայի քաղաքները խաչակրաց արշավանքների շրջանում մեծ վերելք ապրեցին: Ձենքի և ռազմական հանդերձանքի պահանջարկը նպաստեց արհեստների զարգացմանը: Թեև XIV դ. համաճարակներից և պատերազմներից քաղաքային բնակչությունը զգալի նվազեց, սակայն ապրանքների՝ գնալով աճող պահանջարկի և ունեզրկված գյուղացիների մեծ հոսքի շնորհիվ քաղաքային կյանքը արագ վերականգնվեց:

Առևտրականներից և արհեստավոր վարպետներից ձևավորվեց քաղաքացիների դասը: XIII–XV դդ. քաղաքացիները պայքարում էին հոգևոր ու աշխարհիկ ավատատերերի իշխանությունից անկախանալու, ինքնավարության հասնելու համար: Ուժեղացող թագավորական իշխանությունը, որը ձգտում էր միավորել երկիրը, հովանավորում էր քաղաքներին ավատատերերի դեմ նրանց պայքարում, արքայական հրովարտակներով հաստատում քաղաքների ինքնավարությունը: Արդեն ***XV դ. Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում քաղաքային ինքնավարությունը լայնորեն տարածվեց և հիմք ծառայեց կենտրոնացված պետությունների կազմավորման համար:***

ԴԱՍԱՅԻՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Հասարակության կյանքում տեղի ունեցող փոփոխությունները նպաստում էին շատ երկրներում մասնատվածության հաղթահարմանը և պետական

իշխանության կենտրոնացմանը: Դրան զուգահեռ մեծանում էր ազնվականների, հոգևորականների և քաղաքացիների ակտիվությունը՝ պաշտպանելու իրենց իրավունքները: XIV–XVI դդ. Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում ձևավորվեցին այդ դասերի շահերը ներկայացնող մարմիններ:

Թագավորական իշխանությունը դեռ այնքան ուժեղ չէր, որ միանձնյա գործեր, ուստի կարևոր դեպքերում արքաները հրավիրում էին բոլոր դասերի ներկայացուցիչների համապետական ժողովներ: Նման ժողովները տարբեր կերպ էին կոչվում. Անգլիայում՝ ***պառլամենտ,*** Ֆրանսիայում՝ ***գլխավոր շտատներ,*** Լեհաստանում՝ ***սեյմ,*** Իսպանիայում՝ ***կորտեսներ,*** Գերմանիայում՝ ***ռայխստագ:*** Այսպիսով, ***ավատատիրական միապետությանը փոխարինելու էր գալիս պետության կառավարման մի նոր ձև՝ դասային միապետությունը***: Երկրում սկսում էր գործել դասերի ներկայացուցիչների ժողովը, որի հետ միապետը հաշվի էր նստում կարևոր պետական հարցեր լուծելու, նոր օրենքներ կամ հարկեր սահմանելու ժամանակ: Որոշ երկրներում նման ժողովներ սկսեցին հրավիրել պարբերաբար:

3

Դասային միապետությունը արդեն բավական ուժ ուներ պայքարելու կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունը թոթափելու համար: Դրա վառ ապացույցը ֆրանսիական թագավորի հաղթանակն էր Հռոմի պապի դեմ պայքարում, ինչը հայտնի է ***«Պապերի Ավինյոնյան գերություն»*** անվանմամբ:

4

Նոր բառեր և արտահայտություններ՝ *ռենտա, բատրակ, բանվոր, ժակերիա, «Պապերի Ավինյոնյան գերություն», դասային միապետություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Բացատրեք ընատնտեսության ճգնաժամի պատճառները:
2. Ինչ փոփոխություններ կրեց գյուղացիական հարկերի վճարումը:
3. Հասարակության ինչ նոր դասեր հանդես եկան:
4. Գյուղացիական ինչ ապստամբություններ տեղի ունեցան եվրոպական երկրներում XIV դ.:
5. Եվրոպական տարբեր երկրներում ձևավորված դասային ներկայացուցչական ժողովները ինչ անուններով են հայտնի (Անգլիա, Ֆրանսիա, Լեհաստան, Իսպանիա, Գերմանիա):
6. Բացատրեք, թե ինչն են անվանում «Պապերի Ավինյոնյան գերություն»:
7. Պետության կառավարման ինչպիսի՞ ձև էր դասային միապետությունը:

§ 50. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

XV դ. կեսից խզվեց Արևելքի և Արևմուտքի միջև ավանդական դարձած ցամաքային առևտուրը: Օսմանյան տերությունը, որը տարածվել էր 3 մայրցամաքների վրա, անընդմեջ պատերազմներ էր վարում և խոչընդոտում էր միջազգային առևտրի զարգացմանը: Արևելքի երկրների հետ առևտրական կապերի վերականգնումը Եվրոպայի համար դարձավ հրամայական անհրաժեշտություն:

Բացի դրանից՝ Եվրոպայում առևտրի մեջ գնալով աճում էր փողի՝ որպես ապրանքների ընդհանուր փոխարժեքի դերը, մինչդեռ թանկարժեք մետաղների հանքերով աղքատ Եվրոպայում ոսկե և արծաթե դրամների մեծ պակաս կար: Հնդկաստանի ու Չինաստանի հետ ուղիղ առևտրական կապեր հաստատելու, ոսկու և արծաթի նոր պաշարների տիրանալու ձգտումը հանգեցրեց Աշխարհագրական Մեծ հայտնագործություններին:

ՀՆԴԿԱՍՏԱՆ ՏԱՆՈՂ ԾՈՎԱՅԻՆ ՈՒՂՈՒ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

Հնդկաստան տանող ծովային ուղու որոնումներին առաջինը ձեռնամուխ եղան Պորտուգալիան և Իսպանիան XV դարում: Այդ երկրների ռազմատենչ, բայց աղքատ ազնվականությունը, «ոսկու տիրանալու անհագ ծարավով», պատրաստ էր մասնակցելու նոր երկրներ նվաճելու գործին:

Պորտուգալիայի թագավորը պարբերաբար արշավախմբեր էր ուղարկում Աֆրիկայի արևմտյան ափերի երկայնքով՝ Հնդկաստան հասնելու շրջանցիկ ուղի գտնելու համար: Էժանագին զարդերը ծովագնացները փոխանակում էին ոսկու և փղոսկրի հետ, հաճախ էլ տեղաբնիկներին գերում էին և դարձնում ստրուկներ:

Ի վերջո, ***Բարդուղիմեոս Դիաշի*** արշավախումբը հասավ Աֆրիկայի ծայր հարավը և դուրս եկավ Հնդկական օվկիանոս: Սակայն տևական ճամփորդությունից հոգնած նավաստիները հրաժարվեցին նավարկությունը շարունակելուց: Աֆրիկայի հարավային հրվանդանը նրանք անվանեցին Բարեհուսո հրվանդան, հուսալով, որ մոտ են Հնդկաստան տանող ծովային ուղին հայտնաբերելուն:

Պորտուգալական հաջորդ արշավախումբը ***Վասկո դա Գամայի*** ղեկավարությամբ շրջանցեց Աֆրիկան և, կտրելով օվկիանոսը, հասավ Հնդկաստան: ***1498*** թ. մայիսին պորտուգալական նավերը խարիսխ գցեցին ***Կալիկոթ*** քաղաքի նավահանգստում: ***Հնդկաստանի հետ առևտուրը առժամանակ դարձավ Պորտուգալիայի մենաշնորհը:***

1

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ

Եվրոպայում XV դ. տարածում էր ստացել երկրի գնդաձև լինելու մասին տեսությունը: Դրա հիման վրա որոշ գիտնականներ պնդում էին, որ, լողալով դեպի

արևմուտք, նույնպես կարելի է հասնել Հնդկաստան: Այդ ճանապարհը նույնիսկ համարում էին ավելի կարճ, քան Աֆրիկան շրջանցող ճանապարհը:

2

Եվրոպացի առաջին ծովագնացը, որը փորձեց Հնդկաստան հասնել դեպի արևմուտք նավարկելով, ***Քրիստափոր Կոլումբոսն*** էր:

70 օր դեպի արևմուտք նավարկելով, ***1492 թ. հոկտեմբերի 12-ին*** Կոլումբոսի նավերը հասան ոչ մեծ մի կղզու: Ափին իսպանական դրոշ բարձրացնելուց հետո, ոսկի գտնելու հույսով, նավարկեցին դեպի հարավ, հայտնագործեցին ***Կուբա և Հայիթի*** կղզիները: Ճանապարհորդության վերջում, մնացած միակ նավով Կոլումբոսը վերադարձավ Իսպանիա: Դրանից հետո նա ևս 3 ճանապարհորդություն կատարեց դեպի արևմուտք, Կարիբյան ծովում հայտնագործեց նոր կղզիներ և հետազոտեց մայրցամաքի ափերը: Սակայն ոչ ոսկի, ոչ էլ ուրիշ հարստություն չգտավ:

ԱՌԱՋԻՆ ՇՈՒՐՋԵՐԿՐՅԱ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ



Արևմտյան ուղիով նոր մայրցամաքը շրջանցելու և ի վերջո Հնդկաստան հասնելու նպատակով, ***1519–1522 թթ.*** իսպանական մի նոր արշավախումբ ուղարկվեց ***Ֆերնան Մագելանի*** գլխավորությամբ:

Հինգ նավերից կազմված Մագելանի նավատորմը, լողալով Հարավային Ամերիկայի ափերի երկայնքով, հայտնաբերեց դեպի արևմուտք տանող մի նեղուց, որը հետագայում կոչվեց ***Մագելանի նեղուց***: Նոր հայտնաբերված Խաղաղ օվկիանոսով 4 ամիս նավարկելով արշավախումբը հասավ համեմունքների երկիր՝ Մոլուքյան կղզիներ: Տեղի բնիկների հետ բախումներում Մագելանը սպանվեց: Նրա հինգ նավերից միայն մեկը՝ 18 նավաստիներով, շարունակելով լողալ դեպի արևմուտք, շրջանցեց Աֆրիկան և վերադարձավ Իսպանիա:

Մագելանի արշավախումբը ոչ միայն դեպի Հնդկաստան տանող ծովային նոր ուղի հայտնագործեց, այլև իրականացրեց ***Առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը***՝ ապացուցելով, որ երկիրը իրոք գնդաձև է:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Աշխարհագրական Մեծ հայտնագործությունները հանգեցրին նոր երկրների ու մայրցամաքների հայտնաբերմանը և նորահայտ երկրների հետ կայուն առևտրական կապերի հաստատմանը: Արդյունքում փոփոխվեցին միջազգային առևտրի գլխավոր ուղիները: ***Առևտրական ճանապարհները***

այժմ անցնում էին օվկիանոսներով: Ատլանտյան օվկիանոսով առևտրի մեջ ներքաշվեցին նորահայտ Ամերիկայի երկրները: Աֆրիկան շրջանցող ծովային ուղիով եվրոպական երկրները կապ հաստատեցին Հնդկաստանի, իսկ Խաղաղ օվկիանոսով՝ Չինաստանի ու Ճապոնիայի հետ:

Առևտրական ուղիների փոփոխման հետևանքով մեծ նշանակություն ձեռք բերեցին ծովափնյա քաղաքներ Լոնդոնը, Լիսաբոնը, Համբուրգը և այլն: Համաեվրոպական առևտրի գլխավոր կենտրոն դարձավ Նիդեռլանդների ***Անտվերպեն*** քաղաքը, որի նավամատույցներում ամեն օր բեռնաթափվում էր 200–250 նավ: Այստեղ կարելի էր գնել Եվրոպա ներմուծվող բոլոր տեսակների համեմունքները՝ կարմիր և սև պղպեղ, իմբիր, մեխակ, մուսկատի ընկույզ և այլն: Այդ ապրանքների վաճառքից և վերավաճառքից առևտրականները հսկայական գումարների տեր էին դառնում: Նրանց շահույթը գերազանցում էր ապրանքի սկզբնական արժեքի 700–800 %-ը:

Աշխարհագրական Մեծ հայտնագործությունների ընթացքում սկսվեց և շարունակվեց նորահայտ երկրների նվաճման ու գաղութացման գործընթացը: Վաճառականներն ու նավատերերը գործնական մասնակցություն էին ունենում նվաճողական արշավանքներին: Նրանք հարստանում էին առևտրով և ստրկացված երկրների կողոպուտով:

3

Գաղութային նվաճումներին ակտիվ մասնակցություն ուներ և կաթոլիկ եկեղեցին: Նոր նվաճված ժողովուրդներին կաթոլիկ քրիստոնյաներ դարձնելու համար քահանաներն ու վանականները կիրառում էին տանջանքներ և մահապատիժներ, անխնա ոչնչացնում էին տեղաբնիկների մշակույթը: Այդպես կաթոլիկ եկեղեցին նոր հետևորդներ էր ձեռք բերում:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *շուրջերկրյա ճանապարհորդություն, «Ոսկու ափ», «Փղոսկրի ափ», գաղութ, գաղութացում*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին աշխարհագրական մեծ հայտնագործությունների արտաքին և ներքին պատճառները:
2. Ո՞ր պետությունները առաջինը ձեռնամուխ եղան Հնդկաստան տանող ծովային ուղիների որոնմանը, և ո՞վ հայտնագործեց այդ ծովային ուղին:
3. Ո՞վ և ո՞ր թվականին իրականացրեց Առաջին շուրջերկրյա ծովային ճամփորդությունը:
4. Ո՞վ և ե՞րբ հայտնագործեց Ամերիկան, և ո՞ւմ անունով այն կոչվեց:

§ 51. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

Նախորդ դարերի ընթացքում գյուղացիները և արհեստավորները զգալի փորձառություն էին կուտակել, ինչը հանգեցրեց աշխատանքային գործիքների և գործընթացների հետագա բարելավմանը: Արդյունքում, արդեն XV–XVI դդ. մեծ հաջողություններ ձեռք բերվեցին տեխնիկայի զարգացման բնագավառում: Արտադրության մեջ սկսեց լայնորեն կիրառվել ***ջրանիվը:*** 1

Կարևոր բարելավումներ կատարվեցին մետաղաձուլության ոլորտում: XIV դ. սկսեցին կառուցել ***դոմնաներ***՝ ձուլման փակ վառարաններ, որոնց բարձրությունը հասնում էր 3–4 մետրի: Ջրանիվին միացված փուքսերը ուժգին օդ էին մղում վառարանների մեջ: Ստացվում էր բարձր ջերմաստիճան, ինչի շնորհիվ դոմնաներում հանքանյութը հալվում էր և ստացվում էր ***հեղուկ թուջ (չուգուն):*** Այն կաղապարի մեջ լցնելով և հովացնելով՝ կարելի էր ստանալ ցանկացած ձևի առարկա: 2

Կարավելլա

Նկատելի զարգացում ապրեցին նավաշինությունն ու ծովագնացությունը: XV դ. սովորեցին կառուցել ***կարավելլաներ***, որոնք դիմանում էին փոթորկին և կարող էին ծովային հեռավոր նավարկություն կատարել: Կատարելագործվեցին առագաստները, սկսեցին օգտագործել կողմնացույցներ և նավագնացական այլ սարքեր:

Արևմտյան Եվրոպայում սկսեցին առաջանալ զինագործական խոշոր ձեռնարկություններ, մետաղաձուլարաններ, նավաշինարաններ, տպարաններ, որոնցում աշխատում էին արդեն մեծ թվով մարդիկ:

ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ:

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՆԵՐԸ

Հասարակության հետագա զարգացման համար կարևոր քայլ էր արհեստների անջատումը գյուղատնտեսությունից: Արհեստավորները կենտրոնանում էին քաղաքներում և զբաղվում միայն իրենց արհեստով: Գյուղացիները քաղաք վաճառքի էին բերում իրենց գյուղմթերքը, բուրդ, կաշի և այլն, գնում իրենց անհրաժեշտ արհեստագործական արտադրանքը: Քաղաքներում ձևավորվում էին մշտական գործող շուկաներ:

Ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացումը հանգեցրեց նրան, որ երկրի տարբեր մարզերը տնտեսապես կապվում էին իրար հետ: ***Եվրոպական երկրներում ձևավորվում էր առևտրի ներքին շուկա:*** Շուկայի ձևավորմանը նպաստեց ձեռներեցների ստեղծած ***մանուֆակտուրային արտադրությունը***: 3

«Մանուֆակտուրա» լատիներեն բառը նշանակում է ***«ձեռքի արտադրանք»:*** Մանուֆակտուրայում կիրառվում էր ***աշխատանքի բաժանում՝*** աշխատողների ամեն խումբ կատարում էր ապրանքի արտադրության պրոցեսի մի մասը: Մշտապես նույն գործը կատարելով՝ աշխատողը հմտանում էր այդ գործում: Դրա շնորհիվ մանուֆակտուրայում լավորակ և քանակով շատ ապրանք էր արտադրվում, քան արհեստանոցներում: 4

Մանուֆակտուրային արտադրանքի պահանջարկը Եվրոպայում գնալով աճում էր: Վաճառականները մանուֆակտուրային արտադրանքը՝ մահուդ, զենքեր և այլն, վաճառքի էին տանում մի երկրից մյուսը:

ԱՐՏԱՔԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՃԸ

XVI դ. համաշխարհային առևտրում գերիշխում էին Իսպանիան և Պորտուգալիան: Սակայն Ամերիկայից ու Հնդկաստանից բերվող ոսկին ու արծաթը չհարստացրին այդ երկրները, քանի որ այն չներդրվեց արտադրության մեջ, այլ ծախսվում էր շքեղության ու վայելքների վրա:

Հոլանդացի և անգլիացի ձեռներեց մարդիկ այդ երկրների գաղութների հետ մաքսանենգ առևտուր էին վարում, զբաղվում էին ստրկավաճառությամբ և ծովահենությամբ, իսկ կուտակած միջոցները ներդնում էին արտադրության և առևտրի զարգացման մեջ: Նման գործարարները միավորվելով՝ կազմակերպում էին առևտրական ընկերություններ, որոնք հովանավորվում էին իրենց պետությունների կողմից: Այդպիսիք էին հոլանդական, անգլիական և ֆրանսիական ***Արևելա-Հնդկական և Արևմտա-Հնդկական ընկերությունները***: Այդ ընկերություններն էին իրականացնում իրենց երկրների առևտուրը Արևելքի և Ամերիկայի երկրների հետ: Դրանց գործունեության շնորհիվ համաշխարհային առևտրի մեջ XVII դ. գլխավոր դեր սկսեցին խաղալ Հոլանդիան, Անգլիան, ապա և Ֆրանսիան: 5

ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐ, ԲԱՆԿԵՐ, ԲՈՐՍԱՆԵՐ

Առք ու վաճառքի համար անհրաժեշտ էր կիրառել ***ընդհանուր փոխարժեք՝ դրամ***: Սկսած XIII–XIV դդ. ***դրամահատությունը*** լայն տարածում ստացավ եվրոպական երկրներում: Առևտրի աճող կարիքների համար հատում էին ոսկե, արծաթե և պղնձե դրամներ: Ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացման արդյունքում ծնունդ առան ***փոնա-***

վաճառները, բանկերը և բորսաները:

6

Առևտրական խաչմերուկներում գտնվող քաղաքներում և այլ մարդաշատ վայրերում տարին մի քանի անգամ կազմակերպվում էին ***տոնավաճառներ:*** Տոնավաճառներին տարբեր երկրներից և քաղաքներից գալիս էին վաճառականներ, ովքեր բերում էին իրենց ապրանքները և մեծ քանակով դրամ՝ տեղական ապրանքներ գնելու և այլ տեղում վաճառելու համար: Քանի որ տարբեր երկրներում, անգամ նույն երկրի տարբեր մարզերում տարբեր դրամներ էին կիրառվում, ապա տոնավաճառներում անհրաժեշտաբար գործում էին ***դրամափոխներ***: Նրանք ոչ մեծ վարձի դիմաց օտարերկրյա վաճառականների դրամները փոխանակում էին տեղական դրամով: Աստիճանաբար առավել հարուստ դրամափոխները վերածվում էին բանկիրների: Դրամատները սկզբնապես առաջացան Իտալիայում XIV–XV դդ.: Հետագայում ***բանկային գրասենյակներ՝ դրամատներ*** բացվեցին Եվրոպայի այլ երկրներում ու քաղաքներում:

7

Արտաքին առևտրի զարգացման արդյունքում առաջացան ***բորսաներ***: Բորսան մի վայր էր, որտեղ ձեռներեցները հանդիպում էին և իրար հետ դեռ նոր բերվող ապրանքների մեծածախ առք ու վաճառքի գործարքներ էին կնքում: Առաջին ֆոնդային բորսան հիմնադրվել է 1611 թվականին Հոլանդիայի Ամստերդամ քաղաքում:

8

Այսպիսով, ***ավանդական ավատատիրական հասարակության ընդերքում ապրանքա-դրամական հարաբերությունների ձևավորման ու ապրիճանական զարգացման հետևանքով առաջանում էին կապիտալիստական նոր կացութաձևի սաղմերը:***

Նոր բառեր և արտահայտություններ՝ *դոմնա, թուջ, կարավելլա, մանուֆակտուրա, բանկ, բորսա, տոնավաճառ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Տեխնիկական ինչ հայտնագործություններ և գյուտեր կատարվեցին 15–16–րդ դարերում:
2. Ինչ է մանուֆակտուրան:
3. Ինչպես էր ձևավորվում ներքին շուկան:
4. Ինչ են բանկերը և բորսաները:
5. Ինչպես էր ձևավորվում արտաքին շուկան, և ինչ առևտրական ընկերություններ գիտեք:
6. Ո՞ւմ էին նախկինում անվանում «վաշխառու», ինչ է նշանակում այդ բառը:

§ 52. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒՄԸ

Տնտեսական նոր հարաբերությունների զարգացման արդյունքում միջնադարյան հասարակությունը կերպարանափոխվում էր: Ընթանում էր ավատական կարգի քայքայման և նոր հասարակարգի ձևավորման գործընթացը: ***Հարստության չափանիշ էր դառնում արդեն ոչ թե հողային տիրույթների չափը, այլ մարդու ունեցած ֆինանսների՝ փողի քանակը:***

Անցյալ էր դառնում կաթոլիկ եկեղեցու մենաշնորհը կրթության և գիտության բնագավառում: ***1445 թ. Իոհան Գուտենբերգի գրատպության գյուտից*** հետո գրքերի տպագրությունը լայն տարածում էր ստացել Եվրոպայում: Վերանում էր ձեռագիր գրքեր արտագրելու եկեղեցու մենաշնորհը: Գիրքը և նրա պարունակած գիտելիքը մատչելի էին դառնում հասարակության լայն խավերին: ***Ձևավորվում էին աշխարհիկ գիտությունը և մտավորականությունը:***

ՆՈՐ ԴԱՍԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Արտադրության մեջ մանուֆակտուրայի տարածումը հանգեցրեց նոր դասերի՝ դրամատերերի՝ բուրժուազիայի, և վարձու աշխատողների՝ բանվորների առաջացմանը:

Ամեն ինչ՝ շենքը, հումքը, գործիքները և պատրաստի արտադրանքը պատկանում էին մանուֆակտուրայի տիրոջը: Նա արտադրության պրոցեսին անձամբ չէր մասնակցում, միայն ղեկավարում էր ձեռնարկությունը: Արտադրված ապրանքները վաճառում էր առևտրականներին, սրանք էլ այդ ապրանքները վերավաճառում էին երկրի տարբեր մարզերում կամ արտահանում ուրիշ երկրներ: Մանուֆակտուրայի տերերը և վաճառականները արագ հարստանում էին: ***Նրանցից ձևավորվում էր դրամատերերի՝ բուրժուազիայի դասը:***

Դրամատերերի կազմակերպած մանուֆակտուրաներում աշխատում էին ***բանվորները***՝ աղքատացած արհեստավորներ, ենթավարպետներ, քաղաք տեղափոխված գյուղացիներ: ***Նրանց ապրուստի միակ միջոցը վարձու աշխատանք կատարելն էր:***

Բրդյա գործվածքների, կաշվե իրերի և այլ ապրանքների պահանջարկի աճը հանգեցրեց նրան, որ ավատատերերը սկսեցին նախկինում գյուղացիներին վարձակալությամբ տրվող հողերը ***ցանկապատել և վերածել արոտավայրերի՝*** ոչխարների մեծաթիվ հոտեր պահել: Դրանց խնամելու համար ընդամենը մի քանի վարձու աշխատող էին պահում:

1

Նոր ձևով տնտեսություն վարող հողատերերին սկսեցին անվանել ***նոր ազնվականներ:*** Նոր ազնվականները մի կողմ նետեցին ասպետական

զենքն ու գրահը և նստեցին հաշվեմատյանների առաջ: Զգտելով ամեն կերպ ավելացնել իրենց եկամուտը՝ նրանք շուկա էին հանում բուրդ, կաշի, միս: Նոր ազնվականներից ոմանք հիմնադրեցին գործվածքային, կաշեգործական և այլ մանուֆակտուրաներ: Չվախենալով սև բիծ թողնել իրենց գինանշանի վրա՝ նրանք մասնակցում էին ծովային և ցամաքային առևտրին: ***Նոր ազնվականությունը ապրիճանաբար մերձենում էր դրամատերերի՝ բուրժուազիայի հետ:***

Այնուհանդերձ, գյուղացիների որոշ մասին հաջողվեց աղքատացած հարևանների հողատարածքները գնելով՝ եկամտաբեր տնտեսություն ստեղծել, դառնալ ***ագարակատեր՝ ֆերմեր:*** Սեփական ընտանիքի անդամների ուժերով և վարձու աշխատուժի կիրառմամբ նրանք գյուղատնտեսական ապրանքներ էին արտադրում շուկայում վաճառքի համար:

ԱՇԽԱՐՀԻԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Արագ փոփոխվող աշխարհում գնալով թուլանում էր հավատը առ այն, որ ամեն ինչ կատարվում է միայն Աստծո կամքով: Աշխարհիկ կյանքից հրաժարվելու կրոնական ներշնչանքը փոխարինվեց աշխարհի նկատմամբ աճող հետաքրքրությամբ, բնության երևույթների խոր ուսումնասիրությամբ: Դիտարկումներ կատարելով և գիտափորձեր իրականացնելով՝ գիտնականները ձգտում էին բացատրել բնության երևույթները, հասկանալ դրանց պատճառները և հետևանքները: Չնայած կաթոլիկ եկեղեցու հետապնդումներին և պատժամիջոցներին, նրանք շարունակում էին գիտական հետազոտությունները, որոնց արդյունքները խարխլում էին եկեղեցու ազդեցությունը մարդկանց մտածողության վրա:

Աստվածակենտրոն մտածողության թուլացմանը նպաստեցին ժամանակի առաջադեմ մտածողներ և գիտնականներ ***Ռոջեր Բեկոնը, Նիկոլայ Կոպեռնիկոսը, Գալիլեո Գալիլեյը:***

2

Գրքերի մասսայական տպագրության շնորհիվ ընդլայնվեցին աշխարհի մասին մարդկանց գիտելիքները և պատկերացումները: Խիզախ ճանապարհորդները շարունակում էին հետազոտել մայրցամաքների, ծովերի և օվկիանոսների դեռևս անծանոթ մասերը: Եվրոպայում ստեղծվեցին առաջին ***թանգարանները, կենդանաբանական և բուսաբանական այգիները***, հանքաքարերի ***հավաքածուները:***

Ջանգվածային տեղեկատվության կարևոր աղբյուր դարձան լրագրերը:

Կապիտալիստական արտադրության զարգացումը նպաստեց գիտության հետագա զարգացմանը: Գիտական հայտնագործությունները և գյուտերը կիրառելու համար անհրաժեշտ էր լինում լուծել տեխնիկական բազմաթիվ խնդիրներ: Արագորեն սկսեցին զարգանալ ***հանրահաշիվը և երկրա-***

չափությունը, ֆիզիկան և մեխանիկան:

Զգալի առաջընթաց ապրեց ***բժշկագիտությունը:*** Անատոմիական հետազոտությունները օգնեցին բացահայտել մարդու օրգանիզմում արյան շրջանառությունը: Անգլիացի բժիշկ ***Վիլյամ Հարվեյն*** ապացուցեց, որ սիրտը արյուն է մղում դեպի մարմնի բոլոր մասերը: Բժիշկները սկսեցին ուսումնասիրել վարակիչ հիվանդությունները, դրանց դեմ պայքարի եղանակներ փնտրել: Հոլանդացի ինքնուս գիտնական ***Անտոնի վան Լևենհուկը*** պատրաստեց ***մանրադիտակ*** և առաջին գիտնականն էր, որ նկարագրեց բակտերիաները:

3

Սորբոնի համալսարանը

XII–XIII դդ. Արևմտյան Եվրոպայի երկրներում առաջացան նոր տիպի աշխարհիկ կրթօջախներ՝ միջնադարյան համալսարանները: Համալսարանների ի հայտ գալով ***եկեղեցու մենաշնորհը կրթության ոլորտում սկսեց վերանալ:***

Հակառակ բոլոր արգելքներին ուսյալ մարդկանց թիվը Եվրոպայում գնալով մեծանում էր, ***ձևավորվում էր աշխարհիկ մտավորականությունը:***

Ասիվածակենտրոն մտածողությունը աստիճանաբար իր տեղը զիջում էր մարդակենտրոն մտածողությանը: Մեծանում էր հավատը մարդու խելքի, ուժի և ընդունակությունների նկատմամբ: Ամրապնդվում էր գիտության և արվեստի կապը:

4

Նոր բառեր և արտահայտություններ՝ *գրատպություն, ազարակատերեր, աշխարհիկ մտավորականություն, նոր ազնվականներ, մարդակենտրոն մտածողություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս փոխվեց հարստության չափանիշը միջնադարի վերջին:
2. Ո՞ւմ էին անվանում «նոր ազնվականներ»: Բացատրե՛ք, թե ինչով էին տարբերվում հին ազնվականներից:
3. Ո՞րն էր գիտության նպատակը ըստ Ռոջեր Բեկոնի:
4. Տիեզերքի կառուցվածքի մասին ի՞նչ նոր տեսություն ստեղծեց Կոպեռնիկոսը:
5. Ի՞նչ հայտնագործություններ է կատարել Գալիլեյը:
6. Մշակութային ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան միջնադարի վերջին:

§ 53. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

***Վերածնունդ** (ֆրանսերեն՝ **Ռենեսանս**) ընդունված է անվանել XIV–XVI դարերում Իտալիայում տեղի ունեցած մշակույթի աննախադեպ վերելքը, որն ընդգրկեց գիտության և արվեստի բոլոր բնագավառները և լրջորեն վերափոխեց մարդկանց աշխարհայացքը:*

ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Միջնադարի ողջ ընթացքում Իտալիան տրոհված էր մի քանի տասնյակ պետությունների: Խաչակրաց արշավանքների ընթացքում և հետո այդ պետությունները կայուն առևտրական կապեր էին հաստատել Արևելքի երկրների հետ: Արևելյան ապրանքները բերվում էին Իտալիա, ապա վերավաճառվում եվրոպական մյուս երկրներում: Արևելքից Իտալիա էին ներթափանցում նաև գիտական հայտնագործություններ, նոր գաղափարներ, բժշկական գիտելիքներ և այլն: Իտալիայում, ավելի վաղ, քան Եվրոպայի այլ երկրներում, առաջացան տոնավաճառներ, մանուֆակտուրաներ և բանկեր, սկսեցին ձևավորվել բուրժուազիայի և վարձու բանվորների դասերը:

Առևտրի և արտադրության զարգացումը բազմազան գիտելիքների տիրապետող կրթված մարդկանց մեծ պահանջարկ առաջ բերեց, փոխեց մարդկանց վերաբերմունքը առօրյա կյանքի, ֆիզիկական և հոգևոր պահանջմունքների նկատմամբ: Նորահայտ հարուստները, որոնք հաջողության էին հասել ոչ թե ազնվական ծագման, այլ իրենց անձնական ունակությունների շնորհիվ, ձգտում էին ի ցույց դնել իրենց հարստությունը, կառուցել շքեղ ապարանքներ, զարդարել դրանք արվեստի գեղեցիկ գործերով: Նրանք հովանավորում էին անվանի գրողներին և արվեստագետներին, պատվիրում դիմանկարներ, վճարում իրենց զավակներին կրթելու համար:

1

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Վերածնունդն առաջ քաշեց բազմաթիվ տաղանդավոր գրողների, գիտնականների, նկարիչների, քանդակագործների, ճարտարապետների: Սկիզբ առնելով ***Ֆլորենցիայում***՝ Վերածննդի նորարարական գաղափարները նախ արտահայտվեցին գրականության մեջ:

Իտալական գրական լեզվի և գրականության սկզբնավորողը համարվում

է ***Դանթե Ալիգերին (1265–1321):*** Դանթեի գլուխգործոցը ***իտալերեն գրված «Աստվածային կատակերգություն» պոեմն է:*** Նա վարպետորեն պատկերել է մարդկային տարբեր բնավորությունները, մարդու զգացմունքները, ձգտումներն ու երազանքները: Այդ ամենը պոեմը դարձնում է համաշխարհային գրականության գանձերից մեկը:

Վերածնդի նշանավոր բանաստեղծ էր ***Ֆրանչեսկո Պետրարկան (1304–1374):*** Պետրարկան թողել է իտալերեն գրված բազմաթիվ լիրիկական բանաստեղծություններ, որոնցում արտահայտել է իր զգացմունքները սիրելի Լաուրայի նկատմամբ: Գեղարվեստական վարպետության համար Հռոմում նրան հրապարակավ պատվեցին դափնեպսակով:

Պետրարկայի մտերիմներից էր ***Ջովանի Բոկաչոն (1313–1375):*** Բոկաչոյին անմահ փառք է բերել նրա ***«Դեկամերոն»-ը,*** որում ընդգրկված են երգիծական, քնարական և սիրային բնույթի 100 նորավեպեր:

Գեղանկարչության մեջ վերածննդի գաղափարները առաջինն արտահայտել է ***Ջոտտոն (1276–1337):*** Տարբեր եկեղեցիներում արված նրա որմնանկարները հիացնում են պատկերված կերպարների բնական տեսքով և ներքին հարուստ բովանդակությամբ:

Բոտիչելլին (1444–1510) ստեղծել է մեծ թվով բարձրարժեք դիմանկարներ և անտիկ առասպելների թեմաներով գեղանկարներ: Նրա կերպարներին բնորոշ են հոգեկան հարուստ ներաշխարհը, բնության հետ ներդաշնակությունը, նրբագեղ մարմնաձևերը:

Վերածննդի ճարտարապետներից աչքի ընկնող գործեր է ստեղծել ***Բրունելեսկին (1377–1446):*** Իր կառուցած շինություններին նա ձգտում էր հաղորդել ներդաշնակություն և համաչափություն զարդարելով անտիկ ոճի սյուներով և գեղեցիկ, բարձր գմբեթով: Նրա հիասքանչ գործերից է Ֆլորենցիայի Սայր տաճարը:

2

ՎԵՐԱԾՆՆԴԻ ՏԻՏԱՆՆԵՐԸ

Իտալական վերածննդի պատմության մեջ առանձնանում է XV դ. վերջը և XVI դ. առաջին կեսը: Այն իրավամբ անվանում են ***Բարձր Վերածնունդ***: Այդ ժամանակ են ստեղծագործել Վերածննդի մեծագույն գործիչները՝ ***Լեոնարդո դա Վինչին, Միքելանջելո Բուոնարոտին, Ռաֆայել Սանտին և ուրիշներ:***

Բացառիկ և բազմակողմանի ընդունակությունների տեր անձնավորություն էր ***Լեոնարդո դա Վինչին (1452–1519),*** հանճարեղ նկարիչը, քանդակագործը, երաժիշտը, բանաստեղծը, ճարտարագետը, գյուտարարը, բնախույզը: Արվեստի նպատակը նա համարում էր բնության ճշմարիտ վերարտադրությունը: Իր ստեղծագործությունների վրա Լեոնարդոն աշխատում էր երկար տարիներ՝ ձգտելով հասնել կատարելության, և այդ պատճառով իր շատ գործեր մնացել են անավարտ: Նրա

3

լավագույն ստեղծագործություններից են ***Մոնա Լիզա Ջոկոնդայի*** դիմանկարը և ***Խորհրդավոր ընթրիքը*** որմնանկարը:

Հանճարեղ նկարիչ էր ***Ռաֆայելը (1483–1520):*** Ապրելով ընդամենը 37 տարի՝ նա հասցրեց ստեղծել բազմաթիվ անկրկնելի գործեր: Ռաֆայելը պատկերել է հոգեկան խոր ներաշխարհով չքնաղ և քնքուշ կանացի կերպարներ, որոնցից լավագույնը ***«Միքստինյան տիրամայրն»*** է: Ռաֆայելի որմնանկարներով նկարազարդվել են Վատիկանի պալատի դահլիճը և կից սենյակները: Նրա ***«Աթենական դպրոցը»*** որմնանկարի հին հույն փիլիսոփաները ֆիզիկապես և հոգեպես ներդաշնակ խորամիտ մարդկանց ոգեշունչ պատկերներ են:

4

Բազմակողմանի տաղանդի տեր էր ***Միքելանջելոն (1475–1564):*** Նա և՛ նկարիչ էր, և՛ քանդակագործ, ճարտարապետ և բանաստեղծ: Իր քանդակներում ու նկարներում նա պատկերել է ոգեշունչ, առնական մարդկանց: Այդպիսին են «***Դավիթ***» և «***Մովսես***» արձանները: Վատիկանի պալատի Սիքստինյան մատուռում արված նրա որմնանկարները՝ ***Աշխարհի արարումը, Մեղսագործությունը, Ահեղ դատաստանը*** հիացնում են կերպարների ներքին ուժով և դինամիկ լարվածությամբ: Միքելանջելոյի ղեկավարությամբ է կառուցվել Սուրբ Պետրոսի տաճարը և Վատիկանի հրապարակի սքանչելի համալիրը Հռոմում:

5

XVI դ. կեսերից Իտալիայի տնտեսությունը աստիճանաբար սկսեց հետադիմել: Օսման թուրքերի նվաճումների հետևանքով կտրվեցին առևտրական կապերը Արևելքի երկրների հետ: Իտալիայում սկսեցին փակվել մանուֆակտուրաները, առևտուրը անկում ապրեց: Վերածննդի մշակույթը հետագա զարգացում չունեցավ և աստիճանաբար մարեց:

6

Իտալական Վերածնունդը մեծ ազդեցություն գործեց Եվրոպայի երկրների մշակույթի զարգացման վրա: Այդ երկրներում նույնպես սկսեցին տարածվել մարդակենտրոն, աշխարհիկ մտածողությունը, գիտական գաղափարները, բնության ուսումնասիրությունը և կրկնօրինակումը: ***Վերածնությունը, այսպիսով, սկիզբ դրեց եվրոպական նոր մշակույթի ձևավորմանը:***

7

Նոր բառեր և արտահայտություններ՝ *Ռենեսանս, հումանիստ, Բարձր վերածնունդ, Հյուսիսային վերածնունդ*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչն են անվանում Վերածնունդ և որտեղից այն սկսվեց:
2. Ո՞ր բնագավառում առաջին հերթին սկսվեց վերածնունդը:
3. Ո՞ւմ ենք համարում Վերածննդի տիտաններ, ինչ գիտեք նրանց մասին:
4. Ինչ ենք հասկանում Հյուսիսային վերածնունդ ասելով, և ինչ նշանավոր դեմքեր գիտեք:

§ 54. ՌԵՖՈՐՄԱՑԻԱ

ՌԵՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Կաթոլիկ եկեղեցին մարդկանց ներշնչում էր, որ գոյություն ունի ***2 կյանք՝ երկրային և հետմահու:*** Նրանք, ովքեր երկրային կյանքում չեն կատարում Աստծո պատվիրանները, մեղքեր են գործում, հետմահու ընկնելու են դժոխք և ենթարկվելու են հավիտենական տառապանքների, իսկ անմեղները արժանանալու են դրախտային կյանքի: Մեղսագործները կարող են փրկվել դժոխքից միայն եկեղեցու միջնորդությամբ, եթե զղջան իրենց գործած մեղքերը և եկեղեցուց ***ինդուլգենցիա՝ մեղքերի թողության փաստաթուղթ*** գնեն:

Կաթոլիկ եկեղեցին, XIII դ. սկսած, ինդուլգենցիաների վաճառքը դարձրել էր շահավետ զբաղմունք և հավատացյալներից հսկայական գումարներ էր շորթում՝ կատարած ***ու դեռ չկատարած*** մեղքերի համար թողության փաստաթղթեր վաճառելով:

1

ՌԵՖՈՐՄԱՑԻԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

XVI դ. Գերմանիան մի քանի տասնյակ ինքնուրույն իշխանություններից բաղկացած պետություն էր: Հռոմի պապը հսկայական եկամուտ էր ստանում կաթոլիկ եկեղեցուն պատկանող ընդարձակ տիրույթներից: Անգլիայում և Ֆրանսիայում թագավորական իշխանությունը վաղուց սահմանափակել էր կաթոլիկ եկեղեցու եկամուտները և ազդեցությունը, մինչդեռ մասնատված Գերմանիայում եկեղեցին իր ծառայությունների դիմաց մեծ տուրքեր էր գանձում և ավելի էր ընդլայնել ինդուլգենցիաների վաճառքը:

2

1517 թ. հոկտեմբերի 31-ին Գերմանիայի Վիտեն-բերգ քաղաքի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր ***Մարտին Լյութերը*** Մայր տաճարի դռանը փակցրեց իր ***«95 թեզիսները»:*** Նա կոչ էր անում արգելել ինդուլգենցիաների վաճառքը, իսկ Պապին և կաթոլիկ հոգևորականներին անվանում էր խաբեբաներ:

Կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը թուլացնելուն և պետությանը ենթարկելուն ուղղված այս շարժումը կոչվեց ***«Ռեֆորմացիա»՝ բարեփոխություն***:

Լյութերի ելույթը ռեֆորմացիայի համար պայքարի սկիզբ հանդիսացավ: ***Ռեֆորմացիան ընդգրկեց ողջ Գերմանիան:*** Եկեղեցու բարեփոխման համար պայքարին մասնակցեցին գերմանական հասարակության բոլոր խավերը: Գյուղացիներն ու քաղաքացիները սկսեցին ավերել վանքերը, զավթել եկեղեցական հողերը: Ժողովրդական շարժումը վերաճեց ***գյուղացիական պատերազմի,*** որը շարունակվեց մի քանի տարի:

Ի վերջո, գյուղացիական պատերազմը պարտություն կրեց, ղեկավարները մահապատժի ենթարկվեցին:

Լյութերի գաղափարները՝ եկեղեցական հողերը բռնագրավելու և էժան եկեղեցի ունենալու վերաբերյալ, մեծ աջակցություն գտան իշխանների, ասպետների և բուրժուաների շրջանում: Երբ հրապարակվեց Լյութերի գաղափարների քարոզը արգելելու մասին կայսերական հրամանագիրը, մի շարք իշխաններ և քաղաքներ բողոքեցին այդ որոշման դեմ: Այդուհետ ***ռեֆորմացիայի բոլոր հետևորդներին սկսեցին անվանել բողոքականներ***:

Քրիստոնեության մեջ սկսեց ձևավորվել նոր ուղղություն՝ բողոքական եկեղեցին: Հյուսիսային Գերմանիայի իշխանները իրենց տիրույթներում բարեփոխումներ իրականացրին Լյութերի առաջարկած ձևով՝ փակեցին վանքերը, զավթեցին եկեղեցական հողերը: Իշխանը իր տիրույթներում դարձավ եկեղեցու գլխավորը: Լյութերական քարոզիչները պնդում էին, որ հպատակները պետք է հետևեն այն եկեղեցուն, ինչ իրենց իշխանները:

Լյութերի սկսած ռեֆորմացիան շահեկան էր նա և ձևավորվող բուրժուազիայի համար: Դրամատերերը գնեցին եկեղեցուց բռնագրավված հողերի մեծ մասը, այդտեղ մանուֆակտուրաներ կազմակերպեցին: Վերացվեցին կենցաղային ծեսերի համար բարձր վճարները, հոգուտ եկեղեցու հավատացյալներից գումարներ գանձելը: Գերմանիայում ձևավորվող բողոքական եկեղեցին կոչվեց ***Լյութերական եկեղեցի:***

Կաթոլիկ եկեղեցուն պաշտպանող Կառլ V կայսեր և բողոքական իշխանների միջև նույնիսկ տևական պատերազմ սկսվեց, որն ավարտվեց կայսեր պարտությամբ:

ԿԱԼՎԻՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Բողոքական եկեղեցիներում ժամասացությունը սկսեց տարվել ազգային լեզուներով: Անգլիայում, Դանիայում և Շվեդիայում ռեֆորմացիա իրականացրին թագավորները և իրենք դարձան եկեղեցու ղեկավարը: Թագավորին անցան եկեղեցու ունեցվածքը, եկամուտների և հարկերի մեծ մասը: Եկեղեցուց խլված հողերի զգալի մասը բաժին հասավ նոր ազնվականներին և դրամատերերին:

3

Շվեյցարիայի ավելի արմատական տրամադրված բուրժուազիային չէին բավարարում եկեղեցու չափավոր բարենորոգումները, որն անցկացրել էր Լյութերը Գերմանիայում: Նրան հարմար գաղափարների արտահայտիչը դարձավ ֆրանսիացի ***Ժան Կալվինը,*** ով փախչելով կաթոլիկների հետապնդումից, 1535 թ. հաստատվեց Շվեյցարիայի Ժնև քաղաքում: Ստանալով տեղի դրամատերերի աջակցությունը, նա իրականաց-

4

րեց ռեֆորմացիայի ավելի արմատական տարբերակը:

Կալվինի ուսմունքը շատ հարմար էր ձևավորվող բուրժուազիայի դասի համար և արագորեն տարածվեց նաև Հոլանդիայում, Շոտլանդիայում և հարավային Ֆրանսիայում: Այդ երկրների բողոքական եկեղեցիները կոչվեցին ***կալվինական եկեղեցի:***

ՀԱԿԱՌԵՖՈՐՄԱՑԻԱՆ

Ռեֆորմացիայի հարվածներից ուշքի գալով՝ կաթոլիկ եկեղեցին ***հակառեֆորմացիա*** սկսեց: Նպատակն էր պայքարել բողոքականների դեմ, ամրապնդել կաթոլիկ եկեղեցու հետևորդների հավատն ու նվիրվածությունը, կանխել եկեղեցուց նրանց հեռանալը:

Կաթոլիկ եկեղեցին և նրա ուսմունքը քննադատող գրականություն տպագրելը և կարդալը արգելվեցին: Հրապարակվեց ***«Արգելված գրքերի ինդեքսը»***՝ ցուցակում նշված գրքերը հավաքում և այրում էին հրապարակներում:

Ստեղծվեց ***ինկվիզիցիան՝ հավատաքննության դատարանը՝*** հերետիկոսներին դատելու և եկեղեցու գիրկը դարձնելու համար: Ինկվիզիցիան ձերբակալում, դաժանորեն տանջում ու խարույկի վրա այրում էր բոլոր նրանց, ովքեր շեղվում էին կաթոլիկ հավատից:

5

Ռեֆորմացիայի դեմ պայքարելու հզոր միջոց դարձավ 1540 թ. ստեղծված ***«Հիսուսի միաբանությունը»՝ ճիզվիտների օրդենը***:

6

Նման միջոցներով կաթոլիկ եկեղեցուն հաջողվեց ճնշել ռեֆորմացիան Ֆրանսիայում, Լեհաստանում, Հարավային Գերմանիայում: Այդ երկրներում, որտեղ հակառեֆորմացիան հաղթանակեց, ավատական կարգն ամրապնդվեց և ավելի երկար պահպանվեց:

Այնուամենայնիվ, կաթոլիկ եկեղեցին հարկադրված էր հաշտվել բողոքական եկեղեցիների գոյության փաստի հետ:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *ինդուլգենցիա, ռեֆորմացիա, թեզիս, բողոքական, Լյութերական եկեղեցի, Կալվինական եկեղեցի, ինկվիզիցիա, «Բարդուղիմեոսյան գիշեր», Ճիզվիտների օրդեն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին ռեֆորմացիայի պատճառները:
2. Ովքե՞ր էին այն մտածողները, որոնք առաջինը հանդես եկան կաթոլիկ եկեղեցու անբարո գործողությունների դեմ:
3. Ո՞ր թվականին և որտե՞ղ փակվեց Մարտին Լյութերի «95 թեզիսները», և ի՞նչ էր քննադատվում դրանում:
4. Ինչպե՞ս առաջացավ քրիստոնեության մեջ բողոքական ուղղությունը, և ի՞նչ բողոքական եկեղեցիներ գիտեք:
5. Հակառեֆորմացիայի ընթացքում պայքարի ի՞նչ միջոցներ էր օգտագործում կաթոլիկ եկեղեցին:

§ 55. ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄ

ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

XVI–XVIII դդ. Եվրոպայի երկրներում հաստատվեց պետության կառավարման մի նոր ձև՝ ***բացարձակ միապետությունը*** (լատիներեն՝ «***աբսոլյուտիզմ***»):

Աբսոլյուտիզմի հաստատումը պայմանավորված էր նախորդ դարերում Եվրոպայի երկրներում տեղի ունեցած փոփոխություններով: Որոշ երկրներում հաղթահարվել էր ֆեոդալական մասնատվածությունը, կազմավորվել էին դասային միապետություններ, ապրանքների արտադրության և վաճառքի միասնական ներքին շուկա, ձևավորվում էին բուրժուաների, բանվորների և գյուղացիների դասերը: Երկրների մեծ մասում ընթանում էր ***ազգային լեզվի ձևավորման գործընթացը,*** ստեղծվում էր միասնական կենցաղային, մշակութային և հոգևոր միջավայր, ***առաջանում էր ազգային ընդհանրության գաղափարը:***

Աբսոլյուտիզմի պայմաններում միապետի ձեռքում էր կենտրոնանում պետական ողջ իշխանությունը: Նա էր սահմանում օրենքները, հաստատում հարկերը և տնօրինում պետության ֆինանսները: Դա հնարավորություն էր տալիս պահելու մշտական բանակ և նավատորմ: Աբսոլյուտիզմի հաստատումը վերացնում էր ավատատերերի նախկին ինքնուրույնությունը: Տիտղոսակիր խոշոր ազնվականների մի մասին թագավորը դարձնում էր պալատականներ, նրանց տալով բարձր թոշակ, իսկ անհնազանդներին ճնշում էր արքայական բանակի ուժով:

Աբսոլյուտիզմը հենվում էր նախկին եկամուտներից զրկված ***մանր և միջին ազնվականության վրա,*** որը ապրուստ էր գտնում թագավորական բանակում ծառայության անցնելով, իսկ տնտեսական և ֆինանսական հարցերում՝ ***ձևավորվող բուրժուազիայի վրա***, որը պետության պատվերով և հովանավորությամբ կազմակերպում էր արքայական բանակին անհրաժեշտ զենքի, զինամթերքի, թնդանոթների, նավաշինության, ռազմական հանդերձանքի, առագաստների, վառոդի և այլնի արտադրությունը:

Աբսոլյուտիզմի հաստատումով դասային ներկայացուցչական մարմինները (պառլամենտը և այլն) կորցնում էին իրենց նշանակությունը: Միապետերը հազվադեպ էին հրավիրում և այլևս հաշվի չէին նստում դրանց հետ:

Կախված ներքին և արտաքին հանգամանքներից, աբսոլյուտիզմի հաստատումը առանձին երկրներում բերեց տնտեսության վերելքի և բարգավաճման, իսկ որոշ երկրներում հանգեցրեց տնտեսական և քաղաքական անկման:

ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Անգլիայում աբսոլյուտիզմը հաստատվեց XVI դ. սկզբին, Թյուդորների արքայատոհմի կառավարման շրջանում: Անգլիայի տիտղոսակիր տոհմական ավագանին հիմնականում ֆիզիկապես բնաջնջվել էր նախորդ դարի վերջին տեղի ունեցած քաղաքացիական պատերազմների ընթացքում: Երկրի իշխող վերնախավում գերակշռում էին նոր ազնվականությունը և ձևավորվող բուրժուազիան, որոնք էլ դարձան կենտրոնացված թագավորական իշխանության քաղաքական և տնտեսական հենարանը:

1 ***Հենրիխ VIII-ի (1509-1547)*** վարած արտաքին և ներքին քաղաքականությունը ամբողջովին բխում էր այդ խավերի շահերից:

Հենրիխ VIII-ի դուստր ***Էլիզաբեթ I (1558-1603)*** թագուհին հովանավորում էր առևտուրը և նավագնացությունը, հանդերձավորում էր ծովային արշավախմբերը՝ նոր երկրներ հայտնագործելու և նրանց հարստություններին տիրանալու համար:

2 ***Անգլիական աբսոլյուտիզմը նպաստեց երկրի տնտեսական և քաղաքական առաջընթացին: 1 դար անց Անգլիան դարձավ Եվրոպայի տնտեսապես առաջատար պետությունը:***

ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄԸ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ

XVI դ. սկզբին Իսպանիան Եվրոպայի ռազմական առումով հզոր և տնտեսապես առաջատար պետությունն էր: Իսպանիայի քրիստոնեական թագավորությունները միավորվել էին մեկ պետության մեջ և մուսուլմաններից հետ էին նվաճել երկրի տարածքը: Ամերիկայի նորահայտ երկրների նվաճումը նպաստեց տնտեսության զարգացմանը, քաղաքներում շարունակաբար ավելանում էր մանուֆակտուրաների թիվը, զարգանում էին ոչխարաբուծությունը, հողագործությունը և այգեգործությունը:

Կառլ V-ի (1516-1556) օրոք, որն ընտրվեց նաև գերմանական կայսր, Իսպանիան շարունակաբար պատերազմներ էր վարում Ֆրանսիայի դեմ իտալական իշխանություններին տիրելու համար, Գերմանիայում՝ բողոքական իշխանների դեմ: Ամերիկյան գաղութներից բերվող ոսկին և արծաթը ոչ թե ներդրվում էին տնտեսությունը զարգացնելու մեջ, այլ ծախսվում էին երկրից դուրս՝ պատերազմները ֆինանսավորելու վրա:

3

Ավելի անհեռանկարային և վնասակար էր Կառլ V-ի որդու՝ ***Ֆիլիպ II-ի (1556-1598)*** վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը: Արքան մոլեռանդ կաթոլիկ էր, հովանավորում էր ինկվիզիցիային և տարված էր բողոքականությունը ոչնչացնելու, ամենուր կաթոլիկությունը տարածելու մոլուցքով:

4

Ներքին և արտաքին այս հանգամանքների հետևանքով, երբեմնի հզոր, զարգացած Իսպանիան արդեն XVII դ. վերածվեց տնտեսապես թուլացող և հետամնաց պետության:

ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Աբսոլյուտիզմի հիմնական գծերը առավել ցայտուն դրսևորվել են Ֆրանսիայում: Դրա տարրերը երևան եկան արդեն XV դ. վերջին և XVI դ. սկզբին, բայց ծաղկման հասան Լյուդովիկոս XIII և Լյուդովիկոս XIV արքաների կառավարման տարիներին:

5

Թուլակամ և անվճռական ***Լյուդովիկոս XIII-ի (1610-1643)*** առաջին նախարար կարդինալ ***Ռիշելյեն,*** հենվելով ազնվականության և հարուստ քաղաքացիների վրա, ձեռնամուխ եղավ թագավորական իշխանությունը ուժեղացնելուն:

6

Բացարձակ միապետությունը Ֆրանսիայում իր դասական տեսքը ստացավ ***Լյուդովիկոս XIV-ի (1643-1715)*** օրոք: «Արև արքան», ինչպես անվանում էին նրան, անգամ հայտարարեց. «Պետությունը այդ ես եմ»: Բոլոր հպատակներից նա պահանջում էր անառարկելիորեն կատարել իր կամքը: «Հպատակները չունեն իրավունքներ, ունեն միայն պարտականություններ»,- ասում էր արքան: Թագավորի ընդունած որոշումները օրենքի ուժ էին ստանում: Բավական էր, որ թագավորը գրեր՝ «Այդպես է իմ կամքը»:

XVII - XVIII դդ. Ֆրանսիան Եվրոպայի ռազմականապես ամենահզոր պետությունն էր և թելադրում էր միջազգային հարաբերությունների ընթացքը:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *աբսոլյուտիզմ, տնտեսապես առաջատար պետություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է աբսոլյուտիզմը:
2. Որո՞նք են աբսոլյուտիզմի բնորոշ գծերը:
3. Հասարակության ո՞ր դասերի վրա է հենվում աբսոլյուտիզմը:
4. Ինչո՞ւ աբսոլյուտիզմի հաստատումը Իսպանիայում հանգեցրեց երկրի տնտեսական և քաղաքական անկմանը:
5. Ինչ հետևանքներ ունեցավ աբսոլյուտիզմի հաստատումը Ֆրանսիայում:

§ 56. ՆԻԴԵՌԼԱՆԴԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԿԻԶԲԸ



Միջին դարերում ***Նիդեռլանդներ երկրամասը*** ընդգրկում էր ներկայիս Հոլանդիայի, Բելգիայի, Լյուքսեմբուրգի և հյուսիսային Ֆրանսիայի մի մասի տարածքը:

Նիդեռլանդները Արևմտյան Եվրոպայի ամենահարուստ երկրներից մեկն էր, ***բաղկացած էր 17 ինքնավար նահանգներից, ուներ 300 քաղաք և 6500 գյուղ:*** Լայնորեն կիրառվում էր վարձու աշխատանքը, գործում էին մանուֆակտուրաներ, արտադրում էին ճոպաններ, առագաստներ, գորգեր, մահուդ, ձուլում էին թնդանոթներ, կառուցում էին արագընթաց նավեր: Անտվերպեն քաղաքը գաղութային երկրների հետ եվրոպական առևտրի գլխավոր կենտրոնն էր: Զարգացած տնտեսություն, հարուստ առևտրականներ ու ձեռներեցներ ունեցող այդ ***երկիրը XVI դ. գտնվում էր Իսպանիայի փիրապետության տակ:***

Իրավիճակը երկրում խիստ սրվեց, երբ Իսպանիայի թագավոր ***Ֆիլիպ II-ը*** Նիդեռլանդներում ***ինկվիզիցիա*** մտցրեց: Ամենուր վխտում էին մատնիչները, ինկվիզիցիայի դատարանները հերետիկոսության մեջ կասկածվողներին անմարդկային տանջանքներից հետո այրում էին խարույկների վրա: Մահապատժի ենթարկվածների ունեցվածքի 2/3-ը ստանում էր թագավորը, 1/3-ը՝ կաթոլիկ եկեղեցին: Մահվան սպառնալիքով արգելվում էր օգնել ու ապաստան տալ հերետիկոսներին: ***Իսպանական փիրապետության դեմ համաժողովրդական զայրույթը գնալով ուժգնանում էր:***

1566 թ. աշնանը Նիդեռլանդներում ապստամբություն բռնկվեց: Ապստամբները հարձակվեցին կաթոլիկ եկեղեցիների վրա և սկսեցին դրանք կործանել: Կառավարական ուժերը ճնշեցին ապստամբությունը, սակայն Ֆիլիպ II-ը «խռովարարներին» պատժելու համար Նիդեռլանդներ իսպանական զորք ուղարկեց՝ ***դուքս Ալբայի*** գլխավորությամբ:

2

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ալբայի դաժանությունները չկոտրեցին Նիդեռլանդական ժողովրդի պայքարի կամքը: Գյուղացիները և արհեստավորները հեռանում էին անտառները,

ջոկատներ կազմում և դիմում պարտիզանական պատերազմի: Իսպանացիները նրանց անվանեցին ***անտառային գյոզեր՝թափառաշրջիկներ***: Գյոզերը անակնկալ հարձակվում ու կոտորում էին իսպանացի զինվորներին, դատավորներին, աստիճանավորներին ու լրտեսներին: Առավել վտանգավոր էին ***ծովային գյոզերը***, որոնք ծովում բռնագրավում և խորտակում էին Ալբայի բանակի համար զենք և դրամ բերող իսպանական նավերը:

1572 թ. ծովային գյոզերը իսպանացիներից գրավեցին Բրիլլ նավահանգստային քաղաքը: Բրիլլի գրավումով ***Նիդեռլանդներում իսպանական տիրապետության դեմ նոր ապստամբություն սկսվեց, որի կենտրոն դարձան երկրի հյուսիսային նահանգները:***

Ապստամբները ամենուրեք հաշվեհարդար էին տեսնում իսպանացի պաշտոնյաների և հոգևորականների հետ: Մարդիկ դադարեցին կաթոլիկ եկեղեցուն տասանորդ վճարել ու պարհակներ կատարել, բռնագրավում էին եկեղեցու հողային տիրույթները, ավերում էին թագավորի կողմնակից ազնվականների կալվածքները: ***Ապստամբությունը Նիդեռլանդներում վերածվեց հեղափոխության:***

3

Իսպանական զորքերը պաշարեցին Լեյդեն քաղաքը հյուսիսում, հարավում գրավեցին և ավերեցին ապստամբած մի շարք բնակավայրեր: Նրանց վայրագությունները զայրույթի համաժողովրդական ալիք բարձրացրին Նիդեռլանդներում, ապստամբությունն ընդգրկեց նաև երկրի հարավային նահանգները: Անհաջողություններից զայրացած՝ Ֆիլիպ II-ը Ալբային հետ կանչեց Նիդեռլանդներից:

4

Իսպանացի զինվորները, որոնք երկար ժամանակ ռոճիկ չէին ստացել, առանց հրամանի շարժվեցին հարավ և թալանեցին հարուստ Անտվերպեն քաղաքը: Ավելի քան 8000 քաղաքացի սպանվեց, ավերվեց մոտ 1000 տուն:

Իսպանացիների այս անօրինությունները նոր թափ հաղորդեցին հեղափոխությանը: Քաղաքներում իշխանությունն իրենց ձեռքը վերցրին հասարակ մարդիկ, ավատատերերի դեմ ոտքի ելան գյուղացիները: Ժողովրդի ցասումից վախեցած, հարավային նահանգների ազնվականները անցան թագավորի կողմը: ***Հեղափոխությունը երկրի հարավում շուտով ճնշվեց, հարավային Նիդեռլանդները մնացին Իսպանիայի տիրապետության տակ:***

ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Հյուսիսային նահանգները հրաժարվեցին Ֆիլիպ II-ին իրենց թագավորը ճանաչելուց: 1579 թ. Նիդեռլանդների հյուսիսային 7 նահանգներ Ուտրեխտ քաղաքում Իսպանիայի դեմ համատեղ պայքարի դաշինք կնքեցին և ***միավորվեցին՝ կազմելով մեկ պետություն:***

Բուրժուազիան ցանկանում էր Վիլհեմ Օրանացուն հռչակել նորաստեղծ պետության թագավոր, սակայն նա սպանվեց իսպանացիների ուղարկած

վարձու մարդասպանի կողմից: Նիդեռլանդների հյուսիսում հռչակվեց ***հանրապետություն***, որը ամենից մեծ նահանգի անունով հաճախ կոչում են ***Հոլանդիա***: Նորաստեղծ հանրապետությունը ստիպված էր ևս 30 տարի պատերազմել Իսպանիայի դեմ, մինչև որ ***1609 թ. Իսպանիան հարկադրված ճանաչեց Հոլանդիայի անկախությունը:***

ՀՈԼԱՆԴԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ

5

Հեղափոխության հաղթանակը ճանապարհ բացեց երկրում ազատ շուկայական տնտեսության զարգացման համար: Ստեղծվեցին նոր մանուֆակտուրաներ, կառուցվում էին ծովային մեծ նավեր, ծավալվեց առևտուրը, ձևավորվեց ներքին և արտաքին շուկան:

Հոլանդիան առևտուր էր անում գրեթե բոլոր երկրների հետ: Նրա առևտրական նավատորմն ավելի մեծ էր, քան եվրոպական երկրների նավատորմները միասին: Աշխարհի բոլոր ծայրերից հոլանդական նավերը տարատեսակ ապրանքներ էին բերում ***Ամստերդամ,*** որը Անտվերպենի անկումից հետո դարձավ համաշխարհային առևտրի հիմնական կենտրոնը: Ամստերդամի տնտեսական բարգավաճումը և հանդուրժողականության մթնոլորտը տարբեր երկրներից այստեղ էին հրապուրում բերում ձեռներեց վերաբնակիչների: Շատերը այստեղ էին գալիս՝ ազատվելու կրոնական հետապնդումից: Ամստերդամի բնակչությունը 1600–1650 թթ. ընթացքում 60000–ից հասավ 200000–ի:

XVII դ. Հոլանդիան տիրացավ գաղութների: Հոլանդացիները պորտուգալացիներին դուրս մղեցին Ինդոնեզիայից, Ցեյլոն կղզուց, գրավեցին Բրազիլիայի առափնյա շրջանները: Հոլանդացի վերաբնակիչների գաղութներ ձևավորվեցին Հյուսիսային Ամերիկայում և Աֆրիկայի հարավում: Միջազգային առևտրում հոլանդական առևտրականների գերակշռությունը պահպանվեց մոտ 200 տարի:

Նիդեռլանդական հեղափոխությունը Արևմտյան Եվրոպայում ավատատիրական կարգերի դեմ առաջին հաղթական բուրժուական հեղափոխությունն էր:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *Հոլանդիա, Բելգիա, Լյուքսեմբուրգ, անտառային գյոզեր, ծովային գյոզեր*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ տարածքներից էր կազմված Նիդեռլանդներ երկրամասը:
2. Որոնք էին հեղափոխության պատճառները, և ե՞րբ այն սկսվեց:
2. Ինչ ընթացք ունեցավ հեղափոխությունը:
3. Ե՞րբ ստեղծվեց Հոլանդիա Հանրապետությունը, և ե՞րբ այն ճանաչեց Իսպանիան:
4. Ինչը նպաստեց Հոլանդիայի տնտեսական վերելքին:

§ 57. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԱՆԳԼՈ-ԻՍՊԱՆԱԿԱՆ ՄՐՑԱՊԱՅՔԱՐԸ

Աշխարհագրական մեծ հայտնագործություններից հետո Իսպանիան դարձել էր հզոր ծովային տերություն: Ամերիկայում Իսպանիայի գաղութներից մեծ քանակությամբ ոսկի և արծաթ էր բերվում Իսպանիա, որը սակայն չէր ներդրվում երկրի տնտեսության մեջ:

Մինչդեռ Անգլիայում արագ զարգանում էր կապիտալիստական արտադրությունը: Լոնդոնը դարձել էր բազմաթիվ նավամատույցներով ու պահեստներով նավահանգիստ, բնակչությունը հասել էր 200000-ի: Քաղաքի կենտրոնում բացվել էին վաճառականական գրասենյակներ և բանկեր: Մանուֆակտուրաներում արտադրվում էին ապրանքներ այլ երկրներում վաճառքի համար: Անգլիացի վաճառականները Եվրոպայի երկրներ և իսպանական գաղութներ էին արտահանում մահուդ, ածուխ և այլ ապրանքներ:

1

Անգլիական ծովահենները հանդուգն արշավանքներ էին կատարում դեպի Ամերիկայի ափերը: Իսպանական նավերը, որոնք Ամերիկայից ոսկի և արծաթ էին տեղափոխում, Եվրոպայի ճանապարհին դառնում էին անգլիացի և ֆրանսիացի ծովահենների ավարը: Անգլիայում երևան եկան հատուկ վաճառականական ընկերություններ, որոնք հանդերձավորում էին ծովահենների արշավանքները իսպանացիների դեմ:

Թեև Իսպանիան Անգլիայից պահանջում էր վնասների փոխհատուցում, բայց դա մնում էր անհետևանք: Իսպանիան որոշեց փոխհատուցման հասնել Անգլիա ներխուժելով: Իրենց հաղթանակին վստահ իսպանացիները իրենց նավատորմն անվանեցին ***«Անպարտելի armada»*** (նավախումբ):

2

«Անպարտելի արմադայի» անփառունակ վախճանը խարխլեց Իսպանիայի ծովային հզորությունը: Գերիշխանությունը ծովերում աստիճանաբար անցավ Անգլիային, որը շուտով վերածվեց ծովային հզոր տերության:

ԼԵՀ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄՐՑԱՊԱՅՔԱՐԸ: ՌՈՄԱՆՈՎՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Իվան IV Ահեղից հետո գահ բարձրացավ նրա թուլակամ որդի ***Ֆյոդորը (1584–1598):*** Երկրի փաստացի կառավարումը իրականացնում էր ցարի աներորդի ***Բորիս Գոդունովը,*** ում ջանքերով Ռուսաստանում ինքնուրույն ***Պատրիարքություն*** ստեղծվեց, և ռուսական եկեղեցին վերջնականապես

անկախացավ Բյուզանդական ուղղափառ եկեղեցուց:

Ֆյոդորի անժառանգ մահով սպառվեց Ռյուրիկովիչների արքայատոհմը: Ռուսական գահն անցավ ***Բորիս Գոդունովին,*** որը կառավարեց մի քանի տարի: Նրա մահից հետո, XVII դ. սկզբին Ռուսաստանում ներքին խառնակություններ սկսվեցին: Ռուսական գահին, հարևան պետությունների աջակցությամբ, փորձեցին տիրանալ տարբեր ինքնակոչներ: Լեհական զորքերը գրավեցին Մոսկվան, իսկ շվեդները՝ Նովգորոդը և հարակից շրջանները:

Անկախության կորստի սպառնալիքը ոտքի հանեց ռուս ժողովրդին: Նիժնի Նովգորոդի երկրամասային ավագ ***Կուզմա Մինինի*** նախաձեռնությամբ ստեղծվեց ***«Համերկրյա խորհուրդ»,*** որը ժամանակավոր կառավարության դեր կատարեց: Նրա կոչով կազմված աշխարհազորը շարժվեց Մոսկվան ազատագրելու: Աշխարհազորը ղեկավարեց լեհերի դեմ պայքարում աչքի ընկած իշխան ***Դմիտրի Պոժարսկին: 1612 թ. Մոսկվան ազատագրվեց:***

Խաթարված պետական իշխանությունը վերականգնելու նպատակով ***1613 թ. մայրաքաղաքում Զեմսկովական՝ համերկրային ժողով գումարվեց:*** Դրան մասնակցում էին բոյարների, ազնվականության, հոգևորականների և 50 քաղաքների ներկայացուցիչներ: Ժողովը նոր ցար ընտրեց ***Միխայիլ Ռոմանովին:*** Այսպես Ռուսաստանում հաստատվեց ***Ռոմանովների արքայատոհմը, որը երկիրը կառավարեց մինչև 1917 թ.:***

ԵՐԵՄՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ

XVII դ. սկզբին եվրոպական պետությունների միջև հակասությունները խիստ սրվեցին մասնատված Գերմանիայի հարցում, որտեղ ռեֆորմացիայի արդյունքում ձևավորվել էին ինչպես բողոքական, այնպես էլ կաթոլիկ մի քանի տասնյակ իշխանություններ:

Ավստրիական ***Հաբսբուրգների արքայատոհմը***, որը կրում էր նաև Գերմանիայի կայսեր տիտղոսը, և որի տիրապետության տակ էին Ավստրիայից բացի՝ նաև Չեխիան, Հունգարիան և Հյուսիսային Իտալիան, ձգտում էր իր իշխանության ներքո իրապես միավորել Գերմանիան և ողջ երկրում վերականգնել կաթոլիկությունը: Նրանց դաշնակցում էին Գերմանիայի կաթոլիկ իշխանները, Իսպանիան, Լեհաստանը և Հռոմի պապը:

Գերմանիայի միավորումն ու հզորացումը վտանգ էր հանդիսանում Ֆրանսիայի, Դանիայի, Շվեդիայի և իր անկախության համար պայքարող Հոլանդիայի համար: Հաբսբուրգների հզորացման և կաթոլիկ Լեհաստանի դեմ թշնամաբար էին տրամադրված նաև հարևան Օսմանյան տերությունը և Ռուսաստանը:

Անգլիայի վերաբերմունքը եվրոպական հասունացող պատերազմում հակասական էր:

Համաեվրոպական այս հակասությունները ի վերջո հանգեցրին բացահայտ ռազմական բախման, որը պատմության մեջ մտավ ***Երեսնամյա պատերազմ (1618–1648)*** անունով:

Պատերազմն ի վերջո ավարտվեց ***1648 թ. կնքված Վեստֆալյան հաշտության պայմանագրով:*** Եվրոպայի քաղաքական քարտեզում զգալի փոփոխություններ կատարվեցին: Անկախ պետություններ ճանաչվեցին Հոլանդիան և Շվեյցարիան: Շվեդիային անցան հյուսիսային Գերմանիայի Բալթիկ ծովի առափնյա տարածքները: Ֆրանսիային անցավ Գերմանիայից Էլզաս երկրամասը: Ռուսաստանը վերադարձրեց նախկինում Լեհաստանի զավթած ռուսական որոշ տարածքներ:

ԵՐԵՍՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Բողոքական տարածքներ
Իսպանական Հաբսբուրգներ
Ավստրիական Հաբսբուրգներ
0 500

1. 1620-1623 Չեխերի պարտությունը
2. 1625-1629 Դանիայի Քրիստիան IV արքայի արշավանքները
3. 1630-1632 Շվեդիայի Գուստավ II արքայի արշավանքը
4. 1635-1643 Ֆրանսիայի պատերազմի մեջ մտնելը
5. 1645-1648 Ֆրանս-շվեդական ներխուժումները Գերմանիայի տարածքը

Երեսնամյա պատերազմն ընթացավ հիմնականում Գերմանիայի և Չեխիայի տարածքում՝ մեծ ավերածություններ ու տասնյակ հազարավոր մարդկային զոհեր պատճառելով այդ երկրներին: Գերմանիայի տնտեսական և քաղաքական մասնատվածությունը Երեսնամյա պատերազմի հետևանքով ավելի խորացավ: ***Գերմանական մանր իշխանությունները ճանաչվեցին անկախ պետություններ:***

Վեստֆալյան հաշտությամբ Եվրոպայում աշխարհա-քաղաքական նոր իրավիճակ հաստատվեց, բայց տևական խաղաղություն Եվրոպային այն չբերեց: Եվրոպան շարունակեց մնալ հակասությունների և ռազմական նոր բախումների կենտրոն:

Նոր բառեր և արտահայտություններ՝ *30-ամյա պատերազմ, մրցապայքար, պատրիարքություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչի՞ շուրջ էր ընթանում անգլո-իսպանական մրցապայքարը և ինչով այն ավարտվեց:
2. Ո՞րն էր լեհ-ռուսական մրցապայքարի պատճառը:
3. Ե՞րբ և ի՞նչ իրադարձությունների արդյունքում Ռուսաստանում հաստատվեց Ռոմանովների արքայատոհմը:
4. Ի՞նչ պայմանագրով ավարտվեց 30-ամյա պատերազմը, և ի՞նչ գիտեք պայմանագրի մասին:

§ 58.ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ / ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍԹ.

ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՍԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հասարակության ինչ նոր դասեր ձևավորվեցին Արևմտյան Եվրոպայում XIV–XV դդ.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

2. Բացատրեք, պետության կառավարման որ ձևն ենք անվանում դասային միապետություն, երբ է այն ձևավորվել Եվրոպայում.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 0,75 բալ

3. Բացատրեք, ինչից է առաջացել «Ոչխարները ուտում են մարդկանց» թևավոր խոսքը.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

4. Ինչպես էին կոչվում դրամափոխության համար գանձվող տոկոսները հայերեն.

- *մաքս*
- *մորհակ*
- *վաշխ*
- *վեքսիլ*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 բալ

5. Որոնք էին Աշխարհագրական մեծ հայտնագործությունների պատճառները.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

6. Ո՞վ է հայտնագործել Ամերիկա մայրցամաքը և ու՞մ անունով է այն կոչվել.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

7. Բացատրեք, ինչու՞ Ամերիկա մայրցամաքի տեղաբնիկներին անվանեցին հնդկացիներ.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

8. Բացատրեք ինչ է մանուֆակտուրան, ինչպես էր այնտեղ աշխատանքը կատարվում.

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 0,75 բալ

9. Բացատրեք, ինչ են բանկերն ու բորսաները, ինչի հետևանքով դրանք առաջացան.

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

10. Ո՞ր թվականին և ում կողմից է կատարվել գրատպության գյուտը Եվրոպայում.

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

11. Ինչպես են կոչում կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը թուլացնելուն ուղղված շարժումը.

- *աղանդավորություն*
- *հումանիզմ*
- *ռեֆորմացիա*

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 բալ

12. Ինչն ենք անվանում Վերածնունդ / Ռենեսանս, որտեղ, որ դարերում է սկզբնավորվել.

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

13. Կառավարման ինչ ձև է աբսոլյուտիզմը, երբ է այն հաստատվել Եվրոպայում, որ դասերն էին աբսոլյուտիզմի հենարանը .....

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

14. Ե՞րբ է կնքվել Ուտրեխտի դաշինքը և ո՞ր պետությունը կազմավորվեց դրա արդյունքում.

- *1379 թ.*
- *1479 թ.*
- *1579 թ.*
- *1679 թ.*
- *Բելգիա*
- *Հոլանդիա*
- *Լյուքսեմբուրգ*
- *Ֆլանդրիա*

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

15. Ե՞րբ է Ռուսաստանում հաստատվել և մինչև երբ է իշխել Ռոմանովների արքայատոհմը.

- *1483 թ.*
- *1598 թ.*
- *1613 թ.*
- *1686 թ.*
- *1796 թ.*
- *1917 թ.*

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

ԱՐՄԵՆ ԽԱՉԻԿՅԱՆ
ԳԱԳԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7

Խմբագիր՝ Մարգարիտ Արիստակեսյան
Համակարգչային ձևավորումը՝ Հեղինե Փիլոյանի
Կազմի ձևավորումը՝ Հայկազ Օհանյանի

EDIT PRINT
43 D. Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՃԱՎԱԹՈՒՄՆԵՐԸ XV Դ. ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XVII Դ.



ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Գ. Սայլան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am